

**«Մասնակցային դպրոց» կրթական հիմնադրամի կողմից ստեղծված
«Հայոց պատմություն» առարկայի 7-րդ դասարանի դասագրքի վերաբերյալ մասնագիտական
դիտարկումների առնչությամբ հեղինակ Սմբատ Հովհաննիսյանի պարզաբանումների**

ԱՄՓՈՓԱԹԵՐԹ

**ՊԱՏԱՍԽԱՆ 1.
ԲՆՕՐՐԱՆԻ ԿԱԶՄԱԿԵՐՊԱԾ
ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ**

ԴԻՏԱՐԿՈՒՄՆԵՐ		ՊԱՏԱՍԽԱՆՆԵՐ	Համաձայն եմ	ԿԳՄՄՆ փորձագետի եզրակացություն
Արսեն Բորիսյան				
1.	Էջ 15-ում նշված «400 հազար քառ. կմ տարածք»-ի փոխարեն առաջարկվում է գրել 400 հազար քառ. կմ մակերես	Կարելի է և այդպես գրել, սակայն մեր գրած տարբերակն անկասկած ևս ճիշտ է:		Հեղինակի պարզաբանումն ընդունելի է:
2.	Էջ 18-ում գրված «Հին քարի դար, Նոր քարի դար, Բրոնզի դար, ածականը՝ Նորքարիդարյան». առաջարկվում է մեծատառերը գրել փոքրատառ:	Դրանք ժամանակաշրջանների անուններն են, ուստի գրել եմ մեծատառերով՝ առավել նկատելի դարձնելու և ուշադրությունը դրանց սևեռելու նպատակով:		Հեղինակի պարզաբանումն ընդունելի է:

3.	Էջ 20-ում գրված «ուղղաձիգ մարդ» գրությունն առաջարկվում է գրել «ուղղաձիգ քայլող մարդ»	Կարելի է և այդպես: Պարզապես ես տվել եմ լատիներեն «Homo erectus» եզրույթի հայերեն թարգմանությունը, որը բառացի նշանակում է հենց «ուղղաձիգ/ուղիղ մարդ»:		Անհրաժեշտ է դիտարկումը հաշվի առնել:
4.	Էջ 20-ում գրված «թվագրվում է մոտ 1.5 միլիոն տարի առաջ»-ի փոխարեն առաջարկվում է գրել 2 մլն տարի առաջ:		Այստեղ վրիպակ կա. պետք է լինի «թվագրվում է մոտ 2-2.5 միլիոն տարի առաջ», ինչպես գրված է դասագրքի բուն տեքստում՝ նույն էջում:	Հեղինակի մոտեցումն ընդունելի է:
5.	Նշվում է, որ Էջ 21-ում գրված «Շանիդարը»-ը չի գտնվում Հայկական լեռնաշխարհում:	Սկզբունքորեն դեմ չեմ, միայն թե Շանիդարը նշված է Հայկական լեռնաշխարհում նախորդ դասագրքերում, որոնց և հետևել եմ: Օրինակ՝ Ա. Մելքոնյան, Ա. Մովսիսյան, Է. Դանիելյան , Հայոց պատմություն: 6-րդ դաս.: Դասագիրք հանրակրթական հիմնական դպրոցի համար, Ե., Չանգակ, 2018, էջ 21-22-ում հստակ գրված է. « Շանիդարը, որը Կորդվաց աշձարիի տարածքում է: »		Անհրաժեշտ է դիտարկումը հաշվի առնել:
6.	Էջ 22-ում գրված «որսորդ հավաքիչներ»-ի փոխարեն առաջարկվում է գրել «որսորդ-հավաքչարարներ»	Գուցե և կարելի է այդպես գրել, բայց գիտական գրականության մեջ լայն տարածում ունի «որսորդ-հավաքիչներ» ձևակերպումը, որն էլ կիրառել եմ:		Անհրաժեշտ է դիտարկումը հաշվի առնել:
7.	Էջ 22-ում գրված «վայրի կենդանիներ ընտելացնելը հինքարեդարյան նորարարությունն»։ նշված է, որ «վայրի կենդանիներ ընտելացնելը նորքարեդարյան նորարարություն է իրականում»:	Ասվածի հետ մեծ հաշվով համաձայն եմ, բայց իրականում շան ընտելացումը տեղի է ունեցել հենց Հին քարի դարում (տե՛ս Larson G (2012): «Rethinking dog domestication by integrating genetics, archeology, and biogeography»: Proceedings of the National Academy of Sciences of the United States of America. 109 (23): 8878-83): Շան ընտելացումը տեղի է ունեցել առնվազն 15 հազար	Գուցե կարելի էր եզակիով գրել կամ էլ գրել միայն շատ ընտելացման մասին:	Անհրաժեշտ է դիտարկումը հաշվի առնել:

		տարի առաջ, իսկ դա նշանակում է, որ դա տեղի է ունեցել Հին քարի դարում (2,6 մլտ. տարի առաջ-Ք.ա. XIII/XII դ.) Հնագիտական գտածոները և գենետիկական վերլուծությունը ցույց են տալիս, որ շուրջ 14200 տարի առաջ մարդկանց կողքին թաղված Բոնն-Օբերկասել (Bonn-Oberkassel) շան մնացորդները եղել են առաջին անվիճելի շան մնացորդները, իսկ վիճելի մնացորդները հայտնվել են 36000 տարի առաջ:		
8.	Էջ 22-ում գրված «քանդակներ էին անում»-ի փոխարեն առաջարկվում է գրել «քանդակներ էին պատրաստվում»		Դեմ չենք, սակայն «քանդակներ անելը» ևս ճիշտ է:	Անհրաժեշտ է դիտարկումը հաշվի առնել:
9.	Էջ 25-ում գրված «Մոտ 8.000 տարի առաջ ի հայտ եկան առաջին քաղաքակրթությունները». առաջարկվում է 8,000-ի փոխարեն գրել 5,000:		Որոշ վերապահումներով ընդունելի է, միայն թե 6,000 տարի առաջ ճշգրտմամբ: Կան տարբեր մոտեցումներ:	Հեղինակի մոտեցումն ընդունելի է:
10.	Էջ 25-ում նշված «Ք.ա. 6500 թ.»-ի փոխարեն առաջարկվում է գրել «Ք.ա. 3000 թ.»:		Ընդունելի է, միայն թե «Ք.ա. 3500 թ.» տարբերակով	Հեղինակի մոտեցումն ընդունելի է:
11.	Էջ 20 և 29-ում գրված «պատմաբաններ»-ի փոխարեն առաջարկվում է գրել «հնագետներ»:	Կարծում եմ «պատմաբաններ» տարբերակը ևս ճիշտ է:		Առավել նպատակահարմար է մասնավորեցնել՝ գրելով «հնագետներ»
12.	Էջ 26-ում տրված «Լեռնալանջերի տեսությունը» ներկայացվում է որպես հին տեսություն և առաջարկվում է գրել «Ոսկե եռանկյունու» նշել տեսությունը:	Համամիտ չեմ, որ «Լեռնալանջերի տեսությունը» հին է և կիրառելի չէ դասագրքում: Տեսությունը դեռ քննարկվում է արդի գիտական պարբերականներում (Տես Foothills and intermountain basins: Does China's Fertile Arc have 'Hilly Flanks'? - ScienceDirect ; (2) (PDF) Housing first		Առաջարկում ենք սեղմ գրել նաև «Ոսկե եռանկյունու» տեսության մասին:

		farmers: The development and evolution of built environments in the Neolithic of the "Hilly Flanks." (researchgate.net) :		
13.	Էջ 28-ում նշված «Բալկանյան տեսության» վերաբերյալ գրված է, որ փոյուզիացիների հետ կապ չունի...	Իրականում Բալկանյան տեսությունը ուղիղ կապ ունի փոյուզիացիների հետ (տե՛ս Արմեն Պետրոսյան, <այ ժողովրդի ծագման խնդիրը, Ե., Անտարես, 2017, էջ 142-148):		Բերված չէ դիտարկման սկզբի մասը, ուր Բոբոխյանն առաջարկում է տեղական (հայկական) տեսությունից հետո գրել բալկանյան տեսության մասին: Այդ առաջարկն անհրաժեշտ է հաշվի առնել: Ապա, հաշվի առնելով եղած առաջարկները, վերաձևակերպել բալկանյան տեսությունը ներկայացնող նախադասությունը:
14.	Էջ 29-ում գրված «բրոնզը (պղնձի և անագի խառնուրդը)»-ի փոխարեն առաջարկվում է գրել «բրոնզը (պղնձի և մկնդեղի խառնուրդը)»		Ընդունելի է:	Հեղինակի մոտեցումն ընդունելի է:
15.	Էջ 30-ում գրված «Լճաշենի դամբարաններից»-ի փոխարեն առաջարկվում է գրել «Լճաշենի բնակավայրերից»:		Ընդունելի է:	Բոբոխյանն իր դիտարկումներում նշել է ոչ թե «Լճաշենի բնակավայրերից», այլ «Շենգավիթի բնակավայրերից»: Անհրաժեշտ է դիտարկումը հաշվի առնել:

16.	<p>Էջ 31-ում գրված «Բ.ա. 26-25-րդ դդ..»-ի փոխարեն առաջարկվում է այլ թվագրություն:</p>		<p>Ընդունելի է. տեղ է գտել վրիպակ: Պետք է լինի՝ 15-14-րդ դդ:</p>	<p>Հեղինակի մոտեցումն ընդունելի է:</p>
17.	<p>Էջ 31-ում Հայկական լեռնաշխարհի վաղ պետական կազմավորումներից Արատտա, Արմե-Շուպրիա:</p> <p>Արատտան խիստ վիճելի է: Արմե Շուպրիան հնացած տեսություն է, վերջին 50 տարում դրա մասին չեն խոսում, արժե հանել:</p>	<p>Դրանք թողել ենք նախորդ դասագրքերի հիման վրա: Մեծ հաշվով՝ ինքս էլ համաձայն չեմ, բայց քանի որ նախորդ դասագրքերում տարիներ շարունակ ամրագրված է եղել, պահպանել եմ: Ակադեմիական համապատասխան հատորն էլ դեռ չկա, որպեսզի հնարավոր լինի դրանով առաջնորդվել:</p>		<p>Հեղինակի պարզաբանումն ընդունելի է:</p>
	<p>Հայկ Գեմոյան <i>Այն հատվածներին եմ պատասխանել, որոնք կոնկրետ վերաբերում են ինձ: Դասագրքի տեխնիկական կողմերին անդրադառնալը իմ դաշտից դուրս է:</i></p>			<p>Լուսանկարների ընտրությանը վերաբերող դիտարկումները չի կարելի տեխնիկական խնդիր համարել: Քարտեզների դեպքում առաջարկում ենք գրել դրանց հեղինակների անունները, որպեսզի ողջ պատասխանատվությունը գրքի հեղինակի վրա չլինի:</p>
18.	<p>Էջ 97- Անհասկանալի է, թե ի՞նչ սկզբնաղբյուրից է օգտվել դասագրքի հեղինակը, երբ մեկնաբանում է Արտաշիսյանների, մասնավորապես Տիգրան Մեծի թագի վրա պատկերված արձիվների ու ութանկյուն աստղի խորհրդանշանների իմաստը: Լուրջ տարակուսանք է առաջացնում երկու արձիվների ներկայացումը որպես Աշխարհաժողովի խորհրդանշաններ: Ընդունված է համարել, որ</p>	<p>Տեքստը ներկայացված է պրոֆեսոր Ալբերտ Ստեփանյանի «<i>Պատմության կերպարիտությունները Մեծ Հայքում</i>» մենագրության հիման վրա (տե՛ս էջ 47, էջ 120-121 և այլն): Ի դեպ, այդ տեսակետը կարելի է գտնել նաև արտասահմանյան գիտնականների աշխատություններում:</p>		<p>Հեղինակին առաջարկում ենք կրկին անդրադառնալ դրոշների և զինանշանների հարցին՝ հաշվի առնելով նաև սույն դիտարկումները:</p>

	Արտաշիսյանների թագի այդ կոմպոզիցիան հանդիսանում է արքայական տան զինանշանը:		
19.	Էջ 101- վիճելի է նաև Արշակունիներին վերագրվող դրոշի վերակազմությունը, որն ավելի շատ հիշեցնում է Արտաշեսյանների թագի վրա դրվագված զինանշանային հորինվածքը:	Ըստ երևույթին վիճելի են բոլոր վերակազմությունները: Մենք առաջնորդվել ենք առայժմ շրջանառության մեջ եղած տեսակետով:	
20.	Էջ 128- Մարգարանական Հայաստանի դրոշի վերակազմությունը խիստ վիճելի է: Չկա որևէ աղբյուր, որի հիման վրա կարելի է անել նման վերակազմություն:	Նույնը	
21.	Էջ 158 Բագրատուններին վերագրվող զինանշանն իրականում վերագրվում է Մամիկոնյաններին ու Պռոշյաններին, քանզի այդպիսի հորինվածքով հերալդիկ խորհրդանշաններ հանդիպում են վերջիններիս ժառանգական տարածքներում գտնվող հուշարձանների վրա (Դսեղ, Գեղարդ, Եղվարդ, Խախու վանք, և այլն): Մագիլներում գտնվող կենդանի բռնած արծիվը դասագրքում ներկայացված է որպես Բագրատունիների զինանշան, այնինչ նույն զինանշանի կողքին Գագիկ Ա արքայի ու Կատրանիդեի պատկերներով նկարում առկա է դրոշ՝ վազող հովազի կամ առյուծի պատկերով, որը պատկերված է Անի մայրաքաղաքի Ավագ դռան վրա և համարվում է Բագրատունիների տոհմական զինանշանը: Ստացվում է երկու տարբեր հերալդիկ կենդանիների ու հորինվածքների վերագրում Բագրատունիներին՝ միևնույն էջի վրա, որը շփոթմունք է առաջացնելու աշակերտների մոտ:	Նույնը	

<p>22.</p>	<p>Էջ 68- Աթաթուրքի անվան հիշատակումը վաղ շրջանի «Հայոց պատմություն» առարկայի դասագրքում այնքան էլ ցանկալի չէ: Թուրքիայի տարածքում գտնվող ամբարտակի մասին խոսելիս կարելի էր չհիշատակել, թե ում անունով է այն կոչվում: Դրանից դասագրքի բովանդակությունը հաստատապես չէր տուժի:</p>	<p>Խիստ անհասկանալի մեկնաբանություն է... Մինչդեռ ուշագրավ քննարկում կարող էր ծավալվել Աթաթուրքի անվանումը ստացած ջրամբարի և ջրամբարի տակ մնացած Սամոսատ քաղաքի շուրջ: Հենց թեկուզ այն, որ այդպես ծածկվում է կարևոր այդ քաղաքը:</p>		<p>Հեղինակի պարզաբանումն ընդունելի է:</p>
<p>23.</p>	<p>Էջ 118-19 Անհասկանալի է, թե ինչու Արշակավանի կառուցման դրվագը մեջբերված է երկու հայ պատմիչների գործերից, որոնց ուղեկցում են կատարյալ անորակ ու անհասկանալի լուսանկարներ: Դրանցից մեկի փոխարեն կարելի էր տալ Ձիրավի ճակատամարտի նկարագրությունը:</p>	<p>Արշակավանի մասին բերվել են երկու հայ պատմիչների վկայությունները, որոնք մեզ հասել են: Ընդ որում՝ սկզբնաղբյուրները տարբեր տեղեկություններ են տալիս, և աշակերտները պետք է քննարկեն այդ տարբերությունները... Անհասկանալի է անհասկանալի լինելը... Իսկ լուսանկարների, ավելի շուտ՝ պատկերների հարցով համաձայն չենք, թեպետ դրանք հեղինակին անմիջապես առնչվող խնդիր չեն:</p>		<p>Հեղինակի պարզաբանումն ընդունելի է:</p>
<p>24.</p>	<p>Էջ 142 Մուավիայի մասին լայնածավալ ու մանրամասն տեղեկությունը այնքան էլ չի տեղավորվում հայ ժողովրդի պատմության համատեքստում, այնինչ դրա փոխարեն կարելի էր մեր պատմությանը վերաբերող պատմական կարևոր մի վավերագրից կամ պատմիչներից մեջբերումներ կատարել:</p>	<p>Մուրյեկտիվ կարծիք է: Մուավիայի մասին տեքստն ուղղակիորեն առնչվում է հայոց պատմությանը և բացի այդ, միջառարկայական կապ է ստեղծում համաշխարհային պատմության հետ:</p>		<p>Հեղինակի պարզաբանումն ընդունելի է: Այդուհանդերձ, կարելի էր Մուավիայի մասին տեղեկությունները (նաև նմանատիպ այլ տեքստեր) QR կոդով բացվող տեղեկությունների շտեմաբանում ներառել:</p>
<p>25.</p>	<p>Էջ 16- «Դեռ հնագույն ժամանակներից ի վեր, բայց հատկապես Օսմանյան կայսրության կատարած Հայոց ցեղասպանությունից հետո հայերը համայնքներ են հիմնել աշխարհի</p>	<p>Եթե «ոճաբանական և սրբագրական բնույթի խնդիր» է համարվում «սփյուռքներ» հասկացությունը, ապա այն արդեն վաղուց կիրառվում է թե՛ տեղական-հայկական գիտական</p>		<p>Հեղինակի փաստարկը համոզիչ չէ: Նախադասությունը վերախմբագրել՝ գրելով</p>

	տարբեր շրջաններում, որոնք հայտնի են սփյուռքներ անվամբ»:	գրականության մեջ և թե՛ արտասահմանյան: Բանն այն է, որ «սփյուռք»-ի վերջին ք մասնիկն արդեն կորցրել է իր հոգնակիակերտ նշանակությունը, մինչդեռ «սփյուռքներ»-ի դեպքում նկատի են առնվում ամերիկյան, ռուսական, պարսկական և այլ հայկական սփյուռքների տարբերությունները:		«..., որոնք հավաքականորեն անվանվում են սփյուռք»:
26.	Էջ 21- Քարի դարի ժամանակագրությունը ներկայացնում է ընդհանուր ժամանակագրություն, այն դեպքում, երբ կարելի էր ներկայացնել Հայկական լեռնաշխարհին վերաբերող ժամանակափուլերը:	Քարի դարի ժամանակագրությունը տվել են Հայոց պատմության դասագրքերի հիման վրա: Տե՛ս Բ. Հարությունյան, Վ. Բարխուդարյան, Ի. Ղարիբյան, Պ. Հովհաննիսյան , Հայոց պատմություն: 6-րդ դաս.: Դասագիրք հանրակրթական հիմնական դպրոցի համար, Ե., Մանմար, 2018, էջ 18-22:		Անհրաժեշտ է դիտարկումը հաշվի առնել:
27.	Էջ 62 Անտեդի է Մելեկոս Ա-ի դրամի վրա եղած դիմապատկերի մանրամասն ու լայնածավալ քննարկումը, որտեղ օգտագործված հատուկ անուններն անհարկի ծանրաբեռնելու են աշակերտներին:	Մուբյեկտիվ կարծիք է: Նույնիսկ մի կողմ թողնելով այն հանգամանքը, որ նշված հատվածում առկա է ընդամենը երկու երեք անուն, որոնցից երկուսը (Ալեքսանդ Մեծ և Մելեկոս) նաև դասանյութում կան և անհրաժեշտ են, ակնհայտ է, որ զետեղված նյութը լրացուցիչ նյութ է և ամենևին էլ անգիր անել չի ենթադրում: Չտեսելված նյութն ունի բոլորովին այլ առաջադրանք:		Հեղինակի պարզաբանումն ընդունելի է:
28.	Էջ 67-68 «Արքայական ճանապարհը» մի էջում գրված է մեծատառով, մյուս դեպքում՝ փոքրատառ:		Ճիշտ է, վրիպակ կա. պետք է լինի մեծատառով	Հեղինակի մոտեցումն ընդունելի է:
29.	Էջ 70 «Վրաստան» աշխարհագրական անվան օգտագործումը անհարիր է տվյալ ենթատեքստում, նամանավանդ երբ այդ անունն օգտագործված է էջ 80-ի քարտեզում, որպես ժամանակակից պետության անվանում:	Վրաստան կամ Վիրք ձևերը համագոր են և կիրառվում են հավասարապես: Դա նկատելի է նաև գործող և նախորդ դասագրքերում, որոնք էլ նկատի են ունեցել:		Տվյալ դեպքում անհրաժեշտ է օգտագործել «Վիրք» ձևը:

	Երվանդ IV-ի եղբոր՝ Երվազի քրմապետ հանդիսանալու հիշատակումը կրկնվում է (Էջ 66 և 72)	Կրկնությունը տարբեր համաստեքստերում է:		Հնարավորության դեպքում կրկնությունը վերացնել:
30.	<p>Էջ 95 «Հայկական հելլենիզմ» հասկացությունը խիստ վիճելի է, քանի որ հելլենիզմը չէր կարող ունենալ ընդգծված էթնիկ կամ պետական յուրահատկություններ: Ավելի ճիշտ կլիներ օգտագործել «տեղական» եզրը:</p> <p>Էջ 100 «Ի՞նչ առանձնահատկություններ ունեն Արտաշեսյան հելլենիստական Հայաստանի մշակույթը»: Ըստ իս, հելլիստիզմը չի կարող սահմանազատվել գահատոհմերի կառավարման ժամանակաշրջանով:</p>	<p>«Հայկական հելլենիզմ» եզրույթը կիրառել ենք «հրեական հելլենիզմ (Jewish Hellenism)» և «հռոմեական հելլենիզմ (Roman Hellenism)» եզրույթների նմանությամբ: Դիցուք՝ Շ. Քոհենի գիրքը՝ Shaye J.D. Cohen, The Significance of Yavneh and Other Essays in Jewish Hellenism, 2010. XV, 614.</p> <p>Այս դեպքում կարող է, քանի որ Արշակունիների ժամանակաշրջանում հայկական հելլենիզմը որոշ կերպավիճակներում է ապրում:</p>		Հեղինակի պարզաբանումն ընդունելի է:
31.	<p>Էջ 106 «Հայաստանում գահն անցավ նոր՝ Արշակունյաց հարստությանը, որը Մեծ Հայքի համար ապահովեց ևս մի քանի հարյուր տարվա պատմական հեռանկար»:</p> <p>Էջ 132 «...պարսիկները պայմաններ են ստեղծում, հայերը ուրանան հայրենի կրոնը (՝) և տարալուծվեն պարսկական քաղաքակրթության մեջ...»</p>	<p>Ի՞նչն է սխալ... Արշակունյաց Հայաստանը գոյատևեց մինչև 428 թվական, այն է՝ մի քանի հարյուրամյակ:</p> <p>Տեքստի մեջ այսպես է. «Բռնի հավատափոխության փոխարեն պարսիկները պայմաններ էին ստեղծում, որ հայերն իրենց կամքով ուրանան հայրենի կրոնը և տարալուծվեն պարսկական քաղաքակրթության մեջ»: «Հայրենի կրոն» ձևակերպումը քրիստոնեությանն է վերաբերում, ինչը</p>		<p>Անհրաժեշտ է նախադասությունը վերախմբագրել:</p> <p>Անհրաժեշտ է «հայրենի կրոն» արտահայտությունը փոխարինել «քրիստոնեությունը» եզրույթով:</p>

		<p>հստակ կերպով երևում է համատեքստում:</p>		
<p>32.</p>	<p>Հեղինակը փորձել է հայոց պատմության շարադրումն ու մատուցումն իրականացնել նոր եղանակներով և հարցադրումների ու տրամաբանական մոտեցումների նոր գործիքակազմ օգտագործել: Այք է ծագում հարցաշարերում այսօրվա իրականության հետ հանախ հում, անհամոզիչ ու արհեստական հարցադրումները, որոնք մատուցվող նյութի հետ շինծու համադրման տպավորություն են թողնում (տես էջ 53, 57, 69, 72, 82, 115): Որոշ դեպքերում անհնար է չնկատել նման հարցադրումների բացահայտ քաղաքական ենթատեքստը: «Այսօր» բառը, կարծում եմ, անհարկի է չարաշահված դասագրքի տեքստը շարադրելիս: Դպրոցական դասագրքերը պետք է գերծ լինեն որևէ քաղաքական օրակարգ ու իշխանական քմահաճույքներ սպասարկելուց:</p>	<p>Իսիստ սուբյեկտիվ դիտարկումներ: Հիմնավորված չէ, թե ինչպես է, որ <i>«հարցաշարերում այսօրվա իրականության հետ հանախ հում, անհամոզիչ ու արհեստական հարցադրումները, որոնք մատուցվող նյութի հետ շինծու համադրման տպավորություն են թողնում»:</i></p> <p>Իսկ դասագրքում գետեղված հարցադրումները բնավ էլ չեն հետապնդում քաղաքական ենթատեքստեր: Դասագիրքը գրելիս առաջնորդվել եմ միայն ու միայն գիտությունը նկատի ունենալով: Ինձ համար մերժելի է ինչպես որևէ խմբավորմանը կամ կուսակցությանը հանդյանալու կեցվածքը, այնպես էլ դասագիրք գրելը՝ նկատի ունենալով հարևան պետությունների դասագրքերը... Կարևորը գիտությունն է, այս դեպքում՝ պատմագիտությունը, իսկ մնացած խնդիրներով զբաղվող բազմաթիվ կառույցներ կան: Ավելին՝ դիտարկման հեղինակի մեկնաբանություններն են կանխակալ քաղաքական պատկերացումների տպավորություն թողնում: «Այսօր» բառի բոլոր կիրառությունները նրան քաղաքական իշխանության զուգահեռներ են թվացել:</p>		<p>Ներկա ժամանակի հետ զուգահեռներ անցկացնելու հեղինակի փորձերը ողջունելի են: Այդուհանդերձ, դրանց որոշ մասնարհեստական է: Անհրաժեշտ է այդ տեքստերը բարելավել:</p>
<p>Միքայել Բաղայան</p>		<p>ՊԱՏԱՍԽԱՆՆԵՐ</p>		
<p>33.</p>	<p>Էջ 25-26- Հեղինակը նշում է օազիսների և լեռնալանջերի տեսությունների մասին: Նաև իր տարբեր</p>	<p>«Տափաստանային» և «օազիսային» տեսությունները բնավ էլ հնացած տեսություններ չեն: Դրանք, ինչպես</p>		<p>Առաջարկում ենք սեղմ գրել նաև «Ոսկե</p>

	<p>հարցազրույցներում դա ներկայացվում է որպես շոշափելի նորամուծություն: Մինչդեռ, վերը նշված տեսությունները վաղուց համարվում են հնացած: Ավելին, նույնիսկ դրանից հետո, օրինակ առաջ քաշված Քոլլին Ռենֆրյուի, Կավալի-Սֆորցայի և Պիացայի, Գրեյի և Էթթինսոնի և նման շատ տեսություններ ևս համարվում են հնացած: Վերջին ժամանակահատվածում նման տեսությունները փոփոխությունների են ենթարկվում առնվազն 4-5 տարին մեկ՝ գլխավորապես որպես կարևոր հրատարակություններ տեղ գտնելով “Science”, “Nature” և այլ հեղինակավոր պարբերականներում:</p>	<p>արդեն նշել եմ վերևում, կիրառվում են նաև արդի գիտական հոդվածներում (Տե՛ս Foothills and intermountain basins: Does China's Fertile Arc have ‘Hilly Flanks’? - ScienceDirect; (2) (PDF) Housing first farmers: The development and evolution of built environments in the Neolithic of the “Hilly Flanks.” (researchgate.net)):</p> <p>Այն, որ տեսությունները 4-5 տարին մեկ փոփոխվում են, բնավ էլ չի նշանակում, որ դրանք չպետք է հիշատակվեն կամ դրանց չպետք է հղում արվի: Մանավանդ որ նշված տեսությունները հին չեն այնքան, որ ուղղակի մերժվեն. դրանց անընդհատ վերադառնում են տարբեր առիթներով: Կարևորն այն է, որ դրանցից որոշները նշվեն իբրև տեսությունների օրինակներ, ինչպես նաև աշակերտը հստակ իմանա, որ դրանք ընդամենը մի քանիսն են բազմաթիվ այլ տեսություններից: Դասագիրքը լուծում է այդ խնդիրը և առաջադրանքների միջոցով այն ծառայեցնում պատմական մտածողության և քննական մտածողության ձևավորմանը:</p>		<p>Եռանկյունու» տեսության մասին:</p>
<p>34.</p>	<p>Էջ 28- Նշվում է,- «<i>Հայերի ծագման և վաղնջական պատմության հարցն ամենաշատ քննարկված հարցերից է. Ժողովրդի ձևավորման վերաբերյալ կան մի քանի առասպելներ և տեսություններ: Բալկանյան տեսության համաձայն հայերի նախնիներն են Բալկաններից Հայկական լեռնաշխարհ գաղթած փոյուզիացի գաղութարարները: Հայերի ծագման</i></p>	<p>Ասվածը չի համապատասխանում իրականությանը նույնիսկ հեռավոր ու անուղղակի կերպով: Անհասկանալի է «աղոտ կերպով» ձևակերպումը, երբ դասագրքի մեջ հստակորեն գրված է. «<i>Այն, որ հայ ժողովրդի ձևավորումը տեղի է ունեցել տևական փոխազդեցությունների արդյունքում և Հայկական լեռնաշխարհի տարածքում, հաստատվում է նաև</i></p>		<p>Անհրաժեշտ է եղած դիտարկումը հաշվի առնելով վերաշարադրել տեքստը: Մասնավորաբար, սկզբում պետք է գրել հայերի ծագման տեղական (հայկական) և</p>

<p>մասին մեկ այլ տեսակետ հիմնված է Պատմահայր Բորենացու հաղորդած առասպելի վրա: Այս մոտեցումը ենթադրում է հայ ժողովրդի՝ հիմնականում տեղական ձևավորման վարկածը: Այն, որ հայ ժողովրդի ձևավորումը տեղի է ունեցել տևական փոխազդեցությունների արդյունքում և Հայկական լեռնաշխարհի տարածքում, հաստատվում է նաև ժամանակակից գենետիկ հետազոտությունների արդյունքում: Իսկ հայերենը հնդեվրոպական լեզվաընտանիքի առանձին ճյուղ է»:</p> <p>Նախ վերը բերված ձևակերպումները բավական խրթին են շարադրված լեզվական առումով: Խիստ տարօրինակ և վտանգավոր է, երբ հայ ժողովրդի ձևավորման առաջին վարկած է բերվում հայերի եկվորության՝ այն է Փռյուզիայից Հայկական լեռնաշխարհ գաղթած գաղութարարների վարկածը: Այս տեսակետը վաղուց մերժված է գենետիկ, հնագիտական հետազոտությունների կողմից:</p> <p>Հեղինակը աղոտ կերպով ներկայացնում է հայ ժողովրդի տեղական մոտեցման մասին, բայց այդ մասին չի գոնե չի մանրամասնում մի քանի տողով: Այս պարբերության մեջ ցուցաբերվել են կամընտրական մոտեցումներ: Խիստ կասկածելի է թվում, թե ինչպես են 7-րդ դասարանի աշակերտները յուրացնելու և ընկալելու նման բարդ շարադրանքով պարբերությունը:</p>	<p>ժամանակակից գենետիկ հետազոտությունների արդյունքում»:</p> <p>Դասագրքում չկա հայերի եկվորությանը վերաբերող ոչ մի պնդում, բայց կան մարդու և ժողովուրդների ծագման վերաբերյալ տարբեր տեսությունների հիշատակումներ: Խնդրին հիմնավոր մեկնաբանություն տալու համար նպատակահարմար է նախ ներկայացնել համատեքստը, քանի որ համատեքստից դուրս ցանկացած մեջբերում ենթակա է կամայական, անգամ միտումնավոր մեկնաբանության, ինչպես անում են այս քննադատության հեղինակները:</p> <p>Դասագրքի հեղինակն ուղղակի պարտավոր է բերել այդ տեսությունները և դարձնել քննարկման թեմա: Ավելին՝ անագնիվ է աշակերտներին ներկայացնել միայն մեկ վարկած և ասել, որ հենց այսպես է, և դրանից բացի այլ մոտեցում չկա: Բանն այն է, որ միայն մեկ տեսության ամրագրմամբ աշակերտներին սահմանափակում ես կոնկրետ որոշակի տեսանկյունից դիտված աշխարհում՝ չտալով նրան գիտելիք և պատկերացում ժամանակակից աշխարհում շրջանառվող մոտեցումների մասին: Ավելին՝ միակողմանիության արդյունքում աշակերտները գրկվում են նաև շրջանառվող տեսություններին <i>հակադրվելու</i> հնարավորություններ, ինչպես այսօր, այդպես էլ ապագայում, քանի որ պարզապես չեն իմանում, որ այլ տեսակետներ ևս կան:</p>	<p>ապա միայն մյուս վարկածների մասին:</p>
---	---	--

		<p>Նման հակադիր տեսությունների քննարկումները կարող են աշակերտների մեջ հետաքրքրություն առաջացնել մի շարք գիտաճյուղերի նկատմամբ, և նրանցից ոմանք գուցե կցանկանան դառնալ զենետիկներ, հնագետներ, լեզվաբաններ, պատմաբաններ և այլն՝ ավելի հիմնավոր դիրքերից բանավիճելու այդ տեսությունների հետ:</p> <p>Այսպիսով՝ աշակերտը պետք է իմանա այլ վարկածների և տեսությունների մասին, որպեսզի սովորի համադրել և հակադրել, ինչպես նաև պարզապես իմանալու համար, թե ինչ վարկածներ են շրջանառվում այսօր աշխարհում: Ավելին՝ պատմության ուսուցման հիմնական նպատակներից և նոր դասագրքի ուղղություններից է այն, որ պատմության դասավանդմամբ ձևավորվի քննադատական մտածողություն: Իսկ դա հնարավոր է կարողունակահենք մոտեցմամբ (գիտելիք+հմտություններ+դիրքորոշում)՝ հատկապես միմյանց հակադիր տեսությունների քննարկմամբ:</p> <p>Այսպես՝ նոր դասագրքում գրված է. «Հայերի ծագման վաղնջական պատմության հարցն ամենաշատ քննարկված հարցերից է. Ժողովրդի ձևավորման վերաբերյալ կան մի քանի առասպելներ և տեսություններ»:</p> <p>Վերոհիշյալ պարզ ձևակերպումից երևում է, որ խոսքն ինչպես առասպելների, այդպես և գիտական տեսությունների մասին է, ինչը ցույց է</p>		
--	--	---	--	--

		<p>տալիս նաև դրանց փոխկապվածությունը: Ուստի հաջորդիվ դասագրքում շարադրվում է այդպիսի երկու վարկած՝ «բավկանյան» և «տեղական», որոնցից մեկը հունական առասպելների կամ վկայությունների հիման վրա է կազմավորվել, մյուսը՝ տեղական, հատկապես Մովսես Խորենացու վկայածի հիման վրա: Եվ, խնդրում են ուշադրություն դրաձնել, որ անմիջապես այդ երկու մտեցումները նշելուց հետո հեղինակը գրում է. «Այն, որ հայ ժողովրդի ձևավորումը տեղի է ուեցել տևական փոխազդեցությունների արդյունքում և Հայկական լեռնաշխարհի տարածքում, հաստատվում է նաև ժամանակակից գենետիկական հետազոտությունների արդյունքում» (էջ 28): Հայ ժողովրդի՝ Հայկական լեռնաշխարհում տեղաբնիկությունը հաստատող միակ վկայությունը չէ սա: Իսկ նախահայրենիքի թեմայի վերաբերյալ հաջորդ՝ 29-րդ էջում կա նաև այսպիսի ձևակերպում. «Այսպիսով թեպետ դեռ վիճարկվում է Հնդեվրոպական նախահայրենիքի տեղադրության հարցը, բայց Հայկական լեռնաշխարհն այն տարածքն է, որտեղ տեղի է ունեցել հայ ժողովրդի կազմավորումը» (էջ 29): Իսկ էջ 28-ի նյութից առաջ՝ 24-27-րդ էջերում, «Ձայներ գիտությունից» բաժնում բերված են երկու մրցակցող տեսություններ՝ «օազիսի» և «լեռնալանջերի» տեսությունները: Դրանց վերաբերյալ նյութի վերջում կան առաջադրանքներ, որոնց հիման վրա</p>		
--	--	--	--	--

		<p>կրկին առաջին պլան է գալիս հայերի՝ Հայկական լեռնաշխարհում տեղաբնիկ լինելու հիմնավորումը, քանի որ «լեռնականների տեսության» հավաստիությունը վերջին շրջանում հիմնավորվել է (աշակերտները դրանում նաև կհամոզվեն, երբ կկատարեն «Աշխատանք սկզբնաղբյուրների հետ» բաժնի 3-րդ առաջադրանքը (էջ 26): Ավելին՝ նույն այդ նյութի վերջնամասում հստակ գրված է. «Հնագիտական և գենետիկական հետազոտությունները ցույց են տալիս, որ ժամանակակից հայերն անմիջական հետնորդներն են Հայկական լեռնաշխարհի նորքարիդարյան բնակչության» (էջ 26):</p> <p>Այսպիսով՝ նոր դասագիրքը ոչ միայն չի վիճարկում հայերի տեղաբնիկությունը, այլև հայերի տեղաբնիկության մասին տեղեկությունը զետեղում է այսօր աշխարհում շրջանառվող տեսությունների համապատկերում՝ այսպիսով ավելի հիմնավոր դարձնելով այն:</p>		
35.	<p>Էջ 31- Ներկայացված է ձիու բրոնզի սանձ և թվագրվում է Ք. ա. 26-25-րդ դարերով: Նման ձիու սանձերը չեն կարող նման թվագրում ունենալ, այլ թվագրվում են օրինակ Ք. ա. 16-15-րդ դարերով:</p>		<p>Այո, վրիպակ է տեղ գտել. պետք է լինի՝ 15-14-րդ դարեր:</p>	<p>Հեղինակի մոտեցումն ընդունելի է:</p>
36.	<p>Էջ 34- Բառարանում նշված է, Երկաթի դար, պատմական ժամանակահատված, որն ընդգրկում է Ք. ա. Մոտ 1200-550 թթ.: Հին Աշխարհի տարբեր տարածաշրջաններում երկաթի դարի</p>	<p>Քանի որ խոսքը Հայոց պատմության մասին է, անհրաժեշտություն չեմ գտել հատուկ շեշտել, որ խոսքը Հայկական լեռնաշխարհում երկաթի դարի վերաբերյալ է: Թերևս կարելի էր նշել:</p>		<p>Անհրաժեշտ է դիտարկումը հաշվի առնել:</p>

	<p>սկիբն ու տևողությունը խիստ տարբեր են: Հեղինակը պետք է նշեր, որ խոսքը վերաբերում է Հայկական լեռնաշխարհում երկաթի դարի տևողությանը: Մինչդեռ, նշված տեքստում երկաթի դարն ընկալվում է որպես ընդհանուր հասկացողություն: Այսպես օրինակ, կենտրոնական և արևմտյան Եվրոպայում Երկաթի դարը սկսվում է մոտ Ք. ա. 800 թվականից և շարունակվում մինչև մոտ. Ք. ա. 1 թվականը:</p>			
<p>37.</p>	<p>Էջ 34- Նշված է ասուրերեն և տրված է բացատրություն և նշված է, թե իբր ասուրերենը ասուրա-բաբելական սեպագիր արձանագրությունների լեզուն է: Այդ դեպքում, ո՞րն էր բաբելերեն արձանագրությունների լեզուն: Ասուրերենը աքքադերենի կարևոր խոսվածքներից է: Աքքադերենի մյուս գլխավոր խոսվածքն է բաբելերենը, և ըստ այդմ հեղինակը թույլ է տվել սխալ քանի որ ասուրերեն արձանագրությունների լեզուն ասուրերեն է, իսկ բաբելոներինը՝ համապատասխանաբար՝ բաբելոներենը: Հետաքրքիր է, որ հեղինակն, օրինակ դասագրքի էջ 43-ում անդրադառնալով Բեհիթունյան արանագրությանը՝ նշում է, որ այնտեղ Հայաստանը բաբելոներեն տեքստում անվանվում է Ուրաշտու: Այսինքն, դասագրքի այդ հատվածում հեղինակը ճիշտ կերպով նշում է բաբելոներենը:</p>	<p>Դասագրքում գրված է. «<i>Ասուրերեն (ասորեստաներեն) – աքքադերենի լեզվական ճյուղ, որով խոսում և գրում էին հին Ասորեստանում: Ասուրա-բաբելական սեպագիր արձանագրությունների լեզուն</i>»: Ինչպես տեսնում եք, նախ՝ գրված է, որ «ասուրերենը (ասորեստաներենը) աքքադերենի լեզվական ճյուղ է»: «Routledge Dictionary of Language and Linguistics» գրքում դրա մասին կարող ենք կարդալ հետևյալը. «<i>Վկայված հնագույն սեմական լեզուն (սկսած Ք.ա. 3200 թ. մինչև մեր թվարկության սկիզբը), Ասորական և Բաբելոնական կայսրությունների լեզուն: Ք.ա. երկրորդ [հազարամյակից] հետո աքքադերենը տրոհվել է երկու բարբառի (ասուրերեն, բաբելոներեն), որոնք գրվել են շումերերենից փոխառված սեպագրով</i>» (Oldest attested Semitic language (app. 3200 BC to around the turn from BC to AD), the language of the Assyrian and Babylonian empires. After the second [millennium] BC Akkadian split into two dialects (Assyrian, Babylonian), written in cuneiform borrowed from Sumerian: — էջ</p>		<p>Հեղինակին առաջարկում ենք տեքստն ավելի պարզ շարադրել:</p>

		<p>35: Տե՛ս նաև Richard Caplice, Introduction to Akkadian (Studia Pohl), Loyola Pr, 1988, p. 3): Ինչպես տեսնում ենք, սույն բացատրությունը դասագրքի բառարանում տրված բացատրությունից գրեթե չի տարբերվում: Իսկ ինչ վերաբերում է այն դիտարկմանը, թե «ասուրերենը աքքադերենի կարևոր խոսվածքներից է: Աքքադերենի մյուս գլխավոր խոսվածքն է բաբելերենը», ապա դա բնավ էլ իմ գրածին չի հակասում. ճիշտ ու ճիշտ ասում է այն, ինչ գրված է դասագրքում: Ուստի անհասկանալի է մնում բառարանում «ասուրերեն» բառի բացատրության հարուցած տարակուսանքը</p>		
<p>38.</p>	<p>Էջ 34- նշված է, <i>-«Ուրարտուի արքաներն իրենց երկիրը կոչում էին Բիայնիլի, որից էլ առաջացել է Վան քաղաքի անվանումը: Քաղաքի անունով էլ ստեղծված նոր պետությունը կոչվում է նաև Վանի թագավորություն»:</i> Իրականում, Վանի թագավորությունը մասնագիտական եզրույթ է, որը տրվել է մասնագետների կողմից: Ցանկալի կլիներ, որպեսզի հեղինակը նշեր, որ վերը նշված երկիրը սեպագիր արձանագրություններում հիշատակվում է նաև որպես Բիայնա, մինչդեռ Բիայնիլի ձևը շատ հազվադեպ է հանդիպում ուրարտական սեպագիր արձանագրություններում: Հեղինակը տեղյակ չէ, որ նեղ մասնագիտական շրջանակներում այս հարցը դեռևս միանշանակ չի ընկալվում: Այնպիսի ականավոր հետազոտողներ, ինչպիսիք են Գեռնոտ Վիլհելմը, Միլյո Սալվինին,</p>	<p>Վանի վերաբերյալ դիտարկման առնչությամբ պարզապես բերենք գրքի համապատասխան հատվածը. «<i>Եվ արդեն Զ.ս. IX դարի կեսերին Նաիրյան երկրների միավորմամբ ստեղծվում է միասնական պետություն: Այն առավել հայտնի է իր ասորեստանյան Ուրարտու (Արարատ) անունով: Ուրարտուի արքաներն իրենց երկիրը կոչում էին Բիայնիլի, որից էլ առաջացել է Վան քաղաքի անվանումը: Քաղաքի անունով էլ ստեղծված նոր պետությունը կոչվում է նաև Վանի թագավորություն»:</i> Ինչպես տեսնում ենք, հստակ գրված են երկրի տարբեր անվանումները՝ Ուրարտու-Արարատ-Բիայնիլի-Վան: Իսկ «Վանի թագավորություն» անվանում ենք՝ հենց Վան քաղաքի անունից ելնելով, ինչն ուղղակիորեն չի նշանակում, թե Վան անունով քաղաքը կար Ուրարտուի ստեղծման պահին: Միայն</p>		<p>Հեղինակի պարզաբանումը հիմնական մասով ընդունելի է: Առաջարկում ենք նշել «Վանի թագավորություն» եզրույթի՝ մասնագետների կողմից ստեղծված լինելը:</p>

	<p>Ռոբերտո Գանը հակված են կարծելու, որ խոսքը գնում է ոչ թե Բիայնա, այլ Բիա անվան և կամ Բիա ցեղի մասին: Եթե, հեղինակը տեղյակ լիներ այդ տեսակետներին, ապա պրոֆեսինալիզմի տեսանկյունից կարևոր կլիներ, որպեսզի նա նշեր, որ հավանաբար, Բիայնիլից էլ առաջացել է Վան քաղաքի անունը:</p>	<p>արձանագրվում է, որ <i>«Ուրարտուի արքաներն իրենց երկիրը կոչում էին Բիայնիլի, որից էլ առաջացել է Վան քաղաքի անվանումը»</i>: Իմ ձևակերպումն ավելի շուտ բաց է թողնում ժամանակագրության հարցը, այն է՝ կոնկրետ երբ է առաջացել Վանի թագավորության անվանումը: Մի բան, որը քննարկման դաշտ է բացում: Այդուամենայնիվ, համաձայն ենք, որ կարելի էր ինչ-որ կերպ ցույց տալ եզրույթի՝ մասնագետների կողմից ստեղծված լինելու իրողությունը՝ տարրնթերցումներից խուսափելու համար:</p> <p>Հեղինակը տեղյակ է տարբեր մոտեցումներից: Եվ տեղյակ եմ նաև, որ կա «Վան» անվան մեկ այլ մեկնաբանություն, այն է՝ բխեցվում է Վանա լճի հյուսիս-արևելյան ափին տարածվող Գնունի գավառից (ավելի մանրամասն տե՛ս Արմեն Պետրոսյան, Հայ ժողովրդի ծագման խնդիրը, Ե., Անտարես, 2017, էջ 107-108):</p>		
<p>39.</p>	<p>Էջ 35-Նախ գլխի ենթավերնագրի անունն է՝ «Նոր մայրաքաղաք Տուշպա-Վան» Կրկին շարունակվում է օգտագործվել այն հին տեսակետը, թե իբր Տուշպա քաղաքը կառուցվել է Սարդուրի Առաջինի կողմից: Իրականում Վանա ժայռի ստորոտին կառուցած շինության աստուրերեն նույնիմաստ արձանագրություններում ուրարտական արքան որևէ հիշատակություն չի թողել Տուշպայի կառուցման մասին: Նա նշում է կառույցի շինարարության մասին: Ընդ</p>	<p>Գասագրքի 35-րդ էջում Տուշպա քաղաքի մասին գրված է. <i>«Նա [Սարդուրի I արքան] Վանա լճի արևելյան ափի վիթխարի ժայռի լանջին կառուցեց Տուշպա մայրաքաղաքը, որը դարձավ թագավորության տնտեսական և քաղաքական կենտրոնը»</i>: Ինչպես տեսնում ենք, տեքստում խոսքը Տուշպան իբրև մայրաքաղաք կառուցելու մասին է, որից չի հետևում, թե դրանից առաջ այդ քաղաքը չկար (հարկավ, ես ծանոթ եմ Երվանդ Գրեկյանի (որը Հայաստանի լավագույն</p>		<p>Անհրաժեշտ է դիտարկումը հաշվի առնել գրելով, որ Սարդուրին Տուշպան «դարձրեց մայրաքաղաք»:</p>

<p>որում այդ կառույցի գործառույթները մինչ այսօր վիճարկվում են մասնագետների շրջանակներում: Այն կարող էր լինել տաճար, կառամատույց և այլն:</p> <p>Բանն այն է, որ Տուշյան (տեքստում՝ Տուրուշյան) որպես բնակավայր հիշատակվում է նույնիսկ Սարգուրի I-ի գահակալումից առաջ, մոտավորապես Ք. ա. 856–853 թվականներին (գուցե՝ ավելի վաղ)՝ ասորեստանյան արքաներից մեկի՝ (Աշշուրնաձիբպալ II կամ Սալմանասար III) դեպի Հայկական լեռնաշխարհ կատարած արշավանքի համատեքստում (Ե. Գրեկյան, 2013, էջ 49): Սմբատ Հովհաննիսյան այս իմ դիտարկումից հետո փորձել է արդարանալ, թե իբր նա նշել է, որ ի նկատի է ունեցել, որ Սարգուրի Առաջինը Տուշյան դարձրել է մայրաքաղաք: Մինչդեռ նման փաստ ևս մեզ հայտնի չէ: Ավելին, Տուշյա քաղաքը սկզբնական փուլում կարող էր ընգրկված չլիներ Բիայնիլիի կազմում: Այդ մասին անդրադարձել է հայտնի ուրարտագետ Երվանդ Գրեկյանը:</p>	<p>ուրարտագետն է) տեքստին, ինչպես նաև՝ թեմայի վերաբերյալ բազմաթիվ այլ մենագրությունների ու հոդվածների): Չուգահեռ կարող ենք տանել Կոնստանտինոս I-ի Բյուզանդիոնն իբրև Հռոմի մայրաքաղաք կառուցելու/դարձնելու հետ: Բյուզանդիոնը կար Կոնստանդինոսից առաջ էլ, բայց այն իբրև մայրաքաղաք կառուցվեց հենց նրա՝ կողմից, ինչպես որ Տուշյան՝ Սարգուրի I-ի:</p> <p>Սակայն Տուշյան նշելով իբրև մայրաքաղաք, որը կառուցվել է Սարգուրի I-ի կողմից՝ հաշվի եմ առել նախ և առաջ գործող Հայոց պատմության դասագրքերի տեղեկատվությունը: Դիցուք՝ Հարությունյան Բ., Բարխուդարյան Վլ., Ղարիբյան Ի., Հովհաննիսյան Պ., Հայոց պատմություն (հնագույն և հին շրջան): 6-րդ դասարանի դասագիրք, - Եր.: «ՄԱՆՄԱՐ», 2013 կամ 2023, էջ 44; Մելքոնյան, Ա. Մովսիսյան, Է. Դանիելյան, Հայոց պատմություն: 6-րդ դասարան: Դասագիրք հանրակրթական հիմնական դպրոցի համար, Եր., Չանգակ, 2018, էջ 43-44; Մելքոնյան, Հ. Ավետիսյան, Ա. Մովսիսյան, Պ. Հովհաննիսյան, Է. Դանիելյան, Հայոց պատմություն: 10-րդ դաս., Հումանիտար հոսքի դասագիրք, Ե., Չանգակ, 2014, էջ 49-50:</p> <p>Դասագիրքը գրելիս հաճախ փորձել եմ կոմպրոմիսային տարբերակներ գտնել նախկին կամ գործող դասագրքերի հետ՝ արմատական</p>		
--	---	--	--

		<p>փոփոխություններ չանելու նպատակով:</p> <p>Նշված մյուս մանրամասնությունները, բնականաբար, դուրս են 7-րդ դասարանի աշակերտին մատուցվելիք նյութի շրջանակներից:</p>		
<p>40.</p>	<p>Էջ-36-Պատմությունը և մարդը սյունակ: Նշվում է, որ ֆրանսիացի ասուրագետ Ստանիսլավ Գյուարը կռահեց, որ ուրարտական արձանագրությունների եզրափակիչ տողերը կրկնվող անեծքի բանաձև են, և ասորեստանյան գուգահեռ բնագրերի համադրությամբ վերծանեց մի քանի բառեր ու քերականական դարձվածքներ: Այստեղ, հարց է առաջանում, թե ինչպես է 7-րդ դասարանի երեխան հասկանալու, թե ինչ է անեծքի բանաձևը: Այդ կապակցությամբ, անհրաժեշտ էր առանձին բացատրության անդրադարձ կատարել անեծքի բանաձևին:</p>	<p>Սուբյեկտիվ դիտարկում է: Տեքստերը նաև նրա համար են, որ հարցեր առաջանան, և այդ հարցերի պատասխանները որոնվեն: Եթե «անեծքի բանաձևի» վերաբերյալ հարց է առաջանում, հրաշալի է. նաև քննարկում կծավալվի:</p>		<p>Հեղինակի պարզաբանումն ընդունելի է:</p>
<p>41.</p>	<p>Էջ 36-նույն սյունակում նշվում է - անգլիացի աշուրագետ Արչիբալդ Սեյսը... Իրականում պետք է նշվեր ասուրագետ և ոչ թե աշուրագետ, ինչը հեղինակն արել է Գյուարի դեպքում:</p>		<p>Այո, պետք է լինի ասուրագետ, ինչպես գրված է դասագրքի նույն էջում (էջ 36-ի սյունակում):</p>	<p>Հեղինակի մոտեցումն ընդունելի է:</p>
<p>42.</p>	<p>Էջ 37-Տեղադրված է նկար և նշված՝ Վանի բերդ-Ք.ա. 9-7-րդ դարեր, իրականում Վանի բերդը շարունակել է գործել նշված դարերից շատ և շատ ավելի երկար: Ընդ որում, նշված նկարում պատկերված հատվածը կապ չունի Ք. ա. 9-7-րդ դարերի հետ:</p>	<p>Ինչ վերաբերում է դասագրքի 37-րդ էջում տեղադրված Վանի բերդի նկարին ամնչվող գրությանը՝ «Ք.ա. 9-7-րդ դդ.», ապա նկատի ենք ունեցել բերդի ԿԱՌՈՒՑՄԱՆ ժամանակը: Թեև կարծում ենք, որ կարելի է և համաձայնել դիտարկմանը (այո, արժեր, որ տրվեր բացատրություն՝ տարբերությունից խուսափելու համար),</p>		<p>Հեղինակի մոտեցումը (միայն բերդի անվանումը գրելը) ընդունելի է:</p>

		բայց միևնույն ժամանակ նկատենք նաև, որ քիչ հավանական է ժամանակային նշված միջակայքն իբրև սկզբի և ավարտի ժամանակաշրջան ընկալելը, մանավանդ որ Վանի բերդը գոյություն ունի նաև մեր օրերում: Նոր տարբերակում գրված կլինի պարզապես «Վանի բերդը»		
43.	<p>Էջ 39-նշվում է-Բացի մի քանի պատահական արշավանքներից՝ Ասորեստանը միառժամանակ խոշոր հարձակումներ չձեռնարկեց ոչ դեպի արևմուտք, և ոչ էլ դեպի հյուսիս: Պատահական արշավանք ձևակերպումը հաջող չէ: Ինչպե՞ս կարող է արշավանքը լինել պատահական, այն էլ Ասորեստանի պես տերության կողմից, որն այդ ժամանակ չին Մերձավոր Արևելքի գլխավոր խաղացողն էր:</p>		Այո, «պատահական»-ը վրիպակ է, պետք է լինի «աննշան»: Բայց այլ տարբերություններից խուսափելու համար ուղղակի հանվում է «պատահական» բառը:	Հեղինակի մոտեցումն ընդունելի է:
44.	<p>Էջ 39- Արգիշթի Առաջինի գահակալության թվերի դիմաց նշված է՝ 786-764: Պետք է լինի Բ. ա. 786-764: Հավելենք նաև, որ Արգիշթի Առաջինը գահակալության առաջարկած տարեթվերը համարվում են հնացած: Օրինակ, աշխարհի ամենահայտնի ուրատագետներից Միրյո Սավիինին իր ուրարտական արձանագրությունների դիվանի 23-րդ էջում նշված արքայացանկում առաջարկում է Բ. ա. 785/780-756 թթ. տարբերակը: Արգիշթիի գահակալության թվերի վերանայման վերաբերյալ լուրջ հողվածով է հանդես եկել հայտնի ուրարտագետ Երվանդ Գրեկյանը:</p>	Առաջնորդվել եմ գործող և հին դասագրքերի նշված թվագրությամբ:		Հեղինակի պարզաբանումն ընդունելի է:
45.	<p>Էջ 39-Խոսվում է Մենուայից հետո Արգիշթիի կողմից գահը ժառանգելու մասին: Սակայն, որևէ խոսք չկա</p>	Դասագրքում չենք անդրադարձել Ինուշայուա, Մելարտուա արքայազներին, Վանի թագավորության		Հեղինակի պարզաբանումն ընդունելի է:

<p>Ինուշպուայի մասին: Ինուշպուան Մենուայի ավագ որդին էր և հիշատակվում է սեպագիր տեքստերում: Մետաղե առարկաների վրա Ինուշպուայի անվամբ սեպագիր արձանագրությունները որոշակի հիմք են տալիս ենթադրելու, որ ինչ-որ կարճ փուլում նա ժառանգել է գահը, քանի որ նման արձանագրությունները գլծավորապես բնորոշ են արքաներին: Թե ինչ է հետո պատահել և ինչ հանգամանքերում է Արգիշթի Մենուայորդին հաջորդել գահը, դեռևս մեզ հայտնի չէ:</p>	<p>հայտնի երկրորդ թագուհուն՝ Կակուլիին (այստեղ նշենք, որ վերջերս պարզվել է ուրարտական մեկ այլ թագուհու անուն ևս), ինչպես նաև ուրիշ արքաների և պատմական կարևոր դերակատարների, քանի որ, կրկնենք մեկ անգամ էլ, մենք առաջնորդվել ենք այն սկզբունքով, որ ԴԱՍԱԳԻՐՔԸ ՀԱՆՐԱԳԻՏԱՐԱՆ ՉԷ, ՇՏԵՄԱՐԱՆ ՉԷ, ՈՐ ԱՄԵՆ ԻՆՉ ՉԵՏԵՂԵՆՔ և ծանրաբեռնենք 7-րդ դասարանի աշակերտի հիշողությունը: Սա ես գիտեմ նաև դպրոցում դասավանդման իմ երկարամյա փորձառությունից: Այսօր սա նաև շեշտադրվում է ժամանակակից մանկավարժության, կրթական տեսությունների մեջ՝ դասագրքաստեղծման հարցերին անդրադառնալիս: Ի դեպ, այդպիսի մանրամասներ չկան նաև նախորդ դասագրքերում (<i>տե՛ս Ա. Մելքոնյան, Ա. Մովսիսյան, Է. Գանիեյան, Հայոց պատմություն: 6-րդ դասարան: Դասագիրք հանրակրթական հիմնական դպրոցի համար, Եր., Չանգակ, 2018, էջ 42-69; Հարությունյան Բ., Բարխուդարյան Վ., Ղարիբյան Ի., Հովհաննիսյան Պ., Հայոց պատմություն (հնագույն և հին շրջան): 6-րդ դասարանի դասագիրք, Եր., Մանմար, 2018, էջ 42-53</i>): Բայց համոզված ենք, որ այդ և այլ մանրամասներ ևս անհրաժեշտ է ներկայացնել արդեն 10-րդ դասարանի դասագրքում: Ի վերջո, եթե անգամ ամեն ինչ, մի պահ պատկերացնենք, հնարավոր լինի զետեղել 7-րդ դասարանի հայոց պատմության 176</p>		
---	--	--	--

		<p>Էջերում, ապա ի՞նչ են անելու աշակերտները 10-րդ դասարանում:</p>		
<p>46.</p>	<p>Էջ 40 -Նշվում է Էրեբունի քաղաքի կառուցման մասին, սակայն որևէ անդրադարձ չկա, որ Էրեբունուց է սկսվում Հայաստանի հանրապետության մայրաքաղաք Երևանի գրավոր պատմությունը, Էրեբունու և Երևանի ուղիղ կապը: Սա այն դեպքում, երբ ավելի են շատանում ոչ բարեկամների կողմից Երևանի նկատմամբ կեղծ հրապարակումները, քարոզն ու հավակնությունները: Մինչդեռ, օրինակ Տուշպայի պարագայում հեղիանկն օրինակ գերծ չի մնում անդրադառնալ Տուշպան Սարդուրիի կողմից որևէ ուղիղ հիմնավորում չունեցող գրառմանը: Որպես նկար դրված է Իշպուհինիի Վանից հայտնաբերված արձանագրություն, իսկ ներքևում Աշոտակերտի արձանագրության տեքստը: Դրանք տարբեր արձանագրություններ են և կարող է կարող են առաջացնել և ուսուցիչների և աշակերտների մոտ:</p>	<p>Սուբյեկտիվ դիտարկում է:</p> <p>Էրեբունի-Երևանի կապն արտացոլված է դասագրքի 41-րդ էջից սխալմամբ դուրս մնացած քարտեզում (այն արդեն առկա է դասագրքի էլեկտրոնային տարբերակում), ինչպես նաև 52-րդ էջի նկարում, որտեղ տեղադրված է <i>Ձիու առաջամասով արծաթյա պոդյակ</i>՝ Էրեբունի-Երևան նշումով:</p> <p>Իսկ այլ մանրամասներ աշակերտները կարող են բացահայտել ուսուցչի աշակցությամբ՝ Արգիշտի I-ի կերպարն ավելի մանրամասն հետազոտելով:</p> <p>Ինչ վերաբերում է 40-րդ էջում գետեղված լուսանկարին, այնտեղ թավ տառերով գրված է «Իշպուհինիի՝ վանյան (ուրարտերեն) լեզվով գրված արձանագրություններից (Վան)», ինչը հստակ ցուցանում է լուսանկարի նկարագիրը: Իսկ քանի որ մեր դիմած թանգարաններից և ոչ մեկը չունեն <i>Աշոտակերտի</i> արձանագրության լուսանկարը (այդ թվում՝ «Էրեբունի» պատմահնագիտական արգելոց-թանգարանը), ապա իբրև Վանի թագավորության (Ուրարտուի) արձանագրության նմուշ՝ մենք գետեղեցինք այն լուսանկարը, որն ունեինք: Չեմ կարծում, թե շփոթմունք կարող է ծագել, և թե ուշադիր կարդացողը չի հասկանա, որ վերևում գետեղված արձանագրությունը</p>		<p>Անհրաժեշտ է դիտարկումը հաշվի առնել և հստակ գրել Էրեբունի-Երևան կապի ու ժառանգորդության մասին:</p>

		<p>Իշպուհինի արձանագրություններից մի նմուշ է (Վանից), իսկ ներքում գետեղված սկզբնաղբյուրն Իշպուհինի՝ Աշոտակերտի արձանագրության թարգմանված տեքստից է:</p>		
<p>47.</p>	<p>Էջ 41-Գասագրքի 41-րդ էջում ներկայացված է Ուրարտուի քարտեզը, որի տակ բառացիորեն գրված է՝ Վանի թագավորության սահմանները Ք. ա. 743-700 թթ.: Ընդ որում, սա Ուրարտուի գլխում ներառված միակ քարտեզն է: Ցավոք, բաժնում տեղ չի գտել օրինակ Արարատի թագավորության վերելքը ներկայացնող քարտեզ: Սակայն, ինչն է տարօրինակ, որ այդ քարտեզում Ուրարտուի մեջ ներառված չէ այսօրվա Հայաստանի հանրապետության տարածքը: Սա բավական մտահոգիչ է: Ուրարտուի տարածքը գլխավորապես զբաղեցնում են ներկայիս Թուրքիայի և Նախիջևանի հատվածները: Այդ ինչպե՞ս ստացվեց, որ Հայաստանի հանրապետությունը չկա Ուրարտուի կազմի մեջ: Ռուսա Սարգսյանը, ով կառավարել է մոտավորապես Ք. ա. 730-ականների կեսերից մինչև 713 թվականը, նվաճել է ներկայիս Գավառի տարածքը և հիմնել ամրոց, որն անվանել է Խալդիի քաղաք: Այդ է փաստում Գավառի տարածքից գտնված սեպագիր արձանագրությունը: Այստեղ Ռուսան կառավիչ է նաև կարգել: Նույն Ռուսա Սարգսյանը Մևանի հարավային ավազնաում ներկայիս Ծովհնար և Արծվանիստ գյուղերի մոտ կառուցում է նոր քաղաք, որը կոչում է Տարերքի աստծո պատվին: Այժմ կարելի գնալ և Օձաբերդ հնավայրի քարածայռերից</p>	<p>Քարտեզի առնչությամբ մենք արդեն ասել ենք, որ իրոք տեղի է ունեցել շփոթմունք. Իշպուհինի արքայի (Ք.ա. մոտ 825-810 թթ.) ժամանակների՝ Վանի թագավորության չմշակված քարտեզն է շփոթաբար գետեղվել Արգիշտի II-ի ժամանակների քարտեզի փոխարեն: Չմշակված ասելով՝ նկատի ունենք դիտարկման հեղինակի մատնանշած հարցերը: Եվ, բնականաբար, Իշպուհինի կառավարման տարիներին Էթիունին (Էթիուխին), որի տարածքի զգալի մասը համապատասխանում է ժամանակակից Հայաստանի Հանրապետությանը, բնավ էլ ներառված չի եղել Իշպուհինի ժամանակների Վանի թագավորության կազմում... Էթիունին Վանի թագավորության մեջ կներառի միայն Արգիշտի I-ը (գոնե առայժմ գիտությանը հայտնի տվյալներով): Իշպուհինի կառավարում ասելով՝ հարկավ, նկատի ուենք նաև Մենուայի հետ համատեղ կառավարումը, և քարտեզում դիտարկված են նաև այդ ժամանակները: Իսկ (շփոթաբար գետեղված քարտեզում) սահմանի՝ մինչև Արաքսի ափ հասնելու մասին գրել է ճանաչված ուրարտագետ Նիկոլայ Հարությունյանն իր «Բիպնիլի» (1970 թ.) կոթողային մենագրության մեջ (էջ 147 և 149): Այդպիսի հղումներ շատ կան, բայց բավարարվենք այսքանով:</p>	<p>Միայնամբ տեղադրված քարտեզն արդեն փոխարինվել է համապատասխան քարտեզով, որը գետեղված է դասագրքի էլեկտրոնային տարբերակով:</p>	<p>Հեղինակի պարզաբանումը (քարտեզը փոխելու հավաստիացումը) ընդունելի է:</p>

<p>մեկին տեսնել այդ արձանագրությունը, որտեղ, իդեպ, պատմվում են Ռուսայի այլ նվաճումների մասին: Այս քարտեզին նայելով՝ կարելի է կարծիք կազմել, որ ներկայիս Հայաստանը նշված ժամանակաշրջանում կապ չի ունեցել Ուրարտուի հետ: Ըստ այդմ, խիստ աղոտ են դառնում ներկայիս Հայաստանի՝ Արարատի թագավորության ժառանգորդ լինելու կովանները: Արգիշթի Ռուսայորդին, ով կառավարել է Ք. ա. 8-րդ դարի վերջերին և առնվազն 7-րդ դարի սկզբներին նույնիսկ հասնում է Սյունիք՝ առնվազն Սիսիանի տարածաշրջան, որտեղ թողնում է երկկողմ արձանագրություն: Ընդ որում, այդ խիստ հետաքրքիր արձանագրության մեջ նաև նշվում է Ծուլուկու երկիրը, որ Սյունիքի Ծղուկ գավառն է: Դե, Ռուսա Արգիշթորդին Ք. ա. 7-րդ դարի կեսերին Արարատյան դաշտի սրտում ուրարտական սեպագիր արձանագրությունների Վագա երկրում կառուցում է հռչակավոր Թեյշերաինի քաղաքը, որն համարվում է ամենաշատ նյութ տված ուրարտական հուշարձաններից մեկը: Նման քարտեզի տեղադրումը պարունակում է յուրջ վտանգներ: Պարոն Հովհաննիսյանի հետ մեր ֆեյսբուքյան հաղորդագրության ընթացքում, նա նշեց, որ խնդիր կար Ուրարտուի հստակ քարտեզների առումով: Սակայն, պետք է նշեմ, որքան էլ Ուրարտուի քարտեզների սահմանների տարբեր աշխատություններում կարող են իրար չհամընկնել, միևնույն է</p>	<p>Իսկ այն, որ իրոք անհամապատասխան քարտեզ է գետեղվել էջ 41-ում, դա ակնհայտ է դառնում քարտեզի ներքևում գետեղված առաջադրանքներից. դրանք չեն վերաբերում տեղադրված քարտեզին, այլ ենթադրում են այլ քարտեզ: Հավելենք նաև, որ քարտեզների հարցի քննարկումը վեր հանեց ևս մի խնդիր. մինչ օրս մենք չունենք բացատրական քարտեզների ժողովածու: Քարտեզներ, որտեղ գիտական հիմնավորվածությամբ կներկայացվի, թե ինչու է այս կամ այն տարածքը/երկրամասը նշված հենց տվյալ սահմաններով: Այս խնդրին բախվեցինք, երբ միևնույն ժամանակների վերաբերյալ տարբեր քարտեզների հանդիպեցինք: Գիտական մեկնաբանություններն անհրաժեշտ են, որպեսզի հնարավոր լինի հիմնավոր քարտեզները զատորոշել կամայական կերպով սահմանագծված քարտեզներից:</p> <p>Դասագրքի էլեկտրոնային տարբերակում արդեն կա այն քարտեզը, որը պետք է գետեղվեր 41-րդ էջում:</p>		
---	--	--	--

<p>մասնագիտական գրականության մեջ, Հայաստանի հանարապետության տարածքի առնվազն մի հատվածը անպայմանորեն ընգրկված է այնտեղ: Պարոն Հովհաննիսյանը նշեց նաև, որ փորձ է արել ցույց տալ Էթիունիի ինքնիշխանությունը: Այդ դեպքում, Էթիունին այդ ժամանակ բավական հզոր ուժ էր: Բայց Էթիունիի տարածքների առնվազն մի հատվածը Ք. ա. 743-700 թվականներին մտել է ուրարտական տերության կազմի մեջ: Ավելին, մենք, և Ուրարտուիի և Էթիունիի ժառանգներն ենք: Այս քարտեզում կան մի շարք սխալ նշված տեղանուններ: Այսպես նշված է ուրարտագիտությանն անհայտ Ուրմեիքուիի տեղանունը: Նշված է Դիադուխի, սակայն պետք է լիներ Դիաուխի: Ընդ որում, Դիաուխին գլխավորապես պետք տեղակայել Կարինի տարածաշրջանում: Նշված է Արարատ լեռը և փակագծում նշված է Ուրուրու՝տ: Վանի թագավորության որևէ սեպագրում չկա նման սկզբնաղբյուր: Արարատ-Ուրուրուտ գուգորդությունը բավական վտանագավոր է: Քարտեզում նշված է Կոլխիդա, սակայն ուրարտական սեպագիր արձանագրություններում այն հիշատակվում է Կուլխա ձևով: Քարտեզում նշված է Սևանա լիճ, Ուրմիո լիճ և իսկ Վանա լիճը ներկայացված է որպես Տուշպա ծով: Մինչդեռ ուրարտական որևէ սկզբնաղբյուրում վկայված չէ Վանա լճի նման հիշատակություն:</p>			
--	--	--	--

<p>Թեմայի շուրջ ֆեյսբուքյան իմ գրառումից հետո դասագրքի հրատարակիչ Մասնակցային դպրոցը թողեց մեկնաբանություն՝ նշելով, որ դասագրքում սխալմամբ տեղադրվել է Իշպուհինի արքայի ժամանակաշրջանի քարտեզի չմշակված տարբերակը: Այսինքն, տեղադրված է սխալ , ոչ ճշգրիտ քարտեզ, որով պետք է առաջնորդվեն ուսուցիչներն ու աշակերտները: Սակայն այդ դեպքում, ինչու՞ է այդ քարտեզը դրվել Վանի թագավորության անկման հատվածում: Մենք որևէ տեղեկություն չունենք, որ Իշպուհինի գործերը հասել են Արաքսի ափ, ինչպես ցույց տրված քարտեզում: Միայն Իշպուհինի և Մենուայի այսպես կոչված համատեղ գահալության շրջանում է տեղի ունենում մուտք Նախիջևան, որտեղ Օձասար լեռան վրա նրանք թողնում են սեպագիր արձանագրություն: Քարտեզում նշված է Կոլխիդա: Իսկ Կուլխան հիշատակվում է Սարդուրի Արգիշթորդու սեպագրում՝ Իշպուհինիից շատ և շատ ուշ:</p> <p>Rearrange հարթակում՝ Խոսելով 7-րդ դասարանի դասագրքում տեղ գտած ՌԻրարտուի քարտեզի մասին, Սմբատ Հովհաննիսյանը հայտնում է , որ այո, իրենք ընդունել են, որ դասագրքում եղել է սխալ և այնտեղ պետք է լիներ Իշպուհինի արքայի ժամանակաշրջանի քարտեզը: Այն որ այդ քարտեզը լի է բազմաթիվ անճշտություններով, կոպիտ սխալներով, մատնանշում են վերը բերված փաստերը:</p>			
---	--	--	--

<p>Պարոն Հովհաննիսյանն իր հարցազրույցում նշում է (1:09 րոպե), որ Իշպուհինին և անգամ Մենուան մաքսիմումը հասել են Արաքս գետ և Էթիունի պետությունը իրենք չեն նվաճել...</p> <p>Կրկին հեղինակը դիմել է ոչ ճշգրիտ հանգամանքեր ներկայացնելու մեթոդի: Այս համատեքստում, խիստ հետաքրքիր է, թե ինչու է հեղինակը անտեսել քարտեզում Իրանի իսլամական հանրապետության Ուրմիա լճից արևմուտք ընկած տարածքները Իշպուհինին և Մենուան արքաների տիրապետության տակ լինելու հանգամանքը: Հեղինակը կարծես թե տեղյակ չէ այն ենթադրություններին, որ Արտաշատի ուրարտական ժամանակաշրջանի կառույցները հիմնվել են Մենուայի կողմից: Այժմ, Արաքսն անցնելյանցնելու մասին: Ամենայն հավանականությամբ նույն Իշպուհինին և Մենուան հասել են առնվազն մինչև Սյունիք: Վերին Անձավի պեղումների ընթացքում՝ տանար տանող մուտքի մոտ գտնվեցին խիստ վնասված բրոնզե շղթայի օղեր: Հետագայում Ստամբուլի համալսարանի լաբորատորիայում իրականացված արդյունքների ժամանակ պարզ դարձավ, որ օղերն արձանագիր են և ունեն հետևյալ տեքստը. Խալդի աստծուն՝ տիրոջը, նվիրեցին Իշպուհինին՝ Սարդուրիի որդին, Մենուան Իշպուհինի որդին և Ինուշպուան՝ Մենուայի որդին, երբ նրանք երկիրն Ամուշա քաղաքի նվաճեցին:</p>			
--	--	--	--

<p>Ինչպես տեսնում ենք, արձանագրությունը վկայում է Ամուշա քաղաքի երկրի նվաճման մասին: Հետաքրքիր է, որ այս տեղանունը հիշատակվում է նաև ավելի ուշ ժամանակաշրջանի միապետ՝ Արգիշթի II-ի ՀՀ Սյունիքի մարզի Միսիան քաղաքից արևմուտք տեղակայված Թանահատի շրջակայքում խաչքարերի շարքում հայտնաբերված երկկողմանի ուրարտական արձանագրության մի հատվածում: Ըստ հեղինակավոր ուրարտագետներ Նիկոլայ Հարությունյանի՝ Ամուշան պետք է տեղեկայված լիներ Սյունիքում, իսկ աշխարհի ամենահայտնի ուրարտագետներից Միրյո Սավլինին Ամուշայի տեղորուշումը ենթադրում է Արցախի տարածքում (Salvini M., The Eastern Provinces of Urartu and the beginning of History in Iranian Azerbaijan, in Studies in Honour of Altan Çilingiroğlu, A Life Dedicated to Urartu on the Shores of the Upper Sea (ed. E.Abay et al), Istanbul, 2009, p., 505):</p> <p>Ամենայն հավանականությամբ, վերը նշված օղերն էլ ավար են վերցվել Ամուշա քաղաքի երկրից և նվիրաբերվել տերության գերագույն աստված Խալդիին ու վերջինիս տաճարին: Շատ հետաքրքիր է, ինչու՞ հենց Իշպուհինի քարտեզը: Ինչու՞ չեք տեղադրել օրինակ Արգիշթի Մենուայորդու և կամ նրա որդու Սարդուրու ժամանակաշրջանների քարտեզը, երբ աշակերտները կարող են հստակ պատկերացում կազմել տերության սահմանների մասին: Ինչու՞</p>			
---	--	--	--

	մի տող չէք գրել Էրեբունի Երևանի մասին:			
48.	<p>Էջ 43-Խոսվում է Ռուսա Առաջինի գահակալության մասին, նրա կառավարման ժամանակաշրջանում եղած խոչընդոտների մասին: Սակայն, ոչ մի խոսք արքայազն Մելարտուայի՝ իր հոր Ռուսայի դեպ բարձրացրած ապստամբության մասին, ինչը խիստ կարևոր է:</p> <p>Էջ 46-Նշվում է Թարիրիա թագուհու մասին: Սակայն, որևէ հիշատակություն չկա Կակուլիի մասին, ով մեզ հայտնի երկրորդ թագուհին է:</p>	Վերևում գրեցինք, որ այդ կարգի մանրամասնությունները նպատակահարմար չենք գտել զետեղել դասագրքում:		Հեղինակի պարզաբանումն ընդունելի է:
49.	<p>Էջ 43-Նշվում է, թե իբր ուրարտական մյուս արքաները վերանվանեցին Մուսասիրը: Մուծածիրի վերանվանման վերաբերյալ կան խիստ վարկածային անդրադարձներ: Սակայն, Ռուսա Առաջինին հաջորդած արքաների արձանագրություններում Մուծածիրի չհիշատակվելու փաստն ինքնին կարծես թե խոսում է այն մասին, որ Մուծածիրը դժվար թե ընդգրկված լիներ ուրարտական տերության կազմում:</p>	Դասագրքի 42-րդ էջում նշել ենք, որ Ք.ա. 714 թ. Սարգոն II-ի կողմից Մուսասիրի գրավումից հետո հաջորդ արքաները կարողացել են վերականգնել թագավորության տարածքները՝ վերանվանելով նաև Մուսասիրը: Այս ձևակերպումը արել ենք՝ հենվելով հայտնի ֆինն ասուրագետ Սիմո Պարպոլայի (Simo Parpola) դիտարկման վրա (տե՛ս S. Parpola (Hrsg.), Correspondence of Sargon II , Helsinki, 1987, pp. xix-xx), որտեղ նա պնդում է, որ հաջորդ տարի՝ Ք.ա. 713 թ., հաջողվում է ոչ միայն վերականգնել վերահսկողությունը Մուսասիրի նկատմամբ, այլև Մուսասիր վերադարձնել Խալդի աստծո առևանգված արձանը:		Առաջարկում ենք շարադրանքը խմբագրել՝ հաշվի առնելով դիտարկումը:
50.	<p>Էջ 45-Սեպագրի մասին գրված է շատ աղոտ ու խրթին: Տպավորություն է ստեղծվում թե ուրարտական</p>		Այո, հասկանալի ուղղել ենք այսպես. «[...]արշավանքների ն և սոցիալ-	Փոփոխությունն ընդունելի է:

	<p>տերության սեպագրերը գլխավորապես ռազմական արշավանքների մասին են:</p>		<p>տնտեսական կյանքին, ավելի քիչ տեղեկություններ է տալիս կրոնական-պաշտամունքային կյանքի մասին»:</p>	
<p>51.</p>	<p>Էջ 45-46-Խոսվում է Ուրարտուի կրոնի մասին, սակայն ոչ մի խոսք Միերի Դռան արձանագրության մասին, որտեղ հիշատակվում են Իշպուհինի և Մենուայի ժամանակաշրջանում տերության գրեթե բոլոր կարևոր աստվածությունները: Այս համատեքստում, որևէ լուրջ խոսք չկա ուրարտական ծիսապաշտամունքային կառույցների մասին: Կարևոր կլիներ դասագրքում տեղադրել Վերին Անձավից հայտնաբերված վահանի մեծ բեկորի գծանկարը, որտեղ պատկերված են ուրարտական աստվածները և թե ինչպես են նրանք օգնում ուրարտական բանակին հաղթել թշնամիներին: Մինչդեռ, հեղինակը, նման կարևոր պատկերային նյութեր տեղադրելու փոխարեն Ուրարտուի գլխում երկու անգամ տեղադրել է Մուծաձիբին վերաբերող նկար, շատ դեպքերում աղոտ պատկերներ:</p>	<p>Դասագրքի 45-46-րդ էջերում Վանի թագավորության կրոնի մասին խոսել ենք այն ծավալով, որը համապատասխան կլինի 7-րդ դասարանի աշակերտների տարիքին: Ծիսապաշտամունքային մանրամասնությունները, ինչպես բազմաթիվ այլ հարցեր, նպատակահարմար ենք գտել թողնել 10-րդ դասարանի համար: Ինչպես արդեն մեկ անգամ նշեցինք, դասագիրքը գրելիս նկատի ենք ունեցել նաև այն, որ 7-րդ դասարանի նույն թեմաները ուսումնասիրվելու են նաև 10-րդ դասարանում, հետևաբար այդ երկու դասարանների նյութերը պետք է այնպես դասավորվեն և ներկայացվեն, որ միմյանց լրացնեն և հնարավորինս քիչ կրկնեն:</p> <p>Միերի դռան մասին կա անդրադարձ դասագրքի 65-րդ էջում, որով ցույց ենք տվել ժառանգորդական կապը Վանի թագավորության և Երվանդական, իսկ հետո նաև Արտաշեսյան հայկական թագավորությունների միջև. «Միերի պաշտամունքի վկայություններից է հատկապես հայկական «Սասնա ծռեր» էպոսը, մասնավորապես դրան առնչվող «Միերի դուռը», որտեղից պետք է վերածնվեր Փոքր Միերը: «Միերի դուռը» վկայում է նաև ուրարտական</p>		<p>Հեղինակի պարզաբանումն ընդունելի է:</p>

		<p><i>ժառանգության մասին՝ ուղղակիորեն կապվելով «Խաղիի դուռ» հասկացությանը: Այստեղից էլ՝ Խաղիի և Միիր/Մհերի հաջորդականությունը»:</i></p>	
<p>52.</p>	<p>Էջ 46- Նույնիսկ հեղինակի բերած մեջբերումն է ակնհայտորեն մատնանշում, որ վերջինս հարգարժան ուրարտագետներ Միրյո Սավլինիի և Երվանդ Գրեկյանի ենթադրությունները ներկայացվել է որպես բացարձակ փաստ: Մինչդեռ, հեղինակը ինքն է նշում, որ Երվանդ Գրեկյանը, որպես պրոֆեսիանյ գիտնական, հարկ է համարել ընդգծել, որ տեքստը թերի է՝ համոզիչ լինելու համար, այնուհետև նշել կարող է գրանցվել, այս համատեքստում թեական նշանակություն ունեցող բառը: Իսկ Միրյո Սավլինին իր կողմից առաջարկված հարեմ բառի դիմաց դրել է հարցական նշան: Այսինքն, դեռևս հարցական է այդ բառը հարեմն է, թե ոչ: Մինչդեռ հեղինակը, դիմելով մանիպուլյատիվ քայլերի, հայտնի հետազոտողների գիտական էթիկան պահող ենթադրությունները ներկայցնում է որպես անվիճելի փաստ: Ընդհանրապես, 7-րդ դասարանի գրքում հարեմներին անդրադառնալու փոխարեն, կարելի էր դասագրքում ներառել շատ ավելի կարևոր և օգտակար և տեղեկություններ:</p>	<p>Ինչ վերաբերում է <i>հարեմին</i>, համոզված ենք, որ հայտնագործություն չենք արել, քանի որ դրա գոյության մասին կան թե՛ արձանագրային, թե՛ հնագիտական վկայություններ: Եվ ուրարտագետ չլինելով՝ տեղյակ եմ Արգշտիխինիի, Գիրիթթեփեի հարեմի բաժանմունքների մասին (տե՛ս Երվանդ Գրեկյան, նշվ. աշխ., էջ 163 և 166: Օտարալեզու աշխատություններ ևս կան): Ինչ վերաբերում է «Տուշպայի հարեմին», այդ տեղեկությանը ես հանդիպել եմ նախ՝ Երվանդ Գրեկյանի հոդվածներից մեկում, որտեղ հարգարժան գիտնականը նշում է, որ <i>«Ըստ մի կարծիքի՝ Ուրարտուի արքա Մենուա Իշպուինորդին (Ք.ա. մոտ 810-790 թթ.) իր արձանագրություններից մեկում հիշատակել է իր մայրաքաղաք Տուշպայի հարեմը»</i>, իսկ հետո հավելում, որ <i>«Տեքստը, անշուշտ, թերի է համոզիչ լինելու համար, բայց եթե դա ճիշտ է, սպա կարող էր գրանցվել ուրարտերեն «հարեմ» բառը»</i> (Yervand Grekyan, A note on the Toprakkale tablet, <i>N.A.B.U.</i>, 2016/1 (mars), p. 55: Տե՛ս նաև p. 240): Հարկավ, այստեղ նկատելի է տեղեկության թեականությունը, բայց նաև դրա հնարավորությունը: Իսկ Մենուա արքայի՝ դասագրքում հիշատակված արձանագրության մեջ այսպես է գրված (տալիս ենք թարգմանությունը). <i>«Մենուա Իշպուինորդին ասում է.</i></p>	<p>Հեղինակին առաջարկում ենք խմբագրել տեքստը՝ հաշվի առնելով դիտարկումը:</p>

		<p>«Առաջին անգամն է, որ այդքան շատ կանայք մտան Տուշյա քաղաքի հարեմ (?) . Եթե կա թագավոր, որը կարող է կանանց տանել Լուիհունի երկրից Տուշյա, դա Մենուան է, Իշպուհնիի որդին...» (Salvini, M., <i>Corpus Dei Testi Uratei Vol. I-II-III, Istituto di Studi Civiltà Dell'e Egeoe Del Vicino Oriente, Roma, 2008</i>):</p> <p>Ինչ վերաբերում է «հարեմին» չանդրադառնալուն և այլ՝ «ավելի օգտակար և հրապուրիչ» տեղեկություններով տեքստը լցնելուն, հարկավ, կարելի էր, սակայն կարևոր ենք համարել նաև դասագրքում ներկայացնել տվյալ հասարակությունը, մանավանդ սոցիալական կարգը: Դա շատ լավ հնարավորություն է տալիս աշակերտներին՝ համեմատություններ անելու իրենց ժամանակների և այդ ժամանակների միջև: Եվ հիմք է ստեղծում հետագայում անդրադառնալու բազմակնությունից միակնության անցմանը քրիստոնեության շրջանում:</p> <p>Իսկ դատելով Վանի թագավորությունում «հարեմի» գոյության վրա հասարակության զարմանալուց՝ կարող ենք ասել, որ փաստորեն այնտեք էր դա նշել, քանի որ շատերը նույնիսկ չէին էլ մտածում, որ Վանի թագավորությունում ևս եղել է բազմակնություն, և արքաներն էլ ունեցել են հարեմ:</p> <p>Էլեկտրոնային տարբերակում խնդիրը լուծել ենք հետևյալ կերպ. գրել ենք «կանանց (հարեմ)»:</p>		
--	--	---	--	--

<p>53.</p>	<p>Էջ 48-</p> <p>Ցավոք, պետք է նշել, որ այս դեպքում ևս հեղինակը դուրսաբերել է միակողմանի մոտեցում: Բանն այն է, որ մեզ հայտնի չէ որևէ ուղղակի սկզբնաղբյուր, որը կմատնանշեր Ուրարտուում որդան կարմիրի արտադրության և դրա արտահանման վերաբերյալ: Վերը նշված աշխատությունում, արված է բնութագրող ոչ ստուգված ենթադրություն: Այն որ Մուծածիրի տաճարում ասորեստանյան աղբյուրները հիշատակում են կարմիր հագուստի ամկայություն, դեռևս չի փաստում, որ այն պետք է լիներ հենց որդան կարմիր: Ավելին, ասորեստանյան աղբյուրը միայն մատնանշում է հագուստի գույնը և եթե այս կամ այն հետազոտողը իր որևէ աշխատանքում բերում է նման մոտեցում, դա դեռևս չի արտացոլում, որ գործ ունենք փաստի հետ: Մեզ հայտնի չէ որևէ հնագիտական և կամ գրավոր սկզբնաղբյուր, որը կվկայեր Ուրարտուից որդան կարմիր մի շարք՝ դասագրքում այդպես էլ չհաստեկեցված որևէ երկիր մատակարարելու մասին:</p>	<p>Գասագրքի 48-րդ էջում նշված է, որ «Վանի թագավորությունը որդան կարմիր [...] էր մատակարարում մի շարք երկրներին»: Միանգամից նշեմ՝ որդան կարմիրի մասին այդ տեղեկությունը վերցրել ենք գիտական հետազոտություններից, դիցուք՝ Elena Phipps-ի «Cochineal Red: The Art History of a Color» աշխատությունից, որտեղ գրված է. «Մերձավոր Արևելքում և Կենտրոնական Ասիայում, հատկապես Արարատ լեռան ստորոտի հարթավայրային հովտում կարմիր ներկ է ստացվել <i>Porphyrphora hamelii</i> տեսակի այլ միջատից, ներկ, որը գործածվում էր առնվազն մ.թ.ա. 714 թվականից, երբ ասորեստանցիները Սարգոն II-ի գլխավորությամբ ներխուժեցին Ուրարտու (Հայաստան): (In the Middle East and central Asia, particularly in the flat grassland of the valley at the base of Mount Ararat, red dye produced from a different insect, of the species <i>Porphyrphora hamelii</i> (the genus name <i>Porphyrphora</i> means “purple bearers”; see fig. 12), was in use from at least 714 b.c., when the Assyrians under Sargon II invaded Urartu (Armenia), էջ 9)»: Բավարարվենք այսքանով:</p> <p>Ի դեպ, այս տեղեկությունը հատկապես նրանով է կարևոր, որ նաև ցույց տանք ժառանգորդական կապը Վանի թագավորության և Երվանդական, իսկ հետո նաև Արտաշեսյան հայկական թագավորությունների միջև: Ընդ որում՝ դա միակ դեպքը չէ. դասագրքի 65-րդ էջում շեշտել ենք ուրարտական ժառանգության մեկ այլ փաստ ևս՝</p>	<p>Առաջարկում ենք հաշվի առնել դիտարկումը:</p>
------------	--	--	---

		<p>գրելով. «Միհրի պաշտամունքի վկայություններից է հատկապես հայկական «Սասնա ծռեր» էպոսը, մասնավորապես դրան առնչվող «Մեծի դուռը», որտեղից պետք է վերածնվեր Փոքր Մեծը: «Մեծի դուռը» վկայում է նաև ուրարտական ժառանգության մասին՝ ուղղակիորեն կապվելով «Խաղիի դուռ» հասկացությանը: Այստեղից էլ՝ Խաղիի և Միհր/Մեծի հաջորդականությունը»:</p> <p>Մեկ անգամ ևս ընդգծենք, որ այդպիսով ցույց ենք տվել ժառանգական կապը Վանի թագավորության և Երվանդական, իսկ հետո նաև Արտաշեսյան հայկական թագավորությունների միջև:</p>		
<p>54.</p>	<p>Էջ 48-Վանի թագավորության կանայք այունակում հեղինակը նշում է, որ Վանի թագավորությունում կանանց մասին գրավոր տեղեկությունները գրեթե բացակայում են և դա պայմանավորված էր հասարակության մեջ տղամարդու գերակայությամբ:</p> <p>Կարծում ենք, որ այստեղ տղամարդու գերակայություն արտահայտությունը ոչ տեղին է: Դա անուղղակի կերպով կարող է պարունակել սեռական խտրականության տարրեր: Մինդեռ, հենց ուրարտական արձանագրություններից մեկը հստակորեն վկայում է, որի մասին, ի դեպ, հեղինակը նշել է դսագրքում, որ Մենուա արքան իր կնոջը և կամ գուցե դստերը՝ Թարիբիային նվիրաբերել է խաղողուտ և այն կոչել Թարիբիախինիլի: Ուրարտական</p>	<p>Դասագրքում գրված է. «Վանի թագավորության մեջ կանանց գրադեցրած դիրքի մասին գրավոր տեղեկությունները գրեթե բացակայում են: Դա պայմանավորված էր հասարակության մեջ տղամարդու գերակայությամբ»:</p> <p>Այս դիտարկման մեջ «գրեթե» բառով հստակ ցույց է տրվում, որ որոշ անդրադարձ, այդուամենայնիվ, կա: Սակայն եթե անգամ հիշատակվեր արքայի կողմից իր դստերը կամ կնոջն այգի ընծայելու դրվագը, գնահատականը չէր փոխվի. կանաց նկատմամբ ցուցաբերվող «ակնածանքը» ևս մեկ անգամ հիմնավորում է մեր ասածը՝ տղամարդու գերակայությունը:</p>		<p>Հեղինակի պարզաբանումն ընդունելի է:</p>

	<p>արձանագրություններում սա այն բացառիկ դեպքերից մեկն է, երբ միապետը ինչ-որ բան ձոնում է ոչ թե աստվածության, այլ անձի՝ այս դեպքում կնոջ: Այս հանգամանքը, կարող է լինել ուրարտական միապետի կողմից կնոջ հանդեպ առնվազն ակնածանքի հրաշալի օրինակ:</p>			
<p>55.</p>	<p>Էջ 49-Դրված է Մուծածիրի տանարի մի նկար: Դասագրքում այն սխալմամբ ներկայացված է որպես խորաքանդակ և նշված է, որ այն անհետացել է: Մինչդեռ, խոսքը գնում է Մուծածիրի տանարի մեզ հասած զծանկարի մասին: Իսկ Մուծածիրի տանարի խորաքանդակը տեղափոխման ժամանակ ընկել է Տիգրիս գետը և կորսվել:</p>	<p>Դասագրքի 49-րդ էջում գետեղված է Մուսասիրի տանարի խորաքանդակի՝ 1849 թ. Էժեն Ֆլանդինի կողմից արված արտապատկերումը: Դասագրքում գետեղված այդ պատկերի ներքո գրված է, որ այն «այժմ անհետացել է», ինչը նշանակում է ճիշտ և ճիշտ այն, ինչ նշում է դիտարկման հեղինակը: Թեպետ դասագրքում չենք գրել, որ այն «ընկել է Տիգրիս գետը», բայց նշել ենք, որ այն անհետացել է: Կարծում եմ՝ հայերեն «անհետանալ» բառի նշանակությունն ակնհայտ է: Աշոտ Մուքիսայանի «Հայոց լեզվի հոմանիշների բառարան»-ում (2009 թ.) «անհետանալ» բառի դիմաց գրված է նաև «կորչել, գետնի տակն անցնել, առանց հետք թողնելու կորչել» (էջ 54): Այսպիսով՝ արձանագրել ենք հետևանքը՝ անհետանալը, առանց բացատրելու պատճառը, որն այստեղ բնավ էլ կարևոր չէ:</p>		<p>Առաջարկում ենք գրել «խորաքանդակի զծանկար»:</p>
<p>56.</p>	<p>Էջ 49-Նշված է ենթավերնագիր՝ Ձեռքբերումներ արվեստի և գիտության բնագավառում Ցավոք, հեղինակը չի բերել Ուրարտում սեպագիր դպրության համակարգի առակայության վերաբերյալ որևէ փաստ: Շատ կարևոր կլիներ, եթե դպրոցի աշակերտները տեղեկանային, որ Ուրարտում ևս</p>		<p>Այո, կարելի էր:</p>	<p>Առաջարկում ենք գրել այդ մասին:</p>

	գործել են դպրության օջախներ: Այդ մասին են վկայում Այանիս հնավայրից հայտնաբերված ուսուցողական կավե սալիկները:			
57.	<p>Էջ 50-Դրված է Մհերի Դռան նկարը, բայց դրա մասին տեքստում կարծես թե որևէ խոսք չկա: Մինչդեռ Մհերի Դռան արձանագրությունը, Մհերի դուռն իր համալիրով, որն ՈՒԲարտուում անվանում էին Խալդի աստծո դարպասներ առանցքային նշանակություն ունի տերության կրոնի ընկալման և ուսուցանման համար:</p>	<p>Դասագրքի 50-րդ էջում գետեղված «Մհերի դուռ կամ Ագռավու քար, սրբազան քարաժայռ Վանա բերդի մոտ» գրությամբ նկարն ինչ-որ չափով լուսաբանվում է դասագրքի 65-րդ էջում՝ շեշտելու համար Վանի թագավորության և Երվանդական թագավորության ժառանգական կապը: Վանի թագավորության կրոնին վերաբերող 1.6 գլխում (հնարավոր է նաև 1.4 գլխում) գուցե կարելի էր որոշ մանրամասնություններ տալ Իշպուհինի և Մենուայի՝ Վանի թագավորության կրոնի մասին երկլեզու արձանագրության վերաբերյալ, բայց այստեղ նույնպես մտածել ենք, որ ուսուցիչը ևս կարող է դրան անդրադառնալ, անգամ աշակերտներին դրա վերաբերյալ հանձնարարություն տալ (իսկ հանձնարարություն հաստատ կարող է տալ արդեն Երվանդականների ժամանակաշրջանի հետ կապակցելու դիտանկյունից, ինչպես ակնարկվում է դասագրքի 65-րդ էջում): Բացի այդ, նաև մտածել ենք, որ այս հարցերը ևս վերևում հիշատակված նույն պատճառաբանությամբ կարելի է մանրամասնել արդեն 10-րդ դասարանում: Դասագրքում կան տարբեր հարցերի առնչությամբ ներկայացվող նաև այլ դրվագներ, որոնք ամբողջացնում են պատկերը: Օրինակ, Միհրի պաշտամունքի՝ Սասնա ծռեր էպոսում պահպանված հետքերի</p>		<p>Առաջարկում ենք դիտարկումը հաշվի առնելով խմբագրել մակագրությունը:</p>

		վերաբերյալ դիտարկումը, որով նաև ցույց է տրվում, ինչպես արդեն նշել ենք, Վանի թագավորության հետ հայկական հետագա թագավորությունների ունեցած ժառանգական կապը:		
58.	<p>Էջ 50-Հեղինակը փորձ է անում ցույց տալու Ուրարտուի ժառանգականության կապն այսօրվա հետ: Նա այդ առումով նշում է օրինակ, որ այսօր մարդիկ ուրարտական արքաների անուններով են կոչում խանութներ և կամ ֆուտբոլային թիմ «Ուրարտու» անվամբ: Բերվում է ուրարտական դեկորատիվ կիրառական արվեստի օրինակ կենցաղային իրեր և զարդել պատրաստելու մասին: Այս համատեքստում խիստ մտահոգիչ է, որ հեղինակը անգամ մեկ տող չի հատկացրել Էրեբունու և Երևանի կապին: Այն դասագրքում իսպառ անտեսված է: Չի նշվում, որ մեր ավելի քան 2800-ամյա պատմություն ունեցող մայրաքաղաք Երևանի գրավոր պատմությունը սկսվում է Էրեբունիից: Ավելին, որևէ խոսք չկա Էրեբունի-Երևանի 2750-ամյակի կապացույթամբ 1968 թվականին իրականացված մինչ այդ մեր իրականությունում նախադեպը չունեցող տոնակատարությունների մասին: Մինչդեռ, հենց այդ տոնակատարություններից հետո է, որք բազմաթիվ հայորդիների և հայուհիների անուններ սկսվեցին կոչվել ուրարտական արքաների և կամ տեղանունների անունով: Պատրաստվեցին տարատեսակ զարդեր, Երևանում ստեղծվեցին ուրարտական</p>	<p>Էրեբունի և Երևան կապի մասին արդեն նշեցի: Այլ մանրամասնությունների մասին կարող են ուսուցչի հետ քննարկումների կամ հանձնարարությունների միջոցով իմանալ և հետազոտել:</p> <p>Կործանման մասին բերված վարկածները ևս բավարար են թեմայի մասին պատկերացում կազմելու համար:</p> <p>Էթիունիի մասին ավելի մանրամասն կարող են իմանալ 10-րդ դասարանում:</p>		Անհրաժեշտ է դիտարկումը հաշվի առնել և հստակ գրել Էրեբունի-Երևան կապի ու ժառանգորդության մասին:

	<p>մոտիվներով անկյուններ, անվանակոչվեցին փողոցներ: Այս համատեքստում, խիստ տարօրինակ է, որ հեղինակը չի նշում Էրեբունի արգելոց-թանգարանի մասին: Մինչդեռ, դա կարող էր նպաստել, որպեսզի աշակերտները այցելեին Էրեբունի, Հայաստանի պատմության, իրենց բնակավայրին մոտ գտնվող և ուրարտական հավաքածու ունեցող թանգարան ու ավելի հարստացնեին Ուրարտուի վերաբերյալ իրենց գիտելիքները: Ուրարտուի անկման վերաբերյալ բերված չեն կլիմայական ճգնաժամի, աղետների տեսությունները, ինչը շատ կարևոր է: Չկա անդրադարձ Ուրարտու-Էթիունի հակադրության, իսկ այնուհետև այս երկու հզոր ուժերի փոխառնչությունների մասին: Գոնե հնագիտական սկզբնաղբյուրները վկայում են այդ մասին: Հեղինակը դասագրքում աղոտ կերպով հիշատակություններ է անում Էթիունիի մասին, սակայն չի բացատրվում, թե իրականում իրենից ինչ էր ներկայացնում Էթիունի համադաշնությունը: Հարեմների մասին գրելու փոխարեն հեղինակն օրինակ կարող էր նշել Էթիունիի մեզ հասած արքաներից մեկի անունը, որը հիշատակվում է Դիուծիսի ձևով և նշանակում է աստվածածին:</p>			
<p>59.</p>	<p>Էջ 55-ում ներկայացված է քարտեզ, որը կարծես թե ունի հետևյալ վերնագիրը՝ Հայաստանը Զ. ա. 522-520 թթ. Պայքար Աթենանյան տերության դեմ (Զ. ա. 522-521): Քարտեզի հեղինակը մոռացել է</p>	<p>Քարտեզի վրա նշված են մոտավոր տարածքները: Եթե առաջնորդվենք տեղանունների դեռևս հստակ կամ վերջնական չտեղորոշվածությամբ, ապա ստիպված</p>		<p>Հեղինակի պարզաբանումն ընդունելի է: Վրիպակն ուղղել:</p>

<p>նշել Ք. ա. 522-521 թթ., բայց դա վրիպակ է, կարող է լինել:</p> <p>Քարտեզում ցույց է տրվում Բեհիսթունի արձանագրությունում վկայված հայերի ապստամբությունն ու պայքարը Աքեմենյան տերության դեմ, հայերի և արեմենյան տերության զորքերի տեղաշարժը, նրանց միջև եղած ճակատամարտերի վայրերը և անգամ Բեհիսթունյան արձանագրության այդ համատաքստում հիշատակված տեղանունները: Հարկ ենք համարում նշել, որ Բեհիսթունյան եռալեզու արձանագրությունում հայերի ապստամբության համատեքստում հիշատակված և քարտեզում մատնանշված տեղանուններից գրեթե ոչ մեկ տեղորոշումը հստակ չէ: Այո, կան տեսակետներ, սակայն, դպրոցական գրքի քարտեզ կազմելիս տուրք տալ այս կամ այն տեսակետին կամ վարկածին, իմ կարծիքով, մեղմ ասած այդքան էլ կոռեկտ չէ: Այդ տեղանուններից առավել հստակ տեղորոշում ունի Իզալան:</p> <p>Մնացած բոլոր տեղորոշումները արված են զուտ ենթադրությունների վրա: Քարտեզի վրա նշված են Տիգրան, Չուգան, Ույաման և Աուտիարան: Մինչդեռ Աուտիարան երկրանուն է կամ աշխարհագրական տարածքի անուն և այն այդքան էլ ընդունելի չի նշել մեկ շրջանաձև նշանով:</p> <p>Քարտեզի վրա ցույց է տրված թե իբր հայոց զորքերը Արմավիրից տեղաշարժվում են դեպի լեռնաշխարհի հարավ, ինչն ուղղակի չի համապատասխանում իրականությանը: Այդ մասին չկա որևէ ուղիղ</p>	<p>կլինենինք նաև, դիցուք, Տիգրանակերտ քաղաքը (և ոչ միայն) քարտեզներից դուրս թողնել... Տեղյակ եմ նշված հեղինակների դիտարկումների, ինչպես նաև այլ դիտարկումների մասին:</p>		
---	--	--	--

<p>սկզբնաղբյուր: Եվ այստեղ հեղինակը, տուրք տալով այս կամ այն հետազոտողի տեսակետին՝ քարտեզի մեջ է տեղադրում իրականության հետ չհամապատասխանող երթուղի: Ինչու իրականությանը չհամապատասխանող, որովհետև նման հիշատակություն մեզ հայտնի չէ: Այսինքն, դասագրքի քարտեզի հեղինակը քարտեզում տեղադրում և որպես հավաստի փաստ աշակերտներին ու ուսուցիչներին է հրամցնում է ոչ հավաստի քարտեզ: Քարտեզում մատնանշված Տիգրա, Ույամա, Աուխտարա, Չուգա տեղանունների տեղորոշման վերաբերյալ իր “Darius and the Armenians” հոդվածում խիստ զգուշավորություն են ցուցաբերում այդ թեմայով զբաղվող մեծանուն գիտնական, աքեմենյան շրջանի աշխարհի լավագույն մասնագետներից Դենիել Փոթթար: Վերջինս նշում է, որ դեռևս հստակ չեն այդ տեղանունները հստակ տեղադրությունները: Նման մոտեցում է ցուցաբերում հայտնի հայագետ Ջիուստո Տրախինան՝ այս տարի լույս տեսած Օքսֆորդի Հին Մերձավոր Արևելքի պատմության 5-րդ հատորում "The Satrapies of the Persian Empire. Media and Armenia", in Karen Radner, Nadine Moeller, and D. T. Potts eds.), "The Oxford History of the Ancient Near East, Volume V: The Age of Persia", Oxford UP, Oxford 2023.</p>			
<p>Արման Մարյան</p>	<p>ՊԱՏԱՍԽԱՆՆԵՐ</p>		

60.	«ՄՏՐԱԲՈՆ (Ք. ա. շուրջ 62-24 թթ.) հույն պատմիչ և աշխարհագրագետ» (Էջ 15, 66): Հույն պատմիչ և աշխարհագրագետ Ստրաբոնի մահվան տարեթվի մոտ պետք է նշվեր «Ք.ծ.հ. 24 թ.»: Թերևս կարելի է վրիպում համարել, սակայն նշենք, որ սխալը երկու տարբեր էջերում է կրկնվում:		Ընդունելի է. Պետք է լինի ՄՏՐԱԲՈՆ (Ք. ա. շուրջ 62 - Ք. հ. 24 թթ.)	Հեղինակի պարզաբանումն ընդունելի է:
61.	«Լեռնաշխարհի տարածքում պատմության տարբեր փուլերում հայտնի են եղել Մեծ Հայքի, իսկ դրանից դուրս՝ Փոքր Հայքի և Կիլիկիայի վարչական միավորները» (Էջ 15): Ըստ Հայաստանի պատմական աշխարհագրության լավագույն մասնագետների (Ս. Երեմյան և այլք)՝ Փոքր Հայքը ևս Հայկական լեռնաշխարհի մաս է կազմում. «...ուստի մենք կանգ ենք առնում Հայկական լեռնաշխարհի և նրա շարունակությունը կազմող Փոքր Հայքի պատմա-աշխարհագրական բնութագրի վրա» (տե՛ս Հայ ժողովրդի պատմություն, հտ. 1, Հայկ. ՄՍՀ ԳԱ հրատ., Երևան, 1971, էջ 7):	«տարբեր փուլերում հայտնի են եղել Մեծ Հայքի, իսկ դրանից դուրս՝ Փոքր Հայքի» ասելով նկատի չունենք Հայկական լեռնաշխարհից դուրս, այլ Մեծ Հայքից դուրս:		Դիտողությանը հեղինակի պարզաբանման տրամաբանությամբ Կիլիկիան ևս պետք է ընկալվի Մեծ Հայքից դուրս և Հայկական լեռնաշխարհում: Անհրաժեշտ է նախադասությունը վերախմբագրել:
62.	Էջ 117-ում զետեղված է «387 թ. Հայաստանի բաժանումը Հռոմի և Սասանյան Իրանի միջև» քարտեզը: Քարտեզի վրա նշված է «Բյուզանդական կայսրություն», որի հիմնադրման տարեթիվ է համարվում 395 թ., ինչպես նաև՝ «Հայկական մարզպանություն», որը, որպես Սասանյան Իրանի առանձնահատուկ վարչամիավոր, գոյություն է ունեցել V–VII դդ.:		Ընդունելի է. Պետք է լինի «Հռոմեական կայսրություն» և «Արևելահայկական թագավորություն»:	Հեղինակի մոտեցումն ընդունելի է:
63.	Էջ 118-ում «Այդ նույն ժամանակ Արտագերս ամրոցում ամրացած		Այո, վրիպակ է:	Հեղինակի մոտեցումն ընդունելի է:

	<p>Փառանձեմ թագուհին փորձում էր դիմադրել պարսիկներին, մինչ որդին՝ Պապը, կվերադառնար Բյուզանդիայից» (Էջ 118): Բյուզանդիայի փոխարեն պետք է գրվեր «Հռոմեական կայսրությունից»: Աստծո առաջ ջմեղանչելու համար նշենք, որ դասագրքի հեղինակը էջ 129-ում ունի հետևյալ բացատրությունը. «Բյուզանդիա 395 թ. Հռոմեական կայսրության բաժանումից հետո Արևելահռոմեական կայսրությանը տրված անվանումը»:</p>		Պետք է լինի «Հռոմեական կայսրությունից»	
64.	<p>(Էջ 118) «Արշակին հաջորդած երիտասարդ Պապ արքան (70-74) գահ է բարձրանում շատ ծանր պայմաններում»: Պապ թագավորը գահակալել է 370–374 թթ.:</p>		Այո, վրիպակ է. պետք է լինի (370-374), ինչպես հասկացվում է հաջորդ տողերում նշված Ձիրավի ճակատամարտի տարեթվից՝ 371 թ.:	Հեղինակի մոտեցումն ընդունելի է:
65.	<p>«Արշակունիների կառավարման տարիներին Հայաստանը մշտապես գտնվում էր արևմուտքի և արևելքի՝ Հռոմի և Պարթևստանի, իսկ ապա Սելևկյանների լարված մրցակցության պայմաններում»: Արշակունիները Հայաստանում գահակալել են 66–428 թթ., իսկ Սելևկյան պետությունը գոյություն է ունեցել Ք.ձ.ա. 312–63 թթ.:</p>		Վրիպակ է: Պետք է լինի «իսկ ապա Սասանյանների»:	Հեղինակի մոտեցումն ընդունելի է:
66.	<p>Էջ 131-ում գետեղված է մի մանրանկար՝ կողքին և ներքևում հետևյալ մակագրությամբ. «ՂԱՉԱՐ ՓԱՐՊԵՑԻ (442-510), «Մատենադարան» Մ. Մաշտոցի անվան հին ձեռագրերի գիտահետազոտական ինստիտուտ»: Ենթադրվում է, որ մանրանկարում պատկերված անձը Ղազար Փարպեցին պետք է լիներ, այնինչ ակնհայտորեն</p>		Վրիպակ է: Պետք է գետեղվեր Փարպի գյուղում տեղադրված Փարպեցու հուշարձանի նկարը, ինչպես արդեն արված է դասագրքի	Հեղինակի մոտեցումն ընդունելի է:

	Փարպեցին չէ, որովհետև լուսապսակ ունի գլխի շուրջ, իսկ Հայոց եկեղեցին Փարպեցուն սրբերի շարքին չի դասել: Մանրանկարում առկա մակագրությունը հուշում է, որ պատկերված անձը Մարկոս ավետարանիչն է:		Էլեկտրոնային տարբերակում:	
67.	Էջ 133-ում գետնեղված լուսանկարն ունի հետևյալ մակագրությունը. «Հայկական գորբերի հրամանատար Վահան Մամիկոնյանի և հայ ազնվականների վերադարձը հայրենիք»: Նկարը՝ Ջուլիան Չասսոյի (1833-1889), Վենետիկի Մխիթարյան միաբանություն»: Իտալացի նկարչի անունն է Giuliano Zasso, որը հայերեն տառադարձվում է Ջուլիանո Չասսո (տե՛ս «Հայոց պատմության էջեր իտալացի նկարիչների գրաֆիկական աշխատանքներում», Երևան, 2007, գրքի ներածությունը և մի շարք նկարների մակագրությունները):		Վրիպակ է: Պետք է լինի <i>Ջուլիանո Չասսո</i> , ինչպես արդեն ուղղված է դասագրքի էլեկտրոնային տարբերակում:	Հեղինակի մոտեցումն ընդունելի է:
68.	(Էջ 136) «Իրավիճակը սրվեց հատկապես 451 թ. գումարված չորրորդ՝ Քաղկեդոնի Տիեզերական ժողովից հետո» (Էջ 136): Քանի որ Հայ Առաքելական Եկեղեցին ընդունում է միայն երեք՝ Նիկեայի (325 թ.), Կոստանդնուպոլսի (381 թ.) և Եփեսոսի (431 թ.) Տիեզերական ժողովների որոշումները, հետևաբար ճիշտ չէ Քաղկեդոնի ժողովը Տիեզերական գրելը:	Քաղկեդոնի ժողովը պատմագիտության մեջ ընդունված է համարել հենց Տիեզերաժողով:		Հեղինակի պարզաբանումն ընդունելի է:
69.	(Էջ 141) 652 թ. կնքված հայ-արաբական պայմանագրի մասին գրված է հետևյալը. «Այն թույլ տվեց Հայաստանին, որոշ ընդհատումներով, պահպանել փաստացի անկախությունը մինչև VII դարի վերջը: Իսաղաղության այս		Հոփսիմե տաճարի դեպքում սխալմունք կա, իսկ Չվարթնոցի դեպքում տեղեկությունը ճիշտ է:	Հեղինակի մոտեցումն ընդունելի է:

	<p>կարճատև շրջանը հայ ժողովրդին զարգանալու և բարգավաճելու հնարավորություն տվեց: Հնարավոր եղավ ավարտին հասցնել հայկական ճարտարապետության երկու գլուխգործոցները՝ Սուրբ Հռիփսիմեի և Չվարթնոցի տաճարները» (Էջ 141): Նշենք, որ Սուրբ Հռիփսիմեի տաճարի կառուցումն ավարտվել է 618 թ.՝ հայարարական պայմանագրի կնքումից շուրջ 34 տարի առաջ, իսկ Չվարթնոցի տաճարի շինարարությունն էլ, ըստ Թ. Թորամանյանի, սկսվել է 643 թ. և հիմնականում ավարտվել 652 թ., ըստ պատմիչ Մովսես Կաղանկատվացու՝ Չվարթնոցի տաճարն օծվել է 652 թ. (տե՛ս Հայկական Սովետական Հանրագիտարան, հտ. 3, Երևան, 1977, էջ 708):</p>			
<p>70.</p>	<p>(Էջ 142) «Նվաճելով Հայաստանը և Հարավային Կովկասի մյուս տարածքները՝ արաբները հիմնեցին Արմինիա անունով փոխարքայություն, որը ներառում էր Արևելյան Վրաստանը, Ադվանքը և գրեթե ողջ Մեծ Հայքը» (Էջ 142): Փաստորեն, ըստ Ս. Հովհաննիսյանի, Հայաստանը Հարավային Կովկասի ընդգրկած տարածքներից է:</p>		<p>Տարրնթերցումից խուսափելու համար հանված է «մյուս» բառը. այսպես՝ «Հայաստանը և Հարավային Կովկասի տարածքները»:</p>	<p>Հեղինակի մոտեցումն ընդունելի է:</p>
<p>71.</p>	<p>(Էջ 144): «Ըստ որոշ հետազոտողների՝ ընդհանուր առմամբ Պավլիկյան շարժումը Հայաստանի համար երկու կարևոր ներդրում ունեցավ: Նախ՝ պատճառ դարձավ, որ Հայոց եկեղեցին վերափոխվի, և նրա հիմքերն ամրանան: Այսպես՝ Պավլիկյան «հանրապետության» ստեղծումը Հայաստանի հյուսիսարևմտյան շրջանը պաշտպանեց</p>	<p>Թեպետ ուղիղ պատասխան տեքստում չկա, բայց աշակերտներն ինքնուրույնաբար կամ ուսուցչի աջակցությամբ կկարողանան բացահայտել Հայոց եկեղեցու վերափոխությունը: Եվ ուսուցիչը ամենևին էլ «աննախանձելի» վիճակում չի հայտնվի: Անգամ ոչ պատմաբանի բարձրագույն կրթությամբ ցանկացած</p>		<p>Հեղինակի պարզաբանումն ընդունելի է:</p>

	<p>արևմուտքի ուղիղ հարվածից և հնարավորություն տվեց</p> <p>Բագրատունիներին վերականգնելու «Հայաստանի անկախությունը» (էջ 144):</p> <p>Սովորողներին ավելի հասկանալի լինելու նպատակով ցանկալի կլիներ, որ դասագրքի հեղինակը մանրամասներ, թե Պավլիկյան շարժման հետևանքով Հայոց եկեղեցին ինչպես է վերափոխվել, կամ Պավլիկյան «հանրապետությունը» ինչպես է Հայաստանի հյուսիսարևմտյան շրջանը պաշտպանել արևմուտքի ուղիղ հարվածից և հնարավորություն տվել</p> <p>Բագրատունիներին վերականգնելու Հայաստանի անկախությունը, այսպես ուսուցիչը այս հատվածի մեկնաբանման պարագայում, մեղմ ասած, կարող է հայտնվել աննախանձելի իրավիճակում:</p>	<p>մեկը կարող է տրամաբանել, որ ադանդավորական շարժման դեմ պայքարում եկեղեցին պետք է վերաթարմացներ և էլ ավելի ուժեղացներ իր ուսմունքը, հայեցակարգը՝ պայքարն ավելի արդյունավետորեն կազմակերպելու համար:</p> <p>Իսկ Բագրատունիների թագավորության վերականգնման գործում պավլիկյանների դերակատարումը հնարավոր է բացահայտել նաև քարտեզի վրա աշխատանք կատարելով կապակցելով այն տեքստում նշված տեղեկությանը. «Հայաստանի հյուսիսարևմտյան շրջանը պաշտպանեց արևմուտքի ուղիղ հարվածից և հնարավորություն տվեց Բագրատունիներին վերականգնելու Հայաստանի անկախությունը»: Այս մասին տեղեկատվություն կարող եք գտնել Մեթոդական ուղեցույցի համապատասխան բաժնում գետեղված գրականության մեջ (էջ 95-96):</p>		
<p>72.</p>	<p>Նախկին դասագրքերից, այդ թվում՝ բուհական, հայտնի է, որ հակաարարական ապստամբությունն ընթացել է 849/850–855 թ., նոր դասագրքում, սակայն, նշված է, որ «Իսկ 850-851 թթ. տեղի ունեցավ հայերի մյուս խոշոր ապստամբությունը» (էջ 145): Եթե ապստամբությունը 850-851 թթ. է տեղի ունեցել, ապա անհասկանալի է մնում, թե ինչու է 852 թ. խայիֆը</p>		<p>Վրիպակ է: Պետք է լինի 850-855 թթ:</p>	<p>Հեղինակի մոտեցումն ընդունելի է:</p>

	գորավար Բուդայի հրամանատարությամբ Հայաստան ուղարկել պատժիչ մեծաքանակ գորարանակ:			
73.	«Միջնադար կամ Միջին դարեր պատմության մի շրջան է, որը ձգվում է V դարի վերջից մինչև XV դարի վերջը: Սկսվում է Արևմտյան Հռոմեական կայսրության անկմամբ և ավարտվում Վերածննդով ու աշխարհագրական մեծ հայտնագործություններով: Ընկած է անտիկ և նոր ժամանակների միջև: Հաճախ բաժանվում է երեք փուլերի՝ վաղ միջնադար (V-X դդ.), բարձր միջնադար (XI-XIII դդ.) և ուշ միջնադար (XIV-XV դդ.)» (էջ 148): Ինչպես տեսնում ենք, տրված է Համաշխարհային պատմության մի հատվածի՝ միջնադարի ընդգրկած ժամանակաշրջանը: Սա սովորողը պետք է իմանա Համաշխարհային պատմության 7-րդ դասարանի դասընթացից, Հայոց պատմության դասագրքում պետք է տրվեր հայոց պատմության միջնադարի ընդգրկած ժամանակաշրջանը (այսօր հայագիտության մեջ ընդունված է միջին դարերի ներքոնշյալ պարբերացումը: IV դ. սկզբից մինչև IX դ. կեսերը համարվում է վաղ միջնադարի ժամանակաշրջան, IX դ. կեսերից մինչև XIV դ. վերջերը՝ զարգացած միջնադարի շրջան, XV դ. սկզբից մինչև XVII դ. կեսերը՝ ուշ միջնադարի ժամանակաշրջան):	Թեպետ հայագիտության մեջ Հայոց պատմության միջնադարի թվագրման և պարբերացման խնդիրը դեռ վերջնական լուծում չի գտել, թերևս կարելի է դասագրքում ներկայացված Միջին դարերի բնութագրման վերջում հավելել, որ «Այսօր հայագիտության մեջ ընդունված է միջնադարի այլ պարբերացում. վաղ՝ IV-IX դ. կեսեր, զարգացած՝ IX դ. կեսերից-XIV դ. վերջեր, ուշ՝ XV-XVII դ. կեսեր»:		Անհրաժեշտ է դիտարկումը հաշվի առնել:
74.	«Այսպես՝ Ագաթանգեղոսը, Փավստոս Բուզանդն ու Ղազար Փարպեցին, միմյանց շարունակելով և լրացնելով,		Վրիպակ է: Պետք է լինի III-V դդ.:	Հեղինակի մոտեցումն ընդունելի է:

	շարադրել են III-IV դդ. հայոց պատմությունը» (էջ 150): Արդյո՞ք Փարպեցին V դ. հայոց պատմությունը չի շարադրել (գոնե մի մասը):			
75.	«Իսկ Անանուն պատմիչը, գովաբանելով Գագիկ Արծրունուն, էջեր է նվիրում Վանա լճի Աղթամար կղզում գտնվող Ոստան քաղաքի շենքերի նկարագրությանը» (էջ 173): Ոստան բերդաքաղաքը գտնվում էր ոչ թե Աղթամար կղզում այլ Վանա լճի հարավային ափին՝ Աղթամար կղզու դիմաց, Արտոս լեռան հյուսիսարևմտյան լանջերին (տե՛ս Հայաստանի և հարակից երկրների տեղանունների բառարան, հտ. 4, Երևան, 1998, էջ 177)		Վրիպակ է: Պետք է լինի «Աղթամար կղզու և Ոստան քաղաքի շենքերի նկարագրությանը»:	Հեղինակի մոտեցումն ընդունելի է:
76.	Դասագրքում զգալի թիվ են կազմում դժվարընկալելի, թյուրըմբռնման տեղիք տվող, նաև՝ սխալ, հակասական կամ ոչ հարթ ձևակերպմամբ նախադասությունները, օրինակ. «Նվիրապետություն Հայ առաքելական եկեղեցու հոգևոր աստիճանակարգը, որն ունի հետևյալ բաժանումները՝ կաթողիկոս, պատրիարք, արքեպիսկոպոս, վարդապետ, քահանա, սարկավագ, դպիր» (էջ 108): Հայոց եկեղեցու նվիրապետությունն այսօր ունի 9 աստիճան (հրեշտակների 9 դասերի նմանությամբ): 1) Դոնապանություն, 2) Ընթերցողություն, 3) Երդմնեցուցություն, 4) Ջահընկալություն, 5) Կիսասարկավագություն, 6) Սարկավագություն, 7) Քահանայություն, 8) Եպիսկոպոսություն, 9)		Վրիպակ է. Պետք է լինի «որն ունի հետևյալ հիմնական աստիճանները՝ սարկավագություն, քահանայություն, եպիսկոպոսություն և կաթողիկոսություն»:	Անհրաժեշտ է փոփոխել:

	<p>Կաթողիկոսություն (տե՛ս Քրիստոնյա Հայաստան հանրագիտարան, Երևան, 2002, էջ 814): Ինչպես տեսնում ենք, Ս. Հովհաննիսյանի նշած «բաժանումներից» 3-ը՝ պատրիարք, արքեպիսկոպոս և վարդապետ, նվիրապետական աստիճաններ չեն:</p>			
<p>77.</p>	<p><i>«Ձեռնադրություն / կրոնական կարգ, Հայ եկեղեցու յոթ խորհուրդներից մեկը, որով դառնում են հոգևորական և լիազորվում կատարել տարբեր կրոնական ծեսեր և արարողություններ» (էջ 108):</i> Սարկավագությունը ևս ձեռնադրությամբ են ստանում, սակայն սարկավագները չեն կարող ոչ բոլոր կրոնական ծեսերն ու արարողությունները (օրինակ, հոգեհանգստյան կարգ, խոստովանություն, պատարագ մատուցել և այլն) կատարել: Կարելի էր ընդամենը նշել հետևյալը. Ձեռնադրությունը հոգևորական աստիճան (սարկավագ, քահանա, եպիսկոպոս) շնորհելու ծես է, որը կատարվում է պատարագի ընթացքում, երբ հատուկ արարողությամբ հոգևորականն իր ձեռքը դնում է սպազա հոգևորականի կամ նվիրապետական ավելի բարձր աստիճան ստացող հոգևորականի գլխին:</p>	<p>Մանրամասնությունները չենք ներառել: Իսկ ձևակերպումը բնավ էլ չի ենթադրում ձեռնադրված հոգևորականի (այդ թվում սարկավագի) բոլոր գործառույթները: Իսկ բառարանի մեկնաբանության համապատասխան հատվածը հստակ է. <i>«դառնում են հոգևորական և լիազորվում կատարել տարբեր կրոնական ծեսեր և արարողություններ»:</i> (ընդգծումն իմն է):</p>		<p>Հեղինակի պարզաբանումն ընդունելի է:</p>
<p>78.</p>	<p><i>«Թաղեռար բուժում է Աբգարին և քաղաքի բոլոր հիվանդներին, քարոզում Ավետարանը: Այնուհետև մեկնում է, ըստ Մովսես Խորենացու, Աբգարի քեռորդու՝ Հայոց Սանատրուկ թագավորի արքունիք, որտեղ էլ նահատակվում է» (էջ 109):</i> Այսինքն,</p>	<p>Թյուրըմբռնումից խուսափելու համար հատվածը շտկել ենք. «Այնուհետև մեկնում է, ըստ Մովսես Խորենացու, Աբգարի քեռորդու՝ Հայոց Սանատրուկ թագավորի արքունիք: Հայաստանում էլ նահատակվում է»:</p>		<p>Հեղինակի մոտեցումն ընդունելի է:</p>

	<p>Թաղետոսը Մանատրուկ թագավորի արքունիքում է նահատակվել:</p>	<p>Բանն այն է, որ «այստեղ» ասելով նկատի ենք ունեցել հենց Հայաստանը:</p>		
<p>79.</p>	<p>Հռիփսիմյանց կույսերը «Քրիստոնյաների նկատմամբ իրականացվող հալածանքներից խուսափելով՝ ի վերջո ապաստանել են Հայաստանում, որտեղ և նահատակվել են: Ըստ ավանդության՝ հալածանքների պատճառը եղել է կույսերից Հռիփսիմեն» (Էջ 111): Այսինքն՝ Հռոմում քրիստոնյաների նկատմամբ իրականացվող հալածանքների պատճառը Հռիփսիմեն էր:</p>	<p>Իհարկե ոչ: Նախ՝ տեքստի սկզբնամասում շեշտված է այն, որ Հռիփսիմյան կույսերը «[ա]յրել են Հռոմի Դիոկղետիանուս կայսեր օրոք Հռոմի լեռներում գտնվող Ս. Պողոս վանքում: Քրիստոնյաների նկատմամբ իրականացվող հալածանքներից խուսափելով՝ ի վերջո ապաստանել են Հայաստանում, որտեղ և նահատակվել են»: Իսկ մեկնաբանի ներկայացրած հատվածին անմիջապես հաջորդում է հետևյալ բացատրությունը. «Կայսր Դիոկղետիանուսը գերվում է նրա շլացուցիչ գեղեցկությամբ և կամենում է անհապաղ կնության առնել նրան: Չկամենալով, սակայն, ենթարկվել կայսեր ցանկությանը՝ կույսերն իրենց մայրապետի՝ Գայանեի առաջնորդությամբ փախչում են Ալեքսանդրիա, իսկ հետո Հայաստան» (Էջ 111): Այդուև,եմայմիվ, պետք է նկատել նաև, որ Հռիփսիմեի հալածանքների պարճառ լինելը վերագրված է ավանդությանը: Այսպիսով՝ տեքստը նման եզրակացության տեղիք չի տալիս: Իհարկե, «քրիստոնյաների նկատմամբ իրականացվող հալածանքների պատճառը» Հռիփսիմեն չէր:</p>		<p>Հեղինակի պարզաբանումն ընդունելի է: Այդուհանդերձ, թյուրըմբռումներից փուսափելու նպատակով առաջարկում ենք հատվածը վերաշարադրել:</p>
<p>80.</p>	<p>«Հատկանշական է, որ չնայած քրիստոնեության հանդեպ իր սկզբնական թշնամանքին՝ հռոմեական կայսր Դիոկղետիանուսը (284-305) հանդուրժեց Հայաստանում քրիստոնեության հաստատումը, քանի</p>	<p>Այն, որ Դիոկղետիանուս կայսրը «<i>հանդուրժեց Հայաստանում քրիստոնեության հաստատումը</i>», պայմանավորված էր մի քանի հանգամանքներով: Դիցուք <i>քաղաքական կայունության</i> դիտանկյունը.</p>		<p>Հեղինակի պարզաբանումն ընդունելի է:</p>

	<p>որ դա ավելի շատ դիտվում էր որպես Սասանյանների դեմ հակադրության դրսևորում» (էջ 112): Փաստորեն՝ Հայաստանում քրիստոնեության հաստատումը Դիոկղետիանոսի հանդուրժողականության դրսևորման հետևանք էր, վերջինս կարող էր նաև թույլ չտալ Հայաստանում քրիստոնեության հաստատումը:</p>	<p>Դիոկղետիանոսը կայունություն էր փնտրում հռոմեական ազդեցության տակ գտնվող շրջաններում: Հայաստանի՝ քրիստոնեությունն ընդունելը հանդուրժելն անհրաժեշտ էր՝ ընդվզումներից, տարաձայնություններից կամ դիմադրությունից խուսափելու համար: Տարածաշրջանում հռոմեական շահերին համահունչ էր Հայաստանը Հռոմի ազդեցության ոլորտում պահելը, այլ ոչ թե Հռոմին հակադրվող Հայաստան ունենալը: Այդպիսով՝ տեղական կրոնական և մշակութային համատեքստի ճանաչումը/ընդունումը կարող էր լինել Հայաստանում ազդեցությունը պահպանելու ավելի լայն ռազմավարության մաս: Եվ ասվածից ամենևին չի հետևում, որ Հայաստանում քրիստոնեության հաստատումը Դիոկղետիանոսի հանդուրժողականության դրսևորման հետևանք էր: Խոսքը միայն Դիոկղետիանոսի քաղաքական հաշվարկների մասին է:</p>		
<p>81.</p>	<p>Դասագրքում օգտագործված որոշ հասկացություններ բացատրության կարիք ունեն, օրինակ, արտեզյան ջրեր (էջ 13), կատակոմբ (էջ 113) և այլն:</p>	<p>Դասագրքում չբացատրված բառերը կարող են միջառարկայական կապ ստեղծելու առիթ դառնալ: Դիցուք՝ հայոց լեզվի և հայոց պատմության, աշխարհագրության և հայոց պատմության և այլն:</p>		<p>Հեղինակի պարզաբանումն ընդունելի է:</p>
<p>82.</p>	<p>Դասագրքում գետեղված լրացուցիչ նյութերի գերակշիռ մասը («Պատմությունը և մարդը») ավելի շատ համաշխարհային, քան հայոց պատմությանը վերաբերող նյութեր են, ուստի հայոց պատմության դասագրքում դրանք գետեղելու</p>	<p>Մուրյեկտիվ դիտարկում է: Նշված էջերում գետեղված հարցադրումները ոչ միայն բխում են տեքստի նյութից, այլև լրացուցիչ հետազոտության հնարավորություն են ստեղծում, քանի որ աշակերտները</p>		<p>Հեղինակի պարզաբանումն ընդունելի է:</p>

	<p>անհրաժեշտությունը և ուսումնական նշանակությունը այնքան էլ համոզիչ չեն: Օրինակ՝ էջ 142-ում գտեղված է նյութ Մուավիայի մասին, միայն վերջում նշված է հետևյալը. «Խալիֆա հռչակվելուց հետո Բյուզանդիայի դեմ պայքարում Հայաստանի չեզոքությունն ապահովելու համար 661 թվականին Մուավիան հայոց իշխան ճանաչեց Գրիգոր Մամիկոնյանին»: Այս հետևում է առաջադրանքը. «Ի՞նչ ես կարծում, ինչպե՞ս կարող էին զարգանալ դեպքերը, եթե Մուավիան Գրիգոր Մամիկոնյանին հայոց իշխան չճանաչեր»: Այդպիսին են նաև դասագրքի 62-րդ, 81-րդ, 86-րդ, 91-րդ, 106-րդ, 109-րդ (նյութի վերջում տրված հարցի պատասխանը չի բխում նյութից) և այլ էջերում գտեղված նյութերը, իսկ էջ 151-ի լրացուցիչ նյութի հեղինակն ընդհանրապես նշված չէ:</p>	<p>չպետք է բավարարվեն միայն դասագրքի ներկայացրած նյութերով:</p> <p>Ինչ վերաբերում է 151-րդ էջի տեղեկատվությանը, այն գիտական տեքստերի հիման վրա պարզ շարադրանք է, որտեղ հղման կարիք չկա: Եթե նշելու լինեինք նման շարադրանքների բոլոր աղբյուրները, ապա դասագիրքը գիտական աշխատության կվերածվեր:</p>		
<p>83.</p>	<p>Ըստ Հայոց պատմության 7-րդ դասարանի ծրագրի՝ դասագրքում դասեր կամ դասանյութեր պետք է լինեին հետևյալ խորագրերով. Թեմա 4-ում՝ Քրիստոնեության առաջացումը և տարածումը, Քրիստոնեությունը հայոց քաղաքակրթության հիմնասյուն, Քրիստոնեական վարդապետությունը: Աստվածաշունչ, Հայոց եկեղեցու դերի ու ազդեցության ընդլայնումը տարածաշրջանում, Հայոց եկեղեցու նվիրապետությունը, խորհուրդները, եկեղեցիների կառուցվածքը, Ազգային-եկեղեցական ժողովներ, Թեմա 5-ում՝ Վարդանանց պատերազմը, Տիեզերական ժողովները և Հայոց եկեղեցին, Հակաարարական</p>	<p>Մուրյեկտիվ դիտարկում է. այդ ամենը կա դասագրքում, պարզապես երբեմն ոչ առանձին վերնագրերով:</p> <p>Դասագրքում անդրադարձել ենք թվարկված թեմաներին.</p> <p>քրիստոնեության առաջացումը (էջ 113, <i>Պատմությունը և մարդը բաժնում</i>),</p> <p>քրիստոնեությունը հայոց քաղաքակրթության հիմնասյուն (էջ 113, «<i>Հայոց պատմության ամենասարմատական իրադարձություններից է քրիստոնեության ընդունումը, որով Հայաստանը, հրաժարվելով իր հեթանոսական անցյալից, հակադրվեց և առանձնացավ թե՛ Արևմուտքից (Հռոմ), թե՛ Արևելքից</i></p>		<p>Դասերի կամ դասանյութերի բացակայության մասին դիտարկումը տեղին է (դիտարկումը ոչ թե տեղեկությունների, այլ խորագրերի մասին է): Հեղինակին առաջարկում ենք հաշվի առնել:</p>

<p>ապստամբությունները, Հայոց եկեղեցին VII–VIII դդ., Տնտեսությունը, առօրյա կյանքն ու կենցաղը, հասարակական հարաբերությունները Հայաստանում V–IX դարերում, Թեմա 7-ում՝</p> <p>Պատմաաշխարհագրական միջավայրը: Քաղաքական դրությունը տարածաշրջանում, Հայոց եկեղեցին Բագրատունյաց ժամանակաշրջանում և այլն, սակայն վերոհիշյալ խորագրերով դասանյութերն իսպառ բացակայում են, իսկ մյուս խորագրերի մեջ ներկայացված՝ վերոհիշյալ խորագրերին առնչվող դասանյութերը հատվածական են և ամբողջական պատկերացում չեն տալիս: Փոխարենը դասագրքում տեղ է գտել առարկայական ծրագրով չպահանջվող խորագրով դասանյութ («Մելեկյան պետությունը», էջ 60):</p>	<p><i>(Իրան): Այսօր ևս հայության համար հույժ կարևոր է քրիստոնեությունը՝ իբրև ազգային անցյալի անքակտելի մաս, դարերով ձևավորված սոցիալ-մշակութային ժառանգություն և ... (շարունակի՛ր ինքդ)»), քրիստոնեական վարդապետություն (էջ 110-113):</i></p> <p>Նշված էջերում (էջ 110-113) կան և Աստվածաշնչի, Հայոց եկեղեցու դերի, Հայոց եկեղեցու նվիրապետության և խորհուրդների մասին տեղեկություններ (վերջին երկուսի դեպքում՝ բառարանային բացատրություն և առաջադրանքներ, որոնց կատարմամբ հնարավոր կլինի վեր հանել թեմայի բովանդակությունը: Աշակերտներն անգամ կարող են այցելել եկեղեցի և հոգևորականներից ճշտել դրանց մասին մանրամասնությունները, նկարահանել դրանք և այլն: Այդպիսով աշակերտները նաև հնարավորություն են ստանում ոչ միայն կարդալով, այլև անմիջական մասնակցությամբ ձեռք բերել գիտելիքներ առաջադրված նյութերի վերաբերյալ: Հատկապես որ նյութը միայն պատմական փաստ չէ, այլև կենդանի և ապրող իրողություն, որի հետ շփման եզրեր է ստեղծում դասագիրքը):</p> <p>Իսկ Մելեկյանների մասին տեղեկատվությունը բոլորովին էլ ավելորդ չէ. այն անմիջապես վերաբերում է Հայոց պատմությանը և վեր է հանում մի շարք իրողություններ, առանց որոնց անհասկանալի կմնային Հայոց պատմության ինչ-ինչ իրողություններ (գաղութարար-</p>		
--	---	--	--

		<p>գաղութացված հարաբերություններ, կայսերական գիշողականություն՝ քաղաքական հաշվարկներով և այլն):</p>		
<p>84.</p>	<p>Հետաքրքիր է, թե արդյոք հեղինակը հաշվի է առել դասագրքում տրված առաջադրանքներից յուրաքանչյուրը կատարելու և ներկայացնելու համար անհրաժեշտ պայմաններն ու հատկացված ժամանակը: Օրինակ.</p> <p>«Գործնական առաջադրանք. Օգտվելով համացանցից՝ դասընկերոջդ հետ տեղեկություններ՝ հավաքիր Հայոց եկեղեցու յոթ խորհուրդների մասին: Ստեղծե՛ք պաստառ՝ օրինակներով ցույց տալով, թե ինչ է ենթադրում դրանցից յուրաքանչյուրը: Ձեր գտած տեղեկությունները և դրանց հիման վրա արված ձեր եզրակացությունները դասարանին ներկայացրե՛ք նաև բանավոր» (Էջ 113): Նախ՝ առաջադրանքը եթե դասարանում պետք է կատարվի, ինչքան ժամանակ եք նախատեսում, եթե տանը պետք է կատարեն, ապա պաստառը ինչպե՞ս և որտե՞ր պետք է ստեղծեն, ի՞նչ ժամանակում: Եթե, ի վերջո, սովորողներին (գույգերով աշխատանքի արդյունքում) հաջողվի հայթայթել ճիշտ և ուսանելի տեղեկություններ Հայոց եկեղեցու յոթ խորհուրդների մասին, մշակել, դասավորել, ստեղծել համապատասխան պաստառներ, իրենց գտած տեղեկությունները և դրանց հիման վրա արված իրենց եզրակացությունները դասարանին գույգերով ներկայացնեն նաև բանավոր, որքա՞ն կտևի այդ աշխատանքը</p>	<p>Դասագրքի հեղինակն անպայման հաշվի է առել առաջադրանքների կատարման ժամանակը: Բայց դասագրքի հեղինակը նաև համոզված է, որ ուսուցիչն ազատ է այդ առաջադրանքների կատարման ժամկետները սահմանելու և որոշելու գործում: Ուսուցիչն ինքն է որոշում, թե որ դասին որ առաջադրանքը կատարի աշակերտների հետ կամ հանձնարարի նրանց, որ առաջադրանքին որքան ժամաքանակ հատկացնի: Օրինակ՝ առաջադրանքը կարելի է կատարել անգամ փուլային տարբերակով. մեկ դասաժամ նվիրում են նախ ինքնուրույն հայթայթված տեղեկությունները քննարկելուն, հաջորդ դասաժամը՝ դրանք գույգերով կամ խմբային աշխատանքով ընդհանրացնելուն: Կամ կարելի է աշխատանքը կատարել մեկ դասաժամի ընթացքում՝ տեղեկություններ հավաքելը թողնելով որպես տնային հանձնարարություն, այնուհետև պաստառների կազմումը կատարելով դասարանում: Շատ հավանական է, սակայն, որ աշակերտները կարողանան միասին աշխատել նաև տեղեկություններ հավաքելու փուլում: Մի խոսքով՝ հնարավոր տարբերակները բազմաթիվ են և պայմանավորված են իրավիճակով, այս կամ այն թեմայի յուրացման աստիճանով, ուսուցչի սահմանած ենթանպատակներով և այլն: Նույնիսկ կատարյալ դասագիրքը, եթե նման բան</p>		<p>Հեղինակի պարզաբանումն ընդունելի է:</p>

	<p>(հմիջիայրոց նշենք, որ դասագրքի հեղինակն ինքը պետք է կատարեր ծրագրային այդ պահանջը և առանձին դասանյութում ներկայացներ Հայոց եկեղեցու յոթ խորհուրդները): Իսկ չե՞ք կարծում, որ զոնե մի քանի կայքէջեր պետք է նշեիք, որ սովորողները օգտվեին դրանցից:</p> <p><i>«Գործնական առաջադրանք. Օգտվելով համացանցից կամ «Համաշխարհային պատմություն» դասագրքից՝ դասընկերոջդ հետ ստեղծի՛ր պատուառ՝ օրինակներով ցույց տալով, թե ինչպես են թագավորական (պետական) Հողերը աստիճանաբար մասնատվում, և դա ինչպես է նպաստում արքայի իշխանության թուլացմանը: Ներկայացման մեջ ներառե՛ք պատկերներ ենթագրերով»</i> (Էջ 127): Նախորդ ենթակետում նշված հարցերին այստեղ ավելացնենք ևս մեկը. իսկ ինչո՞ւ պետք է այս առաջադրանքը կատարեն Հայոց պատմության դասընթացից, այլ ոչ թե Համաշխարհային պատմության:</p>	<p>գոյություն ունի, չի կարող փոխարինել ստեղծագործ ուսուցչին:</p> <p>Ինչ վերաբերում է դասագրքի հեղինակի՝ ծրագրային պահանջի ինչ-ինչ կետեր առանձին դասանյութում չներկայացնելուն, կարծում ենք, ապա դա խիստ սուբյեկտիվ դիտարկում է, քանի որ դասագրքի տվյալ հատվածում ներկայացված դասանյութի, սկզբնաղբյուրների, ՊՐ կողերի և առաջադրանքների միջոցով ծրագրային նյութը լիարժեքորեն ամբողջանում է:</p> <p>Ինչ վերաբերում է «Գործնական առաջադրանք»-ին, ապա այն ենթադրում է միջառարկայական կապի ստեղծում, որով միմյանց են հարաբերվում հայոց պատմությունն ու համաշխարհային պատմությունը: Համաշխարհային պատմության իրողությունը հայոց պատմության համատեքստում տեղայնացնելը կօգնի նրանց տեսնել՝ ինչպես են հայոց պատմության գործընթացները կապված համաշխարհային պատմության գործընթացների հետ:</p>		
<p>Հովհաննես Խորիկյան</p>		<p>ՊԱՏԱՍԽԱՆՆԵՐ</p>		
<p>85.</p>	<p>Անընդունելի է «Տիգրան Մեծի կայսրությունը Ք. ա. 80 թվականին» (Ժամանակակից սահմաններով) քարտեզը /Էջ 80/: Ես մի կողմ եմ թողնում քարտեզում Լեռնային Ղարաբաղ (Արցախ) անհասկանալի նշումը, առանց պայմանական</p>	<p>Հավանաբար թյուրըմբռնման արդյունք է, քանի որ մեկ քարտեզի մեջ դիտարկվել են երկու տարբեր ժամանակներ, բայց այնպես, որ դրանք հնարավոր է միմյանցից թե՛ գատորոշել, թե՛ համադրել (աշխարհագրական վայրերի</p>		<p>Առաջարկում ենք քարտեզը խմբագրել՝ ավելացնելով նաև «Աղվանք» երկրանունը:</p>

<p>նշաններով սահմանագծման, ներկայիս Ադրբեջանի կազմում: Հեղինակի համար Արցախը նահանգ է, սոսկ աշխարհագրական տարածք, հակառակ դեպքում առանց փակագծերի կնշեր միայն Արցախի Հանրապետություն: Այն, որ քարտեզը քաղաքական ենթատեքստ ունի, ակնհայտ է Ադրբեջան անվանումից ու վերջինիս քարտեզում ընդգծված սահմաններից: Պատմական քարտեզները ժամանակակից պետությունների սահմաններով ներկայացնելը հիմնականում արևմտաեվրոպական պատմական քարտեզագրության «ձեռքբերումներից» է, ինչը հիմքում ունի գուտ քաղաքական նպատակ: Քարտեզում պատմական Վիրքը ներկայիս Վրաստանն է՝ սխալ նշված սահմաններով, բայց ամենագարմանային այն է, որ Կուր գետից հյուսիս ընկած պատմական Աղվանքը (հունահռոմեական աղբյուրների Կովկասյան Ալբանիան) քարտեզում չկա: Տիգրան Մեծի ժամանակ Աղվանքն առանձին թագավորություն էր ու ավելի ուժեղ, քան Վիրքը: Պատմական Աղվանքի տարածքը ներկայումս հիմնականում գտնվում է Ադրբեջանի կազմում, սակայն դասագրքի հեղինակը քարտեզում Ք. ա. 80 թվականին դատարկ տարածություն է ստեղծել՝ լրացնելով այն Ադրբեջանով: Ք. ա. 1-ին դարում Աղվանից թագավորության սահմանը հարավում երբեք չի անցել Կուր գետը: 7-րդ դասարանի աշակերտի ու ցանկացած ոչ իրազեկ ընթերցողի</p>	<p>անվանումների գունային տարբերակմամբ և ժամանակակից պետությունների սահմանների ուրվագծմամբ): Բացի այդ, կա քարտեզին վերաբերող առանձին առաջադրանք, որը հիմնված է հենց քարտեզի այդ երկակիության վրա: Բայց քանի որ կա թուրքմբռնում, ուրեմն հարկավոր է նաև մանրամասնել-մեկնաբանել:</p> <p>Ինչպես քարտեզի վերնագիրն է հուշում (Տիգրան Մեծի կայսրությունը Ք.ա. 80 թ. (ժամանակակից սահմաններով)), Տիգրան Մեծի կայսրությունը տեղադրված է ժամանակակից քաղաքական քարտեզին: Նպատակն է աշակերտներին բացատրել, թե Տիգրան Մեծի կայսրությունն իր ժամանակների և ժամանակակից ի՞նչ պետությունների տարածքի հետ է համընկնում կամ ներառում. դա հստակ է հատկապես քարտեզի վերաբերյալ 2-րդ առաջադրանքից (Կիրառի՞ր աշխարհագրական հմտություններդ: Ի՞նչ պետություններ էր ընդգրկում Տիգրան Մեծի կայսրությունը: Այսօրվա ո՞ր երկրների տարածքներն է ընդգրկել այն):</p> <p>Հարցի առաջին մասը (Ի՞նչ պետություններ էր ընդգրկում Տիգրան Մեծի կայսրությունը) վերաբերում է Տիգրան Մեծի կայսրության մեջ Ք. ա. 80 թ. ընդգրկված պետություններին (դասանյութի և քարտեզի օգնությամբ աշակերտները կարող են նշել <i>Ասորիքը, Կոմմագենեն, Ծոփքը</i> (որն առանձին</p>		
--	--	--	--

<p>մոտ տպավորություն է ստեղծվում, որ Ադրբեջան պետությունը, երկիրը հազարամյակների պատմություն ունի: Մյուս կողմից անտիկ Ադվանքի արևելյան սահմանը հասել է մինչև Կասպից ծով, բայց հեղինակն Ադրբեջանի արևելյան սահմանագիծը խիստ կրճատել է:</p> <p>Դասագրքում Տիգրան Մեծի տերությունը Ք. ա. 80 թ. կացությանը նշելը ևս պատմագիտական առումով սխալ է, քանի որ Ք. ա. 80 թվականին Տիգրան Մեծի տերության ձևավորումը դեռևս չէր ավարտվել:</p>	<p>հայկական թագավորություն էր, և միայն Տիգրան Մեծին հաջողվեց Ք.ա. 94 թ. միավորել իր տերությանը), <i>Ատրպատականը և Վիրքը</i>), իսկ երկրորդ մասը (<i>Այսօրվա ո՞ր երկրների տարածքներն է ընդգրկել այն</i>) վերաբերում է ժամանակակից պետություններին (դասանյութի և քարտեզի օգնությամբ աշակերտները կարող են նշել ժամանակակից երկրներից <i>Լիբանանը, Սիրիան, Թուրքիայի մի մասը, Իրանի մի մասը, Իրաքի զգալի մասը, գրեթե ամբողջ Ադրբեջանը և Գրաստանի մի մասը, Հայաստանի Հանրապետությունն ու Արցախի Հանրապետությունը՝ ամբողջությամբ</i>):</p> <p>Այս ամենը հնարավորություն է տալիս աշակերտին քարտեզի վրա միաժամանակ տեսնելու Տիգրան Մեծի ժամանակների աշխարհի պատկերն ու ժամանակակից աշխարհի պատկերը: Նա կարող է նաև տեսնել, թե այսօր Տիգրանյան Հայաստանի համեմատ ինչքան է փոքրացել Հայաստանը, կամ ժամանակակից ինչ պետություններ, որ չկային այն ժամանակ, հիմա կան, ու էլի այլ նրբություններ, որոնք ուսուցչի հարցերի օգնությամբ հնարավոր կլինի վեր հանել: Մի խոսքով՝ քարտեզը և դրան վերաբերող հարցը բացահայտում են անցյալի և ներկայի կապը, վեր են հանում ուսումնասիրվող նյութի արդիականությունը:</p>		
---	--	--	--

		<p>Բացի այդ՝ աշխարհագրական հմտությունների զարգացմանը զուգահեռ զարգացվում են նաև պատմական մտածողության հետևյալ հմտությունները՝ պատմական պատճառականություն, շարունակականություն և փոփոխություն և համադրություն:</p> <p>Դրանցից առաջինի (<i>պատմական պատճառականություն</i>) դեպքում աշակերտը կփորձի համեմատել պատմական տեղաշարժերի պատճառները և/կամ հետևանքները, կարճաժամկետ և երկարաժամկետ ազդեցությունները կամ առնվազն հարցեր տալ դրանց վերաբերյալ: Երկրորդի (<i>շարունակականություն և փոփոխություն</i>) դեպքում աշակերտը կկարողանա ճանաչել, նկարագրել և վերլուծել շարունակականության և փոփոխության պատմական միտումները ժամանակի ընթացքում: Իսկ երրորդի (<i>համադրություն</i>) դեպքում աշակերտը կկարողանա կիրառել անցյալի մասին պատկերացումները այլ պատմական համատեքստերում կամ հանգամանքներում, ներառյալ ներկան:</p> <p>Այս մասին բավականին մանրամասն գրված է նոր դասագրքի մեթոդական ուղեցույցի 13-14 և 23-24 էջերում:</p> <p>Այս երեք հմտություններին զուգահեռ քարտեզի հետ աշխատանքի, քննարկումների անուղղակի արդյունք կլինի նաև աշակերտների դիրքորոշում հայտնելը. նրանք կներգրավվեն</p>		
--	--	--	--	--

		<p>փաստերը դասակարգելու, մեկնաբանելու, դրանց վերաբերյալ հարցադրումներ անելու ստեղծագործական աշխատանքի մեջ:</p> <p>Ինչ վերաբերում է Աղվանքին, այն պատահաբար է քարտեզից դուրս մնացել և դասագրքի էլեկտրոնային տարբերակում արդեն ավելացված է:</p> <p>Ի վերջո, քարտեզը դասանյութից դուրս, մեկուսի կառույց չէ, այն սերտորեն շաղկապված է թե՛ դասանյութին, թե՛ սկզբնաղբյուրներին, թե՛ առաջադրանքներին: Ավելին՝ հաջորդ դասի վերջում զետեղված է QR կոդ, որը լրացուցիչ նյութ է տալիս ուսումնասիրվող նյութը քննարկելու համար:</p>		
<p>86.</p>	<p>Հայոց պատմության նախկին դասագրքերում (կարևոր էլ չէ՝ երբ են հրատարակվել ու վերահրատարակվել) կա մի հատված, որի համադրումը 7-րդ դասարանի նոր դասագրքի հետ բացահայտում է մի հետաքրքիր իրողություն: Նոր դասագրքի էջ 54-ում կարդում ենք. «Պարույր Սկայորդուն հաջորդած արքաներից Երվանդ Սակավակյացին է հաջողվում Հայկական լեռնաշխարհում հաստատել իր հսկողությունը: Քանի որ սկզբնաղբյուրների սակավություն կա, միայն կարելի է ենթադրել, որ նա իր տիրապետությունը հաստատում է այն հողերի վրա, որոնք ժամանակին Վանի թագավորությունն էր վերահսկում (այս առումով պատահական չէր դասագրքում</p>	<p>Խիստ սուբյեկտիվ դիտարկում է և հիմնված է ավելի շատ ենթադրությունների վրա:</p> <p>Երվանդ Սակավակյացի մասին դիտարկում-մեկնաբանությունը արհեստական է Վանի թագավորության քարտեզին կապակցելը, քանի որ, ինչպես արդեն բազմիցս նշել ենք, էջ 41-ում Վանի թագավորության սխալ քարտեզ է զետեղվել: Այն այժմ արդեն վերականգնված է դասագրքի էլեկտրոնային տարբերակում:</p> <p>Ինչ վերաբերում է Երվանդ Սակավակյացի կառավարման տարիներին Հայաստանի</p>		<p>Անհրաժեշտ է տեքստում հստակ նշել Երվանդ Սակավակյացի օրոք հայկական պետության հյուսիսարևելյան սահմանի մասին:</p>

<p>«Վանի թագավորության սահմանները Ք. ա. 743-700 թթ.» քարտեզը, որպեսզի որդեգրած գիծը շարունակվեր նաև հաջորդ դարերի, օրինակ տե՛ս նաև «Տիգրան Մեծի կայսրությունը Ք. ա. 80 թվականին» (ժամանակակից սահմաններով) քարտեզը, պատմության շարադրանքում-Հ.Խ.): Թագավորության սահմանները հյուսիս-արևմուտքում հասնում են մինչև Սև ծովի ափեր, հարավ-արևելքում՝ Մարաստան, հարավում՝ Հյուսիսային Միջագետք»:</p> <p>Նախկին դասագրքերում (Հայոց պատմություն, 6-րդ դասարան, Եր., 2013, էջ 61; Հայոց պատմություն, 6-րդ դասարան, Եր., 2023, էջ 61; Հայոց պատմություն, 10-րդ դասարան, Ընդհանուր և բնագիտամաթեմատիկան հոսքեր, Եր., 2014, էջ 46; Հայոց պատմություն, 10-րդ դասարան, Հումանիտար հոսք, Եր., 2014, էջ 68; Հայոց պատմություն, 10-րդ դասարան, Հումանիտար հոսք, Եր., 2021, էջ 68) գրված էր. «[Երվանդ Սակավակյացի օրոք հայոց] թագավորության սահմանները հյուսիս-արևելքում (6-րդ դասարանի 2013թ. դասագրքում՝ «հյուսիսում՝ Կուր գետ և Սև ծով») հասնում էին Կուր գետ, հյուսիս-արևմուտքում՝ Սև ծով, արևելքում՝ [ճիշտ կլիներ հարավ-արևելքում] Մարաստան, իսկ հարավում՝ Հյուսիսային Միջագետք...»: 7-րդ դասարանի նոր դասագրքում «գարմանալիորեն», «սկզբնաղբյուրների սակավության» պատճառով բաց են թողնվել հայոց թագավորության հյուսիսային,</p>	<p>սահմաններին, դիտարկումը խիստ սուբյեկտիվ է, և անհասկանալի է, թե ինչու է դիտարկման հեղինակը դասագրքում ներկայացվածը համարում դիտավորություն այն դեպքում, երբ դասագրքի 55-րդ էջում կա քարտեզ, որը լիովին համապատասխանում է իր նկարագրած իրավիճակին: Ավելին՝ դասագրքում հստակ գրված է. «Պարույր Սկայորդուն հաջորդած արքաներից Երվանդ Սակավակյացին է հաջողվում Հայկական լեռնաշխարհում հաստատել իր հսկողությունը (ընդգծումն իմն է)» (էջ 54):</p> <p>Ի դեպ՝ մեր հեղինակած դասագրքի հատվածը (<i>«Թագավորության սահմանները հյուսիս-արևմուտքում հասնում են մինչև Սև ծովի ափեր, հարավ-արևելքում՝ Մարաստան, հարավում՝ Հյուսիսային Միջագետք»</i>) համապատասխանում է ՀՀ ԳԱԱ թղթակից անդամ Բարկեն Հարությունյանի խմբագրած դասագրքի տեղեկատվությանը (Հարությունյան Բ., Բարխուդարյան Վ., Ղարիբյան Ի., Հովհաննիսյան Պ., Հայոց պատմություն (հնագույն և հին շրջան): 6-րդ դասարանի դասագիրք, - Եր.: «ՄԱՆՄԱՐ», 2013 կամ 2023), որտեղ գրված է. «Հունական սկզբնաղբյուրների համաձայն՝ Երվանդ I Սակավակյացի օրոք Հայոց թագավորության սահմանները հարավ-արևելքում հասնում էին մինչև</p>		
---	---	--	--

	<p>հյուսիսարևելյան սահմանները: Չեմ կարծում պատահականություն է, որովհետև հատկապես ներկայիս ՀՀ տարածքը, Արցախի Հանրապետության տարածքը դիտարկվել են հայ ժողովրդի ձևավորման սահմաններից դուրս գտնվող [ղատարկ] տարածություններ, որոնք պատմական Հայաստանի մեջ չեն մտել:</p>	<p><i>Մարաստան, իսկ հյուսիս-արևմուտքում՝ մինչև Սև ծովի ափեր» (էջ 55-56):</i></p>		
<p>87.</p>	<p>Քսենոփոնը չի նշում, որ Տիգրան Երվանդյանը Կյուրոս Բ Մեծի մանկության ընկերն էր (էջ 55, ընդ որում՝ դասագրքի մեթոդական ուղեցույցում Քսենոփոնի «Կյուրոսպեդիա» երկը նշված է): Իրականում Քսենոփոնը նշել է, որ Տիգրանը Կյուրոսի որսընկերն էր («որսի ժամանակ ընկերակցել է»):</p>		<p>Ընդունելի է «որսընկեր»:</p>	<p>Հեղինակի մոտեցումն ընդունելի է:</p>
<p>87ա</p>	<p>«Հայաստանը Ք. ա. 522-520 թթ. Պայքար արեմենյան տերության դեմ (Ք. ա. 522-521)» քարտեզը նախկին դասագրքերից հայտնի «Հայաստանը Ք. ա. 522-521 թվականների» քարտեզի խմբագրված, փոփոխությունների ենթարկված տարբերակն է: Նախկին քարտեզի տարածքի սահմանագծումն էլ է վիճելի (օրինակ, Սև ծովի հարավային առափնյա տարածքներ), բայց Սմբատ Հովհաննիսյանը տեղյակ չէ, որ Իգալան Հայաստանի կազմում է եղել (Բեհիսթունի արձանագրության աքքադերեն/բաբելոներեն տարբերակում Իգալան հիշատակվում է Ուրաշտուի (իմա՝ Հայաստանի) կազմում՝ առանց Ասորեստանի հետ կապելու: Եթե հեղինակը ընտրովի մոտեցում չցուցաբերեր մասնագիտական գրականության</p>	<p>Սմբատ Հովհաննիսյանը տեղյակ է, որ Բեհիսթունի արձանագրության մեջ Իգալան չի գտնվում Հայաստանի կազմում, ինչպես կարծում է դիտարկողը, այլ որ գտնվում է Ասորեստանում, ինչպես գրված է արձանագրության համապատասխան հատվածում. <i>«[է]րք նս [Վահումիսան] հասալ Արմինսս, սպստամբները հավաքվեցին և դուրս եղան Վահումիսայի դեմ ճակատամարտի: Ասորեստանում Իգալս անունով մի վայր կս. ճակատամարտը տեղի ունեցով այնտեղ»:</i></p> <p>Դասագրքի հեղինակի մոտեցումը գիտական մոտեցումն է:</p>		<p>Հեղինակի պարզաբանումն ընդունելի է:</p>

	նկատմամբ, այս հարցերին տեղյակ կլինեմ			
88.	<p>Դասագրքի մեթոդական ուղեցույցի՝ գրականություն և լրացուցիչ նյութեր ուսուցչի ինքնակրթության և ինքնագարգացման համար ներկայացված պատմագիտական գրականության մեջ մեր հայտնի պատմաբանների աշխատությունների փոխարեն նշված են Հ. Դավթյանի հակագիտական, հակաեկեղեցական աշխատությունները (օրինակ, Հ. Դավթյանը գրում է, որ «Հայաստանում քրիստոնեությունը տարածողները Տրդատ Մեծի օրոք հրեաներն էին, և հայոց թագավորը չի զլացել ընդունելու նրանց գրավիչ առաջարկը՝ փողը բանակի համար, նոր կրոն իր գահի ամրապնդման համար»), որոնցից մեկի վերաբերյալ տե՛ս պ.գ.դ. Վ. Վարդանյանի գրախոսությունը (https://arar.sci.am/Content/39111/file_0.pdf):</p>	<p>Սուբյեկտիվ դիտարկում:</p> <p>Ներկայացված պատմագիտական գրականության մեջ նշված են բազմաթիվ այլ գրքեր և ս, որոնք ապահովում են թեմաների վերաբերյալ դիտանկյունների բազմազանություն: Իսկ քանի որ ուսուցիչը պատմագիտության ոլորտում մասնագիտական բարձրագույն կրթություն ունեցող անձ է, ենթադրվում է, որ նա կկարողանա տարբեր ուսումնասիրություններից քաղել անհրաժեշտ տեղեկատվությունը: Ընդհանրապես, դժվար է նշել գիտական որևէ աշխատություն (հումանիտար կամ հասարակագիտական ոլորտի), որի ընդգրկված բոլոր դիտարկումները լիակատար համոզիչ և բոլորի կողմից ընդունելի են: Բազմաթիվ դրույթներ կարող են անգամ հակագիտական համարվել, եթե քննադատում ենք որոշակի հղացական դիրքից: Սակայն դա ամենևին էլ չի նշանակում, որ ներկայացվող վարկածները պիտանի չեն, առնվազն դրանց հակադրվելու դիտանկյունից:</p>		<p>Դիտարկումը սուբյեկտիվ չէ հենց միայն այն առումով, որ նշված գործը «գիտական աշխատություն» չէ: Առաջարկում ենք տարանջատել գիտական և «գիտականամերձ»-ի հավակնություն ունեցող հրատարակությունները, կամ վերջինները գրականության ցանկում չնշել:</p>
89.	<p>Անձամբ ճանաչել եմ Սիմոն Կրկյաշարյանին, խորը հարգանք ունեմ նրա գիտական վաստակի նկատմամբ, բայց Սմբատ Հովհաննիսյանի կողմից դասագրքի մեթոդական ուղեցույցում միայն Ս. Կրկյաշարյանի «Հին Հայաստանի պետական կառուցվածքը (մ. թ. ա. VI-մ. թ. ա IV դդ.)» /Երևան, Լուսակն, 2005/ մենագրությունը (մեկ այլ</p>	<p>Սուբյեկտիվ դիտարկում:</p> <p>Հարցին պատասխանել եմ 87-րդ դիտարկմանն անդրադառնալիս:</p>		<p>Հեղինակի պարզաբանումն ընդունելի է:</p>

	մենագրություն էլ է հիշատակում, որը գիտական առումով բավականին հնացել է) հայոց հին պատմության հարցերում կարևորելը մեղմ ասած ճիշտ չէ, քանի որ պատմագիտությունը Կրկյաշարյանի 2005 թվականին հրատարակված գրքից (հեղինակի՝ 1980 թ. պաշտպանած դոկտորական ատենախոսության անփոփոխ հրատարակությունն է) հետո շատ է զարգացել:			
90.	Միայն են նշված Հովսեպոս Փլավիոսի ծննդյան և մահվան տարեթվերը (էջ 79): Պատմիչի ծննդյան տարեթիվը հստակ է՝ մ. թ. 37 թ. վերջ կամ 38 թ. սկիզբ. ծնվել է Գայոս Կալիգուլա կայսեր իշխանության առաջին տարում: Մահվան տարեթիվը հստակ չէ, ստույգ չէ նաև մ. թ. 100 թվականը (չնայած որոշ ծանոթագրություններում նշվում է շուրջ 95 թ. կամ շուրջ 100 թ.), քանի որ Հովսեպոս Փլավիոսը ողջ էր մ. թ. II դարի առաջին տասնամյակում: Մահվան տարեթվի շուրջ նշվում են տարբեր թվականներ, բայց հարցը դա չէ: Դասագրքում ստացվել է, որ Հովսեպոս Փլավիոսն ապրել է մոտ 130 տարի (Ք. ա. շուրջ 30 թ.- մ.թ. 100 թ.): Երբևէ չէի տեսել, որ միաժամանակ կողք կողքի կարելի է գրել Ք. ա. և մ. թ.:		Վրիպակ է: Պետք է լինի ՀՈՎՍԵՓՈՍ ՓԼԱՎԻՈՍ (շուրջ 37/38-100 թթ.): Ընդ որում՝ Հովսեփոս, Փլաբիոս, Գայոս Կալիգուլա:	Հեղինակի մոտեցումն ընդունելի է:
91.	Դասագրքի տարբեր քարտեզներում նշված է Ուրմիա լիճ, ինչը սխալ է, պետք է լինի Ուրմիո լիճ:	Երկու տարբերակներն էլ ընդունելի են: Տե՛ս Հայաստանի և հարակից շրջանների տեղանունների բառարանում՝ Հատոր 5, Ցուցակ 1, Էջ 214:		Հատուկ անունները միաձև գրել:
Աշոտ Փիլիպոսյան		ՊԱՏԱՍԽԱՆ		

92.	<p>Homo ERECTUS-ը «... բնութագրվում է երկոտանի լինելով և բացառիկ ճանաչողական հմտություններով» (էջ 20):</p> <p>Homo ERECTUS-ը՝ երկու ոտքի վրա ուղղաձիգ կանգնող մարդանման էակն էր, իսկ երկոտանի կարող են լինել նաև արջը, թռչունը, կենդուրուն, ջայլամը և այլն:</p>	<p>Դիտարկման հեղինակը շփոթել է «Հոմո սապիենսի» և Homo ERECTUS-ի մասին հատվածները:</p> <p>Ինչ վերաբերում է մարդու՝ երկոտանի լինելուն, ապա՝ մարդը ևս երկոտանի կենսաբանական արարած է: Իսկ արջից, ջայլամից կամ մեկ այլ երկոտանուց տարբերելու համար գրված է նաև՝ <i>«բացառիկ ճանաչողական հմտություններով»</i>:</p>		<p>Հեղինակի պարզաբանումն ընդունելի է:</p>
93.	<p>Homo SAPIENS-ն էջ 20-ում՝ ապրել է մեզանից 1,5 մլն., իսկ էջ 21-ում՝ 2-2,5 մլն. տարի առաջ:</p> <p>Մասնագետն այս պարագայում կներկայացնե՞ր առավել ընդունելի ժամանակահատված՝ շուրջ 2 մլն. տարի</p>	<p>Այստեղ ևս դիտարկման հեղինակը շփոթել է «Հոմո սապիենսի» և Homo ERECTUS-ի մասին հատվածները:</p> <p>Բայց դիտարկումն ընդունելի է, ինչի մասին գրել են 5-րդ դիտարկմանն անդրադառնալիս:</p>	<p>Վրիպակ է: Պետք է լինի 2-2,5 մլն. տարի առաջ</p>	<p>Հեղինակի մոտեցումն ընդունելի է:</p>
94.	<p>Էջ 22-ում կա «որսորդ հավաքիչներ» դարձվածքը:</p> <p>Սա, ըստ ամենայնի, ռուսերեն՝ охотники-собиратели արտահայտության անհաջող բառացի թարգմանությունն է: Իրականում ճիշտ կլինե՞ր «որսորդներ – հավաքչությամբ զբաղվողներ»-ը:</p>	<p>Այս մասին գրել են 6-րդ դիտարկմանն անդրադառնալիս:</p>		<p>Անհրաժեշտ է դիտարկումը հաշվի առնել:</p>
95.	<p>Էջ 21-ում Նոր քարի դարը սկսվում է 10.000, իսկ 22-ում՝ 12.000 տարի առաջ Ճիշտ կլինե՞ր երկու հատվածներում էլ գրել՝ 12.000-10.000 տարի առաջ:</p>	<p>Կարծում են՝ դիտողություն անողի մոտ շփոթ կա, քանի որ դասագրքի միայն 21-րդ էջում կա Նոր քարի դարի մասին: Գրված է, որ այն սկսվում է Ք.ա. 10-րդ հազարամյակից, իսկ էջ 24-ում գրված է՝ «մոտ 12 հազար տարի առաջ»: Դրանք միմյանց չեն հակասում:</p>		<p>Հեղինակի պարզաբանումն ընդունելի է:</p>
96.	<p>Նոր քարի դարին վերաբերող տեքստում (էջ 25) կարդում ենք. «...Նրանք սկսեցին բնակվել ավելի մեծ ու կազմակերպված համայնքներում, որոնց մի մասն</p>	<p>Դիտարկումը չի հակասում դասագրքում գրված տեղեկությանը. <i>«Մենքի արտադրությունը նպաստեց բնակչության անին, իսկ սննդի ավելցուկի արդյունքում զարգացավ</i></p>		<p>Հեղինակի պարզաբանումը հիմնական մասով ընդունելի է: Թյուրըմբռումներից</p>

	<p>աստիճանաբար վերածվեց քաղաքների...»:</p> <p>Իրականում համայնքների զարգացումը բերում է հասարակության կազմավորման, իսկ քաղաքները ձևավորվում են բնակավայրերի զարգացման արդյունքում: Մինևոյն ժամանակ ինչ ասել է քաղաք Նոր քարի դարում ????</p>	<p>փոխանակումը: Մեկուսացված տոհմական համայնքները միախորովեցին գեղերի մեջ: Մարդիկ սկսեցին մշտական բնակավայրեր կառուցել և աստիճանաբար անցան նասակեցության: Գործիքներով աշխատելը մեծ հնտություն էր պահանջում, ուստի մարդիկ սկսեցին մասնագիտանալ տարբեր արհեստների մեջ: Նրանք սկսեցին բնակվել ավելի մեծ և կազմակերպված համայնքներում, որոնց մի մասն աստիճանաբար վերածվեց քաղաքների»:</p> <p>Ինչ վերաբերում է Նոր քարի դարում քաղաքի գոյության հնարավորությանը: Դիցուք Նոր քարի դարի հայտնի քաղաք է Երիբովը (հայտնի է իր քարե պարիսպներով և աշտարակով, ինչը դրա կառուցումը դարձնում է մարդկության պատմության մեջ ամրաշինության ամենավաղ օրինակներից մեկը)... Հարկավ, այս դեպքում «քաղաք» ասելով՝ նկատի չունենք ժամանակակից քաղաքը:</p>		<p>խուսափելու համար առաջարկում ենք «քաղաքներ» բառը փոխարինել «մեծ բնակավայրեր»-ով:</p>
<p>Ռուսլան Ֆականյան</p>	<p>ՊԱՏԱՍԽԱՆՆԵՐ</p>			
<p>97.</p>	<p>Հայոց ազգածագման վերաբերյալ տրված է միայն Բալկանյան տեսությունը (էջ 28):</p> <p>Իսկ ուր մնացին Գամկրելիձե – Իվանովի, Սաֆրոնովի, Գիմբուտասի և այլոց տեսությունները: Ինչ է անպայման դպրոցից պետք է երեխային սովորեցնել, որ մենք եկվոր են այս տարածաշրջանում: Ում է սա ձեռնտու...</p>	<p>Գասագրքում տրված չէ միայն Բալկանյան տեսությունը: Դրա մասին գրել են նաև 34-րդ դիտարմանն անդրադառնալիս:</p> <p>Տեսություններից մեկը՝ «հարավասիական (հայկականը)» (էջ 29) վերաբերում է հենց Գամկրելիձե-Իվանովի տեսությանը: Հայերի՝ եկվոր լինելու մասին դասագրքում չկա ոչ մի պնդում, ճիշտ հակառակը, ինչպես էջ 28-ում է</p>		<p>Անհրաժեշտ է եղած դիտարկումը հաշվի առնելով վերաշարադրել տեքստը:</p> <p>Մասնավորաբար, սկզբում պետք է գրել հայերի ծագման տեղական (հայկական) և ապա միայն մյուս վարկածների մասին:</p>

		գրված. «Այն, որ հայ ժողովրդի ձևավորումը տեղի է ունեցել տևական փոխազդեցությունների արդյունքում և Հայկական լեռնաշխարհի տարածքում, հաստատվում է նաև ժամանակակից գենետիկ հետազոտությունների արդյունքում»: Ավելի մանրամասն տե՛ս 34-րդ դիտարման իմ պատասխանը:		
98.	Էջ 31-ում կա ձիասանձի նկար և դրա թվագրումը՝ Ք.ա. 26-25-րդ դդ.: Իրականում նման բրոնզե ձիասանձերը վերաբերում են մ.թ.ա. 15-13-րդ դդ.:		Վրիպակ է: Վերևում գրել եմ. պետք է լինի Ք.ա. 15-14-րդ դդ.:	Հեղինակի մոտեցումն ընդունելի է:
99.	Էջ 31-ում Արատտա համարվում է Հայկական լեռնաշխարհի վաղպետական կազմավորումներից մեկը: Իրականում բազմաթիվ լուրջ ու խիստ գիտական հրապարակումներ կան այդ «երկրի» մասին: Այն բազմաթիվ անգամ հիշատակվում է հնդկական «Մահաբհարատա» դյուցազնավեպի տարբեր գրքերում, իսկ կոնկրետ 8-րդ գրքում, որ կոչվում է «Կարնապառվա»՝ հստակնշվում է նրա տեղն ու բնակիչների անունը: Երկիրը գտնվել է ներկային Իրանական սարահարթի և Դեկանի թերակղզու սահմանային գոտում, իսկ բնակիչները կոչվել են՝ բահլիկներ: Սա իրականում Իրանական Բահալ գավառն է, որտեղի ծագում են ինչպես հայացած Պահլավունիները, այնպես է Իրանի փեհլևի արքայական տոհմը:	Արատտայի մասին գրել եմ 17-րդ դիտարկմանն անդրադառնալիս: Առաջնորդվել եմ գործող և նախկին դասագրքերով: Տե՛ս Բ. Հարությունյան, Վ. Բարխուդարյան, Ի. Ղարիբյան, Պ. Հովհաննիսյան , Հայոց պատմություն (հնագույն և հին շրջան): 6-րդ դասարանի դասագիրք, - Եր.: «ՄԱՆՄԱՐ», 2013 կամ 2023 , էջ 35: Ա. Մելքոնյան, Հ. Ավետիսյան, Ա. Մովսիսյան, Պ. Հովհաննիսյան, Է. Դանիելյան , Հայոց պատմություն: 10-րդ դաս., Հումանիտար հոսքի դասագիրք, Ե., Չանգակ, 2013, էջ 34:		Հեղինակի պարզաբանումն ընդունելի է:

100 .	<p>Էջ 33-34-ում խոսվում է Արգիշթի I-ի կառուցած Էրեբունի քաղաք-ամրոցի մասին և վերջ:</p> <p>Ինչ քաղաք էր դա, ինչ կապ ունի ներկայիս Երևանի հետ՝ ոչ մի խոսք: Ուրեմն իզուր ենք համաշխարհային մաշտաբով նշել Երևանի 2800 աամյակը, իզուր ենք ամեն հոկտեմբերին նշում մեր բազմադարյան մայրաքաղաքի տոնը, իզուր էր նոր քաղաքապետ Տ. Ավինյանն իր երդումը տալիս Երևանի անձնագրի վրա և այլն:</p> <p>Ինչ հաճելի պահ Ի. Այիևի համար...</p>	<p>Չգիտեմ, թե ինչով է հաճելի Այիևին, բայց, ինչպես վերևում եմ գրել, քարտեզի մեջ, ինչպես նաև 52-րդ էջի նկարի մեջ այդ կապն արտացոլված է, իսկ քննարկումների կամ հանձնարարությունների միջոցով այդ հարցը լուծելի է:</p>		<p>Անհրաժեշտ է հստակ գրել Էրեբունի-Երևան կապի ու ժառանգորդության մասին:</p>
101 .	<p>Էջ 46-ում խոսվում է Մենուայի մեծ հարեմի մասին: Հետո բացատրվում է «հարեմ» բառի իմաստը:</p> <p>Մենուայի մեծ կանանի ունենալու մասին շատ թեական ու չճշտված հաղորդումներ կան: Այսուհինդերձ, եթե գրել ես այդ վարկածը, գոնե թե բառը ներկայացրու հայերեն՝ «կանանի»:</p> <p>Մյուս կողմից էլ, արդյոք իմաստ ունի առանց այն էլ խիստ սահմանափակ ծավալ ունեցող դասագրքում, անդրադառնալ նման ենթադրյալ իրողության; Եթե այո, ապա ինչ նպատակով...</p>		<p>Հարեմի դիմաց էլեկտրոնային տարբերակում ավելացված է «կանանոց»:</p>	<p>Առաջարկում ենք վերախմբագրել տեքստը:</p>
102 .	<p>Էջ 48-ում նշված է, որ ուրարտացիները օգտագործում էին որդան կարմիրը:</p>	<p>Վերևում գրել եմ:</p> <p>Որդան կարմիրի մասին այդ տեղեկությունը վերցրել ենք գիտական հետազոտություններից, դիցուք՝ Elena Phipps-ի «Cochineal Red: The Art History of a Color» աշխատությունից, որտեղ գրված է. «Մերձավոր Արևելքում և Կենտրոնական Ասիայում, հատկապես</p>		<p>Առաջարկում ենք դիտարկումը հաշվի առնել:</p>

		<p><i>Արարատ լեռան ստորոտի հարթավայրային հովտում կարմիր ներկ է ստացվել Porphyrphora hamelii տեսակի այլ միջատից, ներկ, որը գործածվում էր առնվազն մ.թ.ա. 714 թվականից, երբ ասորեստանցիները Սարգոն II-ի գլխավորությամբ ներխուժեցին Ուրարտու (Հայաստան): (In the Middle East and central Asia, particularly in the flat grassland of the valley at the base of Mount Ararat, red dye produced from a different insect, of the species Porphyrphora hamelii (the genus name Porphyrphora means “purple bearers”); see fig. 12), was in use from at least 714 b.c., when the Assyrians under Sargon II invaded Urartu (Armenia), էջ 9)»:</i></p> <p>Եվ սա շատ լավ առիթ է, որպեսզի ցույց տրվի Ուրարտուի հետ հայկական թագավորությունների ժառանգական կապը:</p>		
<p>103</p>	<p>Դասագրքում իսպառ բացակայում է Հայկական լեռնաշխարհի տեղագրությունը, դեռ ավելին, դասագրքի էջ 14-ի լողված ու անհասկանալի քարտեզում անհաջող փորձ է արված մեկտեղելու Հայկական լեռնաշխարհի լեռնագրությունն ու Մեծ Հայքի վարչաքաղաքական բաժանումները: այս էլ այն դեպքում, երբ քարտեզում չկա նշված Վասպուրականը որպես նահանգ, այլ բավարարվել են կարմիրով Վասպուրականի լեռնաշղթա ֆիքսելով:</p>	<p>Իսիստ սուրբեկտիվ կարծիք է: Դասագրքի 14-րդ էջում բողոքովին էլ անհասկանալի ու լողված քարտեզ չէ: Մեծ Հայքի վարչաքաղաքական բաժանումներն աշակերտները, ըստ նոր չափորոշիչների, պետք է ուսումնասիրած լինեն 6-րդ դասարանում: Իսկ այս դասագրքի խնդիրներից է նախորդ դասարանում ձեռք բերած գիտելիքի և նոր ուսումնասիրվող թեմաների կապակցումը:</p>		<p>Հեղինակի պարզաբանումը հիմնական մասով ընդունելի է: Առաջարկում ենք քարտեզում ավելացնել պակասող նահանգը՝ Վասպուրականը:</p>

104 .	Դասագրքում չկա Մասիսի սարի գեթ մեկ պատկեր: Այս հանգամանքն ակնհայտորեն պետպատվերի արդյունք է: Ըստ երևույթին պետք է հանվեն նաև հայ այն բանաստեղծների, օրինակ Չարենցի կամ Ծիրազի բանաստեղծությունները, որտեղ խոսվում կամ երգվում է Մասիսը: Մեր աշակերտներին գրկում են ՊԱՏՄԱԿԱՆ Մայր Հայաստանի երազանքից : Չկա Մասիս, չկա երազանք	Ասվածը չի համապատասխանում իրականությանը և խիստ սուբյեկտիվ դիտարկում է. հավանաբար դիտարկողն ամբողջությամբ ծանոթ չէ դասագրքին: Դասագրքի 71-րդ էջի նկարում պատկերված են Արարատը (Միսն ու Մասիսը), տեսարան Արտաշատ քաղաքից, Արտաշես I արքան և Հաննիբալը: Իսկ էջերի սահմանափակ լինելու (176 էջ) պատճառով դասագրքում չենք կարողացել գետեղել բազմաթիվ այլ նկարներ ևս, որոնք նախատեսել էինք:		Առաջարկում ենք լեռան առավել արտահայտիչ լուսանկար տեղադրել:
105 .	Վաղ պետական կազմավորումները ներկայացված են բավականի թերի ու լղզված:	Սուբյեկտիվ դիտարկում: Որևէ փաստարկ ներկայացված չէ:		Հեղինակի պարզաբանումն ընդունելի է:
106 .	Էջ 39-ում Արգիշտի I-ի կառավարման թվերը նշված են առանց Բ.ա. կամ մ.թ.ա.-ի՝ (786-764):		Վրիպակ է: Պետք է լինի (Բ.ա. 786-764):	Հեղինակի մոտեցումն ընդունելի է:
107 .	Էջ 41-ի Ուրարտուի քարտեզը չի համապատասխանում նրա գոյության ոչ մի շրջանի իրականությանը:		Վրիպակ է: Վերևում գրել եմ	Հեղինակի մոտեցումն ընդունելի է:
108 .	Էջ 40-41-ու ներկայացված «Վերաբնակեցումների քաղաքականությունը» ենթագլուխն անիմաստ է և ակնհայտորեն թաքնված մեսսիջներ է պարունակում: Դրա մասին դասագրքում խոսալու համար չկա ոչ մի հիմնավոր պատճառ և իմաստ:	Խիստ սուբյեկտիվ դիտարկում է: Վերաբնակեցումների թեմայով, բայց արդեն Ասորեստանի վերաբերյալ հոդված ունի դիտարկումը կատարած հեղինակը: Ինչ վերաբերում է դասագրքում վերաբնակեցումների քաղաքականության մասին «խոսալուն», նշենք, որ դրա կարևորությունը մանրամասնորեն բացատրված է համապատասխան խորագրի ներքո (էջ 40-42): Այդուամենայնիվ, մի քանի հավելյալ բացատրություն: Դասագրքում նյութի		Հեղինակի պարզաբանումն ընդունելի է:

		<p>ներառումը կարևոր է մի քանի առումով: Դիցուք՝ 1. Վանի թագավորության (Ուրարտուի) արքաների վերաբնակեցման քաղաքականության մասին սովորելը աշակերտներին հնարավորություն է տալիս պատկերացում կազմելու հին քաղաքակրթության քաղաքական և սոցիալական կառուցի մասին, հասկանալու, թե ինչպես են արքաները դեկավարել բնակչությանն ու տարածքները: 2. Վանի թագավորության (Ուրարտուի) արքաների կողմից վերաբնակեցման քաղաքականությունը կարելի է համեմատել այլ հին քաղաքակրթությունների նմանատիպ քաղաքականության հետ՝ խթանելով համեմատական ուսումնասիրությունները: Այս համեմատական մոտեցումն օգնում է աշակերտներին բացահայտել մարդկության պատմության նմանությունները, տարբերությունները և կրկնվող թեմաները: Իսկ ընդհանրապես՝ Վանի թագավորության (Ուրարտուի) թագավորների վերաբնակեցման քաղաքականության մասին տեղեկատվությունը դպրոցական դասագրքերում համահունչ է պատմության կրթության ավելի լայն նպատակներին՝ խթանելով պատմական գրագիտությունը, քննական (քննադատական) մտածողության հմտությունները և տարբեր ժամանակաշրջաններում մարդկային հասարակությունների կյանքում առկա</p>		
--	--	--	--	--

		<p>բարդությունների գնահատումը: Ի վերջո, նշված քաղաքականության բնութագրումը թույլ է տալիս հասկանալ, թե ինչպես էր ապրում տվյալ ժամանակաշրջանի հասարակությունը: Մի բան, որն այնքան պակասում է պատմության վերաբերյալ մեր պատկերացումներում: Մի բան, որին սոցիալական պատմություն են ասում:</p>		
109 .	<p>Էջ 55. Մարաստանի դեմ ապստամբած Կյուրոս կոչված է Պարսկաստանի «ապագա թագավոր», այսինքն գահաժառանգ: Ցանակացած պատմաբան, ով քիչ թե ծատ լսել է Կյուրսի մասին, տեղյակ է, որ նա եղել է Պարսքի արքա դեռևս Ք.ա. 558թվականից: Առավել ևս, որ Կյուրոսին դասագրքի հեղինակը համարում է Աքեմենյան պետության հիմնադիր: Ի հակադրություն այս ամենի՝ «Համաշխարհայի պատմություն 7, Երևան, 2023» դասագրքի էջ 45-ում կարդում ենք՝ «Պարսիկների առաջնորդ Կյուրոսը ապստամբեց մարերի դեմ և Ք.ա. 550 թ. գրավեց նրանց երկիրը: --- Ք.ա. 522 թ.-ին ... Դարեհը հիմնադրեց Աքեմենյան տերությունը»: Լուրջ հակասություն է նկատվում նաև երկու դասագրքերի միջև: Չնայած այս ամենից չի կարելի ենթադրել, որ համաշխարհային պատմություն 7 դասագիրքն առավել լավն է, բնավ ոչ: Մի ակնառու հանգամանք, Հայոց պատմություն 7 դասագրքի 89 էջում նշված է «Մարկուս Կրաստուս», որը եռապետի անվան ճիշտ արտասանությունն է, իսկ Համաշխարհային պատմություն 7-ի էջ</p>	<p>Սուբյեկտիվ մեկնաբանություն է: «Ապագա թագավոր» ասելով՝ բնավ էլ նկատի չունենք «թագաժառանգ»: Իսկ «Պարսկաստանի» գրելով՝ նկատի ունենանք Աքեմենյան Պարսկաստանը:</p> <p>Ինձ հայտնի գիտական գրքերում (Իրանի մասին Քեմբրիջի հատորներում, Իրանիկա հանրագիտարանում և այլն) Աքեմենյան կայսրության հիմնադիրը համարվում է Կյուրոս Մեծը:</p>		<p>Հեղինակի պարզաբանումն ընդունելի է:</p>

	<p>66-ում, ի գարմանս մեզ՝ «Մարկոս Կրասոս»: Պետք է նշել նաև Համաշխարհային պատմություն 7-ի տվյալ բաժնի հեղինակը նույնպես ոլորտի մասնագետ չէ, և խնդիրն առաջ է եկել չիմացությունից, այդ իսկ պատճառով բոլոր հոռմեացիների անունները վեւջանում են <i>-ու</i>-ի փոխարեն հունականի նման <i>-ու</i>-ով:</p>			
<p>110</p>	<p>Գավգամելյան տեղորոշված է Բաբելոնի մոտ, մինչդեռ այն ներկայիս Էրբիլի մոտակայքում է՝ Հյուսիսային Իրաքում: Նույնպես հակասություն է նկատվում Համաշխարհային պատմություն 7-ի էջ 59-ի հետ, որտեղ կարդում ենք՝ Ք. ա. 331 թ. Հյուսիսային Միջագետքի Գավգամելյա վայրում: Բաբելոնը Հյուսիսային Միջագետքում չէ: Սա վրիպակ չէ, այլ չիմացության արդյունք:</p>	<p>Դասագրքում հստակ գրված է. «Բաբելոնից ոչ հեռու՝ Գավգամելյայի մոտ» և բնավ էլ նպատակ չենք ունեցել նշել ներկայիս տեղորոշմամբ: Կարևորել ենք Բաբելոնով կողմնորոշվելը:</p> <p>Իրականում հակասություն չկա: Հյուսիսային Միջագետքում գտնվող Գավգամելյայի՝ Բաբելոնից ոչ հեռու գտնվելն ամեննին հակասություն չէ: Դրանք միայն իրար լրացնող տվյալներ են:</p>		<p>Հեղինակի պարզաբանումն ընդունելի է:</p>
<p>111</p>	<p>Երվանդ 4-րդը մի շարք փոփոխություններ ձեռնարկեց՝ ավելի շատ իր իշխանության պահպանման, քան թե պետության փլուզումը կասեցնելու համար, - հեղինակը բացահայտում է հելլենիստական դարաշրջանի քաղաքական իրողություններին իր բացարձակ անտեղեկությունը, քանզի նշված ժամանակաշրջանում պետության առանցքը հենց արքայական իշխանությունն էր:</p>	<p>Խիստ սուբյեկտիվ դիտարկում:</p> <p>Ձևակերպման մեջ ոչ մի հակասություն էլ չկա, ինչպես պնդում է դիտարկման հեղինակը, վկայակոչելով այն, որ այդ ժամանակ (հելլենիզմի) «պետության առանցքը հենց արքայական իշխանությունն է»: Մինչդեռ ձևակերպումից պարզ է, որ խոսքը ոչ ուժեղ կառավարչի՝ թագավորի մասին է, որը չկարողացավ համատեղել սեփական իշխանության պահպանումն ու պետության փլուզման կասեցումը: Սա նշանակում է, որ սեփական իշխանության պահպանումը կարող է պարտադիր կերպով չհամընկնել կամ</p>		<p>Խնդրո առարկա նախադասությունը (էջ 72) վերաշարադրել հետևյալ կերպ. «... ձեռնարկեց պետության փլուզումը կասեցնելու և իր իշխանությունը պահպանելու նպատակով»:</p>

		<p>նպաստել պետության փլուզմանը տանող խնդիրների արդյունավետ լուծմանը:</p> <p>Այստեղից էլ Երվանդ IV-ի վերափոփոխություններ կատարելու հիմնական դրդապատճառը ինքնապահպանումն էր, քան պետության փլուզման պատճառ հանդիսացող հիմնախնդիրները լուծելու ջանքերը:</p>		
112 .	<p>Նույն տեղում հեղինակը Երվանդ 4-րդի կողմից իր եղբորը՝ Երվազին քրմապետ նշանակելը և կրոնական կյանքի կենտրոնը Արմավիրից Բագարան տեղափոխելը գնահատում է որպես երկիշխանության հաստատում, որը, ըստ հեղինակի, «թուլացրել է Մեծ Հայքի պետությունը»,։ Տվյալ դեպքում, հարկավոր էր Մ. Խորենացու «Պատմություն Հայոցը», -ը ընթերցել:</p>	<p>Խիստ սուբյեկտիվ դիտարկում:</p> <p>Այն, որ «Երվազին քրմապետ նշանակելը և կրոնական կյանքի կենտրոնը Արմավիրից Բագարան տեղափոխելը գնահատվում է որպես երկիշխանության հաստատում», հիմնված է Արմավիրի արձանագրություններից մեկի վրա, որտեղ գրված է. «<i>Արմավիրցիների թագավոր Միթրասը ողջույն է հղում Եբրոնտես (Երվանդ) արքային</i>»: Հ. Մանանդյանը, Գ. Սարգսյան, Ս. Կրկյաշարյանը և այլք, արձանագրությունից ելնելով, կարծում են, որ իրեն Արմավիրի թագավոր համարող Միթրասը Երվանդ IV-ի եղբայր Երվազն է: Ստացվում է, որ վերոհիշյալ արձանագրության մեջ հիշատակվում է երկու թագավոր, որոնցից մեկը քրմապետն է, մյուսը՝ Եբրոնտես-Երվանդը: Եվ այն հանգամանքը, որ Միթրասն իրեն ևս համարում է արքա, ինչպես և Եբրոնտ-Երվանդին, վկայում է այն մասին, որ նա թագավորի կողքին և նրա հետ միասին կարևոր դեր է խաղում պետական գործերում: Սա արդյունք էր, ինչպես դիպուկ նկատել է պատմագետ</p>		<p>Հեղինակի պարզաբանումն ընդունելի է:</p>

		<p>Կրկյաշարյանը, «Երկրում առաջացած յուրատեսակ երկիշխանության» (տե՛ս Ս. Կրկյաշարյան, Հին Հայաստանի պետական կառուցվածքը (Մ.թ.ա VI – Մ.թ. IV դդ.), Եր., 2005, էջ 117): Իսկ դա արդեն իսկ թուլացած պետության մասին վկայություն է:</p> <p>Ինչ վերաբերում է Մովսես Խորենացու տեքստը կարդալուն, հարկավ կարդացել ենք...</p> <p>Խորենացու մոտ նշված է, որ Երվանդ IV-ը ոչ մի աչքի ընկնող միջոցառում չի ձեռնարկել, բացի նոր մայրաքաղաք կառուցելուց և երկրի վարչաքաղաքական կենտրոնը պաշտամունքային կենտրոնից տարանջատելուց (տե՛ս Հայոց պատմություն, Գիրք II, գլուխ IԷ-ԽԲ): Չմոռանանք նաև նշել, որ Խորենացին իր տեքստում վրիպել է՝ Երվանդ IV-ին համարելով Հռոմի կայսրեր Վեսպասիանուսի (69-79) և Տիտուսի (79-81) ժամանակակից (այս վրիպումը նկատել են Հակոբ Մանանդյանը և այլք):</p>		
113 .	<p>Ք.ա. 201 թ. Երվանդ 4-րդի անկումով Մեծ Հայքը ոչ թե չեզոքացվեց, ինչպես կարծում է դասագրքի հեղինակը, այլ դարձվեց Սելևկյան տերության վարչական միավոր՝ ստրատեգիա:</p>	<p>Անհասկանալի դիտարկում: Դասագրքում գրված է. «Մելևկյաններն իրագործեցին իրենց կարևոր նպատակներից մեկը՝ Հայաստանի չեզոքացումը, և անցան ամբողջ Փոքր Ասիան, Մակեդոնիան ու Եգիպտոսը գրավելու մեծ ռազմավարությանը»: Եվ ոչ մի հակասություն չկա. «չեզոքացնել» ասելով՝ նկատի է առնվում Հայաստանն իբրև ռազմաքաղաքական դիմակայության գործոն չեզոքացնելը:</p>		<p>Հեղինակի պարզաբանումն ընդունելի է:</p>

		<p>Երվանդական Հայաստանը դադարեց գոյություն ունենալուց:</p> <p>Իսկ ինչ վերաբերում է Հայաստանի՝ Մելեկյան տերության վարչական միավոր՝ ստրատեգիա դառնալուն, ապա դրանից առաջ արդեն խոսվել էր, որ «<i>Հեղաշրջումից հետո Արտաշեսը նշանակվեց Մեծ Հայքի, իսկ Չարեհր՝ Ծովքի ստրատեգոս</i>» (Էջ 72):</p>		
114 .	<p>Էջ 78-ում հեղինակը գրում է, թե «Պարթևների Միհրդատ 2-րդ արքան օգնել է Տիգրան 2-րդին գահ բարձրանալու գործում»,: Մինչդեռ Տիգրան 2-րդի պատանդությունը պարթևական արքունիքում ինքնին ցույց է տալիս, որ նա եղել է Արտաշեսյանների օրինական գահաժառանգը և հետևաբար, գահակալության հարցում որևէ մեկի օգնության կարիքը չի ունեցել:</p>	<p>Ի՞նչ կապ ունի «օրինական ժառանգ լինելը». եթե Միհրդատ արքան չցանկանար, որ Հայաստանում գահ բարձրանար Տիգրան արքայազնը, ուրեմն չէր բարձրանա, քանի որ վերջինս պատանդ էր պարթևների մոտ և գահ բարձրացավ որոշակի զիջումներ անելով:</p>		<p>Հեղինակի պարզաբանումն ընդունելի է:</p>
115 .	<p>Էջ 81-ում հեղինակը պարթևա-հայկական առաջին պատերազմը թվագրում է Ք. ա. 115 թ. համարելով, որ Հայոց Արտավազդ 1-ին արքային հաղթող պարթևական արքան եղել է Միհրդատ 2-րդը: Հեղինակը թեպետ Հուստինոս մատենագրին տեղ է հատկացրել դասագրքում, բայց տեղյակ չէ Հայաստանի վերաբերյալ նրա հաղորդումներին: Մինչդեռ Հուստինոսը, խոսելով պարթևական Միհրդատ 1-ին արքայի մասին, հաղորդում է, թե «վերջում /այսինքն իր գահակալության վերջում/ սա հայոց Արտավազդ արքայի դեմ պատերազմեց: Միհրդատ 1-ը գահակալել է Ք. ա. 165-</p>	<p>Դիտարկումը չի համապատասխանում իրականությանը:</p> <p>Նախ՝ դասագրքում դասագրքի հեղինակը բոլորովին էլ չի նշել, որ Արտավազդ I-ին հաղթող արքան Միհրդատ I-ն է կամ Միհրդատ II-ը: Դասագրքի 78-րդ էջում գրված է, որ Ք. ա. 115 թ. Արտավազդ I արքան պարտություն էր կրել պարթևներից, և ոչ մի խոսք չկա, որ պարթևների արքան այդ ժամանակ Միհրդատ I-ն էր կամ Միհրդատ II-ը:</p> <p>Նմանապես դասագրքում խոսք չկա, որ պարթևա-հայկական առաջին պատերազմը «<i>թվագրում է Ք. ա. 115 թ.</i>».</p>		<p>Դիտարկում կատարողը նկատի ունի էջ 81-ում Միհրդատ II Պարթևին նվիրված շարադրանքը, այնինչ հեղինակը պատասխանում է նկատի ունենալով էջ 78-ում գրված նյութը: Հեղինակին առաջարկում ենք խմբագրական-սրբագրական փոփոխություն կատարել Միհրդատ II-ին նվիրված շարադրանքում:</p>

	<p>132 թ.. Հետևաբար, այդ պատերազմը չէր կարող Ք.ա. 115 թ. տեղի ունեցած լինել, իսկ արքան էլ չէր կարող Միհրդատ 2-րդը լինել:</p>	<p>պարզապես գրված է. «Ք. ա. 115 թ. Արտավազդ I արքան պարտություն էր կրել պարթևներից»: Իսկ այն, որ պարթևա-հայկական առաջին պատերազմը նաև Ք. ա. 115 թ. -ից առաջ են տեղադրում, հարկավ, տեղյակ են և գիտեն: Վարկածն առաջադրել է Ճ. Էլչիրեկյանն իր «Հայաստանը և Մելեկյանները» մենագրության մեջ (տե՛ս 70-76-րդ էջերը), որտեղ առաջ է քաշել այն միտքը, որ պատմիչ Հուստինուսի հիշատակած առաջին պարթևա-հայկական պատերազմը տեղի է ունեցել Ք.ա. շուրջ 140 թ., քանի որ այնտեղ հիշատակված Միհրդատը ոչ թե Միհրդատ II արքան է, այլ Միհրդատ I արքան: Դասագրքի մեջ խոսքը դրա մասին չէ, այլ պարթևա-հայկական այն պատերազմի, որի արդյունքում Տիգրան արքայազնը պատանդառվել է պարթևների կողմից:</p> <p>Իսկ ինչ վերաբերում է պարթևա-հայկական պատերազմը Ք.ա. 115 թ.-ով թվագրելուն, առաջնորդվել են ՀՀ ԳԱԱ թղթակից անդամ Քարկեն Հարությունյանի խմբագրած 6-րդ դասարանի Հայոց պատմության դասագրքի թվագրումով (տե՛ս էջ 79. «Ք. ա. 115թ. անժամանակ Արտավազդ I-ը ստիպված էր եղբորորդուն՝ Տիգրանին որպես պատանդի հանձնել պարթևներին»):</p> <p>Այսպիսով՝ Տիգրան արքայազնը պատանդ է վերցվել Միհրդատ II-ի ժամանակ: Վերջինս կառավարել է Ք.ա. 124/123-88/87 թթ.:</p>		
--	--	--	--	--

		Դասագրքում Միհրդատ I-ի մասին ոչ մի խոսք չկա...		
116 .	Էջ 89-ում հեղինակը Մարկոս Կրասուսին կոչում է Ատրիքի կոնսուլ, ինչը ճիշտ չէ:		Վրիպակ է: Պետք է լինի՝ <i>«նոր էր ընտրվել կոնսուլ և նշանակվել Ատրիքի կառավարիչ»:</i>	Հեղինակի դիրքորոշումն ընդունելի է:
117 .	Էջ 92-93-ում հեղինակը նշում է, թե Հայոց Արտաշես 2-րդ արքան պարթևների Հրահատ 4-րդ արքայի համաձայնությամբ իր թագավորության մեջ ներառեց Ատրպատականը, որի գորքերին պարտության էր մատնել և գերել թագավորին: Ատրպատականի արքան Հռոմի դաշնակիցն էր ու Անտոնիոսի զինակիցը: Նրան պարտության մատնելուց հետո Ատրպատականը Մեծ Հայքին միացնելու համար Արտաշես 2-րդը Հրահատ 4-րդի համաձայնության կարիքը չունեի:	Խիստ սուբյեկտիվ դատողություն... «Պարթևների Հրահատ IV արքայի համաձայնությամբ» ասելով՝ նկատի ունենք, որ Արտաշես II արքան առանց հարևան պարթևների Հրահատ IV արքայի հետ համաձայնության չէր կարող հարձակվել Ատրպատականի վրա և այն ներառել իր թագավորության մեջ: Այդ համագործակցության մասին կա գրված նաև Խորհրդային ժամանակների Հայ ժողովրդի պատմության ակադեմիական 1-ին հատորում (էջ 629):		Հեղինակի մոտեցումն ընդունելի է:
118 .	Էջ 103-104-ում հակապատմական է հեղինակի այն միտքը, թե «Հռանդեայում ձեռք բերված համաձայնությունը վերահաստատվեց 64 թվականին՝ Տրդատ I-ի և Կորբու-լոնի միջև նույն Հռանդեայում կնքված դաշնագրով»: Հարց է ծագում, թե Պետուսի անձնատվության պայմանները ինչպես կարող էին ընկնել 64 թ. Հռանդեայի համաձայնության հիմքում, կամ թե հեղինակը արդյո՞ք տեղյակ է դրանց բովանդակություններին:	Հեղինակն անգամ ավելի է տեղյակ, քան դասագրքում շարադրել է... Ձևակերպման մեջ չկա և ոչ մի հակապատմականություն: Այն, որ Հռանդեայում ձեռք բերված համաձայնությունը (62 թ.) ընկած է Հռանդեայում կնքված դաշնագրի (64 թ.) հիմքում, պարզից էլ պարզ է: Նախ՝ ըստ 62 թ. կնքված համաձայնության՝ «Փոխադարձ երկար քննարկումից հետո [...] որոշվում է, որ [...] ամբողջ		Առաջարկում ենք դիտարկումը հաշվի առնելով նախադասությունը վերաշարադրել:

		<p><i>հռոմեական զորաբանակը պիտի թողնի Հայաստանի սահմանները, որ ամբողջություններն ու պաշարեղենը պիտի հանձնվեն պարթևներին (Տակիտոս)»:</i></p> <p>Իսկ սա հաստատվում է արդեն 64 թ. Հռանդեայի դաշնագրով, ինչպես գրված է դասագրքում: Այսպիսով «Պետուսի անձնատվության պայմանները» ամենևին էլ միայն Պետուսի անձնատվության մասին չէին, այլև ողջ հռոմեական զորքի և Հայաստանում Հռոմի ներկայության: Իսկ դասագրքում այնուհետև գրված է. «Այս անգամ Ներոն կայսրը համաձայնեց փոխզիջման տարբերակին. Տրդատը հաստատվում էր Հայոց գահին, սակայն անձամբ պետք է զնար Հռոմ՝ Ներոնի ձեռքից թագը ստանալու համար»: Իսկ սա էլ, իր հերթին, նշանակում է, որ թեպետ 62 թ. Հռանդեայի համաձայնությունն ընկած է 64 թ. Հռանդեայի դաշնագրի հիմքում, բայց դրան հավելվել են այլ իրողություններ ևս:</p> <p>Նշենք նաև, որ համաձայնությունը ենթադրում է երկու կամ ավելի կողմերի միջև փոխըմբռնում կամ պայմանավորվածություն: Այն կարող է ունենալ կամ չունենալ պարտադիր կարգավիճակ: Մինչդեռ դաշնագիրը ավելի պաշտոնական և պարտադիր համաձայնագիր է ինքնիշխան պետությունների միջև: Դաշնագրերը սովորաբար գրված են և ներառում են բանակցված պայմաններ: Ըստ այդմ՝ կողմերը պարտավոր են պահպանել իրենց դաշնագրային պարտավորությունները:</p>		
--	--	--	--	--

		<p>Կրկնենք մեկ անգամ ևս՝ Պետուսի անձնատվության արդյունքում պարթևա-հայկական կողմի հետ ձեռք է բերվում համաձայնություն (սակրոզ հռոմեական զորաբանակը պիտի թողնե՞ր Հայաստանի սահմանները, սակրություններն ու պաշարեղենը պիտի հանձնվե՞ին պարթևներին), ինչն էլ ստիպեց, որ Հռոմը հաշվի նստի հայ-պարթևական միության հետ, հրաժարվի Հայաստանը հռոմեական պրովինցիա դարձնելու նոր ծրագրից և հաշտվի Վաղարշ I-ի ստիպողական կոմպրոմիսային գաղափարի հետ:</p>		
<p>119</p>	<p>Էջ 105-ում հեղինակը նշում է, թե «Տրայանուսի օրոք տեղի ունեցավ քաղաքակա-նության կտրուկ փոփոխություն: Նա փորձեց խախտել «Հռանդեայի համաձայնությունը» և Հայաստանին պարտադրել հռոմեական լիակատար վերահսկողություն»: Հեղինակն առնվազն խեղաթյուրում է պատմությունը, քանի որ ոչ թե Տրայանուսը, այլ պարթևներն էին 110 թ. խախտել Հռանդեայի համաձայնությունը՝ միակողմանիորեն Մեծ Հայքում գահընկեց անելով Ախիադարես–Աշխադարին և նրա փոխարեն գահին նստեցնելով եղբորը՝ Պարթամասիրին:</p>	<p>Այստեղ ևս պատմությունը խեղաթյուրված չէ, ինչպես կարծում է դիտարկողը:</p> <p><i>«Տրայանուսը փորձեց խախտել «Հռանդեայի համաձայնությունը»»</i> ասելով՝ նկատի ունենք, որ Տրայանուսը նպատակ ուներ Հայաստանը վերածել հռոմեական նահանգի: Ոչ պարզապես Հայաստանի գահին բազմեցնել իր համար ցանկալի մեկին, այլ Հայաստանը վերածել հռոմեական նահանգի: Իսկ այդ մասին հստակորեն և ավելի մանրամասն գրված է դասագրքի 106-րդ էջում. <i>«Արևմուտքում իր դիրքերն ամրապնդելուց հետո Տրայանուսն արտաքին քաղաքականության ծանրության կենտրոնը տեղափոխեց Արևելք: 112-113 թթ. Խոսրով I Պարթև արքայի հետ անհաջող բանակցություններից հետո պատերազմն անխուսափելի էր: Առիթը դառնում է այն, որ Խոսրով Պարթևն առանց Տրայանուսի կարծիքի հաշվի առնելու Հայաստանում</i></p>		<p>Առաջարկում ենք դիտարկումը հաշվի առնելով տեքստը վերաշարադրել:</p>

		<p>գահրնկեց է անում Սանատրուկ (88-110) արքային հաջորդած Աշխադարին և փոխարենը Հայոց թագավոր նշանակում Պարթամասիրին: Այսպիսով խախտվում է Հռանդեսայի համաձայնությունը: Տրայանուսը, օգտագործելով այս հանգամանքը, 114 թ. պատերազմ է հայտարարում պարթևներին ու հայերին և ներխուժում Հայաստան: Նպատակն էր Հռանդեսայի դաշնագիրը չեղարկելն ու Մեծ Հայքը հռոմեական նահանգ դարձնելը»:</p> <p>Ինչպես տեսնում ենք, խոսքը ոչ թե պարզապես Հայաստանի գահին ցանկալի մեկին վերականգնելու հարցն է, այլ Հայաստանը, կրկնենք մեկ անգամ էլ, հռոմեական նահանգ դարձնելը: Կարելի է ասել՝ պարթևների կողմից դաշնագրի խախտումը դառնում է ամիթ Հռոմի համար՝ իրագործելու իր հեռակա ծրագիրը՝ չեղարկել Հռանդեսայի դաշնագիրը: Այսպիսով Հռանդեսայի դաշնագրի խախտումը Հռոմի դեպքում հեռուն գնացող ծրագիր էր, որի համար, կարելի է ասել, ամիթ է դառնում պարթևների կողմից դրա փաստացի խախտումը: Ինչպես վկայված է նաև Հայ ժողովրդի պատմության ակադեմիական առաջին հատորում, Հայաստան ներխուժած Տրայանուսին ընդառաջ են գնում պարթևական թագավոր Խոսրովի (109-129) դեսպանները, «որոնք եկել էին խաղաղություն խնդրելու» (էջ 770): Արշակունի թագավորը, Դիոն Կասիոսի վկայությամբ, «իր հպարտությունը չափավորելով ուղարկել էր, որպեսզի աղաչեն նրան, որ պատերազմ չսկսի, նաև</p>	
--	--	--	--

		<p>խնդրում էր նրան, որ Հայաստանը տրվի Բակուրի Պարթամասի որդուն, ու թախանձագին խնդրում էր նույնպես, որ սրան ուղարկվի թագր: Նա ասում էր, որ Աշխատարին, որը հարմար չէր ոչ հռոմեացիների և ոչ էլ պարթևների համար՝ ինքը գահինկեց էր արել»: Ինչպես տեսնում ենք, Հռանդեայի դաշնագիրը խախտած պարթևները փորձում էին վերականգնել իրադրությունը, սակայն Տրայանուսը, ըստ էության, մերժեց նրանց առաջարկը և 114 թ. պատերազմ է հայտատարարում հայերին ու պարթևներին և Ասորիքից շարժվում Հայաստան:</p>		
<p>120 .</p>	<p>Նույն էջում հեղինակը նշում է թե Տրայանուսի հաջորդը (Հադրիանուսը) ճանաչել է Մեծ Հայքի անկախությունը, ինչը նույնպես հակապատմական է: Վաղարշ 1-ը գահակալել է որպես «Հռոմեական ժողովրդի բարեկամ», հետևաբար Հռոմի գերիշխանությանը ենթակա արքա:</p>	<p>Հիշյալ ձևակերպումը՝ «Տրայանուսին հաջորդած նոր կայսրը ճանաչեց Մեծ Հայքի թագավորության անկախությունը», վերաբերում է Հայաստանի անվանական անկախությանը, իսկ դրան հաջորդած հատվածում դասագրքում երևույթը մանրամասնված է այսպես. «Հռոմեական գորքերը դուրս բերվեցին Հայաստանից, և գահ բարձրացավ Հռոմի կողմից ճանաչված Վաղարշ 1-ը (117-140)»:</p> <p>Ի դեպ, համարժեք ձևակերպում կա նաև ՀՀ ԳԱԱ թղթակից անդամ Բաբկեն Հարությունյանի խմբագրությամբ 6-րդ դասարանի Հայոց պատմության դասագրքի համապատասխան հատվածում. Տիրերիուսին «[հ]աջորդած Հադրիանոս կայսրը ճանաչեց Աեծ Հայքի թագավորության անկախությունը» (Հարությունյան Բ., Բարխուդարյան Վլ., Ղարիբյան Ի., Հովհաննիսյան Պ.,</p>		<p>Հեղինակի պարզաբանումն ընդունելի է:</p>

		<p>Հայոց պատմություն (հնագույն և հին շրջան): 6-րդ դասարանի դասագիրք, - Եր.: «ՄԱՆՄԱՐ», 2013 կամ 2023, էջ 123):</p> <p>Այդպես է ամրագրված նաև ակադեմիկոս Աշոտ Մելքոնյանի խմբագրությամբ 10-րդ դասարանի հայոց պատմության դասագրքում. «Հռոմի նոր կայսր Հադրիանոսը Հայաստանից դուրս է բերում կայսերական գորքերը՝ դրանով իսկ նանասելով Մեծ Հայքի թագավորության անկախությունը» (ընդգծումը՝ դասագրքի հեղինակի, տե՛ս Ա. Մելքոնյան, Հ. Ավետիսյան, Ա. Մովսիսյան, Պ. Հովհաննիսյան, Է. Դանիելյան, Հայոց պատմություն: 10-րդ դաս., Հումանիտար հոսքի դասագիրք, Ե., Չանգակ, 2014, էջ 122):</p> <p>Դասագիրքը գրելիս հաճախ փորձել ենք կոմպրոմիսային տարբերակներ գտնել նախկին կամ գործող դասագրքերի հետ՝ արմատական փոփոխություններ չսանելու նպատակով: Եվ շատ տարօրինակ է, որ ինձ մեղադրում են հակապատմականության մեջ այն դեպքում, երբ սույն փաստաթղթի տակ ստորագրածներից ակադեմիկոս Մելքոնյանի խմբագրությամբ հրատարակված 6-րդ դասարանի Հայոց պատմության դասագրքում և սույն ձևակերպումն է, որը մեջբերեցինք վերևում:</p>		
<p>121 .</p>	<p>Էջ 110-ում հեղինակը Տրդատ 3-րդի կողմից քրիստոնեության պաշտոնականացման շարժառիթը համարում է նրանում աստվածատուր</p>	<p>Սուբյեկտիվ դիտարկում: Դասագրքի հիշյալ հատվածում գրված է. «Տրդատ Մեծի իրագործած</p>		<p>Հեղինակի պարզաբանումն ընդունելի է:</p>

	<p>արքայական իշխանության մասին գաղափարի ընդգծված լինելը: Սակայն հիշյալ գաղափարը հավասարապես ընդգծված էր նաև մյուս կրոններում: Հեղինակը պետք է առավել կարևորեր քրիստոնեության մոնոթեիստական բնույթը:</p>	<p><i>ամենանշանակալի փոփոխություններից մեկը քրիստոնեության ընդունումն էր որպես պետական կրոն: «Լարելով կենտրոնացված պետություն ստեղծելու քաղաքականություն՝ Տրդատ III-ը կարիք ուներ թագավորական իշխանության գաղափարական հիմնավորման: Բանն այն է, որ արքայական իշխանությունը շնորհվում էր Հռոմի կայսեր կողմից՝ այդպիսով գրկելով հայոց արքային աստվածատուր իշխանությունից: Իսկ քրիստոնեության մեջ արքայական իշխանության աստվածատուր լինելն ընդգծված էր: Մյուս կողմից՝ դա անհրաժեշտ էր Սասանյանների նկատմամբ վարվող քաղաքականության մեջ: Քրիստոնեությունը նաև կգույցեր կենտրոնախույս ուժերին: Եվ ի դեմս քրիստոնեության՝ Տրդատ արքան գտավ ամենահարմար գաղափարական հենքը, որով կամրապնդվեր կենտրոնական իշխանությունը» (Էջ 110):</i></p> <p>Թեպետ «մյուս կրոններում» ևս «հավասարապես ընդգծված էր» աստվածատուր արքայական իշխանությունը, բայց տվյալ դեպքում խոսքը Հռոմից շնորհվող արքայական իշխանության մասին է: Քրիստոնեության դեպքում դա բացառվում էր, և մնում էր աստվածատուր իշխանության հղացքը. Հռոմի կայսրը չէր, որ տալիս էր իշխանություն, այլ Աստված: Նույն տրամաբանությամբ կարելի է հարց տալ դիտարկման հեղինակին, թե ինչո՞ւ պետք էր առանձնացնել</p>	
--	---	--	--

		քրիստոնեության հենց մոնոթեիստական բնույթը:		
--	--	---	--	--

ՊԱՏԱՍԽԱՆ 2.
ՀՀ ԳԱՎ ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏԻ
«ՄԻՋԻՆ ԴԱՐԵՐԻ ՊԱՏՄՈՒԹՅԱՆ» ԲԱԺՆԻ ԴԻՏԱՐԿՈՒՄՆԵՐԻ

	ԴԻՏԱՐԿՈՒՄՆԵՐ	ՊԱՏԱՍԽԱՆՆԵՐ	Համաձայն եմ	ԿԳՄՄՆ փորձագետի եզրակացություն
ՊԱՐԶԱԲԱՆՄԱՆ, ՀՍՏԱԿԵՑՄԱՆ ՈՒ ԼՐԱՑՄԱՆ ԿԱՐԻՔ ՈՒՆԵՑՈՂ ԵՎ ՎԻՃԵԼԻ ՁԵՎԱԿԵՐՊՈՒՄՆԵՐ ՈՒ ՄՏՔԵՐ				
<p>1.</p>	<p>Նախ՝ դասագրքի կազմին պատկերված նկարի մասին: Մի կողմում Գառնիի հեթանոսական տաճարն է, իսկ կողքին՝ Ս. Սիոնի եկեղեցին: Խիստ կասկածելի տեսքով և չափերով եկեղեցու մասին տեղեկանում ենք նաև դասագրքում տեղադրված նույն նկարի բացատրությունից՝ «Գառնու հեթանոսական տաճարն ու Սուրբ Սիոն եկեղեցին, Սրբ. Սիոն եկեղեցու վերակազմությունը՝ Տիրան Մարությանի, եռաչափ մոդելավորումը՝ Ռուբեն Սարգսյանի» (էջ 101) հղումով: Հարկ է պարզաբանել, թե ինչո՞ւ է եկեղեցին այդքան մեծ պատկերված: Նրա տեղում եղել է Տրդատ I-ի կառուցած պալատը՝ թագուհու համար, որի մասին կա նաև հունարեն արձանագրություն:</p>	<p>Գասագրքի 2-րդ էջում հստակ գրված է. «Գառնու հեթանոսական տաճարն ու Սուրբ Սիոն եկեղեցին <i>Սրբ. Սիոն եկեղեցու վերակազմությունը՝ Տիրան Մարությանի, եռաչափ մոդելավորումը՝ Ռուբեն Սարգսյանի</i>»:</p> <p>Ինչպես գրվածն է հուշում, եռաչափ մոդելավորման հեղինակը՝ Ռուբեն Սարգսյանը, Գառնու Սուրբ Սիոն եկեղեցու վերակազմությունը կատարել է հայ խորհրդային ճարտարապետ Տիրան Մարությանի գիտական աշխատանքի հիման վրա (Տ. Մարության, Չվարթնոց, Եիևան, 1963, էջ 89): Եկեղեցու հիմքը հարաբերվում է Գառնու տաճարին ճշգրտորեն: Այն, որ եկեղեցու տեղում եղել է Տրդատ I-ի կառուցած պալատը և այլն, մեր խնդիրը չէ: Կազմը ստեղծված է մշակութային երկխոսության շեշտադրման նպատակով (այս մասին նշել են Մեթոդական ուղեցույցի 89-րդ էջում):</p>		<p>Հեղինակի պարզաբանումն ընդունելի է:</p>
<p>2.</p>	<p>Ներածության մեջ հեղինակը գրում է. «Մինչ օրս շատերը կարծում են, որ պատմությունը գիտություն է անցյալի մասին: Իրականում այդքան էլ այդպես չէ կամ մասամբ է այդպես, քանի որ պատմությունն այն ամենի մասին է, ինչ տեղի է ունեցել, տեղի է ունենում կամ կարող</p>	<p>Սուբյեկտիվ դիտարկում: Էջ 3-ից բերված մեջբերումները բնավ էլ միմյանց չեն հակասում: Դրանք առանձին ենթավերնագրերի նյութեր են (առաջին մեջբերման վերնագիրն է՝ <i>Ի՞նչ է</i></p>		<p>Առաջարկում ենք վերաշարադրել տեքստը՝ հաշվի առնելով եղած նկատառումները:</p>

<p>է տեղի ունենալ» (էջ 3): Այսպիսի արտահայտությունները բարդացնում ու անչափելի են դարձնում ձևակերպումների ընկալումը: Մինչդեռ նույն և հաջորդ էջում հակառակ գաղափարն է առաջ քաշվում. «Պատմության իմացությունը նախ կարևոր է սեփական անցյալն իմանալու համար», «Եվ քանի որ մենք շարունակում ենք նոր հարցեր տալ անցյալի մասին, պատմությունը երբեք չի սպառվում, չի փակվում: Անցյալը միշտ ենթակա է վերանայման, քանի որ մարդկանց պատկերացումները ժամանակի ընթացքում միշտ փոփոխվում են՝ առաջ բերելով նոր հարցեր և պահանջելով նոր պատասխաններ»: Առհասարակ, պատմագիտության ուսումնասիրության կենտրոնում մարդն է կամ մարդիկ, որոնք ապրել են անցյալում (պատմական տարբեր ժամանակներում): Կարծում ենք, որ 7-րդ դասարանի սովորողի համար այս արձանագրումն արդյունավետ կլիներ: Պետք է նշել նաև, որ անցյալը չի կարող փոխվել: Կարող են պատմագիտական նոր տեսություններ ու մեթոդներ ստեղծվել, որոնք այլ տեսանկյունից կուսումնասիրեն անցյալի իրադարձությունները: Ի՞նչ ասել է «անցյալը միշտ ենթակա է վերանայման»: Այս ձևակերպումն այնքան փիլիսոփայական, գիտական հակասական պոլեմիկա ունի իր մեջ, որ առնվազն դպրոցական դասագրքում արդյունավետ չէ ներառել: Այն տեղիք կտա տարրնթերցումների ու թյուրմբռնումների: Միգուցե ձևակերպվի՝ հետևյալ կերպ. «անցյալի որևէ իրադարձության կամ գործընթացի մասին մեր պատկերացումներն ու տեսակետները կարիք ունեն վերանայման», այլ ոչ «անցյալը կարիք ունի վերանայման»:</p>	<p>պատմությունը, երկրորդ մեջբերման վերնագիրն է՝ <i>Բնչո՞ւ ուսումնասիրել պատմությունը</i>), որոնք լրացնում են միմյանց: Անհասկանալի է և անգամ զարմանալի, թե ինչպես են գաղափարները միմյանց հակասող համարվել: Այն, որ պատմությունը միայն անցյալին չէ, որ վերաբերում է, չի հակասում նրան, որ պատմության իմացությունը նախ կարևոր է սեփական անցյալն իմանալու համար, մանավանդ որ նշված է՝ անցյալը միշտ ենթակա է վերանայման:</p> <p>Չբացառելով, որ պատմագիտության հետազոտության կենտրոնում մարդն է (Մարկ Բլոկն ու Լյուսիեն Ֆևրն այդ մասին ավելի ուշագրավ ձևակերպումներ տվել են դեռ նախորդ դարի 30-ական թվականներից), հարկ է նշել, որ թեև պատմագրությունը մարդակենտրոն է իր ավանդական շրջանակում, այն զարգացել է նաև ավելի լայն հեռանկարներ ներառելու համար: Ժամանակակից պատմագրությունը ավելի ու ավելի է դիտարկում միջգիտակարգային մոտեցումները, որոնք ուսումնասիրում են մարդկային հասարակությունների և նրանց միջավայրի փոխազդեցությունները, ինչպես նաև պատմական գործընթացների վրա ոչ մարդկային գործոնների ազդեցությունը: Շրջակա միջավայրի պատմությունը, օրինակ, ուսումնասիրում է մարդկային հասարակությունների և նրանց բնական միջավայրի փոխհարաբերությունները:</p> <p>Եվ, թեև պատմագրությունը ավանդաբար կենտրոնացած է մարդկության պատմության ուսումնասիրության վրա, ժամանակակից մոտեցումները ճանաչում են</p>	
---	---	--

		<p>պատմական գործընթացներում մարդկային և ոչ մարդկային տարրերի փոխկապակցվածությունը: Այս ավելի լայն հեռանկարը հարստացնում է անցյալի բարդությունների և դինամիկայի մեր ըմբռնումը:</p> <p>Ինչ վերաբերում է «անցյալը միշտ ենթակա է վերանայման» դիտարկմանը, այդպես են ասում թե՛ նախորդ դարի շատ պատմագետներ (Բլոկ, Ֆևր, Բրոդել, Քոլինգվուդ և այլք) և թե՛ արդի պատմագետներ, մանավանդ հետարդիականության կամ նարատայոգիայի տեսաբանները: 7-րդ դասարանի աշակերտին կարելի է և պետք է փոքր չափաբաժիններով ընտելացնել ժամանակակից հումանիտար գիտությունների պատկերացումների և լեզվի հետ:</p>		
<p>3.</p>	<p><i>Մեր դասագրքի յուրաքանչյուր ԹԵՄԱ սկսվում է ակնկալվող վերջնարդյունքների վերաբերյալ տեղեկությամբ և թեմային առնչվող նկարով: Այստեղ դու կարող ես կարդալ, թե ինչ կիմանաս և կկարողանաս՝ ուսումնասիրելով այդ թեմայի դասերը» (էջ 5):</i></p> <p><i>«Նյութից առանձնացրո՛ւ որոշակի տեղեկություններ և արդյունքները ներկայացրո՛ւ սեփական մասնագիտական ձևակերպումների միջոցով» (էջ 8): 7-րդ դասարանի սովորողն ինչպե՛ս կարող է մասնագիտական ձևակերպում տալ: Կամ ի՞նչ ասել է սովորողի «սեփական մասնագիտական ձևակերպում»:</i></p>	<p>Էջ 5-ից բերված մեջբերումը չունի դիտարկում, և անհասկանալի է, թե ինչու է այն այստեղ դիտարկվել:</p> <p>Ինչ վերաբերում է 8-րդ էջի հատվածին վերաբերող դիտարկմանը, ապա պետք է ասել, որ հատվածը «Ճիշտ հասկանալ և կատարել առաջադրանքները» բաժնից է, որտեղ ներկայացվում և պարզաբանվում են առաջադրական բայերը: Մի կողմ թողնելով այն հանգամանքը, որ հատվածը հատկապես ուղղված է ուսուցչին, առարկությանը կարելի է պատասխանել նաև հետևյալ կերպ. պատմություն ուսումնասիրող աշակերտը որևէ եզրակացություն անելիս հիմնվում է պատմական նյութի և պատմության մասին մտածելու եղանակների վրա: Մա</p>	<p>-</p>	<p>Նախադասությունը վերաշարադրել՝ առանց «մասնագիտական» բառի:</p>

		<p>նշանակում է բանեցնել պատմական մտածողություն, հետևաբար խոսել մասնագիտության ներսից, մասնագիտական դատողություն անել: Իզուր չէ, որ դասանյութը ոչ թե աշակերտներին սովորել ենք հանձնարարում, այլ ուսումնասիրել: Թեև «մասնագիտական ձևակերպում»-ը կարող է խորթ հնչել, սակայն երբ այն դիտարկում ենք քննական (քննադատական) և պատմական մտածողության ձևավորման դիտանկյունից, ապա այն այլևս խորթ և զարմանալի չի թվում:</p>		
<p>4.</p>	<p>Դասագրքի յուրաքանչյուր դասանյութում առկա է բառարան, որում հասկացությունների սահմանումները շատ բարդ և խճճված են, ինչը 7-րդ դասարանի սովորողների համար լրացուցիչ դժվարություններ է առաջացնում: Պատահում է, որ բառարաններն իրենք բառարանի կարիք ունեն, քանի որ դժվարհասկանալի են, տերմիններով ծանրաբեռնված, երկարաշունչ նախադասություններով հագեցած, ինչպես՝ լեռնաշխարհ, բարձրավանդակ և լեռնաշղթա տերմինների դեպքում. «<i>Լեռնաշխարհ շրջապատի համեմատությամբ բարձրադիր, միասնական ընդարձակ տարածք, որը բաղկացած է միևնույն բարձրադիր հիմքի վրա գտնվող լեռնաշղթաներից, սարահարթերից, լեռնագանգվածներից, միջլեռնային գոգավորություններից, ձորերից և այլն:</i></p> <ul style="list-style-type: none"> • <i>Բարձրավանդակ (նաև սարահարթ) լայնածավալ գանգվածային բարձրություն՝ հարթ կամ թեթևակի ալիքավոր ջրբաժանների գերակշռությամբ: Հանախ մեկ կամ մի քանի կողմերից սահմանափակվում է գառիթափերով կամ խորշերով:</i> <p><i>Լեռնաշղթա լեռների երկարավուն բարձրություն՝ վերին մասում հատվող հստակ ընդգծված լանջերով ու նեղ լեռնակատարներով: Հարթավայր ցամաքի մակերեսի, ծովերի և օվկիանոսների հատակի մեծ տարածքների՝</i></p>	<p>Գուցե կարելի է նշված հասկացությունների մեկնաբանությունը մի քիչ համառոտել: Սակայն նույնիսկ այդ տեսքով դրանք յուրացնելի է, մանավանդ եթե ուսուցիչը հանձնարարի նշված աշխարհագրական օբյեկտները նկարել կամ գծագրել: Այսինքն՝ կարելի է մաս առ մաս նկարել մեկնաբանությունը:</p>		<p>Անհրաժեշտ է բացատրությունները պարզեցնել:</p>

	<p>աննշան թեքություններով և բարձրությունների փոքր տատանումներով» (էջ 12):</p>			
<p>5.</p>	<ul style="list-style-type: none"> • Հայկական լեռնաշխարհի բնական սահմանները նշելիս (էջ 12) տրված է հետևյալ սահմանաբաժանումը՝ լեռնաշխարհը «Հյուսիս-արևմուտքից եզերվում է Պոնտական, հյուսիս-արևելքից՝ Փոքր Կովկասի, հարավից՝ Հայկական (Արևելյան) Տավրոսի լեռնաշղթաներով: Արևելքում լեռնաշխարհի սահմանները հասնում են մինչև Ուրմիա (Կապուտան) լիճ, հյուսիս-արևելքում՝ Կուր գետ»: Ստացվում է հյուսիս-արևելքում և՛ Փոքր Կովկասի լեռնաշղթան է սահման հանդիսանում, և՛ Կուր գետը: Կարծում ենք, 7-րդ դասարանցու համար ավելի հստակ պետք է նշվեր: • Նշված չէ Հայկական լեռնաշխարհի հարավ-արևմտյան սահմանը (էջ 12): 	<p>Սուբյեկտիվ դիտարկում: Այո, հյուսիս-արևելքում նշվում են թե՛ Փոքր Կովկասի լեռնաշղթան, թե՛ Կուր գետը: Կարծում են՝ խնդիր չկա այստեղ:</p> <p>Կարծում են, որ այսքանը բավական է Հայկական լեռնաշխարհի սահմանները վերհիշելու համար: Դրանք աշակերտները պետք է սովորած լինեն 6-րդ դասարանում (ըստ նոր չափորոշիչների):</p>		<p>Հեղինակի պարզաբանումն ընդունելի է:</p>
<p>6.</p>	<p>«Լեռնաշխարհ շրջապատի համեմատությամբ բարձրադիր, միասնական ընդարձակ տարածք, որը բաղկացած է միևնույն բարձրադիր հիմքի վրա գտնվող լեռնաշղթաներից, սարահարթերից, լեռնազանգվածներից, միջլեռնային գոգավորություններից, ձորերից և այլն» (էջ 12): Իսկ եթե միևնույն բարձրադիր հիմքի չէ՞:</p>	<p>Եթե միևնույն բարձրադիր հիմքի վրա չէ, նշանակում է դուրս է այդ լեռնաշխարհից, այդ հատվածից:</p>		<p>Հեղինակի պարզաբանումն ընդունելի է:</p>
<p>7.</p>	<p>«հարավ-արևմտյան Ասիայի հյուսիսում է գտնվում հայկական լեռնաշխարհը» (էջ 12):</p>	<p>Այո: Կարելի է թեկուզ Վիքիպեդիայում նայել Հարավ-արևմտյան Ասիայի քարտեզին՝ համոզվելու համար:</p>		<p>Հեղինակի պարզաբանումն ընդունելի է:</p>
<p>8.</p>	<p>«Ըստ ժամանակակից տվյալների՝ հավերժական ձյան շերտի մի մասի հալոցքի պատճառով Մասիսի բարձրությունը կազմում է 5137 մ, Արագածինը՝ 4090» (էջ 12): Չի նշվում, որ Մասիսն ունի երկու գագաթ՝ Մեճ և Փոքր, հետևաբար տպավորություն է, թե Արարատ լեռն ունի միայն մեկ գագաթ՝ Մասիսը, հասկանալի չէ, ինչու է Փոքր Մասիսը կամ Սիսը դուրս մնացել:</p>	<p>Հարկավ Արարատն ունի երկու գագաթ՝ Սիս և Մասիս: Չենք կարծում, որ շփոթություն կարող է առաջանալ միայն Մասիսը նշելով: Նշել ենք միայն Մասիսի բարձրությունը՝ որպես Հայկական լեռնաշխարհի ամենաբարձր գագաթ:</p>	<p>Վրիպակ է: Պետք է լինի՝ «Ըստ ժամանակակից այլ տվյալների՝ Մասիսի բարձրությունը կազմում է 5137 մ, Արագածինը՝ 4090» (էջ 12):</p>	<p>Հեղինակի մոտեցումն ընդունելի է:</p>
<p>9.</p>	<p>«... նշանավոր են Մուշի, Կարինի և Արարատան դաշտերը: Դրանցից կարևորագույնն Արարսի միջին</p>	<p>Հայաստանն ուներ իր պատմական առևտրային ուղիները և կապերը հարևան</p>		<p>Հեղինակի պարզաբանումն</p>

	<p>հոսանքում գտնվող Արարատյան դաշտն է: Այստեղով է անցել Չինաստանն ու Հնդկաստանը Արևմուտքի և Հյուսիսի հետ կապող հիմնական մայրուղիներից մեկը» (Էջ 13): Հարց, ինչպե՞ս է Հյուսիսի հետ կապել Չինաստանն ու Հնդկաստանը: Հասկանալի չէ, օրինակ ինչ ճանապարհ էր դա, որը և՛ Արևմուտքի, և՛ նաև Հյուսիսի հետ էր կապում:</p>	<p>շրջանների հետ, որոնք անցնում էին Մուշի, Կարինի և Արարատյան դաշտի միջով: Իսկ քանի որ Մետաքսի ճանապարհն ուներ և՛ հյուսիսային, և՛ հարավային ճյուղեր, Հայաստանը մաս էր կազմում հյուսիսային մասնաճյուղի ընդլայնված ցանցին: Խոսքը հենց այդ ճանապարհի մասին է:</p>	<p>ընդունելի է: Թյուրքմբռնումներ ից խուսափելու համար հեղինակը կարող է նշել Մետաքսի ճանապարհի մասին:</p>
<p>10.</p>	<p>«Այստեղից սկիզբ են առնում խոշոր գետեր, որոնցից հատկապես նշանավոր են Տիգրիսը, Եփրատը, Ճորոխը, Արաքսն ու Կուրը, որոնք թափվում են Սև ու Կասպից ծովեր և Պարսից ծոց» (Էջ 13): Հստակեցնել, որը որտեղ է թափվում:</p>	<p>Քարտեզի վրա աշակերտներն իրենք կարող են հստակեցնել, մանավանդ որ, կրկնենք մեկ անգամ էլ, նոր չափորոշիչներով ենթադրվում է, որ նրանք այս թեման ավելի մանրամասն ուսումնասիրել են 6-րդ դասարանում: Ավելին՝ բազմիցս նշել ենք, որ քարտեզները նոր դասագրքում պարզապես դիզայներական լուծում չեն և ունեն տեղեկատվական արժեք:</p>	<p>Հեղինակի պարզաբանումն ընդունելի է:</p>
<p>11.</p>	<p>Աղթամար կղզու մասին գոնե արժեք նշել:</p>	<p>Ինչպես այլ առիթներով նկատել ենք՝ նպատակահարմար չենք համարել ուսումնական ծանրաբեռնել տեղանուններով կամ տարբերակով, մանավանդ որ դրանցից շատերին աշակերտները կհանդիպեն դասագրքի այլ հատվածներում: Դիցուք՝ Աղթամարի մասին կան տեղեկություններ դասագրքի 174-175-րդ էջերում:</p>	<p>Հեղինակի պարզաբանումն ընդունելի է:</p>
<p>12.</p>	<p>Էջ 13-ում մեջբերված է հույն պատմիչ Քսենոփոնի «Անաբասիս» աշխատության Գիրք IV:5-ից տեղեկություն, սակայն մեջբերման տեքստում ոչինչ չի նշվում, փակագծով չի տրված, որ Քսենոփոնի տվյալ տողերը վերաբերում են Հայկական լեռնաշխարհին, կամ Հայաստանին: Միայն աստղանիշով գեղջավազ բառի բացատրությունում է նշվում «գյուղական համայնքի ղեկավար, պետ հին և միջնադարյան Հայաստանում»: Կարծում ենք, 7-րդ դասարանի սովորողը պետք է նաև ընթերցեր տվյալ</p>	<p>Առաջադրանքը վերաբերում է ոչ միայն Քսենոփոնի, այլև Ստրաբոնի հատվածին: Առաջադրանքի մեջ հստակ գրված է Հայկական լեռնաշխարհի մասին և արդեն իսկ պարզ է, թե ինչի մասին է խոսքը:</p> <p>Էջ 17-ի առաջադրանքների նպատակը հստակ է՝ հարց տալ Հայկական լեռնաշխարհի ներքին և արտաքին տեղաշարժերի վրա եղանակային</p>	<p>Հեղինակի պարզաբանումն ընդունելի է:</p>

	<p>սկզբնաղբյուրի տեղեկության պատճառը: Գուցե նշվեր, որ Քսենոփոնի հիշյալ աշխատությունում վկայվում է Հայաստանի բնության և կլիմայի մասին:</p>	<p>պայմանների ազդեցության վերաբերյալ: Հարցերին կարելի է պատասխանել նաև սկզբնաղբյուրներից քաղված տեղեկությունների օգնությամբ:</p>		
<p>13.</p>	<p>Մեծ հայքի 15 նահանգները թվարկելիս արժեր նշել աղբյուրը (էջ 15):</p>	<p>Տվյալ դեպքում անհրաժեշտ չենք համարել: Նախորդ և գործող դասագրքերում ևս նշված չէ:</p>		<p>Անհրաժեշտ է նշել «Աշխարհագույց»-ի (V դար) մասին:</p>
<p>14.</p>	<p>Փոքր Հայքը, Մեծ Հայքը և Կիլիկիան ներկայացված են որպես վարչական միավորներ (էջ 15): Էջ 17-ում նշված է «Կիլիկիայի վարչական միավոր» արտահայտությունը: Վարչական միավոր լինում են պետության վարչական շրջանները: Այս համատեքստում Կիլիկիան ո՞ր պետության վարչական միավորն է:</p> <p><i>«Լեռնաշխարհի տարածքում պատմության տարբեր փուլերում հայտնի են եղել Մեծ Հայքի, իսկ դրանից դուրս՝ Փոքր Հայքի ու Կիլիկիայի վարչական միավորները»</i> (էջ 15): Նախ անհասկանալի է «դրանից դուրս» ձևակերպումը, այսինքն՝ ինչից դուրս՝ Լեռնաշխարհի՞ց, թե՞ Մեծ Հայքից, քանի որ նույն էջում գրված է հետևյալը. «Մեծ Հայքը կազմված է եղել 15 նահանգներից՝ Ընդհանուր՝ շուրջ 400 հազար. քառ. կմ տարածք»: Հստակ չէ, թե 400000 քառ. կմ տարածքն ինչին է վերաբերում: 400 հազարը ընդհանուր լեռնաշխարհի տարածքի մոտավոր չափն է՝ Մեծ և Փոքր Հայքերով:</p>	<p>Խոսքը Հայկական լեռնաշխարհի մասին է:</p>	<p>Վրիպակ է: Պետք է լինի «Մեծ Հայքի, իսկ դրանից դուրս՝ Փոքր Հայքի ու Կիլիկիայի թագավորությունները»:</p>	<p>Անհրաժեշտ է վերախմբագրել նախադասությունը՝ Փոքր Հայքը ներառելով Հայկական լեռնաշխարհի տարածքում:</p>
<p>15.</p>	<p>Ստրաբոնի ծննդյան և մահվան թվականները՝ «Ք.ա. շուրջ 62-24» (էջ 15): Որքան հայտնի է, Ստրաբոնը ծնվել է Ք.ա. 62 թ., մահացել՝ Ք.հ. 21 կամ 24 թթ.:</p>		<p>Վրիպակ է: Վերևում գրել ենք:</p>	<p>Հեղինակի մոտեցումն ընդունելի է:</p>
<p>16.</p>	<p>«Հայկական լեռնաշխարհի բնակչությունը բախվեց աշխարհագրական և բնակլիմայական խնդիրների, որոնց հաղթահարումը հնարավոր էր տեխնոլոգիական լուծումների միջոցով» (էջ 16): Աշխարհում կան Հայկական լեռնաշխարհից շատ ավելի աննպաստ աշխարհագրական և բնակլիմայական խնդիրներ ունեցող գոտիներ, որոնք բնակեցված են անհիշելի</p>	<p>Սուբյեկտիվ դիտարկում է: Այս դեպքում խոսքը անբարենպաստ պայմանները տեխնոլոգիաներով հաղթահարելու մասին է: Ընդ որում՝ մեջբերումից իսկ ակնհայտ է, որ Հայկական լեռնաշխարհը չի դիտարկվում «աննպաստ աշխարհագրական և բնակլիմայական</p>		<p>Հեղինակի պարզաբանումն ընդունելի է:</p>

	<p>ժամանակներից (օրինակ՝ Հին Եգիպտոս, Տիրեթ, Անդեր և այլն): Շեշտադրումն այնպիսին է, որ միայն բնակլիմայական վատ պայմաններում էին մարդկության մոտ զարգանում տեխնոլոգիաները, այնինչ կարող է լինել նաև ճիշտ հակառակը, երբ բարենպաստ կլիմայական ու աշխարհագրական պայմանները խթանեն տեխնոլոգիաների զարգացմանը:</p>	<p>խնդիրներ ունեցող գոտի», պարզապես ներկայացվում է Հայկական լեռնաշխարհում աշխարհագրական և բնակլիմայական խնդիրների առկայության իրողությունը:</p> <p>Հակառակն էլ կա. երբ բարենպաստ պայմանները ոչ մի զարգացման էլ չեն հանգեցնում:</p> <p>Անհասկանալի է, թե դիտարկման հեղինակն ինչ է ապացուցում բերված օրինակով: Ավելին՝ դիտարկման հեղինակի բերած օրինակները հիմնավորում են ճիշտ այն, որ բնակլիմայական անբարենպաստ պայմանները առիթ են դառնում տեխնոլոգիական զարգացման համար: Այդ մասին բավականին մանրամասն կարող եք կարդալ Առնոլդ Թոյնբիի աշխատություններում (A. Toynbee, A Study of History: The Abridged One-Volume Edition, With New Foreword by Toynbee & a New Chapter, Oxford University Press and Thames & Hudson, 1972):</p>		
<p>17.</p>	<p>Էջ 20–ում նշվում է, որ Հոմո էրեկտուսը («ուղղաձիգ մարդ») առաջացել է մոտ 1.5 միլիոն տարի առաջ, իսկ հաջորդ էջում նշվում է, որ մոտ 2 – 2,5 միլիոն տարի առաջ Հոմո էրեկտուսը առաջինն էր, որ լքեց Աֆրիկան և 1,8 մլն տարի առաջ հասավ Հայկական լեռնաշխարհ: Փաստական ու թվային հակասություններ:</p>		<p>Վրիպակ է: Վերևում գրել եմ:</p>	<p>Հեղինակի մոտեցումն ընդունելի է:</p>
<p>18.</p>	<p>«Ձևավորվել է մոտ 150-130 հազար տարի առաջ, նույնը՝ Ձևավորվել է մոտ 160,000-70,000 տարի առաջ» (էջ 20): Պետք է ավելացնել մ.թ.ա. կամ էլ 130-150 հազար տարի առաջ տարբերակով դարձնել:</p>	<p>Ք. ա. ժամանակագրության դեպքում կարող ենք գրել նաև 150-130 հազար տարի առաջ: Այն տեխնիկապես սխալ չէ, թեպետ կարելի է գրել նաև 130-150 հազար տարի առաջ: Խոսքը Հոմո սապիենսի կամ նեանդերթալցու ձևավորման մասին է. դրանցից առաջինը ձևավորվել է Ք.ա. մոտ</p>		<p>Թյուրմբոնումներ ից խուսափելու համար առաջարկում ենք գրել 130-150 հազար տարի</p>

		<p>160 հազար տարի առաջվանից մինչև Ք.ա. մոտ 70 հազար տարի առաջ, իսկ մյուսը՝ Ք.ա. մոտ 150 հազար տարի առաջվանից մինչև Ք.ա. մոտ 130 հազար տարի առաջ (վերևից ներքև):</p> <p>Նման գրության կարող էր հանդիպել նաև անգլագիր գիտական գրականության մեջ:</p>		<p>առաջ և 70-160 հազար տարի առաջ (ինչպես հեղինակը գրել է այլ առիթներով):</p>
<p>19.</p>	<p>«Առաջին մարդկանց գաղթն ու Հայկական լեռնաշխարհը» (էջ 21) ենթավերնագիրը, հիմնավորման և վերաշարադրման անհրաժեշտություն ունի՝ թյուրընկալումներից խուսափելու համար: Ավելին, հստակեցման անհրաժեշտություն ունի հատկապես. «Այսպիսով՝ գտնվելով Եվրոպայի և Արևմտյան Ասիայի բանուկ խաչմերուկում՝ Հայկական լեռնաշխարհը եղել է նախամարդկանց գաղթի ճանապարհի կարևոր հանգրվաններից մեկը, իսկ հետո նաև «բաշխիչ կետ»՝ ծառայելով որպես հիմնական տարածք, որտեղից սկիզբ են առել Եվրոպայի և Ասիայի բնակեցումները» (էջ 21) միտքը: Կարծում ենք այնպիսի արտահայտություններ, ինչպես «բաշխիչ կետ»-ը նշյալ համատեքստում, այն էլ նշելով չակերտների մեջ, անհասկանալի կլինի ոչ միայն սովորողների, այլ նույնիսկ ուսուցչի համար:</p>	<p>Սուբյեկտիվ դիտարկում է:</p> <p>Հազիվ թե անհասկանալի է «բաշխիչ կետ» ձևակերպումը: Կարծում ենք՝ պարզեցման պատրվակով չի կարելի դասագրքերն իսպառ գրկել պատկերավոր մտածողության նշաններից: Պարզ փոխաբերություն պարունակող բառակապակցություն է, իսկ չակերտներում է գուտ նրա համար, որ փոխաբերություն է:</p> <p>Ինչ վերաբերում է ենթավերնագրի վերաշարադրմանը կամ հիմնավորմանը, ապա դրա անհրաժեշտությունը չկա, քանի որ այնտեղ պարզորեն շարադրված է Հայկական լեռնաշխարհում հնագույն մարդկանց հայտնվելու, հանգրվանելու և տարբեր ուղղություններով սփռվելու պատմությունը:</p>		<p>Հեղինակի պարզաբանումն ընդունելի է:</p>
<p>20.</p>	<p>«Մեզ հայտնի մարդանման ամենասին արարածները գոյություն են ունեցել Աֆրիկայում երեքից չորս միլիոն տարի առաջ: Հոմո էրեկտուսն («ուղղաձիգ մարդ») առաջինն էր, որ սնունդ փնտրելու նպատակով մոտ 2-2,5 միլիոն տարի առաջ լքեց Աֆրիկան՝ հաստատվելով արևելյան կիսագնդի բարեխառն գոտիներում: Մոտ 1.8 մլն տարի առաջ նա հասավ Հայկական լեռնաշխարհի և Կովկաս» (էջ 21): Ամենից վճռորոշ գաղթը կատարեց հուն սասպիենսը, որը սնունդ փնտրելու նպատակով մոտ 80,000 տարի առաջ Արևելյան Աֆրիկայից շարժվեց դեպի հյուսիս: Գաղթականները հասան Արևմտյան Ասիա, այդպիսով՝ նաև Հայկական լեռնաշխարհ (էջ 21): Հետո՝ էջ 29-ում այսպիսի եզրահանգում՝ «Այսպիսով՝</p>	<p>Բերված մեջբերումները համատեքստից պոկված են և բոլորովին այլ՝ կեղծ մեկնաբանության են ենթարկված: Առաջին երկու մեջբերումները (էջ 21) կապ չունեն էջ 29-ի մեջբերման հետ: Դա անգամ ակնհայտ է էջերի տարբերությունից. 8 էջ հետո բերված մեջբերումը 8 էջ առաջ բերված մեջբերմանը կապել, մեղմ ասած, թյուրիմացություն է: Էջ 29-ի եզրահանգումն արված չէ միայն էջ 21-ից մեջբերված հատվածի հիման վրա, ինչպես պնդում է դիտարկման հեղինակը::</p>		<p>Հեղինակի պարզաբանումն ընդունելի է:</p>

	<p>թեպետ դեռ վիճարկվում է հնդեվրոպական նախահայրենիքի տեղադրության հարցը, բայց Հայկական լեռնաշխարհն այն տարածքն է, որտեղ տեղի է ունեցել հայ ժողովրդի կազմավորումը»: Իրար հակասող մտքեր չեն: Ընդհանրապես, Հայ ժողովրդի կազմավորման վերաբերյալ հատվածը վիճարկելի է. ունի վերաշարադրման անհրաժեշտություն: Շարադրանքից կարելի է ենթադրել, որ հայ ժողովրդի ձևավորման ու հնդեվրոպական նախահայրենիքի խնդիրը, տեղադրության հարցերը նույնացված են:</p>			
<p>21.</p>	<p>Կարծում ենք, միանգամայն անհարկի է 7-րդ դասարանի դասագրքում զանազան տեսությունների ներկայացումը, մասնավորապես՝ «Նորքարիդարյան հեղափոխությունը և հայ ժողովրդի կազմավորման սկիզբը» գլխում տեղ գտած «օազիսի տեսությունը» (էջ 25) և «լեռնալանջերի տեսությունը» (էջ 26):</p>	<p>Սուբյեկտիվ դիտարկում է:</p> <p>Չենք կարծում, որ դասագրքում բերված օազիսի (էջ 25) և լեռնալանջերի (էջ 26) տեսությունները անհարկի են ներկայացված 7-րդ դասարանում: Նախ՝ աշակերտը պետք է իմանա որոշ տեսությունների մասին, որպեսզի սովորի համադրել և հակադրել, ինչպես նաև պարզապես իմանալու համար, թե ինչ տեսություններ են շրջանառվում այսօր աշխարհում: Իսկ ապա՝ պատմության ուսուցման հիմնական նպատակներից և նոր դասագրքի ուղղություններից է այն, որ պատմության դասավանդմամբ ձևավորվի քննադատական մտածողություն: Իսկ դա հնարավոր է կարողունակահենք մոտեցմամբ (գիտելիք+հմտություններ+դիրքորոշում)՝ հատկապես միմյանց հակադիր տեսությունների քննարկմամբ: Այսպիսով՝ «օազիսի» և «լեռնալանջերի» տեսությունները կարևոր են: Դրանց կարևորությունն ընդգծելու համար նյութի վերջում կան առաջադրանքներ, որոնց հիման վրա կրկին առաջին պլան է գալիս հայերի՝ Հայկական լեռնաշխարհում տեղաբնիկ լինելու հիմնավորումը: «Լեռնալանջերի տեսության» հավաստիությունը վերջին շրջանում</p>		<p>Հեղինակի պարզաբանումն ընդունելի է:</p>

		<p>հիմնավորվել է և աշակերտները հավելյալ անգամ կհամոզվեն, որ հայերը Հայկական լեռնաշխարհի տեղաբնիկներն են:</p>		
<p>22.</p>	<p>Հայ ժողովրդի ծագման ոչ թե բալկանյան, որն այնքան էլ կիրառական չէ, այլ հնդեվրոպական, պատմահամեմատական կամ միգրացիոն տեսություն: Հայ ժողովրդի՝ իր բնօրրանում ծագմանը (իրականում՝ ձևավորման) վերաբերող դասանյութն ամրապնդելու համար պետք է ընդգծել, որ դա ապացուցված է նաև օտարագրի գիտնականների կողմից (էջ 28):</p>	<p>Հարկավ, կարելի է շատ այլ տեսությունների էլ անդրադառնալ, բայց դասագրքի հեղինակը բավարարվել է բազմաշարժար «բալկանյան» տեսության անդրադարձով, որին հակադրել է հայ ժողովրդի ծագման տեղական տեսությունը, որը վերջին շրջանում գիտականորեն էլ ավելի է հիմնավորվել և հաստատվել: Չենք ներկայացրել գուտ մեկ տեսություն և ասել, որ հենց այսպես է, և դրանից բացի այլ մոտեցում չկա: Բանն այն է, որ միայն մեկ տեսության ամրագրմամբ աշակերտներին սահմանափակում ես կոնկրետ որոշակի տեսանկյունից դիտված աշխարհում՝ չտալով նրան գիտելիք և պատկերացում ժամանակակից աշխարհում շրջանառվող մոտեցումների մասին: Ավելին՝ միակողմանիության արդյունքում աշակերտները զրկվում են նաև շրջանառվող տեսություններին <i>հակադրվելու</i> հնարավորություններից, ինչպես այսօր, այդպես էլ ապագայում, քանի որ պարզապես չեն իմանում, որ այլ տեսակետներ ևս կան:</p> <p>Նման հակադիր տեսությունների քննարկումները կարող են աշակերտների մեջ հետաքրքրություն առաջացնել մի շարք գիտաճյուղերի նկատմամբ, և նրանցից ոմանք գուցե կցանկանան դառնալ գենետիկներ, հնագետներ, լեզվաբաններ, պատմաբաններ և այլն՝ ավելի հիմնավոր դիրքերից բանավիճելու այդ տեսությունների հետ:</p>		<p>Նայել նույն հարցի առթիվ նախորդիվ նշված մեկնաբանությունները:</p>

		<p>Հիշատակվող այն տեսությունները, որոնք հավաստում են հայերի տեղաբնիկ լինելը, հենց օտարազգի գիտնականների տեսություններ են («լեռնալանջերին տեսություն», «հարավասիական (հայկական տեսություն)»)։ օտարազգի գիտնականների կողմից հայերի տեղաբնիկության ընդունման հավելյալ ընդգծման կարիք, կարծում ենք, չկա։</p> <p>Իսկ դիտարկման հեղինակի հետևյալ հաստատումը՝ «<i>Հայ ժողովրդի՝ իր բնօրրանում ծագմանը (իրականում՝ ձևավորման)</i>», ակնարկում է, որ դասագրքում «ծագում» բառը սխալ է գործածված, մինչդեռ չկա նման բան, և «ծագում» ու «ձևավորում» բառերը կիրառված են ի տեղի։</p> <p>Դասագրքում գրված է. «<i>Հայերի ծագման մասին մեկ այլ տեսակետ հիմնված է Պատմահայր Խորենացու հաղորդած առասպելի վրա։ Այս մոտեցումը ենթադրում է հայ ժողովրդի՝ հիմնականում տեղական ձևավորման վարկածը։ Այն, որ հայ ժողովրդի ձևավորումը տեղի է ունեցել տևական փոխազդեցությունների արդյունքում և Հայկական լեռնաշխարհի տարածքում, հաստատվում է նաև ժամանակակից գենետիկական հետազոտությունների արդյունքում</i>» (էջ 28)։</p>		
<p>23.</p>	<p>Անհասկանալի է հեղինակի՝ հայերի ձևավորման վերաբերյալ նախ և առաջ 19-րդ դարի երկրորդ կեսից գիտության մեջ ի հայտ եկած շինծու տեսակետին անդրադառնալու հանգամանքը (էջ 28)։ Առաջին հերթին Բալկանյան տեսությանն անդրադառնալը՝ «<i>Բալկանյան տեսության համաձայն հայերի նախնիներն են բալկաններից Հայկական լեռնաշխարհ գաղթած փոյուզիացի գաղութարարները</i>» (էջ 28)։ Այսինքն՝ հայերը եկվոր են, այլ ոչ թե բնիկ ժողովուրդ։ Այս</p>	<p>Մուրջեկտիվ և չհիմնավորված դիտարկում է։ Որոշ անդրադարձ արդեն ներկայացրեցի վերևում։</p> <p>Ինչ վերաբերում է «Բալկանյան տեսության» վրա «դրված շեշտադրությանը», ինչպես պնդում է դիտարկման հեղինակը, ապա դա, մեղմ ասած, չի համապատասխանում իրականությանը։ Առաջինն անդրադառնալն</p>		<p>Նայել նույն հարցի առթիվ նախորդիվ նշված մեկնաբանությունները։</p>

	<p>տեսության առկայությունը ոչ թե զարգացնում է սովորողների համեմատական, վերլուծական կարողությունները, այլ խճճում է նրանց՝ մղելով մոլորության և իրականության ոչ համարժեք ընկալման: Իսնդիրն այն չէ, որ դասագրքում նշվում է ևս մեկ տեսություն ժողովրդի ձևավորման մասին, այլ այն, որ դրա վրա դրվում է շեշտադրում, որն այդ տեսությանը տալիս է ավելի գերակա նշանակություն մյուսների համեմատ: Հատկապես, երբ չի նշվում փոյուզիացիների գաղթի մոտավոր ժամանակը (քանի որ հաջորդիվ՝ էջ 29-ում, խոսք կա այն մասին, որ հայերենը մայր լեզվից տրոհվել է Ք. ա. 8-րդ հազարամյակում): Բացի այդ, չի նշվում՝ դա առասպել՞ է, թե՞ տեսություն, քանի որ հեղինակը նախորդ նախադասության մեջ նշում է. «Հայերի ծագման և վաղնջական պատմության հարցն ամենաշատ քննարկված հարցերից է. ժողովրդի ձևավորման վերաբերյալ կան մի քանի առասպելներ և տեսություններ»:</p>	<p>ամենևին չի նշանակում շեշտադրում: Տեսությունը բերվում է, ապա հերքվում այլ տեսություններով, որոնք այնուհետև ընդգծվում են նաև առաջադրանքների միջոցով: Բալկանյան տեսությանը հակադրվող տեսությունները ոչ միայն կարևոր են ինքնին, այլև ներկայացվում են որպես Բալկանյան տեսության հակափաստարկներ: Այսպիսով՝ տեսությունների ներկայացումը կատարվում է տրամաբանական շղթայի կառուցման և ոչ թե պարզ թվարկման միջոցով: Իսկ Իրականում խճճող է դիտարկման հեղինակի նկատառումը: Փաստարկման տրամաբանական թելը հստակ նկատելի չէ:</p>		
<p>24.</p>	<p>«հայերենը, որը մայր լեզվից տրոհվել է Ք. ա. մոտ VIII հազարամյակում» (էջ 29):</p>	<p>Վերջին շրջանում նաև այդպիսի տեսություն է շրջանառվում, սակայն որոշեցինք դարձնել V հազարամյակում՝ Գրեյի և Աթքինսոնի հիմնավորման համաձայն (տե՛ս Gray R .D. & Atkinson, Q. D., Language-tree divergence times support the Anatolian theory of Indo-European origin, <i>Nature</i>, 426, (2003), p. 435-439.):</p>		<p>Հեղինակի պարզաբանումն ընդունելի է:</p>
<p>25.</p>	<p>«Հայկական լեռնաշխարհի վաղ պետական կազմավորումներից է համարվում շումերական սկզբնաղբյուրներում հիշատակված առասպելական Արատտան» (էջ 31): Հակասական միտք չէ՞: Մի կողմից փաստվում է պետական կազմավորման գոյությունը, մյուս կողմից էլ՝ նշվում առասպելական:</p>	<p>Հակասություն չկա, քանի որ մի դեպքում նշվում է՝ «համարվում է», մյուս դեպքում նշվում է, որ դա «առասպելական» երկիր է: «Փաստվել» բառը դիտարկման հեղինակին է:</p>		<p>Հեղինակի պարզաբանումն ընդունելի է:</p>
<p>26.</p>	<p>Հին պետական կազմավորումների մասին խոսելիս անհրաժեշտ է ներկայացնել նաև Կ/Գուտիական և Արևելահայկական թագավորությունները (էջ 31):</p>	<p>Այստեղ անհրաժեշտ չենք համարել խոսել դրանց մասին: Գուցե կարելի լինի անդրադառնալ 10-րդ դասարանում:</p>		<p>Հեղինակի պարզաբանումն ընդունելի է:</p>

<p>27.</p>	<p>«Երկաթի դար պատմական ժամանակաշրջան, որն ընդգրկում է Ք.ա. մոտ 1200-550 թթ.» (էջ 34): Իսկ դրանից հետո ո՞ր դարն է: Ինչով է պայմանավորված նման թվականներ նշելը, հասկանալի չէ:</p>	<p>Թվագրությունը ես չեմ հորինել. Երկաթի դարաշրջանի թվագրումը Ք.ա. մոտ 1200-550 թթ. ընդունված ժամանակաշրջան է և ընդհանուր առմամբ համահունչ է բազմաթիվ հնագիտական և պատմական ուսումնասիրություններում նշված թվագրությանը:</p> <p>Ընդ որում՝ նշված է, որ դա մոտավոր թվագրություն է («Ք.ա. մոտ 1200-550 թթ.»):</p> <p>Իսկ դրանից հետո Երվանդականների և Աքեմենյանների շրջանն է, որին էլ հաջորդում է Հելլենիսական դարաշրջանը..., ինչպես և ներկայացվում է դասագրքում: Նկատենք, որ Երկաթի դարաշրջանից անցումը հաջորդող ժամանակաշրջաններ հաճախ բնութագրվում է բազմազան և բարդ զարգացումներով, որոնք դուրս են գալիս կոնկրետ այդ ժամանակներում օգտագործվող գերակշռող նյութերի և տեխնոլոգիաների վրա հիմնված պարզ կախվածությունից: Հասարակությունների զարգացմանը զուգընթաց, տեխնոլոգիական, մշակութային և տնտեսական առաջընթացի բնույթը դարձավ ավելի բազմազան և փոխկապակցված:</p> <p>Հատուկ գերակշռող նյութերի և տեխնոլոգիաների վրա հիմնված անուններով ժամանակաշրջաններ անվանելու փոխարեն պատմաբանները հաճախ օգտագործում են ավելի նրբերանգային և բազմազան դասակարգումներ՝ հիմնված մշակութային, քաղաքական, տնտեսական և տեխնոլոգիական գործոնների վրա: Օրինակ՝ «Դասական», «Միջնադարյան», «Վերածնունդ» և այլն:</p>	<p>Հեղինակի պարզաբանումն ընդունելի է:</p>
------------	--	--	---

<p>28.</p>	<p>«Այսպիսով՝ Զ. ա. I հազարամյակի սկզբին Նաիրի երկրների դաշնությունը, չնայած աշխարհագրական խոչընդոտներին, ի վերջո հանգում է կենտրոնաձիգ իշխանության գաղափարին» (էջ 34): Միայն աշխարհագրական խոչընդոտներին: Գործընթացը միակողմանի է ներկայացված, քանի որ մեկ միասնական պետության մեջ փոքր պետությունների միավորվելն ունեցել է բազմաթիվ պատճառներ՝ արտաքին (թշնամական սպառնալիք), տնտեսական, մշակութային, լեզվական և այլն:</p>	<p>Այստեղ խոսք չկա այն մասին, որ միայն աշխարհագրական խոչընդոտներով է պայմանավորված կենտրոնաձիգ պետության գաղափարը: Նշված է՝ «չնայած աշխարհագրական խոչընդոտներին»: Դրանք տարբեր բաներ են: Ավելին՝ մեջբերվող հատվածին անմիջապես նախորդող պարբերության մեջ տեսակետներ են նշվում Վանի թագավորության կազմավորման նախադրյալների վերաբերյալ՝ առևտրային ուղիների փոփոխություն, Ասորեստանի հարձակումներին դիմագրավելու անհրաժեշտություն:</p>		<p>Հեղինակի պարզաբանումն ընդունելի է:</p>
<p>29.</p>	<p>Վանի թագավորության առաջին մայրաքաղաք կարելի է ներկայացնել ոչ թե Արգաշքուն, այլ Արծկե ձևով, կամ նշել երկուսն էլ (էջ 35):</p>	<p>Խոսքը Վանի թագավորության Արգաշքու(ն) մայրաքաղաքի մասին է, որը հիշատակվում է Ասորեստանի թագավոր Սալմանասար III-ի արձանագրություններում՝ որպես Արամու ուրարտացու «արքայական քաղաք»: Գրել ենք հիշատակված տարբերակով՝ Արգաշքուն:</p> <p>Արգաշքուի նույնացումը Արծկեին դեռևս վիճակելի է: Անգամ եթե ընդունենք, որ Արգաշքուն և Արծկեն նույն քաղաքն են, մինևույն է, հարկավոր է գրել այնպես, ինչպես հիշատակվում է քաղաքն այդ ժամանակներում:</p>		<p>Հեղինակի պարզաբանումն ընդունելի է:</p>
<p>30.</p>	<p>Չի հասկացվում Վանի բերդի նկարի՝ Վանի բերդ (Զ. ա. 9-7-րդ դդ.) գրությունը (էջ 37):</p>		<p>Թյուրըմբռումներից խուսափելու համար թվագրումը հանել ենք՝ թողնելով «<i>Վանի բերդը</i>»: Վերևում գրել են:</p>	<p>Հեղինակի մոտեցումն ընդունելի է:</p>
<p>31.</p>	<p>Հակիրճ և ոչ հստակ են ներկայացված Արգիշտի I-ի և Մենուայի գահակալության շրջանները:</p>	<p>Մուրյեկտիվ դիտարկում է՝ առանց փաստարկների:</p>		<p>Հեղինակի մոտեցումն ընդունելի է:</p>

<p>32.</p>	<p>Զ.ա 8-րդ դարում Վանի թագավորության սահմաններում ընդգրկվեցին ոչ թե Եփրատից Սևանա լիճ (էջ 39-40), այլ մինչև Կասպից ծով ընկած տարածքները: Հարկ է նաև ընդգծել, որ այդ նվաճումների ժամանակ տեղի բնակիչները հուժկու դիմադրություն ցույց չէին տալիս, որովհետև էթնիկ հիմքում հայեր էին, կամ էլ, որովհետև այդ տարածքներում ապրում էին ազգակից, մշակութապես և լեզվական միասնության մեջ գտնվող բնակչություն:</p>	<p>Չհիմնավորված պնդում է: Ոչ մի գիտական տեքստում չեն հանդիպել, որ Ուրարտուի սահմանները հասել են մինչև Կասպից ծով: Իսկ նվաճումների ժամանակ միշտ էլ եղել են դիմադրություններ, հակառակ դեպքում անհասկանալի է, թե ինչու էին Վանի թագավորները միևնույն ուղղությամբ մի քանի անգամ արշավում: Ընդ որում՝ արշավանքներին հաջորդած իրենց արձանագրություններում նշում նաև ռազմական գործողությունների մասին մանրամասնություններ: Այդ մասին կարող եք ծանոթանալ Ե. Գրեկյանի կամ Մ. Սալվինիի և այլ հետազոտողների մոտ: Եվ խիստ վիճարկելի ձևակերպում է այն, որ <i>«տեղի բնակիչները հուժկու դիմադրություն ցույց չէին տալիս, քանի որ էթնիկ հիմքով հայեր էին»</i>: Պատմության մեջ բազմաթիվ են դեպքերը, երբ «էթնիկ հիմքով նույնական ժողովուրդները» միմյանց դեմ «հուժկու դիմադրություն են ցուցաբերել»:</p>		<p>Հեղինակի մոտեցումն ընդունելի է:</p>
<p>33.</p>	<p><i>«Վանի արքաներն ունեցել են հարեմ»</i> (էջ 46): Նախ «հարեմ» բառի ծագումն առհասարակ կապված է բացառապես մուսուլմանական իրողությունների ու համատեքստի հետ, հետևաբար մինչիսլամական ժամանակաշրջանի վերաբերյալ սխալ է «հարեմ»-ի կիրառումը: Դար փոխարեն նպատակահարմար է օգտագործել, եթե ոչ «կանանոց», ապա՝ «տիկնունի» (տե՛ս, https://dictionary.cambridge.org/dictionary/english/harem): Հետևաբար, էջ 45-ում հարեմ բառի մասին տված ծանոթագրությունը սխալ է: Նաև, հարկ է «մահմեդական» ձևը փոխարինել «մուսուլման», «մուսուլմանական» ձևերով:</p>		<p>Էլեկտրոնային տարբերակում խնդիրը լուծել ենք հետևյալ կերպ. գրել ենք <i>«կանանոց (հարեմ)»</i>:</p>	<p>Նայել նույն հարցի առթիվ նախորդիվ նշված մեկնաբանությունները:</p>

<p>34.</p>	<p>«Վանի թագավորությունը որդան կարմիր, ինչպես նաև մետաղական հանքաքարեր և մետաղական արտադրանք էր մատակարարում մի շարք երկրների» (էջ 48): Հատկապես պարզաբանման կարիք ունի որդան կարմիրի մատակարարման մասին նշածը:</p>	<p>Որդան կարմիրի մասին այդ տեղեկությունը վերցրել ենք գիտական հետազոտություններից, դիցուք՝ Elena Phipps-ի «Cochineal Red: The Art History of a Color» աշխատությունից, որտեղ գրված է. «Մերձավոր Արևելքում և Կենտրոնական Ասիայում, հատկապես Արարատ լեռան ստորոտի հարթավայրային հովտում կարմիր ներկ է ստացվել <i>Porphyrophora hamelii</i> տեսակի այլ միջատից, ներկ, որը գործածվում էր առնվազն մ.թ.ա. 714 թվականից, երբ ասորեստանցիները Սարգոն II-ի գլխավորությամբ ներխուժեցին Ուրարտու (Հայաստան): (In the Middle East and central Asia, particularly in the flat grassland of the valley at the base of Mount Ararat, red dye produced from a different insect, of the species <i>Porphyrophora hamelii</i> (the genus name <i>Porphyrophora</i> means “purple bearers”; see fig. 12), was in use from at least 714 b.c., when the Assyrians under Sargon II invaded Urartu (Armenia), էջ 9)»:</p>		<p>Նայել նույն հարցի առթիվ նախորդիվ նշված մեկնաբանությունները:</p>
<p>35.</p>	<p>Էջ 52-ում տեղադրված է պատկեր, որի նպատակը անհայտ է: Ի՞նչ պատկեր է, ինչի՞ մասին է, ինչո՞ւ է այդտեղ տեղադրված:</p>	<p>Այդ մասին մեկնաբանություն կա Մեթոդական ուղեցույցի մեջ: Պատկերված են Տիգրան Երվանդյանը և Աժդահակը: Ուղեցույցի մեջ տրվում է նաև նկարի հետ աշխատանքի նկարագրությունը (Մեթոդական ուղեցույց, էջ 80): Այդպիսի մանրամասնումներ կան և մյուս նկարների վերաբերյալ:</p>		<p>Հեղինակի պարզաբանումն ընդունելի է:</p>
<p>36.</p>	<p>«Վանի վերջին արքաների գործունեության մասին կցկտուր տեղեկություններ կան, ուստի թագավորության կործանման մասին պատկերացումներն էլ հստակ չեն: Մինչ օրս այդ հարցում գիտնականները միակարծիք չեն: Բազմաթիվ վարկածներից մեկն այն է, որ Վանի թագավորությունը կործանվել է մարերի, բարելացիների</p>	<p>Այո, հեղինակը ծանոթ է Վանի թագավորության կործանման վերաբերյալ եղած վարկածներին և տեքստի համապատասխան հատվածը շարադրված է դրանց հիման վրա:</p>		<p>Հեղինակի պարզաբանումն ընդունելի է:</p>

	<p>և սկյութների դեմ մղած պայքարում: Մեկ այլ վարկածի համաձայն՝ թագավորությունը կործանվել է Ք. ա. VII դարի սկզբին՝ ներքին պատերազմների, քաղաքական մասնատումների պատճառով: Մակայն մեկ ուրիշ վարկած էլ պնդում է, որ Վանի թագավորությունն իրականում չի կործանվել. տեղի է ունեցել ընդամենը արքայատոհմի փոփոխություն» (էջ 60): Պատմության արդյունավետ դասավանդման տեսանկյունից կարևոր է դնել հարցադրում «ինչո՞ւ անկում ապրեց այս կամ այն պետությունը», տվյալ դեպքում՝ Ուրարտուն: Սովորողները խնդրին պետք է անդրադառնան տարբեր տեսանկյուններից՝ քաղաքական, տնտեսական, մշակութային, կարճաժամկետ, միջնաժամկետ, երկարաժամկետ, ներքին, արտաքին և այլն: Այնինչ հեղինակը ձևակերպել է ավելի ուղղորդող շարադրանք առ այն, որ Ուրարտուի կործանման պատճառները մինչ օրս հստակ չեն: Նախ արդյոք հեղինակի այս պնդումը հիմնված է տվյալ թեմայով հրապարակված մասնագիտական գրականության վրա. երկրորդ՝ լիարժեք չի իրականացվում պատմության դասավանդման կարևորագույն հասկացություններից՝ «պատճառների և հետևանքների» վերհանման և վերլուծության հնարավորությունը:</p>	<p>Այդ մասին կարող եք կարդալ նաև Երվանդ Գրեկյանի, Մ. Սավինիի և այլ գրքերում:</p> <p>Մնացածը սուբյեկտիվ դիտարկումներ են, որոնք նաև տրամաբանական անհետևողականություն են պարունակում: Այն, որ թագավորության անկման պատճառները հստակ չեն, փաստական իրողություն է, որը ներկայացնելը դասանյութի խնդիրներից մեկն է: Տրամաբանական ի՞նչ աշխատանքի միջոցով է արվել եզրակացությունը, որ «լիարժեք չի իրականացվում պատմության դասավանդման կարևորագույն հասկացություններից՝ «պատճառների և հետևանքների» վերհանման և վերլուծության հնարավորությունը»: Դասագրքի ամբողջ կառուցվածն անվիճելիորեն դրան է ուղղված: Խնդրո առարկա դասանյութն ամենևին չի փակում քննարկման հնարավորությունը: Դիտարկման հեղինակի թվարկած հարցերը միանգամայն հնարավոր են ներկայացվող դասանյութի հիման վրա:</p>		
<p>37.</p>	<p>Արքայական ճանապարհի երկարությունը կազմում էր 2700 կմ (էջ 53): «Համաշխարհային պատմության» («Չանգակ» հրատ., 2023) դասագրքի էջ 44-ում նշված է արքայական ճանապարհի երկարությունը 2500 կմ է: Հարց է առաջանում, ո՞րն է ստույգ: Նմանապես հակասական են Աքեմենյան կայսրության հիմնադրման մասին տեղեկությունները: Համաշխարհային պատմության դասագրքում (էջ 43) նշվում է, որ այդ տերության հիմնադիրը Դարեհ I-ն է (Ք.ա. 522-486 թթ.), իսկ ըստ Հայոց պատմության դասագրքի՝ Աքեմենյան տերության հիմնադիրը Կյուրոս Մեծն է Ք.ա. 550 թ. (էջ 55):</p>	<p>Գիտական գրականության մեջ նշում են, որ Արքայական ճանապարհը 2699 կամ 2700 կմ է կազմում: Առաջնորդվել ենք գիտական հավաստիությունը պահպանելու սկզբունքով:</p> <p>Իսկ Աքեմենյան կայսրության հիմնադրի մասին ևս հղումը գիտական գրականությունն է՝ Իրանիկա հանրագիտարանից մինչև Քեմբրիջի հրատարակությունները (տե՛ս նաև Brosius M., A History of Ancient Persia: The Achaemenid Empire. Wiley-Blackwell, 2021. Matt Waters, Ancient Persia: A Concise</p>		<p>Հեղինակի պարզաբանումն ընդունելի է:</p>

		<i>History of the Achaemenid Empire, 550–330 BCE</i> , Cambridge; New York: Cambridge University Press, 2014): Բոլորն էլ նշում են Կյուրոսին: Այդ մասին գրել են վերևում:		
38.	Հելլենիստական պետություններ, հելլենիզմ հասկացությունները պետք է ավելի հստակ բացատրել, որովհետև շուրջ 6 դար հելլենիզմը սերտորեն կապված է եղել հայ ժողովրդի հետ (էջ 60):	Բավականին հստակ բացատրված է <i>Երվանդական Հայաստանի սոցիալ-տնտեսական և մշակութային կյանքը</i> վերնագրի ներքո և բառարանում: Առանձնահատկությունները վեր են հանվում քաղաքաշինության, կրոնի, տնտեսության և այլ թեմաների քննարկմամբ: (էջ 64-69): Բացի այդ՝ ենթադրվում է, որ հելլենիզմի մասին աշակերտները տեղեկանալու են նաև համաշխարհային պատմության դասին:		Հեղինակի պարզաբանումն ընդունելի է:
39.	Քսենոֆոնից երկից արված մեջբերման վերաբերյալ սահմանել առաջադրանք: Օրինակ՝ կարելի էր դնել հարցադրում. «ինչո՞ւ էին տները գետնափոր» և այլն (էջ 65): Նույնը էջ 66-ի՝ Ստրաբոնից երկից բերված մեջբերման պարագայում:	Կարելի է, բայց մենք այլ խնդիր ենք դրել առաջադրանքի մեջ: Դիտարկման հեղինակն այդպես կարող է վարվել իր հեղինակած դասագրքում:		Հեղինակի պարզաբանումն ընդունելի է:
40.	<i>«ՍՄՄՈՍ (ՇՄՍ) ԵՐՎԱՆԴԱՎԱՆ (Ք.ա. 260-240) Ծովք-Կոմմագենե միացյալ թագավորության արքան, որն Արևմտյան արքա Արտաշես II-ի (Ք. ա. 404–358 թթ.) փեսան էր»</i> (էջ 68): Հնարավոր է:		Վրիպակ է: «, որն Արևմտյան արքա Արտաշես II-ի (Ք. ա. 404–358 թթ.) փեսան էր» արտահայտությունն ավելորդ է:	Հեղինակի մոտեցումն ընդունելի է:
41.	<i>«Ինչո՞ւ էր սրայնանավորված Երվանդական Հայաստանի մշակույթի շեշտված համադրական բնույթը»</i> (էջ 70): Հարցերի այսպիսի բարդ ձևակերպումը կարիք ունի վերանայման, ավելի պարզ ձևակերպման:	Տերստն ուսումնասիրելուց հետո հարցը բարդ չէ: Տվյալ գլխի սկզբում կա այսպիսի տեքստ. «Հին աշխարհի երկրներին ու ժողովուրդներին, ինչպես մեր ժամանակների երկրներին ու ժողովուրդներին, բնորոշ էին մշակութային և սոցիալ-տնտեսական ակտիվ փոխանակությունները: Դրանք կարևոր խթան էին ժողովուրդների ստեղծագործական ներուժի զարգացման և ազգային մշակույթների		Հեղինակի պարզաբանումն ընդունելի է:

		<p><i>փոխհարստացման համար: Այդ առումով ուշագրավ է Երվանդական Հայաստանի պատմությունը» (էջ 64): Այդ տեքստից հետո քննարկվում են Երվանդական Հայաստանի կրոնը, սոցիալական կարգը, տնտեսությունը, քաղաքներն ու արհեստները, որոնց օրինակներով ցույց են տրվում «մշակութային և սոցիալ-տնտեսական ակտիվ փոխանակությունները»: Իսկ դա արդեն իսկ հնարավորություն է տալիս պատասխանել հիշյալ հարցին:</i></p>		
<p>42.</p>	<p>Երվանդունիների ժամանակ արքայի և քրմապետի գոյության փաստը դեռևս չի նշանակում, որ երկրում գործում էր երկիշխանության համակարգ, մանավանդ որ արքան նշանակում էր քրմապետին (էջ 72):</p>	<p>Այն, որ Երվազին քրմապետ նշանակելը և կրոնական կյանքի կենտրոնը Արմավիրից Բագարան տեղափոխելը զնահատվում է որպես «երկիշխանության հաստատում», հիմնված է Արմավիրի արձանագրություններից մեկի վրա, որտեղ գրված է. «Արմավիրցիների թագավոր Միթրասը ողջուն է հղում Եբրոնտես (Երվանդ) արքային»: Հ. Մանանդյանը, Գ. Սարգսյան, Ս. Կրկյաշարյանը և այլք, արձանագրությունից ելնելով, կարծում են, որ իրեն Արմավիրի թագավոր համարող Միթրասը Երվանդ IV-ի եղբայր Երվազն է: Ստացվում է, որ վերոհիշյալ արձանագրության մեջ հիշատակվում է երկու թագավոր, որոնցից մեկը քրմապետն է, մյուսը՝ Եբրոնտես-Երվանդը: Եվ այն հանգամանքը, որ Միթրասն իրեն ևս համարում է արքա, ինչպես և Եբրոնտ-Երվանդին, վկայում է այն մասին, որ նա թագավորի կողքին և նրա հետ միասին կարևոր դեր է խաղում պետական գործերում: Սա արդյունք էր, ինչպես դիպուկ նկատել է պատմագետ Կրկյաշարյանը, «երկրում առաջացած յուրատեսակ երկիշխանության» (տե՛ս Ս. Կրկյաշարյան, Հին Հայաստանի պետական կառուցվածքը</p>		<p>Հեղինակի պարզաբանումն ընդունելի է:</p>

		<p>(Մ. թ.ա VI – Մ. թ. IV դդ.), Եր., 2005, էջ 117):</p>		
<p>43.</p>	<p>«Ինչպե՞ս էր Արտաշես I արքան փորձում խուսափել հեղինիստական (մանավանդ Մելեկյան) ազդեցություններից. փաստարկի՞ր և հիմնավորի՞ր պատասխանը» (էջ 77): Ինչպե՞ս է հեղինակը հիմնավորում պնդումն առ այն, որ Արտաշեսը խուսափում էր հեղինիստական ազդեցություններից: Եթե նկատի է առնված պետությունների հետ քաղաքական հարաբերությունները, ապա հարկ էր գրել կոնկրետ միայն տվյալ պետությունների մասին, այլ ոչ ընդհանրական նշել «հեղինիստական ազդեցություններ», քանի որ վերջինն իր մեջ ներառում է ոչ միայն քաղաքական, այլ նաև կառավարման, մշակութային բաղադրիչներ, որոնցից Արտաշեսը բնականաբար չէր խուսափում, այլ՝ հակառակը:</p>	<p>Խոսքը մանավանդ Մելեկյանների ազդեցության մասին է:</p> <p>Իսկ կոնկրետ ինչպես էր խուսափում, դիցուք՝ Արտաշես I արքան, պարզաբանվում է դասագրքի 75-76-րդ էջերում: Իսկ ավելի կոնկրետ. «Միևնույն ժամանակ ազդեցություններին դիմադրելու համար (մանավանդ Մելեկյանների) արքան հունարենի փոխարեն պաշտոնական լեզու դարձրեց արամեերենը» (էջ 75): Իսկ դա նշանակում է նաև, որ Արտաշես I արքան արամեերենի կիրառմամբ հնարավորություն էր ունենում նաև որոշ չափով խուսափելու նաև ընդհանրապես հեղինիստական ազդեցությունից:</p>		<p>Հեղինակի պարզաբանումն ընդունելի է:</p>
<p>44.</p>	<p>«Իտախոմիլ էր Տիգրան Մեծի և Արտավազդ II-ի մշակած ակտիվ չեզոքության հայեցակարգը» (էջ 93): Արդյոք այս ձևակերպումը համարժե՞ք է աշխարհաքաղաքական այն իրողություններին, որոնք կային տվյալ ժամանակաշրջանում: Արտաշատի Ք. ա. 66 թ. պայմանագիրը չեզոքության մասին չէր, այլ իրավական առումով Հայաստանը Հռոմի դաշնակիցն էր, այլ հարց է, որ հետագայում այդ պայմանագիրը փաստացի խախտվել է: Եվ առհասարակ, ի՞նչ ասել է «ակտիվ չեզոքություն», այն բարդ է 7-րդ դասարանի սովորողի համար:</p>	<p>Այն, որ Հայաստանը Հռոմի բարեկամն էր ու դաշնակիցը, բնավ ժխտումը չէ «ակտիվ չեզոքության քաղաքականության»: Իսկ Տիգրան Մեծի և Արտավազդ II-ի կողմից մշակված «ակտիվ չեզոքության քաղաքականությունը» ենթադրում էր համաչափ բարեկամական հարաբերություններ ինչպես Հռոմի, այնպես էլ Պարթևստանի հետ՝ չհարելով գերտերություններից մեկին՝ ընդդեմ մյուսի: Հետո՝ անհասկանալի է, թե ինչո՞ւ է դիտարկված հեղինակն «ակտիվ չեզոքության հայեցակարգը» ուղղակիորեն կապում Ք. ա. 66 թ. Արտաշատի պայմանագրի հետ, որը հայ-հռոմեական դաշնագիր էր, այլ ոչ թե Հայաստանի ճշգրիտ արտաքին</p>		<p>Հեղինակի պարզաբանումն ընդունելի է:</p>

		<p>քաղաքական ծրագիր: Մեկը մյուսից չի բխում:</p> <p>Աշակերտների համար դժվար չի լինի, երբ տվյալ գլուխն ուսումնասիրած կլինեն, հարկավ, ուսուցչի օգնությամբ նաև:</p>		
<p>45.</p>	<p>«Ընդհանրացրո՛ւ: Ինչո՞ւ հնարավոր չէր Հայաստանի տարածաշրջանային կարևորությունը շեշտված հակահռոմեական կամ հակապարթևական կեցվածքով վերականգնելը» (Էջ 94): Ի՞նչ կապ ունի «ընդհանրացնելը» հաջորդիվ հարցի հետ: Կամ, արդյոք վստահ ենք, որ սովորողը հասկանում է, թե ինչ ասել է ընդհանրացնել: Միևնույն ժամանակ, հարցը կազմված է բարդ և իր մեջ պարունակում է պատասխանի ակնհայտ կանխորոշում ու ուղղորդում: Ինչպե՞ս է որոշվել, որ հնարավոր չէր: Բացի այդ, «կեցվածքն» առավելապես բնորոշ է անձին, ուստի՝ ոչ թե «հակահռոմեական կամ հակապարթևական կեցվածքով», այլ՝ դիրքորոշմամբ:</p>	<p>Սուբյեկտիվ դիտարկում:</p> <p>Իհարկե համոզված ենք, որ 7-րդ դասարանի աշակերտը կարող է հասկանալ «ընդհանրացրո՛ւ» առաջադրական բայը: Իսկ եթե չի հասկանում, պետք է սովորի հասկանալ:</p> <p>Ինչպես նշել ենք, առաջադրական բայերը շարժուն են, և դրանք փոխարինելով՝ կարելի է նոր հարց ստանալ: Եթե տվյալ դեպքում առաջադրական բայը ընդհանրացնելն է, ապա անհրաժեշտ է թվարկել համապատասխան փաստարկները և ի մի բերել դրանք՝ որևէ հիմնական պնդում անելով:</p> <p>Իսկ հարցի «ուղղորդումը» անհիմն չէ: Դասանյութն այդ հարցին պատասխանում է, իսկ աշակերտների ուշադրությունը որևէ հանգամանքի վրա նպատակային կերպով կենտրոնացնելն ամենևին մերժելի չէ:</p> <p>Անշուշտ, վերաշարադրելով համապատասխան փաստարկները՝ աշակերտն ազատ է նաև բանավիճել դրանց հետ:</p>		<p>Հեղինակի պարզաբանումն ընդունելի է:</p>
<p>46.</p>	<p>Տիգրան Մեծի հայտնի մետաղադրամների լուսանկարն ավելի ճիշտ կլիներ պատկերել նրա գործունեությանը նվիրված «Հայկական աշխարհակալ տերությունը. Տիգրան II Մեծ» գլխում, այլ ոչ թե էջ 97-ում:</p>	<p>Սուբյեկտիվ դիտարկում:</p> <p>Այս հատվածում հատկապես «աշխատում» է, քանի որ այստեղ է խոսվում Աշխարհաժողովի մասին:</p>		<p>Պարզաբանումը բավարար չէ մանավանդ արքայական թագի վրա պատկերված</p>
<p>47.</p>	<p>«Խոյրի վրա պատկերված էր ութանկյուն արեգակը՝ «տիեզերական լույսի աղբյուրը», որին նայում էին երկու</p>	<p>Պրոֆեսոր Ալբերտ Ստեփանյանի վերոհիշյալ մենագրության (տե՛ս Ա.</p>		

	<p>արծիվներ: Արծիվները խորհրդանշում էին Աշխարհաժողովր» (էջ 97): Ո՞ր աղբյուրի կամ հետազոտության վրա է հիմնավոր պնդում արվում, որ արծիվները խորհրդանշում են Աշխարհաժողովր:</p>	<p>Ստեփանյան, Պատմության կերպագրությունները Մեծ Հայքում. Արտաշիայան դարաշրջան, Գիրք Ա, Ե., Փրինթինֆո, Սարգիս Խաչենց, 2012, էջ 47, 83, 120, 157, 167, 316-318 և այլն):</p> <p>Արտասահմանյան գիտնականների մոտ ևս անդրադարձեր կան:</p>	<p>արծիվների խնդրի դեպքում: Հեղինակին առաջարկում ենք կրկին անդրադառնալ դրոշների և զինանշանների հարցին՝ հաշվի առնելով նաև սույն դիտարկումները:</p>
<p>48.</p>	<p>Դրամների վրա սովորողի ուշադրությունը կենտրոնացնելու պարագայում (էջ 97) հարկ էր որոշակի հարցադրումներ կամ առաջադրանքներ դնել, որոնք կվերաբերեին զուտ տնտեսական խնդիրներին, որոնք նաև նպատակ կունենային բարձրացնել սովորողի ֆինանսական գրագիտությունը: Օրինակ, Ինչո՞ւ Տիգրան II Մեծի ժամանակ սկսվեցին դրամների մեծաքանակ հատումներ: Ինչո՞ւ էր արքան պատկերված դրամի վրա: Բացի զուտ առք ու վաճառքից, այլ ի՞նչ գործառնություններ էր իրականացնում դրամը հին աշխարհում:</p>	<p>Կարելի էր:</p> <p>Բայց այստեղ այլ խնդիր են հետապնդել և ոչ պակաս կարևոր:</p>	<p>Առաջարկում ենք սույն առաջարկը հաշվի առնել:</p>
<p>49.</p>	<p>«ինքնուրույնություն» (էջ 99) բառի փոխարեն գուցե նշել «յուրահատկություն»:</p>	<p>Ես օգտագործել եմ «ինքնուրույնություն» բառը:</p>	<p>Առաջարկում ենք «ինքնուրույնություն» բառը փոխարինել «առանձնահատկություն» կամ «յուրահատկություն» բառով:</p>
<p>50.</p>	<p>Որոշ բառերի բացատրությունը թերի է, տրված չէ նախնական իմաստը, օրինակ «նահատակ» բառը (էջ 108), որը սկզբում ռազմական տերմին էր՝ նշանակել է</p>	<p>Որոշ չբացատրված բառեր ուսուցչի օգնությամբ կարող են, միջառարկայական</p>	<p>Հեղինակի պարզաբանումն ընդունելի է:</p>

	<p>«առաջինը կռվի մեջ մոտոդ, նախահարձակ մարտիկ, առաջամարտիկ» և հետո է ստացել ներկա իմաստը, որն էլ կիրառել է դասագրքի հեղինակը:</p>	<p>կապեր հաստատելով, պարզաբանել: Այդ մասին նշել եմ նաև վերևում: Իսկ բառերի ծագումը բացատրելը դասագրքի խնդիրը չէ:</p>		
<p>51.</p>	<p>«Ինչո՞ւ է Հայոց եկեղեցին կոչվում առաքելական» (Էջ 109): Եթե նշվում է անվանում, հետևաբար այն պետք է մեծատառով գրել:</p>		<p>Վրիպակ է: Պետք է լինի մեծատառով՝ <i>Առաքելական</i></p>	<p>Հեղինակի մոտեցումն ընդունելի է:</p>
<p>52.</p>	<p>Էջ 109. «Պատմությունը և մարդը» հատվածում ներկայացված է Սբ Թադեոս առաքյալի քարոզչությունն Օսրոյենեի թագավորությունում, ապա՝ մուտքը Մեծ Հայքի թագավորություն և նահատակությունը Սանատրուկ արքայի արքունիքում: Բաժնի վերջում կա հետևյալ հարցը. <i>Ինչո՞ւ է Հայոց եկեղեցին կոչվում առաքելական:</i> «Պատմությունը և մարդը» հատվածում որևէ խոսք չկա Մեծ Հայքի Արշակունյաց թագավորությունում Թադեոս առաքյալի քարոզչության, այստեղ համայնքներ հիմնելու մասին: Այդ մասին գրված է «Քրիստոնեության ընդունումը» ենթավերնագրի ներքո, սակայն այստեղ ևս որևէ ակնարկ չկա այն մասին, որ Սբ Թադեոս և Սբ Բարդուղիմեոս առաքյալներն են համարվում Հայոց եկեղեցու հիմնադիրները: Եթե այս տեղեկությունները բացակայում են դասագրքից, ապա աշակերտն ինչպե՞ս պետք է պատասխանի «<i>Ինչո՞ւ է Հայոց եկեղեցին կոչվում առաքելական</i>» պարզ հարցին, որն ունի ավելի քան պարզ պատասխան՝ քանի որ Հայ Առաքելական Սուրբ եկեղեցին առաքելահաստատ է, այսինքն՝ հիմնվել է առաքյալների կողմից: Նույն՝ «Պատմությունը և մարդը» բաժնում գրված է «<i>Պատմաբանները հսկված են քրիստոնեության ընդունումը վերագրել Արգար V-ի ժառանգ Արգար IX Մեծին, որը քրիստոնեություն է ընդունել մոտ 200 թվականին</i>»: Այս տեսակետն, անշուշտ, գոյություն ունի, սակայն մեծ մասամբ հասու է մասնագիտական շրջանակներին: Ամենևին պատճառաբանված չէ 7-րդ դասարանի դասագրքում այն արձանագրելը: Նույն հատվածում</p>	<p>Թադեոս և Բարդուղիմեոս առաքյալների մասին կա գրված դասագրքի 111-րդ էջում. «Մինչ այդ քրիստոնեությունը Հայաստան մուտք էր գործել Ատրիքից (Միրիայից) և Կապադոկիայից: Հայաստանում դեռ I-ին դարում քարոզել էին Թադեոս և Բարդուղիմեոս առաքյալները: Ստեղծվել էին քրիստոնեական համայնքներ Հայաստանի տարբեր կողմերում: Սկզբում նոր կրոնի հետևորդները Հայաստանում ևս ենթարկվում էին հալածանքների»:</p> <p>Ինչ վերաբերում է 109-րդ էջի տեքստին, թյուրմոռումից խուսափելու համար, ինչպես գրել եմ վերևում, ուղղում ենք այսպես. «...Հայոց Սանատրուկ թագավորի արքունիք: Հայաստանում էլ նահատակվում է»:</p>		<p>Հեղինակի պարզաբանումն ընդունելի է:</p>

	<p>գրված է, որ ըստ Մովսես Խորենացու, Սբ Թադեոս առաքյալը գալիս է Սանատրուկ արքայի արքունիք, որտեղ էլ նահատակվում է: Պատմահայրն իր երկի ԼԳ «Մեր առաքյալների նահատակության մասին» գլխում Թադեոս առաքյալի նահատակության մասին գրում է. «Մրանց ժամանակ պատահած անցքերն առաջուց գրված են ուրիշներից, ինչպես Թադեոս առաքյալի Հայաստան գալը, Սանատրուկի հավատալը և (հետո) նախարարների երկյուղից հավատը թողնելը, առաքյալի և նրա հետ եղողների կատարածը Շավարշավան գավառում, որ այժմ Արտագ է կոչվում, ապառաժ քարի պատռվելը, և առաքյալի մարմինն ընդունելով էլի իրար գալը, հետո՝ աշակերտների նրա մարմինն այնտեղից առնելը և դաշտերում թաղելը, և թագավորի Սանդուխտ դստեր նահատակվելը ճանապարհին մոտ, և վերջերս երկուսի նշխարհներն հայտնվելը և առապարը փոխադրվելը»: Ինչպես տեսնում ենք, Խորենացու երկում խոսք չկա արքունիքում նահատակության մասին: Կարծում ենք, որ առավել շահեկան կլիներ, եթե նշվեր Սբ Թադեոս առաքյալի վանքի մասին, որը գործում է մինչև այսօր և գտնվում է Իրանի տարածքում:</p>			
<p>53.</p>	<p><i>«Բանտարկությունից ազատված Գրիգոր Պարթևն արքայի կողմից նշանակվեց Հայոց հայրապետ և մի խումբ հայ մեծամեծ իշխանների հետ ուղարկվեց Կեսարիա (Կասպադով կիս)՝ ձեռնադրվելու Հայոց մեծ եպիս կոպոս կամ կաթողիկոս»</i> (Էջ 111): Հայոց կաթողիկոսների ընտրության գործում թագավորների ազդեցությունն, անշուշտ, վճռորոշ է եղել, սակայն տեղին չէ դա ձևակերպել <i>«արքայի կողմից նշանակվեց Հայոց հայրապետ»</i> արտահատությամբ, այն դեպքում, երբ Ազաթանգեղոսը մանրամասն ներկայացնում է Գրիգորին քահանայապետ կարգելու համար Տրդատ Մեծի հրավիրած ժողովի, այդ նպատակով աշխարհիկ իշխանության մյուս ներկայացուցիչների հետ խորհրդակցելու մասին:</p>		<p>Վրիպակ է: Պետք է լինի՝ կարգվեց</p>	<p>Հեղինակի մոտեցումն ընդունելի է:</p>
<p>54.</p>	<p><i>«Բսկ արդեն 313 թ. Միլանի կայսերական հրովարտական քրիստոնեությունը հավասարագոր կրոն նանչվեց»</i> (Էջ</p>	<p>313 թ. Միլանի հրովարտակը հաստատում էր կրոնական հանդուրժողականության</p>		<p>Հեղինակի պարզաբանումը</p>

	<p>112): Միլանի եղիկտով կամ հրովարտակով Քրիստոնեություն հռչակվեց որպես «religio licita», այսինքն՝ «օրինական կրոն», իսկ քրիստոնյաների բռնագրավված ունեցվածքը վերադարձվեց:</p>	<p>քաղաքականություն, որը տարածվում էր բոլոր կրոնների վրա, ներառյալ քրիստոնեությունը: Ահա թե ինչու ենք տեքստում գրել, որ «313 թ. Միլանի կայսերական հրովարտակով քրիստոնեությունը հավասարազոր կրոն ճանաչվեց»:</p> <p>Ասվածը չի հակասում դասագրքում գրվածին, քանի որ «օրինական կրոն» լինելը համարժեք է «հավասարազոր կրոն ճանաչվելուն»:</p> <p>Իսկ Միլանի հրովարտակի մեջ ուղղակիորեն խոսք չկա Քրիստոնեության՝ իբրև «religio licita» հռչակման մասին: Միլանի հրովարտակով կրոնական հանդուրժողականություն էր հաստատվում Հռոմեական կայսրության բոլոր կրոնների նկատմամբ՝ ներառյալ քրիստոնեության, այլ կերպ ասած՝ դրանք ճանաչվում էին «հավասարազոր»: Հաճախ Միլանի հրովարտակը դիտվում է որպես առանցքային պատմական պահ, որը Քրիստոնեությունը ճանաչել է որպես հավասարազոր (հավասար) և օրինական կրոն («religio licita») Հռոմեական կայսրությունում:</p> <p>Հակասություն չենք տեսնում:</p> <p>Ի դեպ իբրև «հավասարազոր կրոն» է գրված նաև նախկին դասագրքերից մեկում. <i>«Մակայն 313 թ. Միլանի կայսերական հրովարտակով այն ընդամենը հավասարազոր կրոն ճանաչվեց, իսկ պետական կրոն դարձավ միայն IV դ. վերջին քառորդին»</i> (տե՛ս Բ. Հարությունյան, Հ. Մարգարյան, Ա. Շահնազարյան, Վլ. Բարխուդարյան, Ի. Ղարիբյան, Պ. Հովհաննիսյան, Հայոց</p>		<p>հիմնականում ընդունելի է: Առաջարկում ենք օգտագործել «հավասարազոր և օրինական կրոն» ձևակերպումը:</p>
--	--	---	--	--

		<p>պատմություն: 7-րդ դաս.: Դասագիրք հանրակրթական հիմնական դպրոցի համար, Մաս Ա, Ե., Մանմար, 2018, էջ 14):</p>		
<p>55.</p>	<p>«Հայոց եկեղեցական կառույցի ձևավորումն ու ամրապնդումը» ենթավերնագրի ներքո գրված է. «Կարգվելով Հայոց եկեղեցու կաթողիկոս՝ Գրիգոր Լուսավորիչը ձեռնամուխ է լինում եկեղեցական համակարգի ստեղծմանը: Հաստատվում է հայ եկեղեցու նվիրապետությունը՝ հոգևոր աստիճանակարգը, որի գլուխն էր Ամենայն հայոց կաթողիկոսը: Հայաստանի տարբեր գավառներում ստեղծվում են եպիսկոպոսություններ, որոնց միջոցով իրականացվում էր եկեղեցական իշխանությունը» (էջ 112): Նախ, հարկ էր թեկուզ հակիրճ, սակայն ներկայացնել նվիրապետական աստիճանակարգը, որը բաղկացած է ինն աստիճանից՝ կաթողիկոս, եպիսկոպոս, քահանա, սարկավազ, կիսասարկավազ և դպիր, որն իր հերթին բաղկացած է չորս աստիճանից: Բացի այդ, «Կաթողիկոս ամենայն հայոց» տիտղոսը կիրառվել է ոչ թե 4-րդ, այլ միայն 11-րդ դարից սկսած: Այս ենթաբաժինը գրեթե պատկերացում չի տալիս եկեղեցական նվիրապետության մասին:</p>	<p>Տեքստում հակիրճ բացատրված է՝ ինչ է նվիրապետությունը, և նշվում է, որ դրա գլուխն է Կաթողիկոսը: Ավելին հնարավոր է ստանալ արդեն քննարկումների միջոցով:</p>	<p>Վրիպակ է: Պետք է լինի Հայոց կաթողիկոսը:</p>	<p>Առաջարկում ենք դիտարկումը հաշվի առնելով տեքստը վերաշարադրել:</p>
<p>56.</p>	<p>«Արդյո՞ք քրիստոնեության ընդունումը տեղի ունեցավ առանց դիմադրության, ի՞նչ ընթացք և հետևանքներ այն ունեցավ» (էջ 114): Եթե հեղինակը տեքստում նշել է, որ այն անցավ դիմադրություններով, հետևաբար նման հարց տալու իմաստը ո՞րն է և ինչպե՞ս այդ կերպ կարող է այն զարգացնել քննադատական մտածողություն: Այսինքն՝ հարց ձևակերպելու սկզբունքները հարկ է վերանայել:</p>	<p>Հարցը երկու մասից է բաղկացած՝ «Արդյո՞ք քրիստոնեության ընդունումը տեղի ունեցավ առանց դիմադրության» և «ի՞նչ ընթացք և հետևանքներ այն ունեցավ»: Վերջին հարցադրման համաձայն՝ պատճառ-հետևանք շղթայում հարկ է քննարկել նաև հետևանքները, որոնց մասին մանրամասնություններ դասագրքում չկան, բայց անհրաժեշտ է վերլուծել դասարանում:</p>		<p>Անհրաժեշտ է դիտարկումը հաշվի առնելով հարցադրումը վերաձևակերպել:</p>
<p>57.</p>	<p>«Տրդատ Մեծին հաջորդած Խոսրով III Կոտակի (330-338) օրոք արդեն արքան, նախարարները և եկեղեցին բաժանվեցին Հռոմի, Սասանյանների և կենտրոնաձիգ իշխանության կողմնակիցների» (էջ 116): Հեղինակը, սակայն, չի նշում, թե նրանցից որը հարեց Հռոմին, որը՝ Սասանյան Իրանին և որը՝ կենտրոնաձիգ իշխանության կողմնակիցներին: Հաջորդիվ գրված է. «Լարված էին նրա հարաբերությունները եկեղեցու հետ,</p>	<p>Անհրաժեշտ չենք համարել այլ մանրամասներ ներկայացնել: Կարևորվել է ինքնին պառակտվածության հարցը՝ առանց մանրամասների (աշակերտների հիշողությունը չձանրաբեռնելու համար): Դիտարկման հեղինակի բերած մեջբերումն ունի նաև այսպիսի շարունակություն.</p>		<p>Դիտարկումը հաշվի առնելով տեքստը վերաշարադրել:</p>

	<p>քանի որ վերջինս սկսել էր հարել ընդդիմադիր շարժմանը»:</p> <p>«Ընդդիմադիր շարժմանը» բառակապակցությունը, կարծում ենք, գրված է քաղաքական իրողությունների արդի ընկալմամբ ու տերմինաբանությամբ:</p>	<p>«Խոսքով Կոտակին հաջողվեց ճնշել կենտրոնախույս նախարարական ելույթները և վերահսկողություն հաստատել ավագ Նախարարների վրա: Ապագա անհնազանդությունները Կանխելու համար նա օրենք սահմանեց, ըստ որի՝ հազար և ավելի զինվոր ունեցող նախարարները պիտի ապրեին արքունիքում՝ թագավորի հսկողության ներքո» (Էջ 116):</p> <p>Ինչպես տեսնում ենք մեջբերումից, դասագրքում կարևորվել է կենտրոնաձիգ և կենտրոնախույս ուժերի առկայության հարցը: Եվ ձևակերպումից երևում է, որ կենտրոնախույս ուժերն էին հիմնականում նախարարները:</p> <p>Իսկ «ընդդիմադիր շարժումը» բնավ էլ արդի ընկալմամբ գրված արտահայտություն չէ: Բացի այդ, թեև անախրոնիզմից հարկ է զգուշանալ, սակայն մեծ հաշվով, անցյալի մասին մենք գրում ենք հենց մեր ժամանակներից և օգտագործում ենք մեր օրերում ստեղծված շատ արտահայտություններ, տեսություններ, եզրույթներ՝ անցյալը բացատրելու համար: Դիցուք՝ Արևելահռոմեական կայսրությունը երբեք չի կոչվել Բյուզանդիա, բայց մենք պայմանականորեն այսօր այդպես ենք անվանում այն (Բյուզանդիա անվանումն առաջին անգամ օգտագործել է գերմանացի պատմաբան Հիերոնիմոսու Վոլֆը 1557 թ.):</p>		
<p>58.</p>	<p>«Կաթողիկոսությունը վերադարձնում է Լուսավորչի տոհմին՝ Ներսես Պարթևի գլխավորությամբ» (Էջ 117): Մինչ այդ որևէ խոսք չկա այն մասին, որ կաթողիկոսությունը վերցվել էր Գրիգոր Լուսավորչի տոհմից:</p>	<p>Մանրամասնություններ տրված չեն, կարևոր է համարվել կաթողիկոսությունը վերադրածնելու հանգամանքը, ինչը արդեն նշանակում է, որ ինչ-որ պահի այն վերցված է եղել: Լավ առիթ է՝ քննարկելու այդ հարցը:</p>		<p>Դիտարկումը հաշվի առնելով նախադասությունը վերաշարադրել:</p>

<p>59.</p>	<p>Ըստ հեղինակի՝ Պապ թագավորը վճռական է գտնվում և Հայոց եկեղեցին դուրս է բերում «<i>հունադավանության</i>» կախվածությունից (էջ 119): Այստեղ հավանաբար նկատի է առնված Հայոց մի քանի կաթողիկոսների՝ Կեսարիայում ձեռնադրվելը, որն ամենևին դավանական կախվածություն չէ: Հարկ է նշել, որ մինչև Ընդհանրական եկեղեցու բաժանումը, որը տեղի է ունեցել Զաղկեդոնի 451 թ. տիեզերական ժողովից հետո, դավանական տարաձայնություններ հայոց և հռոմեական եկեղեցիների միջև, այն էլ՝ Պապի գահակալության շրջանում, արձանագրված չեն: Հայտնի է, որ հունադավանություն տերմինով նշվել և նշվում է բյուզանդական եկեղեցու դավանանքը, որից Հայոց եկեղեցին այդ ժամանակ կախում չի ունեցել: Ավելին, Պապի գահակալության ժամանակ Բյուզանդական կայսրությունը դեռ չկար: Առհասարակ, 4-րդ դարի վերաբերյալ «<i>հունադավանություն</i>» տերմինը կիրառելը սխալ է:</p>		<p>Վրիպակ է: Պետք է լինի <i>Կեսարիայից ունեցած կախվածությունից:</i></p>	<p>Հեղինակի մոտեցումն ընդունելի է:</p>
<p>60.</p>	<p>Գրել Փավստոս Բուզանդի երկում արձանագրված՝ Արշակ-Շապուհ, Վասակ-Շապուհ երկխոսությունների մասին:</p>	<p>Կարելի էր գրել, և շատ ուրիշ բաներ ևս կարելի էր գրել, միայն թե 176 էջերի սահմանափակություն կար, և ամեն ինչ չէ, որ կարող ենք գրել:</p>		<p>Հեղինակի պարզաբանումն ընդունելի է:</p>
<p>61.</p>	<p>«<i>Հաղթեց ավագանու ծրագիրը. 428 թ. նրանց պահանջով Պարսից շահը գահընկեց արեց Արշակունյաց վերջին հայ արքային՝ Արտաշես-Արտաշիրին</i>» (էջ 120): Նախ անհրաժեշտ է փոքր-ինչ մանրամասն ներկայացնել ինչ ասել է «ավագանու ծրագիրը»: Բացի այդ, ամենևին անտեսված են պետությունը կործանումից փրկելու ուղղությամբ Հայոց հայրապետ Սահակ Ա Պարթևի ներդրած ջանքերը: Նա տվյալ դասանյութում հիշված չէ իբրև Մեսրոպ Մաշտոցի աջակից և խրախուսող: Այդ հատվածի շարադրանքից ստացվում է, որ միայն արքան է աջակցել Մաշտոցին: Բացի այդ, Մաշտոցի առաջարկը քննելու համար Սահակ Ա Պարթևը ժողով է հրավիրել: Կարևոր է իմանալ նաև, որ երբ 364-368 թթ. հայ-պարսկական պատերազմից դժգոհ նախարարները Ներսես Մեծին հայտնեցին, որ չեն ցանկանում շարունակել պատերազմը և մտադիր են</p>	<p>Սուբյեկտիվ դիտարկում: Նախադասությունից և նկարագրված իրավիճակից տրամաբանական է վեր հանել «ավագանու ծրագիրը», այն է՝ թագավորին և թագավորական իշխանության մերժումը, մանավանդ որ դա մեջբերված հաստատված հստակ է երևում է. «<i>428 թ. նրանց պահանջով Պարսից շահը գահընկեց արեց Արշակունյաց վերջին հայ արքային՝ Արտաշես-Արտաշիրին</i>»: Ինչ վերաբերում է Սահակ Պարթևին իբր անտեսելուն, ապա դա չի համապատասխանում իրականությանը: Բանն այն է, որ դասագրքի 148-րդ էջում հստակ գրված է. «Մեսրոպ Մաշտոցը դեռ իր կրոնական քարոզների ժամանակ</p>		<p>Պարզաբանումը հիմնական մասով ընդունելի է: Առաջարկում ենք էջ 120-ի շարադրանքում կատարել հետևյալ հավելումը. «... ծրագիրը. Անտեսելով Սահակ Ա Պարթև կաթողիկոսի հորդորները, 428</p>

	<p>ենթարկվել Պարսկաստանին, հայրապետը նրանց հորդորեց հավատարիմ մնալ թագավորական իշխանությանը:</p>	<p>հասկանում է, որ առանց Սուրբ գրքի հայերեն թարգմանության քարոզն անարդյունավետ է: Իր մտահոգությունները հայտնում է կաթողիկոս Սահակ Պարթևին և նրա միջնորդությամբ Վռամշապուհ արքային ներկայացնում հայ գրերի ստեղծման իր նախագիծը:»: Ավելին, այդ մասին ավելի մանրամասն կա դասագրքի 147-րդ էջում գետեղված QR կոդի տեսանյութի մեջ:</p>		<p>թ. նրանց պահանջով ...»:</p>
<p>62.</p>	<p>Ընդգծել, որ 354 թ. Աշտիշատի ժողովի ամենանշանակալից որոշումը քաղաքացիական հասարակության ստեղծման իշխանության ձգտումն էր, երբ հասարակության բոլոր խավերին համերաշխության կոչ հղվեց, մի բան, որ եվրոպական երկրներում փորձ էր արվում ձևավորել միայն նոր ժամանակներում (էջ 119):</p>	<p>Կարծում եմ, որ 7-րդ դասարանի աշակերտների համար բավարար է և էջ 117-ում ներկայացվածը: Առաջարկը կարելի է կիրառել արդեն 10-րդ դասարանում, մանավանդ որ այդ դասարանի չափորոշիչների մեջ կա նման դիտարկում:</p>		<p>Հեղինակի պարզաբանումն ընդունելի է:</p>
<p>63.</p>	<p>«Արշակունյաց Հայաստանի կործանումն իր ազդեցությունն ունեցավ ոչ միայն հայոց պատմության ընթացքի, այլև ողջ արևելյան միջերկրածովյան աշխարհի վրա: Բանն այն է, որ Հայաստանը կարող էր Մերձավոր Արևելքում դառնալ քրիստոնեության գլխավոր հենակետը՝ ընդդեմ արաբական արշավանքների, որոնք 250 տարուց քիչ անց պետք է նոր հավատք բերեին այս տարածաշրջան: Արդյունքում կտրուկ փոխվեց տարածաշրջանի թե՛ քաղաքական-տնտեսական, թե՛ մշակութային և թե՛ կրոնական պատկերը» (էջ 120): Որքանով են համարժեք նման մտքերը, եզրահանգումները, որոնք վերաբերում են հարյուրավոր տարիներ անց կատարվելիք իրադարձություններին: Նշյալ ամբողջ ձևակերպումը հակասական է պատմականության տեսանկյունից: Ինչպե՞ս պետք է սովորողը հասկանա Արևելյան Միջերկրականի վրա ազդեցության խնդիրը: Եվ եթե դա պարզաբանված չէ, հետևաբար հարկ է խուսափել դպրոցական դասագրքում վիճելի մտքեր շարադրելուց:</p>	<p>Սուբյեկտիվ դիտարկում է:</p> <p>Ասվածից բնավ էլ ենթադրելի չէ, որ հայ նախարարները չդարձան արաբական արշավանքների «պատնեշ»... Պարզապես գրված է, որ «Հայաստանը կարող էր Մերձավոր Արևելքում դառնալ քրիստոնեության գլխավոր հենակետը՝ ընդդեմ արաբական արշավանքների», իսկ այդպես մենք կարող ենք ասել, քանի որ գրում ենք հետահայաց, այլ ոչ թե V դարից:</p> <p>Ինչ վերաբերում է «արևելյան միջերկրածովյան աշխարհ» արտահայտությանը, պետք է նշենք, որ աշակերտներն արդեն իսկ 78-րդ էջում ծանոթացել է «Լևանտ» հասկացությանը, որը բառարանում մեկնաբանված է այսպես. «Լևանտ / Միջերկրածովյան տարածաշրջանի արևելյան հատվածի երկրների ընդհանուր անվանումը»:</p>		<p>Առաջարկում ենք այս հատվածը վերախմբագրել:</p>

	<p>Երկրորդ, իսկ ո՞վ ասաց, որ հայերը, հայ նախարարական տները չդարձան որոշակի պատնեշ արարական արշավանքների պարագայում: Եթե այդպես չէր, ապա ինչպե՞ս է հեղինակն այս դասագրքի հետագա էջերում բացատրելու 8-9-րդ դդ. և հետագայում Բագրատունյաց Հայաստանի շրջանում էլ հակաարարական ապստամբությունները:</p> <p>Երրորդ, երբ նշվում է, որ փոխվեց <i>«թե՛ քաղաքական-տնտեսական, թե՛ մշակութային և թե՛ կրոնական պատկերը»</i>. հաշվի առնելով, որ հեղինակը վերը նշել է Արևելյան Միջերկրականը, հետևաբար ընթերցողը կարո՞ղ է չիմանալ, թե ո՞ր տարածաշրջանն է նկատի առնվում. Մերձավոր Արևելք, Լևանտ, Հյուսիս-արևելյան Աֆրիկա՞, թե Արևմտյան Ասիա՞, ինչպես դասագրքի նախորդ էջերում էր գրված: «Արդյունքում» ձևը տվյալ պարագայում հարկ է փոխարինել «հետևանքում» բառով:</p>		
<p>64.</p>	<p>Հայ ժողովրդի պատմության և հայապահպանության մեջ այնպիսի առանցքային նշանակություն ունեցող գյուտի, ինչպիսին է հայոց այբուբենի ստեղծումը, հեղինակն անդրադարձել է ընդամենը մեկ նախադասությամբ. <i>«Նրա աջակցությամբ էր, որ 405 թ. Մեսրոպ Մաշտոցը ստեղծեց հայոց այբուբենը, և դպրոցներ բացվեցին թե պարսկական, թե հռոմեական (բյուզանդական) Հայաստաններում»</i> (էջ 120): Գասագրքում ոչինչ չկա գրերի ստեղծման պատմական նշանակության մասին: Մինչդեռ գրերի գյուտը հայոց պատմության ամենանշանակալի ձեռքբերումներից մեկն է, եթե ոչ ամենակարևորը, որի շնորհիվ է հայ ժողովուրդը պահել ինքնությունը:</p>	<p>Ավաճը չի համապատասխանում իրականությանը: Հայոց այբուբենի մասին դասագրքում գրված է ինչպես 120-րդ էջում, այդպես էլ 148-149-րդ էջերում: Ավելին, այդ մասին կա նաև տեսանյութ, որը հասանելի է 147-րդ էջում գետեղված QR կոդի միջոցով:</p> <p>Գրերի գյուտի նշանակության մասին դասագրքում կան նաև այսպիսի ձևակերպումներ.</p> <p><i>«387 թ. Հռոմեական և Մասանյան կայսրությունների միջև Հայաստանի բաժանումից հետո խիստ անհրաժեշտ էր հայ ժողովրդի ազգային ու մշակութային ինքնությունը պահպանելու և ամրապնդելու ուղիներ գտնել: Գրերի գյուտը դարձավ այն կենսական միջոցը, որով սկսվեց հայերի նոր՝ քրիստոնեական ինքնության ստեղծումը»</i> (էջ 148):</p>	<p>Հեղինակի պարզաբանումն ընդունելի է:</p>

		<p>«Հայոց այրուբենի գյուտի, Աստվածաշնչի թարգմանության և ինքնուրույն գրականության ստեղծման շնորհիվ Մեսրոպ Մաշտոցը Առանշապուհ արքայի և կայծողիկոս Սահակ Պարթևի աջակցությամբ հոգևոր նորոգման սերմեր տարածեց հայ ժողովրդի մեջ» (Էջ 152): Իսկ գրերի գյուտի պատմական նշանակությունը քայլ առ քայլ բացահայտվում է դասգրքի 148-152-րդ էջերում:</p>		
<p>65.</p>	<p>Հարցեր կան, որոնց պատասխանները նյութում չկան, օրինակ Վասակ Սյունու որդիների պատանդ լինելը (Էջ 134):</p>	<p>Դասագրքում այսպես է ձևակերպված առաջադրանքը. «Պատկերացրո՛ւ, որ դու Վասակ Սյունին ես և արդեն գիտես, որ Վարդան Մամիկոնյանն ու իր կողմնակիցները վճռել են մինչև վերջ պայքարել Սասանյանների դեմ: Իսկ քո երկու որդիները պատանդ են Սասանյան արքունիքում: Ի՞նչ քայլերի կդիմես այդ վճռական պահին և ինչպե՞ս կիմանալորես քո արարքը»: Պարտադիր չէ, որ այդ հանգամանքը նշված լինի բուն դասանյութում: Առաջադրանքն այնպիսին է, որ և՛ տեղեկություն է տալիս այդ մասին, և՛ օգնում է հասկանալ այդ տեղեկության նշանակությունը, քանի որ մղում է երևակայելու տվյալ իրավիճակը և փաստարկներ բերելու դրա վերաբերյալ:</p>		<p>Հեղինակի պարզաբանումն ընդունելի է:</p>
<p>66.</p>	<p>Բյուզանդական տերմինը կիրառելի է 395 թ. հետո (Էջ 129, 135): «Բյուզանդիա 395 թ. Հռոմեական կայսրության բաժանումից հետո Արևելահռոմեական կայսրությանը տրված անվանումը» (Էջ 129, 135): Արևելահռոմեական կայսրությանը կամ առհասարակ ադրյուրներում Ռոմանիա, ուղղակի Հռոմեական կայսրություն անվանումներով պետությանը Բյուզանդական կայսրություն առաջինը անվանել է գերմանացի պատմաբան Հիերոնիմուս Վոլֆը 1557 թ.: Այդ պետությունը երբեք իր ժամանակ Բյուզանդիա չի անվանվել:</p>	<p>Ձևակերպման մեջ բնավ էլ պնդում չի արվում, թե Բյուզանդիա եզրույթը առկա է եղել այդ ժամանակներից: Իմ ձևակերպումն ավելի շուտ բաց է թողնում ժամանակագրության հարցը, այն է՝ կոնկրետ երբ է առաջացել Բյուզանդիա անվանումը: Մի բան, որը քննարկման դաշտ է բացում: Այդուամենայնիվ, համաձայն ենք, որ կարելի էր ինչ-որ կերպ ցույց տալ եզրույթի՝ ավելի</p>		<p>Գրել «Բյուզանդիա» եզրույթի ավելի ուշ ստեղծվելու մասին:</p>

		<p>ուշ ստեղծված լինելու իրողությունը՝ տարընթերցումներից խուսափելու համար:</p>		
<p>67.</p>	<p>«Միաբնակություն (հակաքաղկեդոնականություն)» (էջ 135): Արդյոք հիմնավոր է միաբնակությունը հակաքաղկեդոնականության հետ նույնացնելը:</p>	<p>Հարկավ «միաբնակությունը» և «հակաքաղկեդոնականությունը» փոխկապակցված են, բայց ոչ նույնական: Միաբնակությունն իր դիրքորոշմամբ հակադրվում էր քաղկեդոնականությանը, կամ հակառակը՝ քաղկեդոնականությունը՝ միաբնակությանը: Այդ մասին պարզաբանված է նույն՝ 135-րդ էջի բառարանում և 136-րդ էջում (<i>Այնուհետև երկաբնակները կոչվեցին «քաղկեդոնականներ», իսկ միաբնակները՝ «հակաքաղկեդոնականներ»</i>):</p>		<p>Էջ 135-ի բառարանում միաբնակության կողքին գրած «հակաքաղկեդոնականություն» նշումը հանել:</p>
<p>68.</p>	<p>«Դվինի 506 թ. և 554 թ. ժողովները» վերնագրում (էջ 136) ավելացնել <i>եկեղեցական</i> բառը:</p>		<p>Ընդունված է: Կարելի է ավելացնել:</p>	<p>Հեղինակի մոտեցումն ընդունելի է:</p>
<p>69.</p>	<p>«Արաբական արշավանքների արդյունքում Սասանյան կայսրությունը կործանվում է, Բյուզանդիան նահանջում է Եփրատից արևմուտք, և շուրջ հազար տարվա մեջ առաջին անգամ Հայաստանը դուրս է մնում Արևելք-Արևմուտք շարունակական պայքարից: 387 թվականից ի վեր մասնատված Մեծ Հայքը միավորվում է» (էջ 140): Ընդհանուր ձևակերպում է, հստակություն պահանջող միտք է անհրաժեշտ: Ինչպե՞ս է հաշվվում այդ հազար տարին. միգրացի ավելի կարճ կամ երկար է տևել այդ երևույթը: Իսկ ով ասաց, որ դրանով Հայաստանը դուրս էր մնում ինչպես հեղինակն է նշում «Արևելք-Արևմուտք» շարունակական պայքարից: Հարկ է նկատել որ այո, Հայաստանը որոշակիորեն ձերբազատվում է մի կողմից Հռոմեական կայսրության, սպա Արևելահռոմեական կամ Բյուզանդական կայսրության, մյուս կողմից իրանական աշխարհի կայսրությունների (Աքեմենյան Պարսկաստան, Պարթևստան, Սասանյան</p>	<p>Խոսքն այն մասին է, որ Արաբական արշավանքների արդյունքում Հայաստանը որոշ ժամանակ դադարեց լինել Սասանյան կայսրության և Բյուզանդիայի պայքարի թատերաբեմ: Եվ այդ ժամանակ է, որ նա մի պահ դուրս մնաց Արևելք-Արևմուտք շարունակական պայքարից: Ձևակերպումից չի բխում, որ այն ընդհանրապես դադարեց Արևելք-Արևմուտք պայքարի թատերաբեմ լինելուց: Այստեղ նկատի է առնվում և այն, որ օգտվելով այդ իրավիճակից՝ 639 թ. Թեոդորոս Ռշտունին միավորեց Հայաստանի բյուզանդական և պարսկական մասերը (այս մասին խոսվում է դասագրքի 140-141 էջերում): Իսկ այն, որ հետագայում Հայաստանը կդառնա Արաբական խալիֆայության և</p>		<p>Հեղինակի պարզաբանումն ընդունելի է:</p>

	<p>Պարսկաստան) միջև պայքարի թատերաբեմ լինելուց, սակայն այն միաժամանակ դառնում է Արաբական խալիֆայության և Բյուզանդական կայսրության միջև պայքարի թատերաբեմ: Այսպիսի թերի, անտրամաբանական, անհիմն ձևակերպումները սովորողին և ուսուցչին կարող են ամբողջովին զցել թյուրընկալումների մեջ:</p>	<p>Բյուզանդիայի պայքարի թատերաբեմ, դա արդեն այլ խնդիր է:</p>		
<p>70.</p>	<p>«Հայաստանը Պարսկաստանի, Բյուզանդիայի և Արաբական խալիֆայության միջև» թեման ներկայացնել «Հայ ժողովրդի ազատագրական պայքարը 5-7-րդ դարերում» վերնագրով:</p>	<p>Սուբյեկտիվ դիտարկում: Բիարկե, կարող է նաև այդպես վերնագրվել, սակայն մեր կիրառած վերնագիրը ենթադրում է ավելի լայն պատմական հեռանկար՝ ընդգծելով Հայաստանի աշխարհաքաղաքական դիրքը և ներառելով որոշակի ժամանակահատվածում հարևան խոշոր տերությունների (Պարսկաստան, Բյուզանդիա և Արաբական Խալիֆայություն) հետ փոխգործակցությունը: Ընտրված վերնագիրը դասանյութին աշխարհաքաղաքական խորք է տալիս, որի համատեքստում կարող են տեղավորվել և՛ ազատագրական պայքարը, և՛ համագործակցությունը, և՛ բազմաթիվ այլ իրողություններ, որոնք դուրս են մնում զուտ ազատագրական պայքարի ներկայացման համատեքստում:</p>		<p>Հեղինակի պարզաբանումն ընդունելի է:</p>
<p>71.</p>	<p>5-7-րդ դարերին վերաբերող թեմաների մեջ խոսք չկա 591-595 թթ. և 602 թ. հակաբյուզանդական ապստամբությունների մասին:</p>	<p>Այլ ապստամբությունների մասին ևս չկան դիտարկումներ: Բավարարվել ենք դասագրքում ներկայացվածով: Չի կարելի 7-րդ դասարանի աշակերտի հիշողությունը ծանրաբեռնել թվական, իրադարձային կամ այլ մանրամասնություններով, քանի որ դասագիրքը հանրագիտարան չէ:</p>		<p>Հեղինակի պարզաբանումն ընդունելի է:</p>
<p>72.</p>	<p>«Այսպիսով՝ յոթերորդ դարի կեսերի քառասյին իրադարձությունները նպաստեցին նաև հավակնոտ նահապարհների միջև իշխանության համար մղվող</p>	<p>Ռասագրքի այդ հատվածում անհրաժեշտ ենք գտել այդպես ամփոփել, իսկ անունների կհանդիպեք հաջորդ տողերում և մանավանդ 142-րդ էջում:</p>		<p>Առաջարկում ենք դիտարկումը հաշվի առնել և վերաշարադրել</p>

	<p>պայքարին» (էջ 141): Թեման առանց անունների է: Առանց փաստերի ամփոփում է:</p>		<p>նախադասություն ը:</p>
<p>73.</p>	<p>Արաբական տիրապետության շրջանում առանձնացվում են «երկու քաղաքական հոսանքներ»՝ «Նրանց մի մասը կարծում էր, որ հարկավոր է ապստամբել և ապավինել Բյուզանդիայի հովանավորությանը, մյուս մասը՝ որ հարկավոր է հրաժարվել Բյուզանդիայի հովանավորությունից և սեփական ուժերով, դիվանագիտորեն պահպանել միավորված Հայաստանի ինքնուրույնությունը: Առաջին հոսանքը գլխավորում էին Մամիկոնյանները, իսկ երկրորդը՝ Ռշտունիները, իսկ ապա՝ Բագրատունիները» (էջ 142): Մինչդեռ նույն էջում հեղինակը նշում է, որ խալիֆա Մուավիան Գրիգոր Մամիկոնյանին նշանակել է Հայաստանի կառավարիչ: Ինչը ցույց է տալիս, որ խնդիրը ոչ միայն արտաքին կողմնորոշման էր վերաբերում, այլ նաև Հայաստանի նախարարական տոհմերի միջև ծավալվող ավատատիրական կռիվներին, որը հատուկ է ֆեոդալական ժամակաշրջանին: Հետևաբար, ընդհանրացումը և քաղաքական հոսանքների բաժանումը ժամանակաշրջանի իրողությունները չեն արտահայտում:</p>	<p>Մեջբերված հատվածի և նույն էջում գետեղված տեղեկատվության միջև ոչ մի հակասություն էլ չկա: Հարկ է ուշադրություն դարձնել այն հանգամանքին, որ Գրիգոր Մամիկոնյանին Մուավիան նշանակել է Հայաստանի կառավարիչ 661 թ., մինչդեռ դիտարկման հեղինակի կողմից մեջբերված հատվածը վերաբերում է 701 թ. հետո ընկած ժամանակահատվածին, երբ աստիճանաբար ակնհայտ էր դառնում Մամիկոնյաններ-Բագրատունիներ մրցակցությունը:</p> <p>Այս մասին տե՛ս Ադոնց Ն., Քաղաքական հոսանքները հին Հայաստանում (Երկեր, հ. Ա, Ե., 2006, էջ 218-245): Ադոնց Ն., Բագրատունյաց փառքը (Երկեր, Պատմագիտական ուսումնասիրություններ, հ. Ա, Ե., 2006, էջ 439-534): Ա. Մ. Վարդանյան, Քաղաքական իշխանության համար պայքարը Հայաստանում Մամիկոնյանների և Բագրատունիների միջև VIII դ. առաջին կեսին, «Լրաբեր հասարակական գիտությունների», 1 (2019), էջ 31-45:</p>	<p>Հեղինակի պարզաբանումն ընդունելի է:</p>
<p>74.</p>	<p>Մուավիան նշվում է որպես Մուհամմեդի ամենակատաղի հակառակորդներից (էջ 142): Այդպե՛ս էր: Մուավիան ընդամենը ընդդիմանում էր Մուհամմեդ մարգարեին, սակայն վերջինիս կողմից Մեքքան նվաճելուց հետո նա և նրա հայրը ընդունում են իսլամը: Այդ իրադարձություններից հետո Մուավիան դառնում է Մուհամմեդի գրագիրը:</p>	<p>Մի՞թե դրանք միմյանց հակասում են... Բազմաթիվ ճակատամարտեր են եղել մինչ Մուավիայի իսլամ ընդունելը (դիցուք՝ 625 թ. Ուհուդի ճակատամարտը, 627 թ. Խրամատի (կամ Դաշնակիցների) ճակատամարտը, որոնք առաջնորդում էր Մուավիայի հայրը): Տե՛ս Hinds, Martin "Mu'āwiya I b. Abī Sufyān". In Bosworth, C. E.; van Donzel, E.; Heinrichs, W. P. & Pellat, Ch. (eds.). Encyclopaedia of Islam. Volume VII: Mif–Naz</p>	<p>Հեղինակի պարզաբանումն ընդունելի է:</p>

		(2nd ed.). Leiden: E. J. Brill., 1993, pp. 263–268.		
75.	«Նվանելով Հայաստանը և Հարավային Կովկասի մյուս տարածքները՝ արաբները հիմնեցին Արմինիա անունով փոխարքայություն, որը ներառում էր Արևելյան Կասստանը, Ադվանքը և գրեթե ողջ Մեծ Հայքը» (էջ 142): Հարկ ենք համարում նկատել, որ երբ նշվում է Հայաստանը և Հարավային Կովկասի մյուս տարածքները, ստացվում է, որ աշխարհագրորեն 8-րդ դարում Հայաստանի տարածքը Հարավային Կովկասում էր:		Տարընթերցումից խուսափելու համար հանել ենք «մյուս» ցուցական դերանունը: Այսպես, «Հայաստանը և Հարավային Կովկասի տարածքները»:	Հեղինակի մոտեցումն ընդունելի է:
76.	«Դրանք արաբներին ստիպեցին փոխել վերաբերմունքը Հայաստանի նկատմամբ և ճանաչել նախարարների հողատիրական ժառանգական իրավունքները» (էջ 143): Արաբական խալիֆայությունը նշված ժամանակաշրջանում ոչ միշտ էր ճանաչում հայ նախարարների հողատիրական ժառանգական իրավունքը:	Դասագրքում գրվածը բանվ էլ չի ենթադրում արված դիտարկումը:		Հեղինակի պարզաբանումն ընդունելի է:
77.	Հարկ է նշել, որ Սբ Հռիփսիմեի և Չվարթնոցի եկեղեցիները կառուցել են Կոմիտաս Աղցեցի և Ներսես Գ Տայեցի կաթողիկոսները: Հետաքրքիր է, որ Չվարթնոցի տաճարի շինարարության համար գումար է տվել նաև Բյուզանդիայի կայսրը, որը մտերիմ էր Ներսես Գ Տայեցու հետ:		Ինչպես արդեն նշեցինք, դասագրքում Հռիփսիմեի տաճարի դեպքում սխալմունք կա, իսկ Չվարթնոցի դեպքում տեղեկությունը ճիշտ է:	Հեղինակի մոտեցումն ընդունելի է:
78.	«Ըստ որոշ հետազոտողների՝ ընդհանուր առմամբ Պավլիկյան շարժումը Հայաստանի համար երկու կարևոր ներդրում ունեցավ: Նախ՝ պատճառ դարձավ, որ Հայոց եկեղեցին վերափոխվի, և նրա հիմքերն ամրանան» (էջ 144): Հարկավոր է կոնկրետացնել՝ Հայոց եկեղեցում ինչը վերափոխվեց, որը նպաստեց նրա հիմքերի ամրացմանը:	Այս մասին գրել ենք վերևում:		Հեղինակի պարզաբանումն ընդունելի է:
79.	Պավլիկյաններին անգամ «փոքրիկ «հանրապետությունը»» կոչելը որքանով է հիմնավորված (էջ 144):	Ինչպես երևում է՝ ձևակերպումը չակերտների մեջ է: Իսկ հիմնավորված լինելը		Հեղինակի պարզաբանումն ընդունելի է:

		կարելի է տեսնել պավիկյանների մասին գրված նույնէջի տվյալներից:		
80.	Խոսելով հակաարաբական պայքարի մասին՝ նշվում է «Բսկ 850-851 թթ. տեղի ունեցավ» (Էջ 145): Տեղի ունեցավ, թե սկսվեց:	Տեղի ունեցավ:	Վրիպակ է: Պետք է լինի 850-855 թթ.:	Հեղինակի մոտեցումն ընդունելի է:
81.	«Հայաստանի ինքնավարության վերականգնումը» (Էջ 144-145) խորագրով ենթավերնագիրը շատ աղքատիկ է ներկայացված: Արդյունքում՝ անհասկանալի են մնում հեղինակի շարադրած 850-851թթ. հայերի բարձրացրած ապստամբության դրդապատճառները և դրան նախորդող ու հաջորդող իրադարձություններին վերաբերող մի շարք հարցերի պարզաբանումները: 850-855 թթ. ապստամբությունը միայն երկու նախադասությամբ է ներկայացված (Էջ 145): Պետք է ավելի մանրամասն խոսվեր, քանի որ 9-րդ դարում Հայոց պետականության վերականգնումը հիմնականում դրանով էր պայմանավորված:	Դասագրքում այդ մասին գրված է ոչ միայն 144-145-րդ էջերում, այլև 159-160-րդ էջերում: Խիստ վիճարկելի է 9-րդ դարում հայկական պետականության վերականգնումը վերագրել բացառապես 850-855 թվականների հակաարաբական ապստամբությանը, ինչպես պնդում է դիտարկման հեղինակը: Բայց Հայոց պետականության վերականգնման գործում 850-855 թթ. ապստամբությունը կարևորվել է դասագրքում. « 852 թ. խալիֆը գորավար Բուդայի հրամանատարությամբ Հայաստան ուղարկեց պատժիչ մեծաքանակ մի գորաբանակ, որը հետագա մի քանի տարիների ընթացքում կարողացավ ավերել բազմաթիվ գախառներ և ձերբակալել բազմաթիվ նախարարների, բայց, այնուամենայնիվ, չկարողացավ ճնշել ապստամբությունը: Արշավանքն ի վերջո ձախողվեց, և Հայաստանը կրկին վերականգնեց իր ներքին ինքնավարությունը: Բոլոր նախարարյալները կային օտար տիրապետությունը թողալիս և Հայաստանի անկախությունը վերականգնելու համար, ինչին ձեռնամուխ եղան Բագրատունիները» (Էջ 145):		Հեղինակի պարզաբանումն ընդունելի է:
82.	Ադնատված է ներկայացվել Մաշտոցի գործունեությունը: Հայերեն այբուբենի ստեղծման ամենակարևոր հատվածներն, ըստ էության, սովորողներին անձանոթ են մնացել (Էջ 148-149):	Խիստ սուբյեկտիվ դիտարկում... Այս մասին ասել եմ նաև վերևում: 148-149-րդ էջերում թեման բավականին մանրամասն է ներկայացված: Ավելին՝ 47-րդ		Հեղինակի պարզաբանումն ընդունելի է:

		<p>էջում գետեղված QR կոդի միջոցով հավելյալ տեղեկություններ են հասանելի:</p>		
<p>83.</p>	<p>Որոշ դեպքերում, պատմագրական երկերի կարևորությունը թերի է նշված, ինչպես Ղևոնդի աշխատությունը: Վերջինս իր նկարագրած դեպքերի մեծ մասին ժամանակակից է եղել, ինչը մեծ արժեք է հաղորդում նրա երկին: Մինչդեռ, հեղինակը համարում է, որ նա «<i>քննարկում (ընդգծումը-իսթ.) է օտար արշավանքների և արաբական տիրապետության շրջանի իրադարձությունները</i>» (էջ 150):</p>	<p>Չենք կարծում, որ պատմագրական երկերի կարևորությունը թերի է ներկայացված դասագրքում:</p> <p>Իսկ այն, որ պատմագիր Ղևոնդը «դեպքերի մեծ մասին ժամանակակից է եղել», բնավ չի հակասում դասագրքում գրվածին:</p> <p>Դասագրքում գրված է. «VIII դ. պատմագիր է Ղևոնդը», իսկ դա համադրելով «<i>քննարկում է օտար արշավանքների և արաբական տիրապետության շրջանի իրադարձությունները</i>» (էջ 150) ձևակերպման հետ՝ պարզ է, որ խոսքն իր ժամանակների մասին է նաև:</p>		<p>Խնդրո առարկա նախադասությունում «քննարկում» բառը փոխարինել «նկարագրում» բառով:</p>
<p>84.</p>	<p>Հայ եկեղեցական իրավունքի մեզ հասած հնագույն հուշարձաններից է Հովհաննես Օձնեցու կազմած «Կանոնագիրք Հայոց» (728 թ.)» (էջ 151): Անհրաժեշտ է նշել, որ Հովհան Գ Օձնեցին եղել է կաթողիկոս, քանի որ խոսքը վերաբերում է եկեղեցու կանոնագրքի ստեղծմանը:</p> <p>Հովհաննես Դրասխանակերտցուն հիշատակելիս հարկ է նշել, որ նա եղել է կաթողիկոս:</p>		<p>Էլեկտրոնային տարբերակում դրանք ավելացված են:</p>	<p>Հեղինակի մոտեցումն ընդունելի է:</p>
<p>85.</p>	<p>Միջնադարյան քաղաքների և այլ բնակավայրերի կառուցվածքի մասին դասագրքի տվյալները պատկերացում չեն տալիս այնտեղ ապրող մարդկանց կենսակերպի, զբաղմունքների, առօրեայի մասին:</p>	<p>Դասագրքի 171-172-րդ էջերում հնարավորինս ներկայացված են նշված տեղեկությունները և բավարար պատկերացումներ են տալիս քաղաքներում ապրող մարդկանց կենսակերպի, զբաղմունքների, առօրյայի մասին:</p> <p>Ուսուցչի օգնությամբ աշակերտները կարող են լրացուցիչ հետազոտություններ անել և այլ տեղեկությունների ևս ծանոթանալ:</p>		<p>Դիտարկումը տեղին է և օգտակար: Հեղինակին առաջարկում ենք հաշվի առնել:</p>
<p>86.</p>	<p>Դասագրքում, ճիշտ է, խաչքարերը համարվել են քանդակագործության նոր ճյուղ, սակայն հեղինակը չի նշել դրանց զարգացման առանձնահատկությունները, կապը Հայաստանի քաղաքական իրավիճակի հետ (էջ 155): Հայտնի է, որ խաչքարերին նախորդել են</p>	<p>Կարելի էր:</p> <p>Էջերի սահմանափակության պատճառով ավելին չենք գրել՝ առաջնորդվելով նախորդ դասագրքերի փոխանցած տեղեկատվությամբ:</p>		<p>Հեղինակի պարզաբանումն ընդունելի է:</p>

	<p>թևավոր խաչերը, որոնք դյուրաբեկ էին և հեշտությամբ կոտրվում էին արաբների կողմից: Արդյունքում խաչը դարձել հակարաբական պայքարի հիմնական խորհրդանիշը, փորագրվել քարերի վրա և աստիճանաբար վերածվել քանդակագործության ինքնուրույն ճյուղի: Շահեկան կլիներ մեջբերել Հովհան Գ Օձնեցի կաթողիկոսի սահմանած կանոնը խաչի վերաբերյալ:</p>			
<p>87.</p>	<p>Էջ 158-ի նկարը, իրո՞ք այդպես է՝ թագավոր և թագուհի:</p>	<p>Մերձողական ուղեցույցի մեջ բացատրված է, որ պատկերված են Գագիկ I արքան է և Կատրանիդե թագուհին: Ուղեցույցն ուսուցչին առաջարկվում է նկարը քննարկել թեմայի ավարտին (ինչպես բոլոր մյուս նկարների դեպքում):</p>		<p>Հեղինակի պարզաբանումն ընդունելի է:</p>
<p>88.</p>	<p>«Բյուզանդիայի կայսր Վասիլ I-ը և շտապեց ճանաչել Հայաստանի անկախությունը (էջ 160)»: Դեպքերին և իրադարձություններին առավել մոտ կանգնած պատմիչներն այս իրողության վերաբերյալ որևէ վկայություն չեն հաղորդում: Այն շրջանառության մեջ է դրվել ավելի ուշ շրջանում:</p>	<p>Խոսքը Հայաստանի անկախությունը ճանաչելու մասին է և ոչ Աշոտ I-ին ուղարկված թագի, ինչպես ամրագրված էր նախորդ դասագրքերում (դիցուք՝ Ա. Մելքոնյան, Է. Գանիեյան, Գ. Հարությունյան, Հ. Մուրադյան, Հայոց պատմություն: 7-րդ դաս.: Դասագիրք հանրակրթական հիմնական դպրոցի համար, Ե., Չանգակ, 2019, էջ 79, որտեղ գրված է. «Այդ փաստը խիստ անհանգստացնում է Բյուզանդիային, ուստի Աշոտին թագ և արքայական հանդերձանք է ուղարկում նաև Վասիլ I-ը»):</p>		<p>Հեղինակի պարզաբանումն ընդունելի է:</p>
<p>89.</p>	<p>Սմբատ Ա-ի կառավարման տարիները նշված չեն, Աբաս Բագրատունու կառավարման մասին առհասարակ խոսք չկա (էջ 161): Նշված է. «Սմբատ II (977-990), Գագիկ I (990-1020) թագավորների օրոք երկիրը կենտրոնացել էր ավերված տնտեսության վերականգնման վրա» (էջ 162): Թե ինչու էր տնտեսությունն ավերվել, անհայտ է մնում: Գագիկ I-ի ներքին և արտաքին քաղաքականությունն անհրաժեշտ է ամբողջական ներկայացնել:</p>	<p>Անհրաժեշտ չենք համարել բոլոր գահակալների գահակալման տարեթվերը նշել. երբեմն պատմություն իմանալը շփոթում են տարեթվերն անգիր անելու հետ: Բայց և մնացած գահակալների թվերից ելնելով կարելի է նաև տրամաբանել: Իսկ եթե ուսուցիչն անհրաժեշտ համարի այդ տարեթվերը ևս ֆիքսել, կարող են առանձին փոքրիկ հետազոտություն անել և պարզել դա:</p>		<p>Հեղինակի պարզաբանումն ընդունելի է:</p>

		<p>Իսկ «երկիրը կենտրոնացել էր ավերված տնտեսության վերականգնման վրա» արտահայտությունը բացատրվում է, մասամբ էլ տրամաբանորեն բխում է հաջորդ տողերից, որտեղ անդրադարձ կա արաբների հետ ունեցած ռազմական բախմանը (987 թ. Դվինի գրավումը Սմբատ II-ի կողմից կամ Գագիկ արքայի ռազմական բախումները արաբական ամիրայությունների հետ), ինչպես նաև ավատատիրական մասնատվածությանը:</p> <p>Իսկ Գագիկ I-ի մասին գրված է այնքան, որքան անհրաժեշտ է 7-րդ դասարանի աշակերտի համար: Հակառակ դեպքում 10-րդ դասարանում ինչի՞ մասին պետք է գրվի: Այսինքն՝ նկատի ենք ունեցել և այն, որ այս նույն թեմաները, ըստ չափորոշչի պահանջների, աշակերտներն ուսումնասիրելու են նաև 10-րդ դասարանում:</p>		
<p>90.</p>	<p>Դասագրքում հանդիպում են մի շարք տվյալներ, եզրահանգումներ, որոնք փաստված չեն աղբյուրների կողմից և անհասկանալի է, թե ինչ մեթոդների ու տեսությունների շնորհիվ է հեղինակը հասել դրանց: Նման մի օրինակ է թոնդրակեցիներին որպես սոցիալական վերափոխիչներ ներկայացնելը. «Թոնդրակեցիների մասին պահպանված տեղեկություններից երևում է, որ նրանք ոչ միայն լավ կազմակերպված կրոնական համայնք էին, այլև սոցիալական վերափոխիչների և սպասամբների տպավորիչ խումբ» (էջ 166):</p>	<p>Թոնդրակեցիների մասին բազմաթիվ հետազոտություններ կան, որոնք վկայում են դասագրքի մեջ տեղ գտածը: Տե՛ս Ս. Տ. Մելիք-Քախչյան, Հայաստանը VII-IX դարերում, Ե., 1968: Օգտագործված մյուս գրքերին կարող եք ծանոթանալ Մեթոդական ուղեցույցի 105-106-րդ էջերում և վերջում զետեղված գրականության ցանկում:</p> <p>Իսկ ընդհանրապես՝ Թոնդրակյաններին որպես սոցիալական բարեփոխիչներ ներկայացնելու հիմնավորումը կարելի է վեր հանել նրանց ուսմունքի և հայ հասարակության վրա ունեցած ազդեցության միջոցով: Դիցուք՝ եկեղեցական աստիճանակարգի</p>		<p>Հեղինակի պարզաբանումն ընդունելի է:</p>

		<p>քննադատության դիտանկյունից (Թոնդրակյանները քննադատում էին հաստատված հայկական եկեղեցին և նրա հիերարխիան, որը նրանք համարում էին կոռումպացված և կտրված Քրիստոսի ուսմունքներից): Կամ սոցիալական հավասարության դիտանկյունից (Թոնդրակյանները հանդես էին գալիս սոցիալական հավասարության և համայնական կյանքի օգտին: Նրանք մերժում էին միջնադարյան հայ հասարակության ինչպես աշխարհիկ, այնպես էլ կրոնական հաստատություններում առկա սոցիալական աստիճանակարգը): Միով բանիվ՝ Թոնդրակյաններին որպես սոցիալական բարեփոխիչներ բնութագրելը հիմնված է նրանց գործողությունների, համոզմունքների և միջնադարյան հայ հասարակության համատեքստի վերլուծության վրա:</p>		
<p>91.</p>	<p>Մի շարք բառեր և տերմիններ ունեն բացատրության կարիք՝ արտահոսք (էջ 14), կլիմայական հակադրություններ (էջ 15), տարրալուծվել (էջ 132) և այլն:</p>	<p>Որոշ բացատրության կարիք ունեցող հասկացությունները քննարկման թեմաներ են և դրանց միջոցով կարելի է միջառարկայական քննարկումներ կազմակերպել՝ հայոց պատմություն-հայոց լեզու, հայոց պատմություն-աշխարհագրություն և այլն: Բացի այդ, դասագրքի բառարանում տեղ են գտել առավելապես եզրույթները: 7-րդ դասարանցիներին անձանոթ բոլոր հայերեն բառերը չեն կարող բացատրվել պատմության դասագրքում, բայց նման բառերի որոշ քանակն անհրաժեշտ է աշակերտների լեզուն զարգացնելու համար: Պետք չէ մոռանալ նաև ուսուցչի ներկայությունը:</p>		<p>Հեղինակի պարզաբանումն ընդունելի է:</p>
<p>ԱՆՀԱԶՈՂ ԶԵՎԱԿԵՐՊՈՒՄՆԵՐ</p>				

<p>92.</p>	<p>«Ո՞ր իրավիճակում են արդեն հանդիպել այդ իրադարձությանը կամ թեմային» (Էջ 9): «Ո՞ր իրավիճակում» ձևակերպումը կարելի է փոխել:</p> <p>«Վասպուրականի լեռնաշղթան սկիզբ է առնում Թոնդրակ լեռից և լեռնաշխարհը բաժանում է արևելյան և արևմտյան հատվածների» (Էջ 13): Քանի որ այն սկիզբ է առնում Թոնդրակ լեռից և ձգվում հարավ, գոնե նշվեր՝ բաժանում է հարավարևելյան և հարավարևմտյան մասերի: Հակառակ դեպքում, օրինակ՝ Արարատյան դաշտը չի բաժանվում արևելյան ու արևմտյան մասերի:</p>	<p>Սուբյեկտիվ դիտարկում է: Իսկ ինչո՞ւ չի կարող այդ ձևակերպումը լինել՝ մնում է անհայտ:</p> <p>Վասպուրականի (Կոտուրի) լեռնաշխարհի մասին գրված է. «Սկսվում է Մասիսից հարավ, Ծաղկունյաց լեռների Թոնդրակ գագաթից և միջօրեականի ուղղությամբ ձգվում է դեպի հարավ՝ մինչև Մուրովա լեռնագագաթը: Արևելքից եզերելով Վանա լճի ավազանը՝ այժմ կազմում է Թուրքիայի և Պարսկաստանի սահմանը: (տե՛ս Թ. Խ. Հակոբյան, Ստ. Տ. Մելիք-Բախչյան, Հ. Խ. Բարսեղյան, Հայաստանի և հարակից շրջանների տեղանունների բառարան, Երևանի Համալսարանի Հրատարակչություն, Հ. 3, Ե., 1991, էջ 229): Մեջբերված հատվածի ընդգծումներն իմն են:</p> <p>Եվ այնպես չէ, որ Հայկական պար լեռնաշղթան ճշգրտորեն, ուղիղ գծով է բաժանում Հայկական լեռնաշխարհը հյուսիսի և հարավի:</p>		<p>Հեղինակի պարզաբանումն ընդունելի է:</p>
<p>93.</p>	<p>բաշխիչ կետ» (Էջ 21):</p>	<p>Այս մասին գրել եմ վերևում: Կրկնություն է:</p>		<p>Հեղինակի պարզաբանումն ընդունելի է:</p>
<p>94.</p>	<p>Որոշ նախադասություններ անհասկանալի են, օրինակ. «Իսկ թույլ տված սխալները մեզ հիշեցնում են, որ կառավարիչները, իշխանությունը և վերահսկողությունը պահպանելու համար, պետք է հաջողությամբ հաղթահարեն բազմաթիվ տարբեր խնդիրներ» (Էջ 120):</p>	<p>Անհասկանալի է, թե ինչն է անհասկանալի...</p>		<p>«Բազմաթիվ» կամ «տարբեր» բառերից մեկը հանել:</p>
<p>95.</p>	<p>Թոնդրակյանների մասին նշված է. «Նրանք պնդում էին, որ վերադառնում են քրիստոնեության ակունքներին՝ մերժելով եկեղեցիները, եկեղեցական աստիճանակարգը, եկեղեցական խորհուրդները, պատարագը և այլն: Իդենց</p>	<p>Սուբյեկտիվ դիտարկում:</p>		<p>Հեղինակի պարզաբանումն ընդունելի է:</p>

	<p>մոտեցումները հիմնավորում էին նրանով, որ այդ սանձն սանհայտ էր Քրիստոսին և նրա աշակերտներին» (Էջ 166): Այստեղ կիրառված բազմիմաստ «անհայտ» բառը չի համապատասխանում համատեքստին և շփոթության տեղիք չի տալիս:</p>	<p>«Ամենն անհայտ էր» ձևակերպումը բնավ էլ անհամապատասխան չէ համատեքստին և շփոթության տեղիք չի տալիս:</p>		
<p>96.</p>	<p>Երբեմն, սխալ բառերն ու արտահայտությունները հասնում են ծայրահեղ դրսևորումների. «Հայ պատմիչները, ի թիվս այլ բաների, քննադատում էին հայկական աշխարհիկ ավանդույթները, հոգևորականների սանձարձակ բարքերը, ժամանցն ու կենցաղը» (Էջ 173): Այստեղ օգտագործված «սանձարձակ բարքերը» արտահայտությունից կարելի է ենթադրել, որ բոլոր հոգևորականները նման վարք են ունեցել, ինչը բնականաբար սխալ է և մոլորեցնող: Առավել ևս, որ պատմիչների մեծ մասը հոգևորական էր: Առհասարակ, ո՞ր աղբյուրում է գրված, որ ունեին սանձարձակ բարքեր. եթե նման աղբյուր/ներ չկան, հետևաբար հեղինակն ուղղակի հորինել է այդ բնորոշումը:</p>	<p>Մուբյեկտիվ դիտարկում:</p> <p>«Սանձարձակ բարքերը» արտահայտությունից բնավ էլ ենթադրելի չէ, որ «բոլոր հոգևորականներն են» նման վարք ունեցել:</p> <p>Իսկ դրանում կարող էք համոզվել՝ Մովսես Խորենացու «Ռդբից» մինչև Արիստակես Լաստիվերցի կարդալով:</p>		<p>Հեղինակի պարզաբանումն ընդունելի է:</p>
<p>97.</p>	<p>Անհասկանալի է թե ինչ է նշանակում աշխույժ պատմություն. «Ուշագրավ է մանավանդ երկրորդ մասը, որտեղ նրա պատմությունը շատ ավելի աշխույժ է, քան նախորդ բաժնում», առավել ևս, որ հաջորդ նախադասության մեջ մանրամասն նկարագրել է բուն իմաստը(Էջ 173):</p>	<p>Ինչպես «աշխույժ» բառն է հուշում, Դրասխանակերտիցին պատմությունը շարադրում է ավելի աշխույժ ոճով, քանիոր գրքի երկրորդ մասը վերաբերում է անմիջապես իր ապրած ժամանակաշրջանին, Դրասխանակերտցու նկարագրություններ ավելի կենդանի են, ավելի աշխույժ ոճով: Մեջբերված հատվածից հետո դասագրքում գրված է. «Պատմիչն իրադարձություններն արձանագրում է մեծ ուշադրությամբ, մանրությունների հաշվառմամբ»: Այս նախադասությունը պարզաբանում է նաև՝ ինչ ասել է «աշխուժություն»:</p>		<p>Թյուրըմբռնումներ ից խուսափելու համար առաջարկում ենք փոխել «աշխույժ» բառը:</p>
<p>98.</p>	<p>Գրիգոր Նարեկացու «Մատյան ողբերգութեան» երկի մասին նշված է. «Նարեկացու ամենահայտնի գործը «Մատյան ողբերգության» պոեմն է, որը ժողովրդի մեջ հայտնի է «Նարեկ» անվամբ: Այն աղոթք-</p>	<p>Մուբյեկտիվ դիտարկում:</p> <p>Մանավանդ որ դասագրքում գրվածը բնավ էլ ուրիշ բան չի ասում, քան դիտարկման մեջ</p>		<p>Թյուրըմբռնումներ ից խուսափելու համար առաջարկում ենք</p>

	<p>բանաստեղծությունների ժողովածու է, որը հայտնի է ամբողջ աշխարհում և թարգմանվել է աշխարհի բազմաթիվ լեզուներով» (էջ 174): Գրիգոր Նարեկացին իր «Մատենանոցի տպագրության» բնագրում այն անվանում է «ողբերի մատյան, ողբերի երգ»: Խորհրդային ժամանակաշրջանում այն պոեմ էին անվանում, քանի որ արգելված էր աղոթագրքի հրատարակությունն ու տարծումը: Այսօր նարեկացիագետներն ապացուցել են, որ «Մատենանոց» չի պատկանում մի ժանրի, քանի որ դրանում ներհյուսված են բանաստեղծական տարբեր ժանրեր՝ ներբող, աստվածաբանական քերթվածքներ, սաղմոսներ, ստուգաբանություններ, մեկնություններ: Ուստի պոեմ անվանելը տեղին չէ, փոխարենը կարելի է նշել «երկ» բառը:</p>	<p>է նշվում: Կրկնենք մեկ անգամ էլ, գրված է ոչ միայն «պոեմ է», այլև «աղոթք-բանաստեղծություններ ժողովածու է»: Պատմության դասագրքի մեջ ամրագրել ենք այնպես, ինչպես մինչ այժմ ամրագրված է Հայ գրականության դասագրքերում: Փոփոխություն անելու համար անհրաժեշտ կլիներ ավելի ծավալուն նկարագրություն տալ, սակայն գրական ընդունված սեռերի և ժանրերի վիճարկումը կամ վերաբժնորումը 7-րդ դասարանի Հայոց պատմության դասագրքի խնդիրներից դուրս է:</p>		<p>խնդրո առարկա նախադասության «պոեմ» բառը փոխարինել «երկ» բառով:</p>
<p>ՄԽԱԼ ՁԵՎԱԿԵՐՊՈՒՄՆԵՐ</p>				
<p>99.</p>	<p>Հայկական լեռնաշխարհի բացատրության մեջ Փոքրասիականին գուգահեռ՝ «Անատոլիական» բարձրավանդակ թուրքական տերմինի առկայությունը (էջ 12):</p>	<p>Սուբյեկտիվ դիտարկում: Դասագրքում Փոքր Ասիայի դիմաց փակագծերում գրել ենք դրա ժամանակակից եզրույթը՝ Անատոլիա: Մի բան, որը բազմիցս կարող էք հանդիպել Հայոց պատմության նոր ակադեմիական հատորներում: Հարց է առաջանում՝ այդ դեպքում ինչո՞ւ են ակադեմիական հատորներում կիրառում Անատոլիա բառը, բայց նկատողություն անում դասագրքում կիրառվածին: Ընդ որում՝ այն դեպքում, երբ դասագրքում դա նշելով հստակ ակնարկվում է, որ Անատոլիան հենց Փոքր Ասիան է, և հարկավոր է չշփոթել այն թուրք գիտնականների կողմից հրամցվող <i>Արևելյան Անատոլիա</i> եզրույթի հետ, որը կիրառվում է <i>Հայկական լեռնաշխարհ</i> եզրույթի փոխարեն: Ուսուցիչն անգամ կարող է սա քննարկման թեմա դարձնել:</p>		<p>Հեղինակի պարզաբանումն ընդունելի է:</p>
<p>100.</p>	<p>«Արարատյան դաշտում են գտնվել Հայաստանի գրեթե բոլոր մայրաքաղաքները» (էջ 13): Արարատյան դաշտում միայն 5-ն են գտնվել՝ Արտաշատ,</p>		<p>Վրիպակ է: Ուղղվել է այսպես. «պատմական</p>	<p>Հեղինակի մոտեցումն ընդունելի է:</p>

	<p>Վաղարշապատ, Դվին, Երևան, գուցե նաև Արմավիրը, իսկ մյուսները՝ Երվանդաշատը, Կարսը, Անին, Երագգավորսը, Բագարանը, դրանք Շիրակի դաշտում են, իսկ Տիգրանակերտն Աղձնիք, Վանը Վասպուրական նահանգներում են: Ճիշտ կլինե՞ր Արարատյան դաշտի փոխարեն տալ կամ Այրարատ նահանգ, կամ նշել մայրաքաղաքների մի մասն էր գտնվում Արարատյան դաշտում:</p>		<p>մայրաքաղաքներից Արմավիրը, Երվանդաշատը, Արտաշատը, Վաղարշապատը, Դվինը»:</p>	
<p>101.</p>	<p>«<i>Լճերից միայն Սևանի ջրերն են, որ քաղցրահամ են և հարուստ ձկնային պաշարներով</i>» (էջ 14): Պետք է նշվեր գոնե ներկայացվածներից, այլապես Չըլդրը ևս քացրահամ է:</p>	<p>Այստեղ բավարարվել ենք նշվածով, քանի որ դրանից առաջ հստակ գրել ենք, որ «Իրենց մեծությամբ և նշանակությամբ առանձնանում են Ուրմիո (Կապուտան), Վանա (Բզնունյաց) և Սևանա (Գեղամա) լճերը»: Իսկ դա նշանակում է, որ լճերից ասելով՝ նկատի ունենք հենց վերոհիշյալ երեք լճերը («<i>Լճերից միայն Սևանի ջրերն են, որ քաղցրահամ են և հարուստ ձկնային պաշարներով</i>», էջ 14): Ինչպես տեսնում ենք, ակնհայտ է, որ խոսքը երեք լճերի մասին է և թյուրմբռնման տեղիք չի տալիս:</p>		<p>Հեղինակի պարզաբանումն ընդունելի է:</p>
<p>102.</p>	<p>Սփյուռքներ (էջ 16):</p>	<p>Այս մասին գրել ենք վերևում:</p>		<p>Նախադասությունը վերախմբագրել՝ գրելով «..., որոնք հավաքականորեն անվանվում են սփյուռք»:</p>
<p>103.</p>	<p>Տիգրան Մեծի ժամանակ և մ.թ.ա. 30 թ. Հռոմը կայսրություն չէր (էջ 92):</p>	<p>Այստեղ չեմ նշել կայսրությունն այն իմաստով, ինչ իմաստով նկատի են առնում Հռոմը՝ առաջին կայսր Օգոստոսի կառավարումից սկսած մինչև 476 թվականն ընկած Հին Հռոմի պատմությունը բնութագրելու համար: Այն, որ շփոթ չկա երևում է նաև մի քանի անգամ կիրառված «<i>Հանրապետական Հռոմ</i>» ձևակերպման առկայությունից (էջ 78, 89 և այլն): «Կայսրություն» եզրույթն այս համատեքստում ավելի շատ վերաբերում է</p>		<p>Թյուրմբռնումներ ից խուսափելու համար առաջարկում ենք «կայսրություն» չգրել:</p>

		<p>տարածքային ընդլայնմանը, քան թե կառավարման կենտրոնացված և ավտոկրատական բնույթին: Այն է՝ նկատի չունենք դրա փաստացի անվանումը, այլ այն, որ Հոռմը, թեպետ այդ ժամանակ կոչվում էր Հանրապետություն, բայց արդեն կայսրություն էր (կայսրության սահմանումը. «Կայսրությունը քաղաքական միավոր է, որը կազմված է մի քանի տարածքներից և ժողովուրդներից, որոնք «սովորաբար միավորված են նվաճումների արդյունքում և բաժանված գերիշխող կենտրոնի և ենթակա ծայրամասերի միջև»: Իսկ Հոռմը նշված ժամանակաշրջանում արդեն իսկ այդպիսին էր): «Կայսրություն» եզրույթով նկարագրել ենք հարևանների հետ նրա հարաբերությունների բնույթը, նվաճողական քաղաքականության արդյունքում ձևավորված աշխարհաքաղաքական դերը և այլն:</p>		
<p>104.</p>	<p>Հեղինակը Հայ Առաքելական եկեղեցու հիմնադիր է համարում Տրդատ Գ Մեծ (298–330) արքան (Էջ 111): Հայ առաքելական եկեղեցին, ինչպես արդեն նշվեց, առաքայախիմն է, ուստի Տրդատ Գ-ը չի կարող նրա հիմնադիրը լինել: Կարծում ենք, որ այս ձևակերպման մեջ բովանդակային, պատմագիտական անճշտություն կա: Եկեղեցին, ինչպես Հայաստանում, այնպես էլ Հռոմեական կայսրությունում հոգևոր հաստատություն էր/է և այն, ըստ էության, չէր կարող հիմնադրել աշխարհիկ իշխանության ներկայացուցիչը, այն է՝ Տրդատ III-ը կամ Հռոմի կայսրը: Իսնդիրը զուտ կրոնական նարատիվի մեջ չէ, այլ կոնկրետ պատմագիտական, աղբյուրագիտական տրամաբանության մեջ: Օրինակ, որպես Կաթողիկ եկեղեցու հիմնադիր համարվում է Հիսուս Քրիստոսը: Հակասությունն արդեն իսկ անվանման և ձևակերպման մեջ է: Եթե ասում ենք Հայ Առաքելական եկեղեցի, հետևաբար արդեն իսկ</p>		<p>Իրականում նկատի ունենք Հայ Առաքելական եկեղեցու պետականորեն հաստատվելը: Բայց թյուրըմբռնումից խուսափելու համար այդ հատվածը վերաձևակերպել ենք այսպես. «պաշտոնապես հաստատվեց Հայ Առաքելական Եկեղեցին»</p>	<p>Հեղինակի մոտեցումն ընդունելի է:</p>

	հաստատում ենք, որ եկեղեցին հիմնադրվել է առաքյալների կողմից:			
105.	Պապ թագավորը չէր կարող վերադառնալ Բյուզանդիայից (Էջ 118), քանի որ այս կայսրության սկիզբը համարվում է Հռոմեական կայսրության բաժանումը՝ 395 թ.:		Վրիպակ է: Պետք է լինի Հռոմից:	Հեղինակի մոտեցումն ընդունելի է:
106.	Էջ 131-ում հայ սկանավոր պատմիչ Ղազար Փարպեցու նկարի փոխարեն սխալմամբ տեղ է գտել Սբ. Մարկոս Ավետարանիչի պատկերը: Ըստ երևույթին, դասագրքի հեղինակը չի նկատել նկարի վրա հստակ ընթերցվող գրությունը:		Վրիպակ է: Էլեկտրոնային տարբերակում արդեն ուղղված է:	Հեղինակի մոտեցումն ընդունելի է:
107.	Հեղինակը Սբ. Հռիփսիմն տաճարի կառուցման ավարտը կապում է հայ-արաբական 652 թ. պայմանագրի հետ (Էջ 141): Մինչդեռ, ըստ Սերեոսի, տաճարը կառուցվել է Կոմիտաս Աղցեցի կաթողիկոսի աթոռակալման ժամանակ (615-628 թթ.)՝ Պարսից Խոսրով Փարվեզ արքայի կառավարման 28-րդ տարում՝ այսինքն 618 թ.: Իսկ այդ ժամանակ, ինչպես հայտնի է, Արաբական խալիֆայությունը չէր ձևավորվել:		Վրիպակ է: Սբ. Հռիփսիմն տաճարի դեպքում սխալմունք կա, իսկ Չվարթնոցի դեպքում տեղեկությունը ճիշտ է:	Հեղինակի մոտեցումն ընդունելի է:
ԱՌԱՋԱԴՐԱՆՔՆԵՐԻ ՄԱՍԻՆ				
108.	Էջ 36-ում բերված է մեջբերում Արչիբալդ Մեյսից և վերջում ներառված է առաջադրանք «ՎԵՐԼՈՒԾԻՐ ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆԸ Ինչպե՞ս հնարավոր եղավ վերձանել վանքան սեպագրերը» (Էջ 36): Արդյոք համարժե՞ք է 7-րդ դասարանի համար նման առաջադրանքը: Առհասարակ ամբողջ գրքում այս ձևաչափի առաջադրանքները և հարցերը ձևակերպված են խրթին:	Իսկ ինչո՞ւ ոչ: Մանավանդ որ ներկայացված տեղեկությունը դրա հնարավորությունը տալիս է: Համաձայն չենք, որ հարցադրումները խրթին են: Թեև ներկայացված հատվածում որոշ մանրամասնություններ կան, սակայն այդ մանրամասնությունները չեզոք և, այսպես ասած, զուտ գիտական մանրամասնություններ չեն: Դրանք այնպիսին են, որ կարող են խթանել աշակերտների հետաքրքրասիրությունը և կարծես համեմունք դառնալով մղել նրանց մանրամասնությունների նկատմամբ ուշադրության : Բանն այն է, որ խոսքը «կրկնվող անեծքի բանաձևի» միջոցով		Հեղինակի պարզաբանումն ընդունելի է:

		<p>վանյան սեպագրերի վերծանման մասին է: Բացի այդ նրանք պատկերացում են կազմում հնագետների և ընդհանրապես գիտնականների աշխատանքի մասին:</p>		
<p>109.</p>	<p><i>«Փոփոխություն և շարունակականություն»</i> խորագրի տակ հեղինակը ներառել է առաջադրանք. «Պատկերացրե՛ք, որ դուք Վանի թագավորության արքաներից մեկն եք: Ընտրե՛ք այս բաժնում քննարկված խնդիրներից մեկը, որի ուղղությամբ վերափոխություններ եք ծրագրել: Պատրաստե՛ք պատասառ, որով կհիմնավորեք ձեր ձեռնարկած վերափոխությունների դրական և հեռանկարային լինելը: Ի՞նչ եք կարծում, հնարավո՞ր է, որ այդ ժամանակներում վերափոխությունները դրական ազդեցություն ունենային հասարակության բոլոր շերտերի համար (յուրաքանչյուր շերտի համար հիմնավորեք առանձին)» (էջ 38): Նույնը՝ էջ 63-ում ներառված առաջադրանքի վերաբերյալ:</p> <ul style="list-style-type: none"> • Նախ, դժվար է հասկանալ, թե ի՞նչ կապ ունի տվյալ առաջադրանքը «Փոփոխություն և շարունակականություն» հասկացության հետ: Երկրորդ, կարծում ենք՝ այս դեպքում ևս առաջադրանքի ձևակերպումը խրթին է, ոչ հստակ, հատկապես, երբ այն նախատեսված է 7-րդ դասարանի սովորողի համար, որը նոր է սկսում հայոց պատմության դասընթաց: • <i>«Ինչո՞վ կբացատրես այն, որ սպաստամբաժ Հայաստանը նվաճելու համար Դարեհ I-ը ստիպված է լինում իր զորավարներ Դադարշիշի և Վոհումիսայի միջոցով 5 նակաստամարտ տալ: Արդյո՞ք դրանից կարելի է եզրակացնել, որ նա Հայաստանին հնազանդեցրել է: Փաստարկի՞ր և հիմնավորի՞ր դասանյութի օգնությամբ»</i> (էջ 58): Հարցադրումն իր մեջ ուղղորդում է պարունակում, ինչն ակնհայտորեն կարող է սովորողին հանգեցնել արդեն կանխորոշված կարծիքի: • <i>«Դասընկերոջ հետ վերանայե՛ք Երվանդակյան Հայաստանի թագավորության սոցիալական կարգը և</i> 	<p>Քանի որ կից ներկայացվող դիտարկումները նույնաբնույթ են, ստորև մի քանի շեշտադրումներով փորձենք ցույց տալ մեր անհամաձայնությունը և ներկայացվածի սուբյեկտիվ կամ միակողմանի լինելը:</p> <p>Մի ընդհանուր բան կարելի է նկատել դիտարկումների առնչությամբ. դրանք հիմնականում գնահատողական բնույթի, կարծիքի վրա հիմնված դիտարկումներ են, որոնց կարելի է հեշտությամբ առարկել հակառակ կարծիքներ ներկայացնելով: Այսինքն՝ ստացվում է կարծիքն ընդդեմ կարծիքի, որտեղ ոչ ոք դատավորի գործառույթ չի կարող ստանձնել: Նկատառումների մեծ մասին նույնիսկ չափազանց հեշտ է հակաճանաչել:</p> <p>Վերափոխությունների հիմնավորման առաջադրանքին վերաբերող նկատառման առնչությամբ ասենք, որ այն միանգամայն տեսանելի կապ ունի <i>«փոփոխություն և շարունակականություն»</i> հասկացության հետ: Այդ կապը տեսանելի է անգամ ինքնին «վերափոխություն» հղացքը սահմանելիս. չէ՞ որ ցանկացած վերափոխություն առկա համակարգում փոփոխություններ ներմուծելու գործողություն է: Այսպիսով ակնհայտ է «փոփոխություն» հասկացության հետ կապը, իսկ «շարունակականություն» հասկացությանը հանգեցնում է անգամ հարցի մեջ առկա ձևակերպումը. պետք է հիմնավորել</p>		<p>Առաջարկում ենք դիտարկումները հաշվի առնելով խմբագրել տեքստը:</p>

<p>կազմե՞ք բուրգի գծապատկեր» (Էջ 69): Ի՞նչ ասել է վերանայել սոցիալական կարգը: Արդյոք 7-րդ դասարանի պատմության դասընթացը նոր սովորել սկսող աշակերտը կարող է հասկանալ տվյալ առաջադրանքը:</p> <ul style="list-style-type: none"> • «Պատկերացրո՛ւ՝ դու Հայաստան վերադարձած արքայազն Տիգրանն ես: Հայոց գահին հաստատվելու, ինչպես նաև Հայաստանի դիրքերն ամրապնդելու համար խիստ անհրաժեշտ է դաշինք կնքել Պոնտոսի հետ: Ավելին՝ դաշինքը պետք է ամրագրվի նաև Պոնտոսի արքայի աղջկա հետ քո ամուսնությամբ, թեպետ դու արդեն ունես քո ընտրյալը: Ինչպե՞ս կբացատրես քո ընտրյալին ստեղծված իրավիճակը» (Էջ 83): Հարկ ենք համարում նշել, որ սույն առաջադրանքը որևէ կապ չունի պատմական մտածողության «պատճառ և հետևանք» հասկացույթի հետ: Այն ենթադրում է վերլուծել և վերհանել որևէ իրադարձության, գործընթացի պատճառները տարբեր տեսանկյուններից՝ քաղաքական, տնտեսական, մշակութային, կրոնական, անձնական, կարճաժամկետ, միջնաժամկետ, երկարաժամկետ, ներքին, արտաքին և այլն: Սույն առաջադրանքը որևէ կերպ չի վերաբերում այդ հասկացույթին: Նույնը հարկ է նշել «Պատճառ և հետևանք» խորագրի տակ եղած առաջադրանքների մասին: Մասնավորապես էջ 88 և այլն: Եթե այս առաջադրանքն իրենից ենթադրում է այլընտրանքային պատմություն, այլընտրանքային պատմական սցենարներ, ապա հարկ ենք համարում նշել, որ այն կարող է գուտ որպես օժանդակ մոտեցում դիտարկվել պատճառների և հետևանքների վերլուծության համար: Եթե առկա են այն հիմնական մոտեցումները, որոնք ուղիղ վերաբերում են պատճառների ու հետևանքների վերլուծությանը, ապա հարկ է դրանք դիտարկել տարբեր տեսանկյուններից՝ քաղաքական, տնտեսական, կրոնական, մշակութային, բնակլիմայական և այլն, կամ բաժանել կատեգորիաների՝ կարճաժամկետ, 	<p>վերափոխությունների հեռանկարային լինելը: Սովորողները պետք է սովորեն ուշադիր լինել բառերի ու կառուցվածքների նկատմամբ, օգտվել դրանցից, կիրառել դրանց նշանակությունները: Եվ սա հումանիտար կրթության կարևոր խնդիրներից է: Վերափոխությունների հեռանկարային լինելը նշանակում է ապագայի մասին մտահոգություն, ձեռք բերված արդյունքները շարունակական դարձնելու մտահոգություն, և այս նշանակություններին դժվար չէ հասնելն ուսուցչի աջակցությամբ, քննարկման միջավայրի ձևավորմամբ. աշակերտներն այնքան ինքնուրույն, չկաղապարված մտքեր կարող են ունենալ, որոնք մենք չենք կարող անգամ երևակայել, մանավանդ որ սովոր ենք անընդհատ իջեցնելու նշանդերը՝ իբրև թե համապատասխանեցնելու դրանք սովորողների մակարդակին, բայց իրականում համապատասխանեցնելով մեր կաղապարված մտքին:</p> <p>Դարեհի՝ ճակատամարտ տալուն վերաբերող հարցի առնչությամբ արված նկատառումը և ս միակողմանի մեկնաբանություն է ընդամենը: Հեշտությամբ կարելի առարկել, որ դասագրքի հարցին կարելի է ինչպես այո պատասխանել, այնպես էլ ոչ:</p> <p>Երվանդական Հայաստանի սոցիալական կյանքը վերանայելու հարցը կարելի է անգամ խաղարկային ձևով ընկալել. դա կենթադրի պատկերացնել առկա բուրգը, ապա փորձել հետուառաջ անել դրա մակարդակները, մեկնաբանել այդ</p>		
--	--	--	--

<p>միջնաժամկետ և երկարաժամկետ պատճառներ, ներքին ու արտաքին: Պատճառների ու հետևանքների վերլուծության այս ամբողջ համակարգին դասագրքում հիմնականում անդրադարձ չկա և այդ հասկացույթը բոլոր տեղերում ձևակերպել այլընտրաքային պատմության տրամաբանության մեջ, այն էլ ոչ հստակ ձևակերպված, չի կարող սովորողի մոտ զարգացնել այս կարողությունները:</p> <p>Պատմական մտածողության 6 հասկացույթների մասին առավել մանրամասն տե՛ս, The Big Six: Historical Thinking Concepts, Peter Seixas, Tom Morton. Nelson Education, Toronto, ON (2013):</p> <ul style="list-style-type: none"> • Ա4 Պատճառ և հետևանք <i>Պատկերասրտի՝ դու Հայաստան վերադարձած արքայազն Տիգրանն ես: Հայոց գահին հաստատվելու, ինչպես նաև Հայաստանի դիրքերն ամրապնդելու համար խիստ անհրաժեշտ է դաշինք կնքել Պոնտոսի հետ: Ավելին՝ դաշինքը պետք է ամրագրվի նաև Պոնտոսի արքայի աղջկա հետ քո ամուսնությամբ, թեպետ դու արդեն ունես քո ընտրյալը: Ինչպե՞ս կբացատրես քո ընտրյալին ստեղծված իրավիճակը» (Էջ 83): Վերոհիշյալ հարցադրումով հեղինակը ի՞նչ է ուզում սովորեցնել աշակերտին:</i> • «Հայոց պատմության ամենասարմատական իրադարձություններից է քրիստոնեության ընդունումը, որով Հայաստանը, հրաժարվելով իր հեթանոսական անցյալից, հակադրվեց և առանձնացավ թե՛ Արևմուտքից (Հռոմ), թե՛ Արևելքից (Բյուզանդիա): Այսօր ևս հայության համար հույժ կարևոր է քրիստոնեությունը՝ իբրև ազգային անցյալի անքակտելի մաս, դարձնելով ձևավորված սոցիալ-մշակութային ժառանգություն և (շարունակի՛ր ինքդ)» (Էջ 113): Կարծում ենք, որ մանկավարժական տեսանկյունից կոպիտ սխալ է սովորողին նման ձևաչափով առաջադրանք տալը: Ստացվում է, որ դասագիրքը, ուսուցիչն արդեն կանխորոշված դիրքորոշմամբ մուտք-պարբերություն են տալիս, որի ուղղորդմամբ ու, ըստ էության, թելադրումով սովորողն արդեն պետք է շարունակի: Արդյոք հա՛րկ է այսպես հստակ ու կտրուկ պնդում անել, որ 	<p>վիճակի մտածողության հնարավորությունը կամ անհնարինությունը՝ այդպիսով ավելի լավ հասկանալով դրա տրամաբանությունը: Մի խոսքով՝ ամեն բան հնարավոր է, եթե դուրս գանք կադապարներից և ստեղծագործական մտածողություն բանեցնենք:</p> <p>Արքայազն Տիգրանի ամուսնությանը վերաբերող առաջադրանքը, եթե կարելի է այդպես ասել, չափազանց ուղիղ կապ ունի «պատճառ և հետևանք» հասկացության հետ: Միրա՞ծ աղջկան Պոնտոսի արքայի դստեր հետ ամուսնանալու պատճառները բացատրելն ինչպե՞ս է հնարավոր, առանց հղում անելու այնպիսի հասկացությունների, ինչպիսիք են պետական շահը, արքայի պարտականությունը, այդ պարտականության առաջնայնություն անձնականի համեմատ և հազար ու մի այլ բան: Դա ուղղակիորեն ենթադրում է խոսել առկա դժվարությունների, դրանց հնարավոր լուծումների ու ապագայի վրա դրանց ազդեցությունների մասին: Ավելին՝ այս առաջադրանքը մղում է սպրումակցելու, ինքն իրեն տվյալ իրավիճակում դնելու, ուստի և տրամաբանական մտածողությանը հավելում է վերաբերմունքային բաղադրիչը, որն ավելի է խորացնում երևույթների ընկալումը:</p> <p>Այս և դիտարկման հեղինակի մեջբերած բոլոր առաջադրանքները համարում ենք գրքի յուրք ներդրումը դասագրքաստեղծման ոլորտում: Իսկ այնտեղ, որտեղ քննադատը «ուղղորդող տեքստ» է տեսնում, շատ հեշտ է միանգամայն այլ բան տեսնելը. դրանք մտքի կառուցվածք ստեղծելու, միևնույն ժամանակ</p>	
--	--	--

<p>Հայաստանը հակադրվեց Արևմուտքին ու Արևելքին, մանավանդ Արևելքի տակ փակագծերում նշելով Իրան, ոչ՝ Պարսկաստան: Հարկ ենք համարում նկատել, որ Իրանում ևս Քրիստոնեությունը բավական տարածվել էր և Հայաստան Քրիստոնեության մուտքի գլխավոր ուղղություններից մեկը աշխարհագրորեն հենց Իրանն էր:</p> <ul style="list-style-type: none"> • <i>«ՏԵՂԵԿՈՒԹՅԱՆ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ:</i> Ի՞նչ եք կարծում, Բարի սամարացու, Անտառի որդու և Մողոյսյալ ոչխարի առակները, բացի հոգևոր նշանակությունից, ի՞նչ նշանակություն կարող էին ունենալ Տրդատ Մեծի համար՝ որպես պետության ղեկավարի» (Էջ 113): Կարծում ենք, որ այսպիսի առաջադրանքը բացարձակ համարժեք չէ 7-րդ դասարանի սովորողի համար: Բացի այն, որ անհասկանալի են առաջադրանքի նպատակները, հարցադրումը կազմված է հստակ ուղղորդող տեքստով, այն պարունակում է նաև աստվածաբանական գիտական բովանդակություն: • <i>«Պատկերացրո՛ւ, որ դու Վռամշապուհ արքան ես և մտածում ես հայոց գրեթե ստեղծելու մասին, բայց պարսից արքայի թույլտվությունը չունես: Ինչպե՞ս կփորձես համոզել պարսից արքային, որ նա թույլ տա, որ հայերը սեփական գիրն ու գրականությունը ստեղծեն: Ի՞նչ ես կարծում, եթե Վռամշապուհ արքան չդիմեր պարսից արքային՝ հայոց գրերի ստեղծումը թույլ տալու հարցով, դա ի՞նչ խնդիրներ կառաջացներ» (Էջ 121): Հստակ չէ այս առաջադրանքի նպատակը: Միևնույն ժամանակ, քանի որ այն տեղադրված է «Փոփոխություն և շարունակականություն» խորագրի տակ, ի՞նչ կապ ունի այդ հարցադրումը պատմական մտածողության տվյալ հասկացությո՞ւյթի հետ:</i> <p><i>«Պատկերացրո՛ւ, որ դու Վասակ Մյունին ես և արդեն գիտես, որ Վարդան Մամիկոնյանն ու իր կողմակիցները վճռել են մինչև վերջ պայքարել Սասանյանների դեմ: Բսկ քո երկու որդիները պատանդ են Սասանյան</i></p>	<p>կառուցվածքի շրջանակներում ազատորեն տրամաբանելու և ստեղծագործելու հրաշալի հնարավորություններ են:</p>		
--	--	--	--

<p>արքունիքում: Բ՞նչ քայլերի կոդիմես այդ վճարական պահին և ինչպե՞ս կհիմնավորես քո արարքը: Ըստ քեզ՝ ի՞նչ ընթացք կարող էին ունենալ հայ-պարսկական հարաբերությունները, եթե Վարդան Մամիկոնյանն ու իր կողմնակիցները վստահեին Վասակ Սյունուն և դադարեցնեին ռազմական գործողությունները: Կամ հակառակը՝ եթե Վասակ Սյունին միանար Վարդան Մամիկոնյանին» (Էջ 134): Կրկին, նախ հստակ չեն այս առաջադրանքի նպատակները և երկրորդ, այն որևէ կապ չունի «պատճառներ և հետևանքներ» վերհանելու ու վերլուծելու հետ:</p> <ul style="list-style-type: none"> • «Պատկերացրո՛ւ, որ դու 591 թ. հակապարսկական սպստամբության առաջնորդ Վարդան Մամիկոնյանը՝ Կարմիր Վարդանն ես: Բ՞նչ զննահատական կոսա սպստամբությանը, երբ 591 թ. Հայաստանը հերթական անգամ բաժանվի Պարսկաստանի և Բյուզանդիայի միջև: Արդյո՞ք սպստամբության արդյունքները կբացատրես Բյուզանդիայի խաբեությամբ կամ սպստամբների միանոտությամբ: Իսկ գուցե մեկ այլ մեկնաբանություն կոսա» (Էջ 139): Այն որևէ կապ չունի պատճառների և հետևանքների վերհանման ու վերլուծության հետ: • «Պատկերացրո՛ւ, որ դու Վռամշապուհ արքան ես: Հայ գրերի ստեղծման անհրաժեշտության հարցով քեզ են դիմել Սահակ Պարթևն ու Մեսրոպ Մաշտոցը: Դու գիտես, որ միայն քո ցանկությունը քիչ է. հարկավոր է նաև համոզել Սասանյան արքունիքին, որ թույլ տա հայկական գրերի ստեղծումն ու դպրոցներում դասավանդելը: Ինչպե՞ս կփորձես համոզել Սասանյան արքունիքին՝ անհրաժեշտ թույլտվությունը ստանալու համար: Կարող ես Դասրնկերներիդ հետ բեմականացնել այդ դրվագը» (Էջ 152): Առաջադրանք, որը որևէ կապ չունի պատմական մտածողության տվյալ հասկացությի հետ: • Էջ 163-ում նույնը՝ «Պատճառ և հետևանք» խորագրի տակ դրված առաջադրանքը որևէ կապ չունի պատճառների և հետևանքների վերլուծության հետ: 			
---	--	--	--

	<p>• «Պատկերացրո՛ւ, որ դու կայծողիկոս Պետրոս Գետադարձն ես կամ Վեստ Սարգիսը և պետք է Գագիկ արքային համոզես, որ մեկնի Կոստանդնուպոլիս՝ բանակցությունների: Ինչպե՛ս կփորձես համոզել նրան, որ մեկնի Կոստանդնուպոլիս: Հիմա փորձի՛ր հակառակը համոզել արքային: Ի՞նչ ես կարծում, եթե Գագիկ II արքան չգնար բանակցելու, դա ի՞նչ խնդիրներ կառաջացներ: Արդո՞ք հայկական գորքերը կկարողանային դիմակայել Բյուզանդիայի հարձակմանը» (էջ 169): Այս առաջադրանքը որևէ կապ չունի «Փոփոխություն և շարունակականություն» հասկացության հետ, որի գլխավոր նպատակը տարբեր ժամանակների միջև տարբեր տեսանկյուններից փոփոխությունների և շարունակականությունների վերհանումն ու վերլուծությունն է: Մասնավորապես, այդպիսին կարող է լինել այն հարցադրումը, որը համեմատում է երկու տարբեր ժամանակների ինչ որ երևույթներ, հաստատություններ, համակարգեր և այլն: Օրինակ, քաղաքական համակարգեր, դպրոցներ, տնտեսություններ և այլն:</p> <p>Նույնը էջ 176-ի հետևյալ առաջադրանքի համար. «Պատկերացրո՛ւ, որ դու կայծողիկոս Հովհաննես Դրասխանակերտցուն օգնող հոգևորական ես: Քեզ հանձնարարված է նկարագրել քրիստոնեական բարոյականությունն անտեսելու հետևանքները: Ինչպե՛ս ցույց կտայիր բարոյական անկման և պետության կործանման կապը: Իսկ գուցե կհսկանառե՞ս այս մտքին»:</p>			
<p>110.</p>	<p>Գառնու բաղնիքի խճանկարի տակ նշված է. «Ինչպե՞ս կմեկնաբանես խճանկարի վրայի հունարեն գրությունը» (էջ 125): Արդյոք այս հարցը տալիս ենթադրվել է, որ 7-րդ դասարանի սովորողը իմանալո՞ւ է հին հունարեն, այն էլ դա կարդա այս խճանկարի վրա:</p>	<p>Հարցը տալիս բնավ էլ չի ենթադրվում, որ աշակերտը պետք է իմանա հին հունարեն, քանի որ հարցի վերևում տրված է տեքստ Գառնու բաղնիքի խճանկարի մասին, որտեղ նշված է խճանկարի վրայի հունարեն արձանագրություններից մեկի բառացի թարգմանությունը. «Չստացանք անգամ սասուկած (ձուկ) ո՛չ ծովից, ո՛չ օվկիանոսից»: Խոսքը դրա մասին է, և աշակերտներից</p>		<p>Հեղինակի պարզաբանումն ընդունելի է:</p>

		<p>ակնկալվում է այդ գրության մեկնաբանությունը:</p>		
<p>111.</p>	<p>• «Համեմատիր: Ինչո՞ւ պարթևների Որոդես արքան անձամբ չգլխավորեց Կրասսուսի դեմ ռազմարշավը և նախընտրեց Հայաստանի վրա արշավանալը» (Էջ 94): Եթե նշվել է համեմատելու առաջադրանքը, ապա հարկ է, որ հարցը չպահանջի ինչո՞ւ-ի պատասխան, որը ենթադրում է պատճառների վերլուծություն: Եթե նշվում է համեմատել, ապա ավելի հստակ կլինի, որ հարցը ձևակերպվի օրինակ հետևյալ կերպ. «Ի՞նչ նմանություններ և տարբերություններ կան այս կամ այն երևույթների և այլնի միջև»:</p>	<p>Խիստ սուբյեկտիվ դիտարկում: Համեմատության խնդիրը կարող է ներառել «ինչու» հարցադրումը՝ հասկանալու համար նմանությունների կամ տարբերությունների պատճառները: Երբ դուք համեմատում եք երկու կամ ավելի իրեր, իրադարձություններ, գաղափարներ կամ այլ տարրեր, դրանց նմանությունների կամ տարբերությունների հիմքում ընկած պատճառների ուսումնասիրությունը կարող է ավելի խորը պատկերացումներ տալ: Խոսքը պարզապես նմանությունների և տարբերությունների վերհանման մասին չէ, այլ դրանց պատճառները վեր հանելու: Հետևաբար «Ինչո՞ւ» հարցադրումը մեծացնում է համեմատության վերլուծական խորությունը՝ թույլ տալով ձեզ անցնել նմանությունների և տարբերությունների պարզորոշման սահմաններից և ուսումնասիրել հիմքում ընկած պատճառները և պատճառահետևանքային կապերը:</p>		<p>Հեղինակի պարզաբանումն ընդունելի է:</p>
<p>112.</p>	<p>Կրկին նշենք, որ դասագրքում շատ հարցադրումներ և՛ քերականորեն, և՛ բովանդակային առումներով բարդ են կազմված: Օրինակ՝ «Ինչպե՞ս էին Արտաշեսյան արքաներն Աշխարհաժողովի և Արտաշատի հրապարակի միջոցով հավասարակշռում իրենց իշխանությունը: Արդյո՞ք միշտ էր դա հնարավոր (օրինակներ բեր)» (Էջ 100): Կարծում ենք՝ այսպիսի հարցադրումները ավելի համարժեք են ավագ դպրոցի սովորողի համար: 7-րդ դասարանի սովորողին համար նախ հարկ է հարցադրումներ դնել, տերմինոլոգիաներին ծանոթանալու համար. օրինակ, ի՞նչ է կառավարման կարգը: Կառավարման կարգի ի՞նչ ձևեր կային հին պետություններում (հանրապետություն, միապետություն և այլն): Առանց</p>	<p>Սուբյեկտիվ դիտարկում: Հարցադրման պատասխանին աջակցող մանրամասներ կան դասագրքի 96-97-րդ էջերում: «Արքան երկիրը կառավարում էր արքունիքի և արքունի գործակալների միջոցով: Արքունիքը կազմված էր տոհմիկ և ծառայողական սիստեմից: Տոհմիկ ավագանու քաղաքական ազդեցության կարևորագույն օրգանը արքայան Նպատ լեռան լանջերին պարբերաբար հրավիրվող Աշխարհաժողովն</p>		<p>Հեղինակի պարզաբանումն ընդունելի է:</p>

<p>այս բազային փաստային իմացության քննարկման դնել նման հարցադրում, կարծում ենք, ժամանակավրեպ է:</p>	<p>էր, ծառայողական ավագանունը՝ մայրաքաղաք Արտաշատի հրապարակը» (էջ 96):</p> <p>«Արտաշեսյան գահակալները կրում էին երկակի թագ՝ խոյր (թագ) և սպարոշ (գլխանոց): Համաձայն արդի հետազոտությունների՝ առաջինը խորհրդանշում էր նրանց կապն ավանդական Աշխարհաժողովի հետ: Երկրորդը խորհրդանշում էր նրանց իշխանության օրինականությունը: Ապարոշ կրում էին հելլենիստական այն գահակալները, որոնք հավակնում էին միջագային հարաբերություններում ներկայանալ իբրև ինքնիշխան երկրի ինքնիշխան գահակալներ: Խոյրի վրա պատկերված էր ութանկյուն արեգակը՝ «տիեզերական լույսի աղբյուրը», որին նայում էին երկու արծիվներ: Արծիվները խորհրդանշում էին Աշխարհաժողովը: Տարեսկզբին՝ Նախասարդյան տոնակատարության ժամանակ, Նպատ լեռան լանջերին հրավիրվում էր Աշխարհաժողովը, որին մասնակցում էին զորք-ժողովուրդը, ավագանին և արքան: Այստեղ արքան ստանում էր իր խոյրը» (էջ 97):</p> <p>Նշված մանրամասնությունները շատ ավելի կարևոր են, քան, դիցուք, բազմաթիվ թվական տվյալներ, քանի որ օգնում են պատկերացում կազմել հասարակական հարաբերությունների մասին, տեսնել՝ ինչպես էր բաշխվում իշխանությունը, ինչպես էին կարգավորվում հասարակական շերտերի միջև հարաբերությունները, մի խոսքով՝ ինչպես էր ապրում և զարգանում հասարակությունը: Համաձայն չենք այն դիտարկման հետ, որ այս և այլ հարաբերություններ նկարագրող</p>		
---	--	--	--

		<p>«կառավարման կարգ» հասկացությունն ավելի հեշտ է պատկերացնելը, քան խորհրդանշանների միջոցով արտահայտվող դրա բովանդակությունը:</p>		
<p>ՔԱՐՏԵԶՆԵՐԻ ՄԱՍԻՆ</p>				
<p>113.</p>	<p>Բացակայում է Մեծ Հայքի վարչատարածքային բաժանման քարտեզը, ինչը 7-րդ դասարանում սովորողին շատ անհրաժեշտ է և օգտակար, թեև էջ 14-ում տրված քարտեզում նշված են նահանգների անունները, բայց սահմանագատում չկա: Հայկական լեռնաշխարհի դիրքն ու 15 աշխարհները (նահանգները) քարտեզում բացակայում է Վասպուրականը (էջ 14): Իսկ եթե այդպես է տրված, որպեսզի երեխան ինքը գտնի, թե որը չկա նշված, ապա պետք է նման առաջադրանք նշվեր, իսկ քանի դեռ չկա այդպիսի առաջադրանք, մնում է ենթադրել, որ վրիպում է:</p>	<p>Առաջին մասին պատասխանել ենք վերևում. այստեղ անհրաժեշտ չենք համարել մանրամասնել նահանգների սահմանագատումը: Չտեղված քարտեզը այլ առաջադրանքի համար է ներկայացված: Առաջադրանքներն հետևյալներն են՝</p> <ol style="list-style-type: none"> 1. Նշիր: Մեծ Հայքի ո՞ր նահանգն է բացակայում քարտեզի վրա: Ցո՛ւյց տուր՝ որտե՞ղ է այն գտնվում: 2. Ներկայացրո՛ւ: Քարտեզի վրա ցո՛ւյց տուր այն լեռնաշղթաները, որոնք Հայկական լեռնաշխարհը բաժանում են հյուսիսային և հարավային, ինչպես նաև արևելյան և արևմտյան հատվածների: Ի՞նչ հետևանքներ է ունեցել այդ տրոհվածությունը: 3. Հիմնավորի՛ր: Ինչո՞ւ են Հայաստանի գրեթե բոլոր մայրաքաղաքները գտնվել Արարատյան դաշտում: 	<p>Ինչ վերաբերում է Վասպուրականի բացակայությանը, այստեղ վրիպակ կա, քանի որ քարտեզի ներքևում զետեղված առաջադրանքի բաժնից դուրս է մնացել հետևյալ առաջադրանքը՝ «1. Նշիր: Մեծ Հայքի ո՞ր նահանգն է բացակայում քարտեզի վրա: Ցո՛ւյց տուր՝ որտե՞ղ է այն գտնվում»: Այն արդեն կա էլեկտրոնային տարբերակում:</p>	<p>Առավել նպատակահարմար է առաջադրանքի ավելացման փոխարեն Վասպուրականի անունը գրել:</p>
<p>114.</p>	<p>Էջ 14-ի քարտեզում ցանկալի կլիներ նշել հյուսիս-արևելքում Փոքր Կովկասի լեռնաշղթան, որը սահմանագատում էր լեռնաշխարհը, ինչպես Կուր գետը: Իսկ հարավում նշվում է (էջ 12), որ եզերում էր Հայկական Տավրոսի լեռնաշղթան, բայց ըստ էջ 14-ի քարտեզի, Հայկական Տավրոսը ոչ միայն լեռնաշխարհից հարավ չէ, այլև չի էլ եզերում նույնիսկ հարավ արևմտյան մասը: Այդ քարտեզում, ի դեպ, նշված է նաև Փոքր Մասիսը, որը բացակայում էր էջ 12-ում:</p>	<p>Սուբյեկտիվ դիտարկում: Հայկական Տավրոսը նշված է ընդամենը մի մասում: Իսկ Փոքր Մասիսի մասին էլ այստեղ ենք նպատակահարմար գտել նշել: Խնդիր չենք տեսնում:</p>		<p>Հեղինակի պարզաբանումն ընդունելի է:</p>

<p>115.</p>	<p>Էջ 30-ի անվերնագիր քարտեզում Հայկական լեռնաշխարհը ներկայացված է որպես «<i>ենթադրյալ նախահայրենիք</i>», որը, մանավանդ քարտեզի մեջ, հիմնովին անընդունելի և վտանգավոր ձևակերպում է: Գոնե պետք է «<i>ենթադրյալ նախահայրենիքն</i>» ընդգրկող երկրները գրել: Օգտագործված քարտեզը պարզապես մեխանիկորեն վերցված է համացանցից, անգլերեն տեղանունները համակարգչային գրաֆիկայով փոխարինվել են հայերենով: Քարտեզն ակնհայտորեն ոչ մասնագիտական քարտեզ է: (https://pbs.twimg.com/media/FnOSILoaUAEeMc7.jpg)</p>	<p>Քարտեզն ունի նկարագրական վերնագիր՝ «Ենթադրվում է հնդեվ թոպացիների երկու գաղ թ. առաջինը՝ Ք. ա. մոտ VIII հզ., երկրորդը՝ Ք. ա. մոտ V հզ.»։ Այն նաև հուշում է՝ ներքևում գետեղված առաջադրանքի համար և լրացնում է դասագրքի նյութին: Իսկ դասագրքում գետեղված քարտեզը Թամազ Գամկրելիձեի և Վիշիպալ Իվանովի հեղինակած երկհատորանոց կոթողային աշխատության (Гамкрелидзе Т. В., Иванов Вяч. Вс., Индоевропейский язык и индоевропейцы. Реконструкция и историко-типологический анализ праязыка и протокультуры. — Тб.: Издательство Тбилисского университета, 1984. — 1328 с) երկրորդ հատորի 956-957-րդ էջերի միջև գետեղված քարտեզի պարզեցված տարբերակն է:</p>	<p>Խմբագրել՝ հաշվի առնելով դիտարկումը:</p>
<p>116.</p>	<p>Հարկ է նկատել, որ Էրեբունին քարտեզագրված չէ նաև էջ 41-ում տեղ գտած «<i>Վանի թագավորության սահմանները Ք. ա. 743–700 թթ.</i>» քարտեզում:</p> <p>Աշակերտների շրջանում Վանի թագավորության մասին լիարժեք պատկերացում ձևավորելու համար ոչ թե պետք է դնել մի քարտեզ, որի հյուսիս-արևելյան սահմանները հասնում են մինչև Արաքս գետ, այլ ինչպես իրականում կար՝ մինչև Կասպից ծով: Նկատենք որ Սարգուրի 2-րդն (764-735 թթ.) իր արձանագրության մեջ նշում է, որ նվաճել է Արկուկինին (Սյունիքի հյուսիս-արևելյան գավառ), Ուրտեխեն (Արցախ), Պուլուաղի երկիրը (Փայտակարան) (էջ 39-40):</p> <p>Ուրարտական պետության սահմանների վերաբերյալ քարտեզը հստակ պատկերացում չի տալիս սովորողներին: 41-րդ էջում տեղադրված է «<i>Վանի թագավորության սահմանները Ք.ա. 743-700 թթ.</i>»</p>	<p>Իրականում կա քարտեզի վրա, ուղղակի սխալմամբ այլ քարտեզ է գետեղված 41-րդ էջում: Այդ մասին գրե եմ վերևում: Դասագրքի էլեկտրոնային տարբերակում արդեն տեղադրված է ճիշտ քարտեզը:</p> <p>Ըստ արդի ուրարտագիտության՝ Ուրարտուի սահմանները երբեք չեն հասել մինչև Կասպից ծով. դա վկայող և ոչ մի սկզբնաղբյուր կամ հնագիտական վկայություն չկա:: Իսկ Արցախը հիշատակվում է իբրև Ուրտեխինի կամ Ուրտեխի և այդպես էլ գրված է ճիշտ քարտեզի վրա:</p>	<p>Հեղինակի պարզաբանումն ընդունելի է:</p>

	<p>քարտեզը, որի մեջ ներառված չէ ՀՀ ներկա տարածքը: Այստեղ առկա են այլ խնդրահարույց հարցեր, որոնց շուրջ ներկայացվել են մասնագիտական դիտարկումներ:</p>		
<p>117.</p>	<p>«<i>Երվանդակյան Հայաստանի կազմավորումը և Աքեմենյան Պարսկաստանը</i>» գլխում առկա է քարտեզ, որտեղ բացակայում են թագավորության սահմանները ցույց տվող տեղանունները (օրինակ՝ տեքստում «ժարավ-արևելքում՝ Մարաստան է» նշված (էջ 54), սակայն քարտեզում Մարաստան գրված չէ):</p>	<p>Էջ 55-ում գետեղված քարտեզը վերաբերում է Ք.ա. 522-521 թթ., երբ Մարաստանն՝ իբրև քաղաքական միավոր արդեն չկար (դեռ Ք.ա. 550 թվականից):</p>	<p>Հեղինակի պարզաբանումն ընդունելի է:</p>
<p>118.</p>	<p>Էջ 80-ի՝ Տիգրան Մեծի կայսրությունը Ք. ա. 80 թ. (ժամանակակից սահմաններով) քարտեզն անհասկանալի է. ինչո՞ւ է նշվել Լեոնային Ղարաբաղը, Արդրեշանը և Ռուսաստանը, Թուրքիան, Լիբանանը, Իրաքը, Սիրիան և Իրանը: Եթե անգամ ժամանակակից սահմաններով է, այդքան էլ ճիշտ չէ ներկայացված, քանի որ Թուրքիան պետք է գրված լիներ ավելի արևելք: Միանգամայն անընդունելի քարտեզ է: Քարտեզն այս տեսքով կրում է խիստ մանիպուլյատիվ բնույթ: Ցանկալի կլիներ նշել Տիգրան Մեծի կառուցած Տիգրանակերտերից մեկի Արցախում, մյուսի՝ Ուտիքում գտնվելը: Քարտեզում պարտադիր պետք է նշվեր նաև Աղվանքը:</p>	<p>Նախ՝ մեկ քարտեզի մեջ դիտարկվել են երկու տարբեր ժամանակներ, բայց այնպես, որ դրանք հնարավոր է միմյանցից թե՛ գատորոշել, թե՛ համադրել (աշխարհագրական վայրերի անվանումների գունային տարբերակմամբ և ժամանակակից պետությունների սահմանների ուրվագծմամբ): Բացի այդ, կա քարտեզին վերաբերող առանձին առաջադրանք, որը հիմնված է հենց քարտեզի այդ երկակիության վրա: Բայց քանի որ կա թյուրըմբռնում, ուրեմն հարկավոր է նաև մանրամասնել-մեկնաբանել: Ինչպես քարտեզի վերնագիրն է հուշում (Տիգրան Մեծի կայսրությունը Ք.ա. 80 թ. (ժամանակակից սահմաններով)), Տիգրան Մեծի կայսրությունը տեղադրված է ժամանակակից քաղաքական քարտեզին: Նպատակն է աշակերտներին բացատրել, թե Տիգրան Մեծի կայսրությունն իր ժամանակների և ժամանակակից ի՞նչ պետությունների տարածքի հետ է համընկնում կամ ներառում. դա հստակ է հատկապես քարտեզի վերաբերյալ 2-րդ առաջադրանքից (Կիրառի՞ր աշխարհագրական հանություններդ: Ի՞նչ պետություններ էր ընդգրկում Տիգրան Մեծի</p>	<p>Առաջարկում ենք քարտեզը խմբագրել՝ ավելացնելով նաև «Աղվանք» երկրանունը:</p>

		<p><i>կայսրությունը: Այսօրվա ո՞ր երկրների տարածքներն է ընդգրկել այն):</i></p> <p>Հարցի առաջին մասը (Ի՞նչ պետություններ էր ընդգրկում Տիգրան Մեծի կայսրությունը) վերաբերում է Տիգրան Մեծի կայսրության մեջ Ք. ա. 80 թ. ընդգրկված պետություններին (դասանյութի և քարտեզի օգնությամբ աշակերտները կարող են նշել <i>Ատրիքը, Կուննագենեն, Ծոփքը</i> (որն առանձին հայկական թագավորություն էր, և միայն Տիգրան Մեծին հաջողվեց Ք.ա. 94 թ. միավորել իր տերությանը), <i>Ատրպատականը և Վիրքը</i>), իսկ երկրորդ մասը (Այսօրվա ո՞ր երկրների տարածքներն է ընդգրկել այն) վերաբերում է ժամանակակից պետություններին (դասանյութի և քարտեզի օգնությամբ աշակերտները կարող են նշել ժամանակակից երկրներից <i>Լիբանանը, Սիրիան, Թուրքիայի մի մասը, Իրանի մի մասը, Իրաքի զգալի մասը, գրեթե ամբողջ Ադրբեջանը և Արաստանի մի մասը, Հայաստանի Հանրապետությունն ու Արցախի Հանրապետությունը՝ ամբողջությամբ</i>): Այս ամենը հնարավորություն է տալիս աշակերտին քարտեզի վրա միաժամանակ տեսնելու Տիգրան Մեծի ժամանակների աշխարհի պատկերն ու ժամանակակից աշխարհի պատկերը: Նա կարող է նաև տեսնել, թե այսօր Տիգրանյան Հայաստանի համեմատ ինչքան է փոքրացել Հայաստանը, կամ ժամանակակից ինչ պետություններ, որ չկային այն ժամանակ, հիմա կան, ու էլի այլ նրբություններ, որոնք ուսուցչի հարցերի օգնությամբ հնարավոր կլինի վեր հանել: Մի խոսքով՝ քարտեզը և դրան վերաբերող հարցը բացահայտում են անցյալի և ներկայի կապը, վեր են հանում</p>		
--	--	---	--	--

		<p>ուսումնասիրվող նյութի արդիականությունը:</p> <p>Բացի այդ՝ աշխարհագրական հմտությունների զարգացմանը զուգահեռ զարգացվում են նաև պատմական մտածողության հետևյալ հմտությունները՝ պատմական պատճառականություն, շարունակականություն և փոփոխություն և համադրություն:</p> <p>Դրանցից առաջինի (<i>պատմական պատճառականություն</i>) դեպքում աշակերտը կփորձի համեմատել պատմական տեղաշարժերի պատճառները և/կամ հետևանքները, կարճաժամկետ և երկարաժամկետ ազդեցությունները կամ առնվազն հարցեր տալ դրանց վերաբերյալ: Երկրորդի (<i>շարունակականություն և փոփոխություն</i>) դեպքում աշակերտը կկարողանա ճանաչել, նկարագրել և վերլուծել շարունակականության և փոփոխության պատմական միտումները ժամանակի ընթացքում: Իսկ երրորդի (<i>համադրություն</i>) դեպքում աշակերտը կկարողանա կիրառել անցյալի մասին պատկերացումները այլ պատմական համատեքստերում կամ հանգամանքներում, ներառյալ ներկան:</p> <p>Ինչ վերաբերում է Աղվանքին, այն պատահաբար է քարտեզից դուրս մնացել և դասագրքի էլեկտրոնային տարբերակում արդեն ավելացված է:</p>		
<p>ՆԿԱՏՎԱԾ ՎՐԻՊԱԿՆԵՐ</p>				

<p>119.</p>	<p>մայրքաղաքի (էջ 38)՝ մայրաքաղաք, Արգիշտի (786 - 764), Պետք է լինի (Զ.ա. 786-764) (էջ 39), Ոսումնասիրելով (էջ 101)՝ Ոսումնասիրելով, «սոցիալական» (էջ 106)՝ «սոցիալական», «Վերնգրի՛ր այն» (էջ 114)՝ «Վերնագրի՛ր այն», Պասպ արքան (70-74) (էջ 118)՝ (370-374), հաշվեհարդաներից (էջ 130)՝ հաշվեհարդարներից, «սասանյան» (էջ 131)՝ «Սասանյան»: <i>«Արշակունիների կառավարման տարիներին Հայաստանը մշտապես գտնվում էր արևմուտքի և արևելքի՝ Հռոմի և Պարթևստանի, իսկ սպասելիքներին...»</i> (էջ 122): Պետք է Սասանյաններ լինի:</p>		<p>Ընդունված են:</p>	<p>Հեղինակի մոտեցումն ընդունելի է:</p>
<p>ԴԻՏԱՐԿՈՒՄՆԵՐ ՈՒՂԵՑՈՒՅՑԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ</p>				
<p>120.</p>	<p>Մեթոդական ուղեցույցում (էջ 4) թերի է ներկայացված «Հայոց պատմություն» առարկայի հիմնական նպատակը: Կարծում ենք՝ բոլոր ժամանակներում «Հայոց պատմություն» առարկայի հիմնական նպատակներից պետք է լինի նաև ազգային և համամարդկային արժեքներով օժտված քաղաքացու դաստիարակումը:</p>	<p>Սուբյեկտիվ դիտարկում է: «Հայոց պատմություն» առարկան բավականին մանրամասն է ներկայացված Ուղեցույցի հատկապես 24-41-րդ էջերում: Իսկ 4-րդ էջում ընդամենը ընդհանրական դիտարկում է արված (ներածական խոսքն է):</p>		<p>Դասագրքի ուղեցույցի մասին սույն դիտարկումներն ու դրանց պարզաբանումները հիմնականում միմյանց հակադրվող կամ լրացնող դատողություններ են, որոնք հավասարապես «կյանքի իրավունք» ունեն:</p>
<p>121.</p>	<p>Հարկ է նշել, որ հեղինակի մատնանշած «նորարությունը»՝ դասագրքի միջոցով պատմական մտածողության, հմտությունների և կարողունակությունների զարգացումը, կարևորվել է նաև նախկին «Հայոց պատմություն» առարկայի 7-րդ դասարանի դասագրքում (տե՛ս «Հայոց պատմություն» 7-րդ դասարան, Ա. Մեղրնյան, Է. Դանիելյան, Գ. Հարությունյան, Հ. Մուրադյան, «Զանգակ», 2014): Այդ դասագրքում յուրաքանչյուր թեմա ամփոփված է հարցերով և առաջադրանքներով, թեմաների վերջում նախատեսված է նաև գործնական աշխատանք, տրված են՝ նոր հասկացություններ,</p>	<p>Սուբյեկտիվ դիտարկում է: Սիքսսի և այլ հեղինակների հետազոտությունները և սօցիալազդվել են Ուղեցույցի համապատասխան բաժինները շարադրելիս: Այդ մասին կան հղումներ թե՛ տողատակերում, թե՛ վերջում բերված գրականության ցանկում: Իսկ այն պնդումը, որ պատմական մտածողության հմտությունները դասագրքում «բացարձակ ներկայացված չեն</p>		<p>հակադրվող կամ լրացնող դատողություններ են, որոնք հավասարապես «կյանքի իրավունք» ունեն:</p>

	<p>անուններ, արտահայտություններ, որոնց նպատակը նույնպես եղել է սովորողի՝ վերոհիշյալ կարողությունների և հմտությունների զարգացումը: Առհասարակ, համեմատելով պատմական մտածողության և դասավանդման 6 հասկացություններն առաջինը զարգացրած հեղինակների տված սահմանումներն ու ձևակերպումները սույն դասագրքի հեղինակը տված բնորոշումների ու դրանց խորագրի տակ ներառված առաջադրանքների հետ, կարելի է հանգել այն եզրակացությանը, որը դասագրքում դրանք բացարձակ ներկայացված չեն իրենց ճշգրիտ բովանդակությամբ ու իմաստով: The Big Six: Historical Thinking Concepts, Peter Seixas, Tom Morton. Nelson Education, Toronto, ON (2013): Chapman A., Developing historical and metahistorical thinking in history classrooms: reflections on research and practice in England, Diálogos (Maringá. Online), v. 19, n.1, p. 29-55, jan.-abr./2015.</p>	<p>իրենց ճշգրիտ բովանդակությամբ ու իմաստով», բացարձակ չի համապատասխանում իրականությանը: Դասագիրքը ամբողջովին կազմակերպված է պատմական մտածողության հմտությունների հիման վրա: Վերևում արդեն հիմնավորեցինք դիտարկման հեղինակի առարկությունների ոչ ճիշտ լինելը:</p> <p>Իսկ նախորդ դասագրքերի առաջադրանքներից նոր գրքի առաջադրանքներն էականորեն տարբեր են:</p>	
<p>122.</p>	<p>Մեթոդական ուղեցույցի «Նայոց պատմությունն առարկայի ընդհանուր բնութագիրը» (Էջ 24) խորագրի ներքո գրված է. «Ժամանակակից աշխարհում, որտեղ ուշադրության կենտրոնում են այսօրն ու վաղը, պատմության արժեքը հանախ հարցականի տակ է դրվում: Ծառերը թերահավատորեն են վերաբերվում պատմության գործնական արժեքին: Ոմանք կասկածում են վաղուց տեղի ունեցած բաների ուսումնասիրության արդիականությանն ու օգտակարությանը»: Մեզ համար անհասկանալի է հեղինակի՝ այս եզրահանգումների պատճառները: Ավելին, նման «պնդումները» կարող են բազմաթիվ հարցեր առաջացնել. Օրինակ՝ մի՞թե ժամանակակից աշխարհում ուշադրության կենտրոնում են միայն այսօրն ու վաղը: Ե՞րբ և ո՞ւմ կողմից է պատմության արժեքը հարցականի տակ դրվում, ո՞վքեր են այդ «շատերը», որոնք թերահավատորեն են վերաբերվում պատմության գործնական արժեքին:</p>	<p>Սուբյեկտիվ դիտարկում:</p> <p>Ուղեցույցի մեջ զետեղված դիտարկումները գրված են ժամանակակից պատմագիտական տեքստերի (ինչպես Անկերսմիթ, Ուայթ և այլն...), իսկ հայ պատմագետներից՝ պրոֆեսոր Ստեփանյանի տեսական հետազոտությունների հիման վրա: Բայց հարցին կարելի է պատասխանել նաև՝ գրուցելով բազմաթիվ աշակերտների հետ, ի վերջո հաշվի նստելով առհասարակ հումանիտար գիտությունների ճգնաժամի հետ, որ նկատվում է ողջ աշխարհում:</p> <p>Տխուր միտումնավորության տպավորություն են թողնում այս և այստեսակ մյուս դիտարկումները, որոնք գրքի հեղինակի դիտարկումները վիճարկում են ոչ թե փաստերի դիրքից, այլ սեփական</p>	

		<p>ճաշակին հարմար սուբյեկտիվ մեկնաբանություններով, որոնք չգիտես ինչու փորձում են ավելի ճշմարտացի երևալ, գուտ որովհետև քննադատողի դերում են:</p>		
<p>123.</p>	<p>Մեթոդական ուղեցույցում նշված «Հայոց պատմության» ուսուցման հիմնական խնդիրները (Էջ 30) մեծ մասամբ արտահայտված չեն դասագրքում: Օրինակ՝ <i>«Խթանել սովորողների ճանաչողական ակտիվությունը, հետաքրքրությունն ազգային պատմության, ինչպես նաև իրենց ընտանիքների և համայնքների պատմության նկատմամբ»</i>, <i>«Զարգացնել ազգային և պետական գիտակցությունը և օգնել գնահատել այն գործոնները, որոնք նպաստում են ազգային միասնությանը»</i> կամ <i>«Խթանել նախնիների, անցյալի նկատմամբ հարգանքը...»</i> և այլն:</p>	<p>Խիստ սուբյեկտիվ դիտարկում:</p> <p>Տարօրինակ են դիտարկման հեղինակի բոլոր պնդումները, քանի որ 7-րդ դասարանի Հայոց պատմության դասագիրքն ամբողջությամբ հենց դրան է միտված: Դրանում համոզվելու համար բավական է թեկուզ կրկին ընթերցել դասագրքի յուրաքանչյուր գլխի վերջում գետեղված «Ինչո՞ւ է դա կարևոր այսօր» հատվածը:</p>		
<p>124.</p>	<p>Դասագրքի շարադրանքը հնարավորություն չի ընձեռում նաև հասնել մեթոդական ուղեցույցում ակնկալվող (Էջ 42-46) վերջնարդյունքներին: Օրինակ՝ ինչպե՞ս կարելի ներկայացնել <i>«Վանի թագավորության քաղաքակրթական ժառանգության տեղն ու դերը հայոց և համաշխարհային մշակույթի համատեքստում»</i> (Էջ 43), երբ դասագրքում Վանի թագավորության մշակույթին և արվեստին վերաբերող նյութը չափազանց սեղմ է շարադրված: Առհասարակ, հնագույն շրջանի մշակույթին, արվեստին վերաբերող նյութերը, իրենց ընդգրկվածությամբ, չափազանց քիչ են:</p> <p>Կարծում ենք՝ անհրաժեշտ էր առավել մանրամասն ներկայացնել հնագույն շրջանի ճարտարապետությունը, քանդակագործությունը, խեցեգործությունը և դեկորատիվ-կիրառական արվեստը:</p> <p>Մեթոդական ուղեցույցում կարելի է գտնել բազմաթիվ այլ «ցանկություններ», որոնք արտահայտված չեն դասագրքում: Բացի այդ, ուղեցույցում պարզեցման, վերաշարադրման</p>	<p>Սուբյեկտիվ դիտարկում:</p> <p>Դասագրքում Վանի թագավորության մշակույթին և արվեստին վերաբերող նյութը հնարավորություն է տալիս հասնելու մեթոդական ուղեցույցում ակնկալվող (Էջ 42-46) վերջնարդյունքներին (դիցուք՝ ինչպե՞ս կարելի ներկայացնել <i>«Վանի թագավորության քաղաքակրթական ժառանգության տեղն ու դերը հայոց և համաշխարհային մշակույթի համատեքստում»</i>): Ի տեղի ներկայացված են Վանի թագավորության կրոնի, սոցիալական կարգի, տնտեսության, արվեստի և գիտության մասին տեղեկությունները: Տվյալ գլուխն ավարտվում է այսպիսի դիտարկմամբ. <i>«Զևավորված ավանդույթներն ու կանոնները ժառանգեցին հայկական հաջորդ թագավորություններն ու այլ ժողովուրդներ, ինչպես սկյութական ցեղերը: Վանի թագավորության մշակույթի որոշ տարրեր»</i></p>		

<p>անհրաժեշտություն ունեն բազմաթիվ մտքեր, պնդումներ և անհաջող ձևակերպումներ:</p> <p>Մույն դասագրքի ամենատանգրային բացթողումներից է այն, որ դրանում թույլ է արտահայտված կամ, ըստ էության շեշտադրված չէ պատմության բազմատեսանկյունությունը, այն է՝ տեքստերի, պատկերների և առաջադրանքների միջոցով սովորողին հնարավորություն տալ զարգացնելու պատմական իրադարձությունները և գործընթացները տարբեր տեսանկյուններից վերլուծելու հնարավորություն: Պատմության դասավանդման բազմատեսանկյուն մոտեցումը պատմության դասավանդման ժամանակակից ամենաարդիական խնդիրներից է: S'ես, Dr Robert Stradling, Multiperspectivity in history teaching: a guide for teachers (https://rm.coe.int/1680493c9e)</p>	<p><i>ներդասիանցեցին Հին Իրանի և Վաղ Հունաստանի մշակույթները» (էջ 50):</i></p> <p>Առավել մանրամասն ներկայացնել կարելի կլիներ, եթե դասագրքի էջերի սահմանափակում չլիներ՝ 176 էջ: Ընդ որում՝ դասագրքում գետեղված նյութը ոչ միայն տարբերվում է նախորդ դասագրքում գետեղված նյութից՝ իր հաղորդած ավելի շատ տեղեկատվությամբ, այլև տարբերվում է կոնկրետ Վանի թագավորության վերաբերյալ առանձին ներկայացված նյութով: Բանն այն է, որ նախորդ դասագրքերում մշակույթին, արվեստին կամ սոցիալական կարգին վերաբերող նյութը ներկայացված է մեկ ընդհանուր խորագրի տակ, և ընթերցելիս չես հասկանում, թե տվյալ իրողությունները որ շրջանին են վերաբերում՝ Վանի՝ թագավորությանը, Երվանդականների՞ն, թե՞ Արտաշեսյաններին (տե՛ս Ա. Մելքոնյան, Ա. Մովսիսյան, Է. Դանիելյան, <i>Հայոց պատմություն: 6-րդ դաս.: Դասագիրք հանրակրթական հիմնական դպրոցի համար</i>, Ե., Չանգակ, 2018, էջ 127-167; Բ. Հարությունյան, Վ. Բարխուդարյան, Ի. Ղարիբյան, Պ. Հովհաննիսյան, <i>Հայոց պատմություն: 6-րդ դաս.: Դասագիրք հանրակրթական հիմնական դպրոցի համար</i>, Ե., Մանմար, 2018, էջ 132-172):</p> <p>Իսկ այն պնդումը, որ «Մույն դասագրքի ամենատանգրային բացթողումներից է այն, որ դրանում թույլ է արտահայտված կամ, ըստ էության շեշտադրված չէ պատմության բազմատեսանկյունությունը, այն է՝ տեքստերի, պատկերների և առաջադրանքների միջոցով սովորողին հնարավորություն տալ</p>		
--	---	--	--

		<p><i>զարգացնելու պատմական իրադարձությունները և գործընթացները տարբեր տեսանկյուններից վերլուծելու հնարավորություն»</i>, բոլորովին չի համապատասխանում իրականությանը: Ավելին՝ դասագրքի նորարարություններից մեկն էլ հենց բազմադիտանկյունություն ապահովելն է: Դիցուք՝ դասագրքում զետեղված քարտեզներն ունեն առաջադրանքներ, սկզբնաղբյուրներն ունեն առաջադրանքներ, որպիսիք չեն եղել նախորդ դասագրքերում: Դրանք ապահովում են պատմության բազմադիտանկյունությունը: Եթե ընթերցելով, օրինակ, տարբեր սկզբնաղբյուրների փոխանցած հակադիր տեղեկությունների տարբերությունները մեկնաբանել հանձնարարող առաջադրանքները, որոնք սփռված են գրքով մեկ, դիտարկման հեղինակը նման եզրահանգում է արել, ապա դա, մեղմ ասած, տարօրինակ է: Պատմության բազմադիտանկյունությանն են միտված դասագրքի բազմաթիվ այլ առաջադրանքներ ևս:</p>		
<p>ԸՆԴՀԱՆՈՒՐ ԳԻՏԱՐԿՈՒՄՆԵՐ</p>				
<p>125.</p>	<p>Կառուցվածքային առումով ամբողջ գիրքը կազմված է ավանդական ձևաչափով, այն է՝ առանձին են ներկայացված քաղաքական, տնտեսական և մշակութային բաղադրիչները: Այնինչ, պատմական լայն համատեքստը մեծ պատկերում հասկանալու համար կարևոր է, որ սովորողն իրար հետ կապի նշյալ բաղադրիչները: Այդ կապերին չեն նպաստում նաև ներառված հարցադրումները, որոնք մեծ մասամբ փոխկապակցվածություն չեն ձևավորում քաղաքական, տնտեսական, մշակութային, կրոնական և այլ գործընթացների միջև:</p>	<p>Խիստ սուբյեկտիվ դիտարկում: Ակնհայտ է, որ «ավանդական ձևաչափի» պահպանումը կամ խախտումը հակադիր գնահատականների են արժանանում քննադատների դիտարկումներում: Տեսանկյունների, մտածելու եղանակների ու սկզբունքների փոփոխությունների՝ գրքում տեղ գտած բազմաթիվ օրինակներ քննադատող քննադատների այս դիտարկումը մտածելու տեղիք է տալիս: «Ավանդական ձևաչափի» խախտման ի՞նչ տարբերակ պատշաճ կթվար քննադատներին:</p>		<p>Պարզաբանումը բավարար է:</p>

		<p>Անշուշտ, ընդունում ենք, որ կարելի էր հայոց պատմությունը նաև այլ ձևաչափերով պատմել, սակայն անհնար է երևակայել գեթ մեկ նման ձևաչափ, որը հնարավոր չլիներ քննադատել, մանավանդ երբ քննադատներն անցել են փաստերի քննարկման սահմանն ու «անճշտություններ» անվան տակ գետեղում են նաև սեփական տարբերվող նախապատվությունները: Եվ չի նկատվում, որ այստեղ սկզբունքային անճշտություն կա. փաստից անդին ցանկացած դիտարկում մեկնաբանություն է՝ ընդունելի, մասամբ ընդունելի կամ հեշտությամբ վիճարկելի: Գոյություն չունի հումանիտար որևէ տեքստ, որին մոտենալու բազմաթիվ ուղիներ չլինեն, և տրամաբանական սխալ են թույլ տալիս բոլոր այն գիտնականները, որ որևէ քննադատություն հնչեցնելիս նախ նկատի չեն ունենում իրենց իսկ դիրքի այս, մեղմ ասած, պայմանականությունը:</p> <p>Թվարկված գործընթացների միջև կապերի ցուցադրման օրինակները բազմաթիվ են և ակնհայտ: Պնդում ենք սա նույնքան համոզված, որքան համոզված են քննադատները հակառակը պնդելիս: Եվ եթե այս պատասխանը փոքր-ինչ հրապարակախոսական է, ապա այդպիսին է նաև քննադատական դիտարկումը:</p>		
<p>126.</p>	<p>Հանրակրթական դպրոցի 7-րդ դասարանի կրթության նոր չափորոշիչներով հրատարակված Համաշխարհային պատմություն առարկայի դասագրքում («Չանգակ» հրատ. 2023) բացակայում է «Նախնադարի հասարակության պատմությունը» թեման: Տրամաբանական կլիներ, որ այն տրված լիներ նաև «Հայոց պատմության» դասագրքում: Սակայն</p>	<p>Սուբյեկտիվ դիտարկում է, «բավական խառը» և չփաստարկված:</p> <p>Դասագրքի 21-րդ էջում տրված է Զարի դարի պարբերացման, 29-րդ էջում՝ Բրոնզի դարի, 34-րդ էջում՝ Երկաթի</p>		<p>Պարզաբանումը բավարար է:</p>

	<p>սույն դասագրքում կա «Հայկական լեռնաշխարհի առաջին քաղաքակրթությունները» թեման, որտեղ բավականին խառնաշփոթ ձևով են նշված Հայկական լեռնաշխարհի հնագույն բնակիչներին, որսորդ-հավաքիչներին, նորքարիդարյան հեղափոխությանը և հայ ժողովրդի կազմավորման սկզբին, Հայկական լեռնաշխարհի վաղ պետական կազմավորումներին առնչվող թեմաները: Սակայն հստակ տրված չէ նախնադարի հասարակության պարբերացումը, բացակայում է օրինակ պղնձի և քարի դարի (Էնեոլիթ) ժամանակաշրջանը, թեև էջ 29-ում «Բրոնզի դարի» ենթավերնագրում նշվում է ընդամենը մեկ նախադասություն՝ «Պղինձը առաջին մետաղն էր, որ օգտագործվեց գործիքներ պատրաստելու համար»: Այդպիսով սահմանափակվում ենք պղնձի և քարի դարաշրջանի մասին տեղեկությունները:</p>	<p>դարաշրջանի մասին տեղեկություն: Եվ նկատենք, որ պարբերացվում է ոչ թե հասարակությունը, ինչպես նշել է դիտարկման հեղինակը, այլ ժամանակաշրջանը: «Պարբերացում»-ը վերաբերում է վերլուծության նպատակով ժամանակն առանձին ժամանակաշրջանների բաժանելու գործընթացին:</p> <p>Եղած տեղեկությունը բավարար ենք համարում:</p>		
<p>127.</p>	<ul style="list-style-type: none"> • Թեմաների վերջում ներառված առաջադրանքների գործողությունները նշված են եզակի թվով, դու-ով և որոշակի հրամայական տոնայնության ընկալում առաջացնող շեշտի նշանով: Արդյոք ավելի արդյունավետ և ոչ հրամայական ընկալում չի՞ լինի, եթե գործողությունները լինեն Դուք-ով եզակի թվով կամ հոգնակի դուք-ով, կամ էլ բայի անորոշ ձևով. «Ներկայացնել, բացատրել և այլն»: • Ամբողջ դասագրքում բազմիցս նշվել է առաջադրանք, որ սովորողն իր դասընկերոջ հետ ինչ որ աշխատանք կատարի: Կարծում ենք, այսպիսի առաջադրանքը որոշակի անորոշություն ու անչափելիություն է պարունակում: Նախ, հարկ է ամեն անգամ հստակեցնել, թե աշխատանքը դասարանային է, թե՞ տնային, նաև կարևոր է 	<p>Շեշտի նշանի դեմ վեճ մենք էլ ունենք, սակայն դա քերականական կանոն է, որը շրջանցել չէինք կարող: Անորոշ դերբայի կիրառությունը նպատակահարմար չենք գտել, քանի որ այդպես կորչում է առաջադրանքի թիրախայնությունն ու անմիջականությունը: «Դուք»-ը կիրառելիս և.ս հրամայական եղանակի շեշտից չէինք խուսափի, ընդ որում եզակի «Դուք»-ը խիստ պաշտոնական կլիներ, իսկ հոգնակի «Դուք»-ը՝ ոչ անհատական:</p> <p>Ի՞նչը կարող է լինել ավելի որոշակի և չափելի, քան սեփական դասընկերոջ հետ հանձնարարություն կատարելու առաջադրանքը: Պատկերավոր ասած՝ սցենարը գծված է դասագրքում, իսկ դերաբաշխումը կատարում է ուսուցիչը: «Դասընկեր» բառը եզակի թվով է դրված, հետևաբար «Դասընկերոջդ հետ կատարիր»</p>		<p>Պարզաբանումը բավարար է:</p>

	<p>հատակեցնել, թե այն պետք է կատարել, օրինակ, զույգերով, թե՞ խմբերով: Նաև կարևոր է հատակեցնել այս կամ այն աշխատանքի նպատակը:</p> <ul style="list-style-type: none"> • Առհասարակ կամ չկան, կամ էլ հստակ ու չափելի կերպով ներառված չեն խմբային աշխատանքները, ինչն առանցքային է արդյունավետ առաջադրանքային բազա ունենալու համար: Մեր հասարակությունն առաջին հերթին կարիք ունի արդյունավետ համակեցության, իսկ դա հարկ է զարգացնել հենց դասարանում: Հետևաբար այս տեսանկյունից, պատմության դասավանդման մեջ խմբային աշխատանքների ներառումն առնացքային նշանակություն ունի: 	<p>ձևակերպումը ենթադրում է զույգերով կատարվող աշխատանք: Սակայն դա ամենևին չի նշանակում, որ աշխատանքները չի կարելի կատարել ավելի մեծ խմբերով, եթե այդպես նպատակահարմար կգտնի ուսուցիչը, կամ այդպես կցանկանան աշակերտները: Եվ դա է ներգրավող ուսուցման ողջ հմայքը:</p> <p>Իսկ որպես ուղղորդում՝ Մեթոդական ուղեցույցի համապատասխան բաժիններում անդրադարձ կա և՛ անհատական, և՛ զույգերով, և՛ խմբային աշխատանքներին (Մեթոդական ուղեցույց, էջ 131-134), ինչպես նաև «Խմբային աշխատանքը խթանող մեթոդները» վերնագրով առանձին ենթագլուխ կա (Մեթոդական ուղեցույց, էջ 144-150): Ընդ որում՝ Ուղեցույցի վերջում կա նաև առաջադրանքների կատարման գնահատման աղյուսակ (Մեթոդական ուղեցույց, էջ 164-176):</p> <p>Այո՛ ամեն անգամ անհրաժեշտ է խոսել առաջադրանքների կատարման պայմանների և եղանակների մասին, սակայն դա պետք է կատարվի դասարանում, և դա նշանակում է, որ վերջապես առաջադրանքները վերացական և/կամ ձևական չեն: Դա նշանակում է նաև, որ խմբային քննարկում կարելի է կազմակերպել անգամ առաջադրանքների կատարման եղանակների վերաբերյալ:</p> <p>Դիտարկման քննադատները զարմանալիորեն անտեսում են այն հանգամանքը, որ առաջադրանքները սովորաբար հանձնարարում են ուսուցիչները, իսկ ուսուցիչները սովորաբար կարդում են առաջադրանքները, նախքան դրանք հանձնարարելը:</p>		
--	---	---	--	--

	<ul style="list-style-type: none"> • Գործնական առաջադրանքներում կան տերմիններ, որոնց բացատրությունները նախկինում չեն հանդիպում: Նշված չէ՝ սովորողը այն կատարելու է տանը, թե դասարանում, հետևաբար, ուսուցիչը կարո՞ղ է օգնել տերմինը հասկանալ, թե՞ ոչ, օրինակ. <i>«Ստեղծի՛ր դիագրամ (ընդգծումը-խմբ.)՝ ցույց տալու քո քնակության վայրի ֆիզիկաաշխարհագրական առանձնահատկությունները: Այնուհետև նկարագրի՛ր, թե ինչպես են այդ հատկանիշները ձևավորել ձեր համայնքի կյանքը»</i> (Էջ 16): Դասագրքում տրված են առաջադրանքներ, որոնցից յուրաքանչյուրը կատարելու և ներկայացնելու համար անհրաժեշտ պայմաններ ու ժամաքանակ նշված չէ: Օրինակ՝ պաստառ պատրաստելու առաջադրանքները (նշված չէ, թե սովորողներն ինչպես՞, որտե՞ղ և ի՞նչ ժամկետում պետք է պաստառ պատրաստեն): 	<p>Ամենևին հարկ չկա նման մանրամասնություններ ներկայացնելու: Ուսուցիչը կողմնորոշվում է՝ ելնելով աշակերտների կողմից նյութի յուրացման աստիճանից, դասարանի առանձնահատկություններից և այլն: Դասագիրքն աշխատանքային պլան կամ դասապլան չէ, ոչ էլ նախատեսված է ինքնուսուցման համար:</p> <p>Դասագրքում չբացատրված եզրույթները (տերմինները), որոնք մի քանիսն են, կարող են միջառարկայական կապ ստեղծելու առիթ դառնալ: Դիցուք՝ հայոց լեզվի և հայոց պատմության, աշխարհագրության և հայոց պատմության և այլն:</p>		
<p>127ա</p>	<ul style="list-style-type: none"> • Նյութում ընդհանրապես քիչ են գործող անձանց անունները: • Վկայություններ բերել նաև հայ պատմիչներից և պատմաբաններից: • 5-9-րդ էջերում բացատրվում է, թե ինչպես աշխատել այս դասագրքով, ինչը ժամանակի անիմաստ կորուստ է: 	<p>«Գործող անձանց» անունները դասագրքում միանգամայն բավարար են՝ այնքան, որ հնարավոր լինի նաև նկարագրել նրանց կատարած գործողությունները, այդ գործողությունների համատեքստերն ու նշանակությունները:</p> <p>Հայ պատմիչներից բերվող վկայություններ առկա են (Մովսես Խորենացի՝ էջ 19, 75, 118, Փավստոս Բուզանդ՝ էջ 119, Ղազար Փարպեցի՝ էջ 131, Ագաթանգեղոս՝ էջ 110: Իբրև սկզբնաղբյուր՝ դասագրքում կա նաև Անանիա Շիրակացու տեքստից՝ էջ 154):</p> <p>Հետադարձ կարելի է «չկորցնել այդ ժամանակը»:</p>		<p>Պարզաբանումը բավարար է:</p>

	<ul style="list-style-type: none"> • Դասագիրքը միանգամայն անհարկի ծանրաբեռնված է զանազան արտասահմանյան պատմաբան–արևելագետների լուսանկարներով և նրանց առնչվող տեքստերով, որոնք ոչինչ չեն ասում 7-րդ դասարանի աշակերտներին: 	<p>Միանգամայն տեղին լուսանկարներն ուղեկցում են տեքստերին, իսկ տեքստերը խիստ որոշակիորեն հայոց պատմության հետ առնչվող առաջադրանքների բաղադրիչ մասն են:</p>		
<p>128.</p>	<ul style="list-style-type: none"> • Ընդհանուր առմամբ դասագրքի մեջ Հայոց Արևելից կողմանց պատմությունը լավ արտացոլված չէ: Օրինակ, ակնուրբ չկա Փոքր Կովկասյան լեռնաշղթայի, մասնավորապես նրա բարձր լեռնագագաթների՝ Մռավի, Գոմեշի մասին, որը հասնում է մինչև Մուխանքի դաշտաբերան: բ\ Խոսք չկա Կուր-Արաքսյան միջագետքի (Միլ-Մուխանքի) տափաստանի մասին, որը դասագրքում ներկայացված դաշտերից թե՛ մեծ է և թե՛ առավել բարեբեր ու մշտապես եղել է պատմաքաղաքական իրադարձությունների առանցքում: գ\ 5-9-րդ դարերի մշակույթին նվիրված են երկու թեմաներ՝ էջ 148-160: Մեկ բառ անգամ չկա ոչ Ամարասի, ոչ Ծիծեռնավանքի և կամ մյուս նշանավոր հոգևոր կենտրոնների մասին: դ\ Բագրատունիների կառավարման շրջանում ենթակա թագավորությունների մասին խոսելիս չի ներկայացված նաև Դիզակի, Խաչենի և Փառխոսի թագավորությունների պատմությունը, ե\ Նույն մոտեցումն է ցուցաբերել նաև հայ պատմիչների հարցում, չնկատելով Մովսես Կաղանկատվացուն և Մովսես Դասխուրանցուն: Ընդհանուր առմամբ քանի որ 10-14-րդ դարերի մշակույթը նույն օրինաչափությունների շրջանակում է զարգացել, իր մեջ ունենալով հայկական վերածննդին հատուկ երևույթներ, հետևաբար անտրամաբանական է 10-րդ դարն առանձնացնել 11-14-րդ դարերից: 	<p>Մուլբեկտիվ դիտարկում է: Նախ՝ այդպիսի պահանջ չկա չափորոշիչների մեջ, հետո՝ դիտարկողի կողմից պահանջվող շատ մանրամասնություններ (Մռավի, Գոմեշի լեռնագագաթներ, Կուր-Արաքսյան միջագետքի (Միլ-Մուխանքի) տափաստան, Դիզակի, Խաչենի և Փառխոսի թագավորություններ և այլն) չեն եղել նաև նախորդ և դեռ գործող դասագրքերում: Հիշեցնենք, որ խոսքը 7-րդ դասարանի դասագրքի մասին է և, ի վերջո, դասագիրքը հանրագիտարան չէ: Հավելենք, որ դրանք չկան նաև նախկին դասագրքերում: Ինչ վերաբերում է մշակույթին, ապա ըստ նոր չափորոշիչների՝ պետք էր ներկայացնել IX-XI դարերի մշակույթը, սոցիալ տնտեսական կյանքը և այլն: Հիշյալ թեման քննարկված է Բագրատունյաց Հայաստանի սոցիալ-տնտեսական և մշակութային կյանքը գլխում: Ի դեպ՝ դա չի բացառում մշակութային կապը հաջորդ դարերի հետ:</p>		<p>Պարզաբանումը բավարար է:</p>

<p>129.</p>	<ul style="list-style-type: none"> Միջառարկայական կապերը հստակ արտացոլված չեն: «Հայոց եկեղեցու պատմություն» առարկայի ինտեգրումը «Հայոց պատմություն» առարկայի մեջ հստակ չի երևում: Հանրակրթական ուսումնական հաստատություններում «Հայոց պատմություն» առարկայի 7-րդ դասարանի ծրագրով նախատեսված են Հայոց եկեղեցու պատմությանը վերաբերող հետևյալ թեմաները, որոնք, մեր կարծիքով, թերի են ներկայացված դասագրքի շարադրանքում: <ol style="list-style-type: none"> 1. Զրիստոնեության առաջացումը եւ տարածումը: Զրիստոնեությունը հայոց քաղաքակրթության հիմնասյուն: 2. Զրիստոնեական վարդապետությունը: Աստվածաշունչ: 3. Զրիստոնեության տարածումը Հայաստանում եւ հայաբնակ շրջաններում I-III դարերում: Աբգար թագավոր, ս. Թադեոս եւ ս. Բարդուղիմեոս առաքյալներ: Հայ Առաքելական Եկեղեցու հիմնադրումը: 4. Հայաստանը՝ առաջին քրիստոնյա պետություն. ս. Տրդատ Մեծ եւ ս. Գրիգոր Լուսավորիչ: 5. Հայոց եկեղեցական կառույցի ձևավորումն ու ամրապնդումը: Հայոց եկեղեցու դերի ու ազդեցության ընդլայնումը տարածաշրջանում: 6. Հայոց եկեղեցու նվիրապետությունը, խորհուրդները, եկեղեցիների կառուցվածքը: 7. Աշխարհիկ եւ հոգևոր իշխանությունների փոխհարաբերությունները IV-V դարերում: Ազգային-եկեղեցական ժողովներ: Հայոց եկեղեցին VII - VIII դդ.: • Եկեղեցի-պետության հարաբերությունների վերաբերյալ խորքային պատկերացում չի տալիս դասագիրքը: 	<p>Սուբյեկտիվ դիտարկում է. այդ ամենը կա դասագրքում, պարզապես երբեմն ոչ առանձին վերնագրերով:</p> <p>Դասագրքում անդրադարձել ենք թվարկված թեմաներին. քրիստոնեության առաջացումը (էջ 113, <i>Պատմությունը և մարդը բաժնում</i>), քրիստոնեությունը հայոց քաղաքակրթության հիմնասյուն (էջ 113, «Հայոց պատմության ամենաարմատական իրադարձություններից է քրիստոնեության ընդունումը, որով Հայաստանը, իրաժարվելով իր հեթանոսական անցյալից, հակադրվեց և առանձնացավ թե՛ Արևմուտքից (Հռոմ), թե՛ Արևելքից (Բրան): Այսօր ևս հայության համար հույժ կարևոր է քրիստոնեությունը՝ իբրև սզգային անցյալի անքակտելի մաս, դարերով ձևավորված սոցիալ-մշակութային ժառանգություն և ... (շարունակի՛ր ինքը)»), քրիստոնեական վարդապետություն (էջ 110-113):</p> <p>Նշված էջերում (էջ 110-113) կան և Աստվածաշնչի, Հայոց եկեղեցու դերի, Հայոց եկեղեցու նվիրապետության և խորհուրդների մասին տեղեկություններ (վերջին երկուսի դեպքում՝ բառարանային բացատրություն և առաջադրանքներ, որոնց կատարմամբ հնարավոր կլինի վեր հանել թեմայի բովանդակությունը: Աշակերտներն անգամ կարող են այցելել եկեղեցի և հոգևորականներից ճշտել դրանց մասին մանրամասնությունները, նկարահանել դրանք և այլն: Այդպիսով՝ աշակերտները նաև հնարավորություն են ստանում ոչ միայն կարդալով, այլև անմիջական մասնակցությամբ ձեռք բերել գիտելիքներ առաջադրված նյութերի վերաբերյալ: Հատկապես որ նյութը միայն պատմական</p>	<p>Դասերի կամ դասանյութերի բացակայության մասին դիտարկումը տեղին է (դիտարկումը ոչ թե տեղեկություններ է, այլ խորագրերի մասին է): Հեղինակին առաջարկում ենք հաշվի առնել:</p>
--------------------	--	--	--

		<p>փաստ չէ, այլև կենդանի և ապրող իրողություն, որի հետ շփման եզրեր է ստեղծում դասագիրքը):</p>		
--	--	--	--	--

**ՊԱՏԱՍԽԱՆ 3.
ՄԻՔԱՅԵԼ ԱՐՔԵՂԻՍԿՈՊՈՍ ԱԶԱՊԱՀՅԱՆԻ ԴԻՏԱՐԿՈՒՄՆԵՐԻ**

ԴԻՏԱՐԿՈՒՄՆԵՐ	ՊԱՏԱՍԽԱՆՆԵՐ	Համաձայն եմ	ԿԳՄՄՆ փորձագետի եզրակացություն
<p>1. Իսիստ տարօրինակ է, որ դասագրքում պահպանված չեն անգամ առաիկայական չափորոշիչներով և ծրագրով սահմանված պահանջները: Ըստ Հայոց պատմության 7-րդ դասարանի չափորոշիչով սահմանված ծրագրի նոր դասագրքում որպես դասանյութեր ընդգրկված պետք է լինեին ստորև բերված թեմաները.</p> <ul style="list-style-type: none"> - թեմա 4-ում Քրիստոնեության առաջացումը և տարածումը, Քրիստոնեությունը վիսայոց քաղաքակրթության հիմնասյուն, Քրիստոնեական վարդապետությունը: Աստվածաշունչ, Հայոց եկեղեցու դերի ու ազդեցության ընդլայնումը տարածաշրջանում, Հայոց եկեղեցու նվիրապետությունը, խորհուրդները, եկեղեցիների կառուցվածքը, Ազգային-եկեղեցական ժողովներ, - թեմա 5-ում Վարդանանց պատերազմը, Տիեզերական ժողովների և Հայոց եկեղեցին, Հայոց եկեղեցին VII-VIII դդ., 	<p>Մուրյելտիվ դիտարկում է. այդ ամենը կա դասագրքում, պարզապես երբեմն ոչ առանձին վերնագրերով:</p> <p>Դասագրքում անդրադարձել ենք թվարկված թեմաներին. քրիստոնեության առաջացումը (էջ 110-113, <i>Պատմությունը և մարդը բաժնում</i>), քրիստոնեությունը հայոց քաղաքակրթության հիմնասյուն (էջ 113, «Հայոց պատմության ամենասարմատական իրադարձություններից է քրիստոնեության ընդունումը, որով Հայաստանը, հրաժարվելով իր հեթանոսական անցյալից, հակադրվեց և առանձնացավ թե՛ Արևմուտքից (Հռոմ), թե՛ Արևելքից (Բյուզանդիա): Այսօր ևս հայության համար հույժ կարևոր է քրիստոնեությունը՝ իբրև ազգային անցյալի անքակտելի մաս, դարձելով ձևավորված սոցիալ-մշակութային ժառանգություն և ... (շարունակի՛ր ինքդ)»), քրիստոնեական վարդապետություն (էջ 110-113):</p> <p>Նշված էջերում (էջ 110-113) կան և Աստվածաշնչի, Հայոց եկեղեցու դերի, Հայոց եկեղեցու նվիրապետության և խորհուրդների մասին տեղեկություններ (վերջին երկուսի դեպքում՝ բառարանային բացատրություն և առաջադրանքներ, որոնց կատարմամբ հնարավոր կլինի վեր հանել թեմայի բովանդակությունը:</p>		<p>Դասերի կամ դասանյութերի բացակայության մասին դիտարկումը տեղին է (դիտարկումը ոչ թե տեղեկությունների, այլ խորագրերի մասին է): Հեղինակին առաջարկում ենք հաշվի առնել:</p>

	<p>- թեմա 7-ում Հայոց եկեղեցին Բագրատունյաց ժամանակաշրջանում:</p> <p>Դասագրքի հպանցիկ ընթերցանությունից անգամ ակնհայտ է, որ վերոնշյալ թեմաներով դասանյութերը կամ իսպատ բացակայում են, կամ էլ ներկայացվածները թերի և հատվածական են, և աշակերտը ուղղակի չի կարող նվազագույն չափով պատկերացում կազմել նյութի վերաբերյալ:</p> <p>Հետևությունը մեկն է՝ նախարարությունը հետևողականություն չի դրսևորել անգամ իր իսկ սահմանած չափորոշիչների պահպանման հարցում:</p>	<p>Աշակերտներն անգամ կարող են այցելել եկեղեցի և հոգևորականներից ճշտել դրանց մասին մանրամասնությունները, նկարահանել դրանք և այլն: Այդպիսով՝ աշակերտները նաև հնարավորություն են ստանում ոչ միայն կարդալով, այլև անմիջական մասնակցությամբ ձեռք բերել գիտելիքներ առաջադրված նյութերի վերաբերյալ: Հատկապես որ նյութը միայն պատմական փաստ չէ, այլև կենդանի և ապրող իրողություն, որի հետ շփման եզրեր է ստեղծում դասագիրքը):</p>		
<p>2.</p>	<p>Դասագրքի սկզբում գետեղված է տեղեկանք, որում «հեղինակային խումբը» նաև շնորհակալություն է հայտնում Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնին դասագրքի ստեղծմանն աջակցելու համար: Չենք կարծում, որ շնորհակալության արտահայտումը զուտ քաղաքավարության դրսևորում է, այլ միտումնավոր փորձ թյուր տպավորություն ձևավորելու, թե իրր Մայր Աթոռ Սուրբ Էջմիածինը մասնակցել է դասագրքերի պատրաստության, ինչը բացարձակապես չի համապատասխանում իրականությանը:</p> <p>Ընդհակառակը, Մայր Աթոռ Սուրբ Էջմիածինը պաշտոնապես կտրականորեն դեմ է արտահայտվել սահմանված չափորոշիչներով դասագրքերի պատրաստմանը:</p>	<p>Իրականում «Մասնակցային դպրոց» կրթական հիմնադրամի միջգիտակարգային աշխատանքային խումբը 2023 թվականի մարտին դիմել է Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնին, մասնավորապես՝ Հայր Ասողիկ արեղա Կարապետյանին և նրանից ստացել է մի շարք լուսանկարներ, որոնց մի մասը (այդ թվում՝ Մովսես Խորենացու, Սուրբ Աբգար թագավորի պատկերները) օգտագործվել են դասագրքում, ինչի համար բնականաբար շնորհակալություն ենք հայտնել: Բովանդակային նյութերի կամ խորհրդատվության տեսքով օժանդակություն ստացել ենք բազմաթիվ գիտական հաստատություններից և անհատներից, որոնց ցանկը նշված է դասագրքի սկզբում:</p>		<p>Պարզաբանումը բավարար է:</p>
<p>3.</p>	<p>1. Որպես ընդհանուր դիտարկում խիստ մտահոգիչ և մերժելի է ազգային կարևորագույն խորհրդանիշների (Արարատ, Մասիս, Հայկ նահապետ, Ս.</p>	<p>Դասագրքի 71-րդ էջի նկարում պատկերված են Արարատը (Միսն ու Մասիսը), տեսարան Արտաշատ քաղաքից, Արտաշես I արքան և Հաննիբալը:</p>		<p>Առաջարկում ենք Արարատ լեռան առավել արտահայտիչ լուսանկար տեղադրել:</p>

<p>Էջմիածնի Մայր Տաճար) նկատմամբ հեղինակի որդեգրած դիրքորոշումը: Այսպես, ա/ Արարատը նշվում է երիցս, և երիցս էլ հպանցիկ, սոսկ աշխարհագրական գիտելիք փոխանցելու անհրաժեշտությունից դրդված, լռության մատնելով սրբազան լեռան կարևորությունը ոչ միայն հայության, այլև համայն աշխարհի համար որպես մարդկության երկրորդ ծննդավայր: բ/ Հայկ նահապետին հեղինակը հարկ է համարում հիշել միայն մեկ անգամ, այն էլ որպես Պարույր Սկայորդու ենթադրյալ նախահայր ընդհանրապես՝ լռելով Հայկ-Բել հակամարտության, հայ ժողովրդի ծագման և էթնոհոգեբանության ձևավորման գործում Հայկի հաղթանակի պատմության որոշիչ դերակատարության մասին: գ/ Ս. Էջմիածնի Մայր տաճարի (որի համագգային սրբության ընկալումն ու հմայքը ոչ ոք և ոչինչ չի կարողացել նսեմացնել անցնող 17 դարերի ընթացքում) կառուցումը ներկայացվում է որպես պատմական տարեգրության շարքային մի դրվագ՝ ըստ այդմ փորձելով ստվերել հայ իրականության մեջ ամենից երկար և անընդմեջ գործող կառույցի կարևորությունը և դերն ու նշանակությունը ազգի և հայ մարդու կյանքում:</p>	<p>Իսկ Էջերի սահմանափակ լինելու (176 էջ) պատճառով դասագրքում չենք կարողացել գետեղել բազմաթիվ այլ նկարներ ևս, որոնք նախատեսել էինք:</p> <p>Հայկ նահապետի (այդ թվում՝ Բելի) մասին, ըստ նոր չափորոշիչների, աշակերտները պետք է ուսումնասիրած լինեն 5-րդ դասարանում:</p> <p>Ս. Էջմիածնի մասին տեղեկություն կա գրքի 112-րդ և 155-րդ էջերում:</p>		
<p>4. Առավել քան տարօրինակ է, որ դասագրքում Հայոց Եկեղեցու հիմնադիր ներկայացված է Տրդատ Գ արքան. «Տրդատ III-ը 301 թ. առաջինն աշխարհում քրիստոնեությունը հռչակեց պետական կրոն և հիմնեց Հայ Առաքելական Եկեղեցին» (էջ 111): Մինչդեռ հարկ էր</p>	<p>Քրիստոնեության ընդունման և այլ մանրամասների մասին անդրադարձ կա 112-րդ էջի QR կոդով ներկայացվող տեսանյութում, որը նվիրված է Ս. Գրիգոր Լուսավորչին: Քրիստոնեությանն անդրադարձ կա դասագրքի 110-113-րդ էջերում:</p>	<p>Իրականում նկատի ունենք Հայ Առաքելական եկեղեցու պետականորեն հաստատվելը:</p>	<p>Պարզաբանումը բավարար է:</p>

	<p>հիշատակել պատմական փաստը, որ Ս. Գրիգոր Լուսավորիչ Հայրապետի ջանքերով է Տրդատ թագավորի կողմից քրիստոնեությունը Հայաստանում հռչակվել պետական կրոն, իսկ Եկեղեցու հիմնադիրը Քրիստոս է Ս Թյադեոս և Ս. Բարդուղիմեոս առաքյալների քարոզությամբ:</p>		<p>Բայց թյուրըմբռնումից խուսափելու համար այդ հատվածը վերաձևակերպել ենք այսպես. «պաշտոնապես հաստատվեց Հայ Առաքելական Եկեղեցին»</p>	
<p>5.</p>	<p>Չարմանալի է նաև պնդումը, թե «Գրիգոր Պարթևն արքայի կողմից նշանակվեց Հայոց հայրապետ» (էջ 111): Նշենք, որ եկեղեցական աստիճանի արժանանալը կատարվում է ոչ թե նշանակմամբ, այլ Ձեռնադրության խորհրդի միջոցով, իսկ Հայոց Կաթողիկոսի առաքելությունը ստանձնելը՝ ընտրությամբ: Այս առնչությամբ խորհուրդ է տրվում գերծ մնալ սխալ ենթադրություններից՝ ընթերցելով կամ վերընթերցելով Ս. Գրիգոր Լուսավորչի կողմից Հայոց Հայրապետի ծառայությունը ստանձնելու վերաբերյալ պատմական վկայությունները:</p>		<p>Վրիպակ է: Պետք է լինի՝ կարգվեց:</p>	<p>Պարզաբանումը բավարար է:</p>
<p>6.</p>	<p>Թյուր շարադրանք է Ս. Թադեոս առաքյալի նահատակությունը դրվագը. Հեղինակը գրում է, որ առաքյալը «մեկնում է... Հայոց Սանատրուկ թագավորի արքունիք, որտեղ էլ նահատակվում է» (էջ 109), ինչը, որոշապես, պատմական խեղաթյուրում ու սխալ է:</p>	<p>Թյուրըմբռնումից խուսափելու համար հատվածը շտկել ենք. «Այնուհետև մեկնում է, ըստ Մովսես Խորենացու, Արգարի քեռորդու՝ Հայոց Սանատրուկ թագավորի արքունիք: Հայաստանում էլ նահատակվում է»: Բանն այն է, որ «այստեղ» ասելով՝ նկատի ենք ունեցել հենց Հայաստանը:</p>		<p>Պարզաբանումը բավարար է:</p>
<p>7.</p>	<p>Խնդրահարույց է նաև Ս. Հռիփսիմյանց կույսերի մասին դասագրքում գետեղված հատվածի շարադրանքը. «Քրիստոնյաների նկատմամբ իրականացվող հալածանքներից խուսափելով՝ ի վերջո ապաստանել են Հայաստանում, որտեղ և նահատակվել են: Ըստ ավանդության՝</p>	<p>Թյուրըմբռնում կա: Նախ՝ տեքստի սկզբնամասում շեշտված է այն, որ Հռիփսիմյան կույսերը «[ա]պրել են Հռոմի Դիոկղետիանուս կայսեր օրոք Հռոմի լեռներում գտնվող Ս. Պողոս վանքում: Քրիստոնյաների նկատմամբ իրականացվող հալածանքներից խուսափելով՝</p>		<p>Հեղինակի պարզաբանումն ընդունելի է: Այդուհանդերձ, թյուրըմբռնումներից փուսափելու</p>

	<p>հայաձանքների պատճառը եղել է կույսերից «Հոփսիսիմեն» (էջ 111), ինչը չի համապատասխանում պատմական իրողությանը և ինքնին տեղիք է տալիս սխալ մեկնաբանությունների:</p>	<p>ի վերջո ապաստանել են Հայաստանում, որտեղ և նահատակվել են»: Իսկ մեկնաբանի ներկայացրած հատվածին անմիջապես հաջորդում է հետևյալ բացատրությունը. «Կայսր Դիոկղետիանոսը գերվում է նրա շացուցիչ գեղեցկությամբ և կամենում է անհապաղ կնության առնել նրան: Չկամենալով, սակայն, ենթարկվել կայսեր ցանկությանը՝ կույսերն իրենց մայրապետի՝ Գայանեի առաջնորդությամբ փախչում են Ալեքսանդրիա, իսկ հետո Հայաստան» (էջ 111): Այդուհանդերձ, պետք է նկատել նաև, որ Հոփսիսիմենի՝ հայաձանքների պարճառ լինելը վերագրված է ավանդությանը: Այսպիսով՝ տեքստը նման եզրակացության տեղիք չի տալիս: Իհարկե, «քրիստոնյաների նկատմամբ իրականացվող հայաձանքների պատճառը» Հոփսիսիմենն չէր:</p>		<p>նպատակով առաջարկում ենք հատվածը վերաշարադրել:</p>
<p>8.</p>	<p>Դասագրքի մեկ այլ հատվածից հանկարծ պարզվում է, որ Հայաստանում քրիստոնեությունը հաստատվել է հռոմեական Դիոկղետիանոս կայսեր բարեհաճության շնորհիվ: Դասագրքի հեղինակը, շրջանցելով սկզբնաղբյուրները՝ ներկայացնում է իր անձնական, հիմնագուրկ ենթադրությունը. «Չնայած քրիստոնեության հանդեպ իր սկզբնական թշնամանքին՝ հռոմեական կայսր Դիոկղետիանոսը (284-305) հանդուրժեց Հայաստանում քրիստոնեության հաստատումը, քանի որ դա ավելի շատ դիտվում էր որպես Սասանյանների դեմ հակադրության դրսևորում» (էջ 112):</p>	<p>Այն, որ Դիոկղետիանոս կայսրը «<i>հանդուրժեց Հայաստանում քրիստոնեության հաստատումը</i>», պայմանավորված էր մի քանի հանգամանքներով: Դիցուք <i>քաղաքական կայունության</i> դիտանկյունը. Դիոկղետիանոսը կայունություն էր փնտրում հռոմեական ազդեցության տակ գտնվող շրջաններում: Հայաստանի՝ քրիստոնեությունն ընդունելը հանդուրժելն անհրաժեշտ էր՝ ընդվզումներից, տարածայնություններից կամ դիմադրությունից խուսափելու համար: Տարածաշրջանում հռոմեական շահերին համահունչ էր Հայաստանը Հռոմի ազդեցության ոլորտում պահելը, այլ ոչ թե Հռոմին հակադրվող Հայաստան ունենալը: Այդպիսով՝ տեղական կրոնական և մշակութային համատեքստի ճանաչումը/ընդունումը կարող էր լինել Հայաստանում ազդեցությունը պահպանելու ավելի լայն ռազմավարության մաս: Եվ ասվածից ամենևին չի հետևում, որ Հայաստանում քրիստոնեության հաստատումը Դիոկղետիանոսի հանդուրժողականության</p>		<p>Պարզաբանումը բավարար է:</p>

		<p>դրսևորման հետևանք էր: Խոսքը միայն Դիոկղետիանոսի քաղաքական հաշվարկների մասին է:</p>		
<p>9. Կամայական և անհամոզիչ մեկնաբանություններով է նաև շարադր գրերի ստեղծման պատմությունը և դրդապատճառների վերաբերյալ եզրահանգումը. «Արքայական և եկեղեցական իշխանությունը պահպանելու լավագույն միջոցի մնում էր հայոց լեզվի միավորող գործոնը» (էջ 148):</p>	<p>Հայոց այբուբենի մասին դասագրքում գրված է ինչպես 120-րդ էջում, այդպես էլ 148-149-րդ էջերում: Ավելին, այդ մասին կա նաև տեսանյութ, որը հասանելի է 147-րդ էջում գետեղված QR կոդի միջոցով:</p> <p>Գրերի գյուտի նշանակության մասին դասագրքում կան նաև այսպիսի ձևակերպումներ.</p> <p><i>«387 թ. Հռոմեական և Սասանյան կայսրությունների միջև Հայաստանի բաժանումից հետո խիստ անհրաժեշտ էր հայ ժողովրդի ազգային ու մշակութային ինքնությունը պահպանելու և ամրապնդելու ուղիներ գտնել: Գրերի գյուտը դարձավ այն կենսական միջոցը, որով սկսվեց հայերի նոր՝ քրիստոնեական ինքնության ստեղծումը»</i> (էջ 148):</p> <p><i>«Հայոց այբուբենի գյուտի, Աստվածաշնչի թարգմանության և ինքնուրույն գրականության ստեղծման շնորհիվ Մեսրոպ Մաշտոցը Վռամշապուհ արքայի և կաթողիկոս Սահակ Պարթևի աջակցությամբ հոգևոր նորոգման սերմեր տարածեց հայ ժողովրդի մեջ»</i> (էջ 152):</p> <p>Իսկ գրերի գյուտի պատմական նշանակությունը քայլ առ քայլ բացահայտվում է դասագրքի 148-152-րդ էջերում:</p>			<p>Պարզաբանումը բավարար է:</p>
<p>1 Անընդունելի է այն փաստը, որ դասագրքում Ավարայրի ճակատամարտը ներկայացված է միտումնավոր սխալ մեկնաբանությամբ, հերոսների և նրանց սխրանքի նսեմացմամբ և խեղաթյուրումներով: Խստորեն մերժելի է դասագրքում այն տեսակետի ամրագրումը, որով տպավորություն է ստեղծվում, թե Ս.</p>		<p>Դասագրքում Ավարայրի ճակատամարտը ներկայացրել ենք գիտական հետազոտությունների հիման վրա: Տե՛ս Ն. Ադոնց, Մարզպան Վասակը պատմաբանների դատաստանի առաջ, Ն. Ադոնց, Երկեր, հ. Ա., Երևան, 2006, էջ 180-188: Վ. Նալբանդյան, Հայոց թագավորության վերականգման հարցը՝ Վարդանանց պատերազմի</p>		<p>Ծարադրանքում նշել նաև Հովսեփ կաթողիկոսի և Ղևոնդ Երեցի մասին:</p>

<p>Վարդան Մամիկոնյանն անհեռատես, արկածախնդիր, դիվանագիտական ունակություններ չունեցող, երկիրը անխոհեմությամբ պատերազմի մեջ ներքաշող գործիչ էր: Իսկ ազատագրական հայոց բանակին դավաճանած Վասակ Սյունին ներկայացվում է իբրև խաղաղության ջատագով և բանակցությունների գիտակ: Ամբողջովին անտեսված է ազատագրական այս պայքարում Ս. Հովսեփի Հողոցմեցի Կաթողիկոսի մեծ դերակատարությունը, ում նախաձեռնությամբ 449 թ. գումարվեց Արտաշատի ժողովը: Որևէ կերպ չի հիշատակվում նաև թշնամու դեմ հայ ժողովրդին պայքարի հանելու և ոգեշնչելու նպատակով Ս. Ղևոնդ Երեցիի եռանդուն գործունեությունը: Դուրս են թողնված հոգևորականաց նահատակության մասին հիշատակությունները: Ընդունելի չէ նաև այս թեմայի վերջում դասագրքում QR կոդով զետեղված տեսանյութը, որով բանախոսը, քննադատական մոտեցումներով խոսելով Ավարայրի ճակատամարտի մասին, կասկածի տակ է դնում պատմիչ Ս. Եղիշե վարդապետի հաղորդած որոշակի տեղեկությունների, անգամ նրա հեղինակ լինելու վավերականությունը: Անընկալելի և դատապարտելի է աշխարհասփյուռ մեր ժողովրդի կյանքում ազգային ոգու, ինքնության ու հայրենասնվիրումի կերտման գործում մեծ նշանակություն ունեցող Ավարայրի ճակատամարտի նշանակության ու դերակատարության նվազեցումը, այս պայքարի արժեզրկումը հակառակ մեր ժողովրդի դարավոր նվիրական ընկալման</p>	<p>ժամանակ, <i>Պատմաբանասիրական հանդես</i>, 1 (1986), էջ 177-189: Բ. Հարությունյան, Սպարապետ Վարդան մամիկոնյանը Հայոց թագավոր, <i>Ավարայրի խորհուրդը</i>, Ե., Մուղնի, 2003, էջ 31-51:</p> <p>Շատ մանրամասնությունների չենք անդրադարձել, քանի որ գիտենք, թե այս նույն թեման աշակերտներն ուսումնասիրելու են 10-րդ դասարանում, որտեղ արդեն կշռափվեն լրացուցիչ մանրամասնություններ:</p> <p>Դասագրքում բնավ էլ չի արժեզրկվում Ավարայրի ճակատամարտի նշանակությունը: Դասագրքի 133-րդ էջում այսպես է գրված. «450-451 և 482-484 թթ. սպատամբությունների և հայ ժողովրդի մղած ազատագրական համար պայքարի արդյունքում ձախողվեցին Հայաստանը Պարսկաստանի մի սուլդանական մարզ դարձնելու, հայերին դավանափոխելու և ձուլելու բոլոր փորձերը: Հայաստանը պահպանեց իր քաղաքական ինքնուրույնությունը և տնտեսական ու մշակութային զարգացման հնարավորությունները: Այսօր ևս քաղաքական ինքնուրույնությունը, տնտեսական և մշակութային զարգացումն ապահովելու համար մտավոր ու ֆիզիկական համարժեք ջանք է անհրաժեշտ: Պետական քաղաքականության խնդիրներից է կայուն, երկարաժամկետ միջազգային հարաբերությունների ստեղծումը պաշտպանության, տնտեսության ու մշակույթի ոլորտներում»:</p> <p>Իսկ 128-րդ էջում զետեղված է Գրիգոր Խանջյանի հանրահայտ «Վարդանանք» գորգանկարը (գորելեն): Այն կրում է Եղիշե պատմիչի ներկայացրած Վարդանանց պատերազմի նշանաբանը՝ «Մահ ոչ իմացեալ՝ մահ է, մահ իմացեալ՝ անմահութիւն է»: Այն, ինչպես նաև ցուցված է Մեթոդական ուղեցույցում (էջ 93), հանձնարարված է աշակերտների հետ քննարկել</p>		
---	--	--	--

	<p>և պատմագիտության մեջ ընդունված գնահատականների ու որակումների:</p>	<p>գլխի կամ թեմայի ավարտից հետո: Մասնավորապես քննարկման թեմա կարող է լինել նկարում տեղ գտած «անախրոնիզմը». Վարդան Մամիկոնյանի հետ նույն նկարում պատկերված են ավելի ուշ ժամանակների հայ մշակութային և քաղաքական գործիչներ: Երևակայությունը և քննադատական մտածողությունը գործադրելով՝ փորձեք մեկնաբանել նկարչի «անախրոնիստական» մտահղացումը:</p>		
<p>1</p>	<p>Դասագրքի հեղինակը ճշգրիտ չի մատուցում նաև եկեղեցական նյութերը, եկեղեցագիտական հասկացությունները, ինչպես օրինակ Հայոց Եկեղեցու նվիրապետական կարգը, «Հայ առաքելական եկեղեցու հոգևոր աստիճանակարգը, որն ունի հետևյալ բաժանումները՝ կաթողիկոս, պատրիարք, արքեպիսկոպոս, վարդապետ, քահանա, սարկավազ, դպիր» (էջ 108): Ներկայացված ցանկը անընդունելի է, սխալ և թերի: Ուղղակի իսկական «բացահայտում» էր, որ եպիսկոպոսի աստիճան գոյություն չունի Հայոց Եկեղեցու նվիրապետական աստիճանակարգում, իսկ նվիրապետական աստիճանները 9-ի փոխարեն սահմանափակվում են 7-ով: Մինչդեռ Հայ Եկեղեցու նվիրապետական աստիճանակարգին ծանոթանալու համար պետք էր ընդամենը օգտվել «Հայոց Եկեղեցու պատմություն» առարկայի 6-րդ դասարանի դասագրքից (էջ 14):</p>		<p>Վրիպակ է. Պետք է լինի «որն ունի հետևյալ հիմնական աստիճանները՝ սարկավազություն, քահանայություն, եպիսկոպոսություն և կաթողիկոսություն»:</p>	<p>Պարզաբանումը բավարար է:</p>
<p>1</p>	<p>Դասագիրքը բացարձակապես տեղեկություններ չի փոխասցում Հայոց Եկեղեցու խորհուրդների մասին: Միակ բացառությունն այն է, որ որոշ կցկտուր և</p>	<p>Ինչպես նշեցինք վերևում, դասագրքի 114-րդ էջում կա առաջադրանք, որի կատարմամբ հնարավոր կլինի վեր հանել Հայոց եկեղեցու յոթ խորհուրդների բովանդակությունը: Աշակերտներն անգամ կարող են այցելել եկեղեցի</p>		<p>Պարզաբանումը բավարար է:</p>

	<p>անհասկանալի շարադրանք է ներկայացված Ձեռնադրության խորհրդի մասին: «Կրոնական կարգ, Հայ եկեղեցու յոթ խորհուրդներից մեկը, որով դառնում են հոգևորական և լիազորվում կատարել տարբեր կրոնական ծեսեր և արարողություններ» (էջ 108): Ինքնին տեսանելի և հստակ է, որ հիշյալ բացատրությունը թերի պատկերացում է տալիս Ձեռնադրության խորհրդի մասին:</p>	<p>և հոգևորականներից ճշտել դրանց մասին մանրամասնությունները, նկարահանել դրանք և այլն: Այդպիսով՝ աշակերտները նաև հնարավորություն են ստանում անմիջական մասնակցությամբ ձեռք բերել գիտելիքներ ուսումնասիրվող նյութի վերաբերյալ: Հատկապես որ նյութը միայն պատմական փաստ չէ, այլև կենդանի և ապրող իրողություն, որի հետ շփման եզրեր է ստեղծում դասագիրքը):</p>		
<p>1</p>	<p>Դասագրքում նկատելի է ընդհանուր միտում հնարավորինս տեսադաշտից դուրս, ուղղակի ստվերում թողնել հայոց պատմության մեջ նշանակալի ավանդ ունեցող եկեղեցականների հոգևորական լինելու հանգամանքը նրանց հիմնականում ներկայացնելով որպես մշակութային գործիչներ: Այսպես «Հայ մշակույթի ոսկեդարը» գլխում բացակայում է որևէ անդրադարձ Ս. Մեսրոպ Մաշտոցի վարդապետ լինելու հանգամանքին (էջ T48-149):</p>	<p>Դասագրքի 148-րդ էջում կա այսպիսի տեքստ. «Մեսրոպ Մաշտոցը դեռ իր կրոնական քարոզների ժամանակ հասկանում է, որ առանց Սուրբ գրքի հայերեն թարգմանության քարոզն անարդյունավետ է»: «Կրոնական քարոզներ» արտահայտությունից արդեն իսկ ենթադրվում է Մաշտոցի հոգևորական լինելը: Իսկ դասագրքի 147-րդ էջում զետեղված է QR կոդով տեսանյութ, որտեղ մանրամասնություններ կան գրերի գյուտի մասին: Տեղեկություն նաև Մեսրոպ Մաշտոցի՝ հոգևորական լինելու մասին:</p>		<p>Պարզաբանումը բավարար է:</p>